This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at `http://books.google.com/`

AN

ԹԱՆԳԱՐԱՆ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՆԱԽՆԵԱՑ

Ա·

ԱՆԿԱՆՈՆ ԳԻՐՔ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՍՅ

2080.



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅԿ-ՍՍՀ ԳԱ
Им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎԻՆՆԵՏԻԿ, Ս. ՂԱԶԱՐ

1896

ZP 638 4639.40

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՔԱՆԻՀ արդեօք ի խորշս ամայացեալ վանորէից թաքունք կամ ի ծերպս և ի դերբուկս մթասոյզք՝ գանձք բանաւորք, զարդիւնս ասեմ զնախնեացս արգասու մտաց, խակաձիրք և թարգմանութիւնք, զուցէ և ըստ երբեմն արդար ստգտանաց Փարպեցւոյն [1] բորբոսեալք և ցեցակերք, լուսոյ և գթոյ կարօտք, որպէս և ինքեանց՝ ուսումնատենչքն: Քանիք դարձեալ հիւսակք և քանդակք մատանց նոցին ճարտարք՝ եղծք և ցիրք յուպէտ յուկամ՝ ի սրատեսից անգամ վրիպեալք ի բբաց, որովք էր արդեօք մարթ զոչ սակաւս ի մթութեանց դպրութեանս բացափայլել, և զդատարկս լնուլ զպատմութեան: Դոցին ահա՝ ոչ մերազնեայքս եւեթ այլ և յօտարաց խակ շատք ի գիւտ և ի խնդիր փութացեալք, ոչինչ զծախս և զանձանց խակ վտանգս զրելով, մուտ և ել ի վանս և ի զրանոցս առնեն յո և է, հմուտք բարբառոյս մերոյ և քան զմեզ ընդելազոյնք պատմութեան, ի գրչագիրս և յարձանագիրս դեգերեալք, միայն զի նոր ինչ և անյայտ գտանիցեն՝ փարթար և գրախեց մի, շատ է թէ աղօտ իմն սիրեսցեն նշոյլ ի խնդիրսն՝ յորս

1· Ղ· Փարպեցի, Պատմութիւն և թուղթ· Տպ· Վենետիկ 1890, էջ 592:

թարթափեալ կան նոցայն և այլոց յոլովից միտք: Հարկ է ասել այդպիսեօք ճոխացելոցն զրչագրովք մի՛ յանձանց եւեթ վարել առ ի պէտս, և կամ՝ որ յոռեզոյն է՝ լինել քանքարաթաքոյցս և ընդ գրուանաւ խակ ծածկել, ըստ տէրունական մեղադրանացն, այլ տալ զնոսին ի լոյս՝ ի վայելս բանասիրաց:

Ի սոյն դէտակն Միաբանութիւնս՝ անդստին ի հաստատութենէ իւրմէ՝ վոյթ կալաւ հրատարակել ընտրանաւ յերկասիրութեանց նախնեացս, եթէ՛ զբնիկ և եթէ զթարգմանօրէն գրութիւնս, պէսպէս անուամբք. **Մատենագրոշրիշք նախնեաց, Ընտիր մատենագիրք** և **Սոփերք հայկականք**: Եւ ցայս վայր յօգտաւէտ գործոյ այտի ոչ եղեալ ծեռնթափ, ստէպ նորանորս ընծայէ ընթերցասիրացն ի մեծագանձ մթերից անտի նախնեացս ընտիր վաստակոց, մինչ զի և սպառելոցն՝ երկիցս և երիցս անցանել ընդ մամուլս, զոր է հաւատել կամեցողացն: Զարդիս յայլ նորագոյն՝ ոչ ինչ ընդհատ կարեւոր և շայեկան՝ մխեցաք ի գործ, այս է տալ ի լոյս՝ յուրոյն հատորս՝ զատ անդ ցրուեալ հատուածս գրոց կամ ճառից ի զրչագիր օրինակս Մատենադարանի վանացս՝ զչեւ հրատարակեալսն, ընդ խորագրաւս «**Թանգարան հին եւ նոր նախնեաց**», յԱնկանոն գրոց առեալ սկիզբն Հնոյ Կտակին:

Առ այս ոչ սակաւ յորդոր և սատար գտաւ, թո՛ղ զայլս ի մերայոց կամ յօտար բանասիրաց, հռչակեալն Իւրովք պէսպէս և հմուտ երկասիրութեամբք՝ հանգուցեալ Պ. **Մկրտիչ Էմին**, ուսուցիչ արեւելեան լեզուաց ի Լազարեան հեռարանի որ ի Մոսկուա Ռուսաց: Նոյն ինքն, որ հետախոյզ գրչաւ գրազում վէպս և զաւանդութիւնս ազգիս հանեալ ի վեր, և օժընդակ գտեալ բազմօք և երախտաւոր դպրութեանն՝ ոչ դոյզն ինչ յաւել անձին պարծանս, գեղեցիկ խմն յղացեալ ի մտի խորհուրդ ի վախճան կենացն, որով և անեղծ պահեսցի յիշատակ նորա ի մա-

հուանէ, և անջնջելի կացցէ անուն նորա զոյգ ընդ համբաւոյն, և դասեսցի ի կարգս ազգասէր և ուսումնասէր Բարերարաց Ուխտիս: Քանզի զատ յայլոց՝ կտակագրեաց Միաբանութեանս գումար ինչ դրամոյ, տասանց հազարաց զոգցես իտալական լիրայից, որոյ տոկոսեօքն տարեւորօք հոգասցին ծախք հրատարակութեան անտիպ գրութեանց նախնեացս, որպէս է տեսանել ի Ժ. Յօդուածի նորուն կտակի՝ հրատարակելոյ առ ի մէջ ի **Բազմավէպ** հանդիսի (1893 ամին յէջս 441–442):

Կարեւոր վարկանիմք աստէն սուղ բանիւք տալ տեղեկութիւնս զգլխաւոր գրչագիր օրինակացն, յորոց է մեր զառաջակայս հատոր քաղեալ, այլում թողեալ պատեհի և ի դոյնս հմտագունի՝ զմանրակրկիտ և զխնամով ուսումնասիրութիւն Անկանոն գրոցս[1]:

ԱԴԱՄ ԳԻՐՔ[2]. — Ա. օրինակ Ադամայ գրոց, զոր Ա տառիւ նշանակեմք, գտանէր ի կարգի քարոզից Վարդանայ Այգեկցոյ, նոտրագիր, երկլիջեան, գրեալ ի վերայ թղթոյ. չափ գրչագրին 4½×15. հրդմտ. իսկ թիւն 729, անթուական: Բայց ուրեք ուրեք գոն յիշատակարանք ստացողի գրոցս, որ կոչի Մելքիսէթ ղարսեցի, կրօնաւոր և սարկաւագ, ուսուցիչ նորա Սահականոս քահանայ: Դարձեալ ի գրչագրիս գտանին՝ **Պատմուբիւն Ստեղծման և յանցման Ադամայ. — Պատմուբիւն եղանելոյն Ադամայ ի դրախտեն. — Այս է պատմուբիւն որդւոցն Ադամայ՝ Աբելի և Կայենի. — Վասն աշխատեացն Սեթայ զոր պարտ է մեզ ոչնչի դնել:** Զայսոսիկ է գտանել ի Յաւելուածի հատորիս, յորում

1. Հրատարակեցին ուրոյն ուսումնասիրութիւնք Անկանոն գրոց արարեալք ի Հ. Բ. Վ. Սրբոյն:

2. Զայս մեզէն եդաք, առեալ ի ցանկէ Ս. Գրոց՝ Սրբոյն վարդապետի. իսկ զբուն խորագիրսն կարգեցաք ի ծանօթութեան մատենիս յէջ. 1:

գտանին դարձեալ առասպել այոդ բանք զգալստենէ Փրկչին, զհրեշտակաց, և ազգի ազգ մեկնութիւնք բանից Ս. Գրոց ի ձեւ քարոզի. զոն եւս կլ.կին ցուցակք Ս. Գրոց, մին՝ յանուն Անանիայ Շիրակունոյ, և միւս՝ յանուն մեծին Վարդանայ: Ի գրչութեանն գոյին ինչ ինչ վրիպակք, զորս հաւեմատեալ ընդ այլ տեղիսն ուղղեցաք:

Չերկրորդ օրինակ գրոց Աղամայ, զոր Բ տաւիւ նշանակեմք, հանաք յԱ Ծառընտրէ, բոլորգիր, երկինչեան, գրեալ ի վերայ թղթոյ, չափ գրչագրին 8×25 հրդմտ. թիւ 633. անթուական, որով և զստոյգ ժամանակէ գրութեան սորին հաւաստեաւ չունիմք ասել. այսչափ ինչ միայն՝ զի գրեալ է յառաջ քան զթուականն Հայոց ՋԶՀ, զի ի 44 էջ գրչագրիս՝ ի յետնոց որ Մկրտիչ անուն՝ այսպէս ունի գրեալ. « Ես Մկրտիչ վարդապետս հանդիպեցայ ի Սիս քաղաքն ՋԶՀ (1539) ի փետրուարի ամսոյ »: Դարձեալ յաւարտ գրչագրիս գտանի նոտրագիր դէպք իմն արկածից գրեալ. « Ինն հարիւր եօթանասուն և վեց (1527) Քաւրսէտին ծելլալայ ի Սիս քաղաք, մարդն փախաւ ի բերդն ելաւ, շատ աւերում եղաւ, նա Աստուած ազատեց զՍիս քաղաքն ի ձեռն անօրէն Քաւրսէտէ »: Գոն ի սմա համառօտ յիշատակարանք. գրիչն է Կոստանդին ոմն, և ստացողն՝ Հեթում քահանայ: Սոյն օրինակ ընտրելագոյն քան զայլսն է գրչութեամբ և իմաստիւք, բաց ի սպատահական վրիպակաց ինչ՝ որոց մարթ է հանդիպել առ հասարակ յամենայն գրչագիրս:

Չերրորդ օրինակ գրոցն Աղամայ, Գ տաւիւ նշանակեալ, ընկալաք ի հայագիտէն Կոմիքերէ, որում հրապարակաւ յայտնեմք զշնորհակալիս մեր՝ երախտապարտք ազնուութեան նորին: Գրչագիրն լուսագրեալ էր ի մատենադարանէն Էջմիածնի. գեղեցիկ գրչութեամբ՝ բոլորգիր, զորոյ անգիտանամք զժամանակ գրչութեան, և ոչ անսխալ՝ մանաւանդ ի վերջս անցեալ դերբայից. զի զը-

րեա թէ ամենայն ուրեք փոխանակ ասելոյ « կամէր սպա-
նանել » ունի « կամէր **սպանեալ** » : Ստացող գրչագրիս
լեալ է Մահտեսի Գրիգոր ոմն, որպէս յայտ է ի փոքր յի-
շատակարանէն :

ԿՏԱԿԹ ԵՐԿՈՏԱՍԱՆ ՆԱՀԱՊԵՏԱՑ : Առաջին օրինակ
կտակաց երկոտասան նահապետաց է Ի **Աստուածաշունչ**,
զոր բնագիր կոչեալ՝ Բ տառիւք նշանակեմք. փոքր բոլորգիր,
գրեալ ի վերայ թղթոյ, երկիջեան, չափ գրչագրին 6×22.
Էրդմտ. թիւ 280 : Ցստակ գրութեամբ և գոգ ունսիալ մարթ
է կոչել զսա ի կտակս նահապետաց, և ուրեք ընդար-
ձակագոյն քան զերկրորդ և զերրորդ օրինակս, առաւել
հատանձայն յոյն բնագրին և չորրորդ և հինգերորդ օրինա-
կացն : Պատահեալ երբեմն մանուց վրիպակաց, ուղղե-
ցաք յայնցանէ զոչ կարեւորսն և զդուզնաքեայս՝ կամ ըստ
այլոց տեղեաց և կամ ըստ այլոց օրինակաց, խակ զայլսն
նշանակեցաք ստորեւ մատենիս՝ պատկառ կալով գրչու-
թեանն. զայս օրինակ վարեցաք ամենայն ուրեք. Ունի կրկին
յիշատակարանս՝ զգրչին և զստացողին՝ որ է Մկրտիչ եպիս-
կոպոս, յորս գոյ տեսանել զժամանակ ընդօրինակութեան
մատենիս, սկսեալ ի ՊԿԷ (1418) ի ծեռն Կարապետի ու-
րումն և աւարտեալ ի ՊՀԱ (1422) ի Խլաթ : Առաջին ստա-
ցող սորա էր Յովհաննէս ոմն կրօնաւոր. ապա եթող զայն
Մկրտչի **Նաղաշայ**, որ և յետոյ եպիսկոպոս Ամթայ և
Մերտինոյ. և սա վաճառեաց զգիրս՝ ծերասուն աշակերտի
Առաքել վարդապետի : Գտանին ի սմա **Պատմութիւն Ա-
սանեբայ** և **այլ** ոնկանոն գիրք, զորս յառաջիկայս տես-
ցուք : Ի վերջ մատենիս պատմէ զյարձակումն բռնաւորաց
այնր դալու և զգերութիւն ազգին :

Երկրորդ օրինակ կտակաց երկոտասան նահապետաց, Ա
տառիւ նշանակեալ ի մէջ, է Ի Զ **հաւաքումն քանից նուիր-
նեալաց**, բոլորգիր, գրեալ ի վերայ թղթոյ, չափ գրչագրին

10×13 հրդմտ. թիւ 345: Խոշորագիր և սակաւիկ մի եւ դժուարընթեռնլի. չգոյր զանազանութիւն Ե և Է տառից վարեալ փոփոխակի լծորդ տառիւք՝ դնէ Է փոխանակ կիր Ե փոխանակ Ի, և այլն. վրիպէ և ուրեք ուրեք յուղղագրութիւնս տառից, և երբեմն այլապէս գրէ, զոր օրինակ՝ Եգ-պտոս գրէ վոխանակ Եգիպտոսի: Գրեալ է ի թուին Հայոց ՈԿԹ (1220) ձեռամբ Վարդանայ ուրումն որ ի վերջկոյս ամենայն հատուածոց նոյնածեւ տառիւք դրոշմէ զանուն իւր: Թէպէտ ի յիշատակարանին ընթեռնումք «Բարսեղ եպս... Ջան եղեալ իմ Էրեցի զմատեանս Աստուածաշունչ». սակայն, յէջն 15, Բարսեղ եպիսկոպոսն ասի լինել ստացող գրոցն և ոչ գրիչ. ուստի Էրեցի բառն կամ իմանալի է իբր «ետու գրել», և կամ վրիպակ գրչին. քանզի մի ի թղթոցն և յիշատակարանն գլխովին՝ թերեւս կորուսեալք յառաջն՝ յետոյ ուրեմն կրկին գրեալ և յաւելեալ են ի վերջ գրոցն: Ի կտակս Շմաւոնի և Ղեւեայ գոյին յայսմանր, նմին իրի զհամառօտսն կարգեցաք հանդէպ ընդարձակացն: Դարձեալ, գոն ի սմա այլ և այլ բանք զառաքելոց և զմարգարէից, և Պատմութիւն Երեմիայ մարգարէի, զոր ի վերջ մասենիս գտցեն ընթերցողք:

Չերրորդ օրինակ կտակաց երկոտասան նահապետաց, զոր Բ տառիւ նշանակեմք, քաղեցաք յանթուական գրչագրէ իսեքէ՝ սովին խորագրաւ. «Առանէք, կտակ ԺԲ նահապետաց և Պատմութիւն Հայրիարքաց խաչի» և այլն. բոլորգիր, գրեալ ի վերայ թղթոյ, երկիշեան. թիւ գրչագրիս 679 և չափ 5½×18½ հրդմտր. դիւրընթեռնլի, գրչութիւն սորա նման է գրութեանց ԺԵ դարու. ուստի հաւանական թուի մեզ ժամանակ գրութեան սորա լինել ի նմին իսկ դարու և կամ ի սկիզբն ԺԶԻ: Առաւել համածայն գտանի սա երկրորդ օրինակին, բայց և ուրեք զարտուղի յայնմանէ, շռայլ ի բացատրութիւնս բանից, յանախ կրկնելով

զհոմանիշ բառսն. նոյնգունակ և սա վարէ փոփոխակի զլծորդ տառս:

Չորրորդ օրինակ կտակաց նահապետաց, զոր Գ տառիւ նշանակեմք, է Գ Աստուածաշունչ, երկիջեան, չափ իւրաքանչիւր իջից 5×20 հարիւրորդամետր, փոքր բոլորգիր, գրեալ ի վերայ մագաղաթի՝ գեղեցիկ գրչութեամբ, թիւ գրչագրին 229: Ի կտակս նահապետաց համածայն գտանի բնագիր օրինակին և հինգերորդին. զոն ի սմա այլ Անկանոն գիրք, զոր յառաջիկայս տեսցուք: Գրեալ է սա ի թուին Հայոց ՌԾԴ (1655) ի Մարկոս գրչէ. իսկ նախագաղափար սորա ի թուին հայոց ՌԿԸ (1619) ի Լով քաղաք Լեհաստանի, որոյ գրիչն է Ղազարոս ոմն, ընդ որոյ ձեռամբ վաստակելով այլ եւս չորք անձինք՝ յընթացս չորից ամաց՝ հանեն ի գլուխ. դարձեալ ի գրչագրիս գտանին այլ և այլ ցանկք Ս. Գրոց, և անուանց գտելոց ի Ս. Գիրս, և այլն:

Հինգերորդ օրինակ կտակաց նահապետաց, Դ տառիւ նշանակեալ, է Թ Աստուածաշունչ մատենադարանիս. երկիջեան, չափ իւրաքանչիւր իջից 6×20 հրդմտոր. իսկ թիւն 1366. փոքր բոլորգիր, գրեալ ի վերայ թղթոյ. գրիչն է Եզեկիէլ ոմն, ամթուական. թէև ի հանգամանաց գրչութեան թուի մեզ գուշակել զայն ԺԶ դարու գրութիւն, թերեւս և յաշխարհին Լեհաց, զի ի լուսանցս ուրեք ուրեք դնէ՝ Ֆռ. օրինակ՝ (այսպէս ունի): Ոչ իւիք տարբերի սա ի չորրորդ օրինակէ որ է Դ Աստուածաշունչն. թուին երկոքին եւս ի միոյ օրինակէ գաղափարեալք:

ԱՍԱՆԷԹ. — Զառաջին օրինակ գրոց Ասանեթայ, Ա տառիւ նշանակեալ, գտաք ի ԺԶ ծառընտրի մատենադարանի վանացս, յոր իբր յաւելուած իմն կցեալ էր, ի ձեռն միոյ ի հարց մերոց ընդօրինակեալ ի մատենադարանէ Վատիկանու, որ և ամաւ յառաջ հրատարա-

կեցաւ ի Բաւմաւիպէ: Զսա՝ ոչ եթէ իբր ընտրելագոյն քան զայլս՝ կալաք մեզ առաջնորդ, այլ զի զմիանգամ ի լոյս ընծայեալն ոչ կամեցաք փոփոխել. սակայն ուրեք ուրեք զվրիպակսն ուղղեցաք ըստ այլոց տեղեաց և ըստ այլոց օրինակաց. ապա բանասիրացն հարկ է առաւել ուշ դնել տարբերութեանց գրչագրաց՝ քան բնագրին, որ սխալագիր էր յոյժ:

Զերկրորդ օրինակ գրոց Ասանեթայ, Բ տառիւ նշանակեալ, սեմ յերրորդ օրինակի կտակի երկոտասան նահապետացն Բ տառիւ նշանակելոյ. էջ ԺԱ:

Երրորդ օրինակ գրոցն Ասանեթայ, Գ տառիւ նշանակեալ, է Ժ. Ասոռշաժաշռնչ. զգրչագրէն սորա տես ի կտակի երկոտասան նահապետաց՝ Բնագիր (Բ՝) կոչեցեալ ի մէջն. էջ Ը:

Չորրորդ օրինակ գրոցն Ասանեթայ, գրեալ ի կարգի խրատուց Գէորգայ Սկեւռացոյ, նոտրագիր, փոքրաղիր, և անթուական, յամենայնի զոյգ ընդ երրորդ օրինակին ընթանայ՝ բաց ի վրիպակաց, զի սխալագիր էր յոյժ:

Հինգերորդ օրինակ գրոցն Ասանեթայ է Քաղռշաժք Յայտնաւռռրաց, թիւ 1369, նոտրագիր, անթուական, գրիչ սորա է Յուսիկ ոմն. դիւրընթեռնլի՝ բայց ոչ զերծ ի վրիպակաց: Ամենայն ուրեք զերկբարբառն աւ փոխէ օ, որպէս՝ հրամանաւ՝ հրամանօ, ամաւ՝ ամօ, և այլն: Զայս գրչագիր յետոյ ուրեմն գտեալ մեր՝ ոչ կարացաք դնել զտարբերութիւնս ընթերցուածոց, զի և կարեւորք ինչ չէին:

Վեցերորդ օրինակ գրոցն Ասանեթայ է Դ՝ Ասոռշաժաշռնչ, զորմէ տես ի կտակի երկոտասան նահապետաց, էջ ԺԹ. սապա ուրեմն զսոյն օրինակ գտեալ մեր՝ չմարթացաք դնել զտարբերութիւնս գրչագրաց. սակայն այս ինչ յայտ լիցի, զի որպէս ի կտակս նահապետաց առաւել հանածայն էր ընդ Ժ Ասոռշաժաշնչի, այսպէս և ի գիրս Ասանեթայ:

ՄԱՀ ՄԱՐԳԱՐԷԻՑ. — *Բնագիր կալաք Մահու Մարգարէից՝ զԱռաջին օրինակ Աստուածաշունչ մատենիցն՝ որ ի մերում մատենադարանի. թիւ գրչագրին* 1508: *Մատեանս գրեալ է ի վերայ ընտիր և փայլուն մագաղաթի, չափ մեծութեան* 21×18 *հրդմ. երկայնչեան, բոլորգիր գեղեցիկ, գործ ճարտար ձեռաց Յովհաննու ուրումն. ժամանակ գրութեան Զկը* (1319), *իսկ տեղին՝ ուր գրեցաւն՝ անյայտ. գրիչ մատենիս Յովհաննէս՝ գաղափարեալ է զմատեանս զայս յօրինակէն Գէորգայ վարդապետին, որպէս ըզկնի մարգարէութեան Եզեկիելի յիշատակէ ասելով. « Փառք սուրբ Երրորդութեան յաւիտեանս յաւիտ.. Ես մեղաւորս Յոհաննէս ըստ կարի զփափաքս իմ լցի յանկ ելանելովն Աստուծոյ, զի յանարժանէս թերեւս արժանաւոր այս գործք եղեւ յանկեալն. և զայս ոչ ասեմ վասն գեղապանծոյն շարագրութեանցս, այլ վասն ազնիւ աւրինա՛կիս զոր սուրբ և երանեալ վարդապետին Գէորգեա ձեռացն շարահիւսեալք էին. աղաչեմ զժառանգաւորդ, եւս և զհանդիպաւորդ ներէք սղալմանս ի սա, և սիրով ուղղեցէք. և միոյ տէր ողորմի արժանի արարէք զողորմելի գրիչս Յոհ. եւ զծն. և զեղբ. »: Ի բանից Յոհաննու « ազնիւ աւրինակիս », որպէս և այլուր դրուատէ, յայտ է թէ՝ քան զամենայն Աստուածաշունչ մատեանս սա է ընտրելագոյն, ուսմի և իրաւամբ կալաք զսա իբր առաջնորդ և կամ լաւ եւս բնագիր Մահու Մարգարէից:*

Տարբերութիւնք *գրչագրացն ի ստորեւ ի՛ջեցն եղեալ են ըստ այլոց Աստուածաշունչ մատենից գտելոց ի մատենադարանի վանացս, ըստ իւրաքանչիւր գրչահամարի: Մահ մարգարէից Եզեկիելի և Դանիելի, որ ի գրչահամարն ԺԸ, տարբերէր ոչ սակաւ ի բնագրէն, ուստի պատշաճ դատեցաք առ ընթեր բնագրին դնել և զայս: Զմահ մարգարէիցն է գտանել և յամենայն տպագիր և ի գրչագիր Յայտնաւորք մատեանս. այլ զի մի՛ կարի իմն ծանրաբեռնեսցուք աւե-*

լորդօք զդրօշակս մատենիս, շատացաք նշանակել զտարբեր-
բութիւնս՝ միայն յԱստուածաշունչ մատենից:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄՈՎՍԻՍԻ. — Առաջին օրինակ Ա տառիւ նշանակեալ, է *Քաղուածոյ բանք Յայտնութեանց*, և այլն. զգրչագրէն սորա տես յԱստանէթ, հինգերորդ օրինակ, էջ ԺԲ:

Երկրորդ օրինակ, Բ տառիւ նշանակեալ, էր *Ծառընտիր* ԻԴ. թիւ 1447, թղթեայ, երկիչնոսն, բոլորգիր, թերի յետին մասն յիշատակարանին, ուստի հաւաստեաւ չունիմք ասել թէ յորո՛ւմ ժամանակի գրեցաւ. տեղի գրութեան սորա Արջակ կամ Արծակ՝ մենաստանն Վասպուրականի, գրիչն Կարապետ ոմն, և ստացողն՝ Յակոբ եպիսկոպոս. գոյին ինչ ինչ վրիպակք, զորս հաւեմատեալ ընդ այլոց տեղեաց ուղղեցաք:

ՎԱՍՆ ՍՈՂՈՄՈՆԻ ԱՐՔԱՑԻ: — Առաջին օրինակ հատուածոյս, Ա տառիւ նշանակեալ, է *Ի Աստուածաշունչ մատենադարանի վանացս*, զորմէ տես յէջ Ը. *Կտակ երկոտասան նահապետաց, Բնագիր*:

Երկրորդ օրինակն է՝ Թուղթք Ս. Ն. Շնորհալւոյ և ժողովոյն Հռոմկլայ. ի սմին գտանի եւս **Վասն գրեանցն Սողոմոնի**:

ՀԱՐՑՄՈՒՆՔ ԴՇԽՈՑԻՆ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ ՍՈՂՈՄՈՆԻ ԱՐԴԻՒՈՑ ԴԱՒԹԻ. — Կրկին էին գրչագիրք հատուածոյս: Ա օրինակն է Ի Ոսկեփորիկ, գրեալ ի թուին Հայոց ՊԺԸ (1369) յԱտոմ գրչէ յԱղթամար. բոլորգիր և սխալագիր յոյժ:

Երկրորդ օրինակն՝ Ի Ոսկեփորիկ, բոլորգիր, անթուական. հաւեմատեալ չգտաք բնաւ տարբերութիւնս ընթերցուածոց:

ՑԱՂԱԳՍ ԳՐԵԱՆՑՆ ՍՈՂՈՄՈՆԻ. — *Զկատարելիս գաղափարեցաք յԱ Ոսկեփորիկ, նոտրագիր և սխալագիր. սա կրէ զանուն Եփրեմի. զ յայտնի վրիպակս ուղղեցաք համեմատեալ ընդ այլոց տեղեաց:*

ՎԱՍՆ ԳՐԵԱՆՑՆ ՍՈՂՈՄՈՆԻ. — *Զգրչագրէն սորա տես Վասն Սողոմոնի արքայի, Բ. օրինակ. էջ ԺԴ:*

ԱՂՕԹՔ ՄԱՆԱՍԷԻ ԹԱԳԱՒՈՐԻ. — *Զոչնչական երկ թագաւորիս գտանի յամենայն ժամագիրս և յամենայն աղօթագիրս նախնեաց մերոց, ոչ միայն ի գրչագիրս՝ այլ և յամենայն տպագիրս, որ և քաջայայտ է ամենեցուն. յորսակս և աւելորդ դնել զտարբերութիւնսն:*

ՏԵՍԻԼ ԴԱՆԻԷԼԻ ԵՕԹՆԵՐՈՐԴ: — *Երկիրն հն գրչագիրք մեր. միմ՝ որոյ թերի են բառք ինչ՝ գաղափարեալ ի միոյ ի հարց մերոց յԱստուածաշնչէ գտելոյ ի պաղատան արքեպիսկոպոսին Կանդարրիոյ ի Լոնդրա, թուի գրեալ ի կէս ԺԵ դարու ի ճարտար գրչէ:*

Երկրորդ օրինակն, զոր ապա ուրեմն գտաք ի մատենադարանին, է Ը Աստուածաշունչ, փոքր բոլորգիր, թղթեայ, երկիջեան, յայլ և յայլ ժամանակս գրեալ. հին կտակարանն կրկին գրչաց է գործ. ստացողն է Գրիգոր ոմն քահանայ, զոր յոյժ դրուատէ գրիչն. գրեալ ի թուին հայոց ՋՂ (1341) ի քաղաքն Սուլտանիայ: Զկնի երեք տասան ամաց Եփրեմ քահանայ՝ որդի վերոյիշեալ Գրիգորի քահանայի՝ նուիրէ զայն սուրբ Նշանին Վարագայ և նորին եկեղեցւոյ: Սա՝ թէպէտ համառօտ՝ սակայն լրացուցիչ է առաջնոյն, և գտեալ ինչ ինչ տարբերութիւնս ընթերցուածոց, հարկ համարեցաք կրկին ի լոյս ընծայել առ ի սէրս բանասիրաց՝ որոց կամ ի՞նչ դեգերել յայս ազգ գիտութեան. տես էջ 387:

ԵԶՐ ԵՐՐՈՐԴ. — Տես զգրչագրաց տողս յէջ 251։

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆ ԵԶՐԻ, և այլն. Գրչագիրն՝ յորմէ հաս՝ նաք զսա՝ էր ԿԸ Մաշտոց բոլորգիր, գրեալ յԱսորեստայր անապատի Ծոփաց, ի թուին Հայոց ՈԾԷ (1108)։ Այս հարցաքննութիւն գտանէր միայն ի սկիզբ եւեթ գրչագրի յաւարտ նորին։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌՕՏ ԵՂԻԱՑԻ ՄԱՐԳԱՐԷԻ. — Գաղափարեցաք զսա ի ԻԴ Ոսկեփորիկ մատենադարանի վանացս, բոլորգիր, երկլիչեան, թղթեայ, գրեալ ի թուին Հայոց ՌԽԶ (1623), ի Մկրտչէ ուսեմնէ. ստացողն՝ Տիրացու և պարոն Աւագ. ուրեք վրիպի յուղղագրութիւնս տարից։ Գտանի ի սմա և Քարոզ Յովնանու Մարգարէի, զոր տպագրեալ եմք յէջ 342։

ՎԱՍՆ ԵՐԵՄԻԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ Ի ԳՐՈՑՆ ԲԱՐՈՒՔԱՅ. Ա օրինակ է ԺԶ Հաւաքուումն բանից նախնեաց, զորմէ տես յէջ Ը, կտակ երկոտասան նահապետաց, Ա տառիւ նշանակեալ։

Զերկրորդ օրինակն առաք յԱրարատ ամսաթերթէ. թիւ Գ. 1895.

Զերրորդն տպագրեցաք ուրոյն, զի զանազանէր յոյժ յայլոց օրինակաց։ Գրչագիր սորա է ԻԴ Ճառընտիրն, զորմէ տես Պատմութիւն Մովսիսի, յէջ ԽԴ, նշանակեալ Բ տառիւ։

Դ. Գոյր այլ եւս միւս օրինակ նովին պարունակութեամբ, և այլոգ շարադրութեամբ, և քանզի գաղափարեալ էր ի յետին ժամանակս, աւելորդ վսրկաք ի լոյս ընծայել զայն։

ՏԵՍԻԼ ԻՆՈՎՔԱՅ ԱՐԴԱՐՈՑՆ. — Առաք յԱրարատ ամսաթերթէ, 1895. թիւ 12.

Հ. Յարգիս Յովսեփեանց

ԱՆԿԱՆՈՆ ԳԻՐՔ
ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

Ա

ԳԻՐՔ ԱԴԱՄԱՑ [1]

ԵՒ Ադամ զկին իւր զԵւա և գնաց ի տեղի մի՝ որ էր ի կողմանս արեւելից, դէմ յանդիման դրախտին փափկութեան [2], և բնակեալ եղեւ անդ զամս ութեւտասան և ամիսս երկուս։ Եւ յետ այսորիկ մերձեցաւ Ադամ յԵւա կինն իւր՝ և յղացաւ և ծնաւ երկուս որդիս. զանլոյսն որ կոչի Կայէն՝ և զբարեխորհն որ կոչի Հաբէլ։ Իսկ յետ այսորիկ մինչդեռ ննջէին Ադամ և կինն իւր, ետես [3] Եւա տեսիլ. յայնժամ զարթոյց [4] զԱդամ և զտեսիլն պատմէր նմա, և ասէր այսպէս. Տէր իմ, տեսանէի ի տեսլեան [5] գիշերիս, զի արիւն

1. Ա. սրինակին ունի այսպէս. Այս է պատմութիւն վրոյն Ադամայ և Եւայի՝ զնի Իւնելոյ նոցա ի գրութիւն փափկութիւն, որպէս անուանէր իւրիւր գրգռութիւն։
Բ. Պատմութիւն վրոյն Ադամայ և Եւայի նախասարեղծիցն՝ որ յայսինքսս հրամանաւն Աստուծոյ ի յԵւն Մէտայեալ հրեշտակապետին՝ ձեռին մարդասիրութիւն Մովսէսի, որ զապրանաթէն պատիրան ընկալաս. զոր նոր թարգմանիս հանէս որդն Սիմոն յերուսաղէմ։
2. Բ. չունի փափկութիւն։
3. Բ. չունի եթե Եւա տեսիլ։
4. Բ. զարթուցեալ Եւայի. (իսկ Գ. Եւա) տեսիլ պատմէր Ադամայ (Գ. Ադամայ). և ..
5. Բ. ի տեսլեանն յայսմ գիշերի։

որդւոյն մերում Հաբելի լցեալ լինէր ի բերան Կայենի եղբօր իւրում. և [1] նա ըմբէր զարիւն եղբօր իւրում. իսկ Հաբէլ աղաչէր զնա թողուլ նմա սակաւիկ մի յարենէ անտի, և նա ոչ լինէր նմա ունկընդիր՝ այլ վաղվաղակի ըմպէր զամենայն, և ոչ մնայր արիւն ի փորի նորա՝ այլ արտաքս փսխէր զամենայն։ Իբրեւ լուաւ զայս Ադամ, ասէ ցնա. Յարուցեալ երթիցուք տեսանել զորդեակն [2] մեր՝ եթէ զինչ պատահեալ իցէ [3] նոցա. մի թէ թշնամի մարտընչիցէ [4] ընդ նոսա։ Եւ [5] գնացին գտին զի սպանեալ էր [6] Հաբէլ ի ձեռաց եղբօր իւրոյ Կայենի [7]։ Եւ ասէ Աստուած ցհրեշտակապետն Միքայէլ. Երթ և ասա ցԱդամ, եթէ զկորհուրդ տեսլեանդ զոր տեսեր՝ մի պատմեր որդւոյդ [8] Կայենի, վասն զի որդի [9] է կորըստեան. և ցԱդամ ասա. Եւ դու մի տրտմիր՝ զի տայցէ [10] քեզ Աստուած փոխանակ որդւոյ քո Աբելի այլ որդի՝ որ պատմեսցէ քեզ զամենայն զոր ինչ առնելոց է [11], և դու մի ինչ ասասցես դմա [12]։ Իսկ Ադամ պահէր զամենայն ասացեալսն ի սրտի իւրում, նոյնպէս և կինն։ Բայց Եւա հանապազ ունելով զտրտմութիւնն վասն որդւոյն իւրոյ [13] Կայենի։

Իսկ յետ այսորիկ դարձեալ մերձեցաւ Ադամ յԵւա կինն իւր և յղացաւ և ծնաւ զԱէթ։ Եւ ասէ Ադամ ցԵւա. Ահա ծնաք որդի փոխանակ Հաբելի զոր եսպան Կայէն. արդ յարուցեալ տացուք փառս և օրհ-

1. Բ. չունի ասասի մինչև եղբօր իւրում։
2. Բ. զորդիսն։
3. Բ. ի։
4. Բ. մարդնկիցէ։
5. Բ. և իբրև։
6. Բ և Գ. լիներ։
7. Բ. յաւելու գայլախաղվ։
8. Բ. որդոյն ի... Գ. ի...մ։
9. Բ. նա է որդի խորտիան և ցասման, և դու մ...
10. Բ. զի տայ ինչ փոխանակ ոչ որդի. իսկ Գ. զի տայցէ ինչ փոխանակ դորա ոչ որդի։
11. Բ և Գ. իցէ։
12. Բ և Գ. յաւելուն զայս ասացեալ հրեշտակապետին Միքայելի հրամանաւն Աստուծոյ Աստամայ. Գ. ցԱդամ։
13. Բ. որդոյն իւրոյ Աբելի. իսկ Գ. որդոյն իւրեանց Հաբելի։

նութիւն[1] Աստուծոյ։ Եւ եղեն Ադամայ որդիք երեսուն, և ժամանակս[2] կենաց նորա զոր եկաց ի վերայ երկրի՝ ինն հարիւր և երեսուն ամք։ Եւ յետ այսորիկ եղեւ նմա հիւանդանալ սակաւ մի, և գոչեաց ի ձայն մեծ և ասէ. Ժողովեսցին ամենայն որդիք իմ ի միասին առաջի իմ՝ զի տեսից զնոսա յառաջ քան զվաղճան[3] իմ։ Եւ ժողովեցան ամենեքեան. քանզի[4] բնակեալ էին նոքա առանձինն մի մի յիւրաքանչիւր տեղիս։ Յայնժամ ասէ Սէթ[5] ցԱդամ հայր իւր. Ո՛վ հայր իմ, զի՞նչ է[6] հիւանդութիւն խօթութեանդ քո։ Եւ նա[7] պատասխանի տուեալ ասէ ցնա. Յաւք բազումք և անհնարինք պաշարեցին զիս, ո՛վ որդեակ իմ։ Ասէ ցնա Սէթ. Ո՛վ հայր իմ, մի՛թէ զմտաւ ածեալ իցես զփափկութիւն[8] և զվայելչութիւն դրախտին Աստուծոյ, և զպէսպէս զանազանութիւն պըտղոցն՝ յորմէ հանապազ ճաշակէիր, և վասն այնր արամութեան[9] է հիւանդութիւնդ քո. և եթէ այդ այդպէս իցէ, ո՛վ հայր իմ, ասա ինձ և ես երթայց[10] բերից քեզ ի պտղոյ դրախտին կենաց. զի երթայց արկից հող ի գլուխ իմ, և լացից առաջի նորա և աղաչեցից զՏէր Աստուած. և Տէր լսէ ձայնի[11] աղաչանաց ծառայի իւրոյ. և առաքէ[12] զհրեշտակս իւր և կատարեսցէ զինդրուածս իմ. և բերից քեզ ի պտղոյ դրախտին կենաց կերակուր քեզ[13]. զի ճաշակեալ կերիցես[14] և ողջասցիս ի հիւանդութենէդ քումմէ։ Ասէ[15] Ադամ. Ոչ այդպէս իցէ, որդեակ իմ

1. Բ. գոհութիւն։
2. Բ. ժամանակ ապրելոյ ինոցի Ադամայ ինն հարիւր երեսուն և երիս։
3. Բ և Գ. զվաղճանիլն։
4. Բ. զի։
5. Բ և Գ. Սէթ որդին իւր ցԱդամ. ասէ։
6. Բ. չունի է։
7. Բ և Գ. Նորա։
8. Բ. զփափկութիւն վայելչութիւն։
9. Բ. արամութիւնդ։
10. Բ. երթիցս։
11. Բ. չունի ձայնի։
12. Բ. առաքէ։
13. Բ. չունի քեզ։
14. Բ և Գ. չունին կերիցես։
15. Բ և Գ. յաւելուն ցնա։

Սէթ. այլ հիւանդութիւնք բազումք և ցաւք անհնարինք նեղեն զիս։ Ասէ ցնա Սէթ. Եւ ո՞րպէս եղեն [1] ցաւք հիւանդութեանդ քում, պատմեա ինձ հայր իմ։ Ասէ ցնա Ադամ. Լուր ինձ, որդեակ իմ, հեզութեամբ յորժամ եստեղծ զիս Աստուած և զմայրդ ձեր զԵւա, յաղագս որոյ և մեռանիմ իսկ, ետ մեզ Աստուած հրաման յամենայն պտղոյ դրախտին ճաշակել [3] և վայելել, իսկ ի միոյ ծառոյ [4] հրամայեաց ոչ ճաշակել ի նմանէ. և ասաց [5] ցիս. զի թէ ուտիցէք ի նմանէ՝ մահու մեռանիցիք։ Եւ մերձ լինէր ժամն այն՝ յորժամ հրեշտակք ակն ունին [6] մօրդ ձերում Եւայի՝ տանել զնա [7] առաջի Տեառն յերկրպագութիւն։ Եւ իբրեւ հրեշտակքն հեռացան ի նմանէ, յայնժամ իմացեալ թշնամւոյն եթէ ոչ ես եմ մերձ՝ և ոչ հրեշտակքն, յայնժամ եկեալ խօսեցաւ ընդ նմա [8], և ետ նմա ի պտղոյ անտի և եկեր, և [9] տուեալ ինձ՝ ես եւս կերայ։ Յայնժամ բարկացաւ [10] Աստուած ի վերայ մեր և նոյնժամայն [11] եկն ի դրախտ անդր, և ձայն ետ ինձ Տէր ահաւոր ձայնիւ, և ասէ. Ադամ, ո՞ւր ես, զի՞ թաքչիս յերեսաց իմոց՝ քանզի ոչ կարէ թաքչել տուն ի շինողէ իւրմէ. այլ քանզի անցաք զպատուիրանաւ իմով՝ և զհրամանս [12] իմ ոչ պահեցիք, և ահա ածից ի վերայ մարմնոյ քոյ հալածանս և ցաւս բազումս իբրեւ զեօթանասունս։ Եւ լինիցի առաջին ցաւք [13] հարուածոց քոց՝ նեղութիւն աչաց, իսկ երկրորդն հարածք [14] լսելեացն. և այնպէս մի ըստ միոջ

1. Բ. Եղե։
2. Բ և Գ. չունին Աստուած։
3. Բ. յաւելու է նմանէ։
4. Բ. յաւելու պտղոյն։
5. Գ. ասէ։
6. Բ. սանէին։
7. Բ և Գ. զդա։
8. Բ. յաւելու և պատրեաց ընդ։
9. Բ. և նա եւ ինչ և ի բերայ։
Գ. և դա եկեալ եւ ինչ և ի բերայ։
10. Բ և Գ. բարկացեալ Աստուած։
11. Գ. և է նոյն ժամն։
12. Բ. զպատուիրանս։
13. Բ. ցաւ։
14. Բ. հարուածք +։ իսկ Գ. հարուածք։

չէ եղիցին ցաւք և հարուածք ամենայն անդամոց քոց։

Եւ զայս ամենայն իբրեւ ասաց Ադամ ցորդին,[1] յոգւոց եհան յոյժ և ասէ. Զինչ արարիցս, զի ի մեծ տրտմութիւն է անձն իմ։ Իսկ Եւա[2] լացեալ յոյժ և ասէ ցԱդամ. Տէր[3] իմ, տուր ինձ զկէս ցաւոց անձինդ քո՝ և ես բարձից զնոսա, վասն զի յաղագս իմ եղեւ քեզ այդ, և վասն իմ իցես յաշխատութեանդ։ Եւ ասէ ցնա Ադամ. Ցարուցեալ դու և որդիդ քո Սէթ, երթիջիք մերձ առ դրախտն, արկջիք հող ի գլուխ[4] ձեր, և ողբասջիք յոյժ լալով, և աղաչեցէք զԱստուած՝ զի թերեւս գթասցի ի վերայ իմ, և առաքեսցէ զհրեշտակ իւր ի դրախտն փափկութեան, և տացէ ինձ ի պտղոյն[5] յորմէ ելանէ օծումն ողորմութեան. և օծանիցէք զնովաւ զանձն իմ, զի թերեւս ապաքինացայց ի ցաւոց աստի։ Իսկ նոցա յարուցեալ երթային յանդիման դրախտին. և յորժամ երթային ի ճանապարհին, յայնժամ նայեցեալ Եւա տեսանէր զորդին իւր զՍէթ՝ զի գազան մի մարանչէր ընդ նմա. ելաց Եւա դառնապէս[6], և ասէ. Վա՛յ ինձ, վայ ինձ, վայ ինձ. զի թէ լինիցի հասանել ինձ ի յարութեան աւուրն ամենայն մեղաց՝[7] ի ծննդոց իմոց եկին ինձ[8] յանէծս, և ասիցեն թէ անիծեալ լիցի Եւա՝ զի ոչ պահեաց զպահպանութիւն Տեառն Աստուծոյ իւրոյ. և յաղագս այսորիկ մեք ամենեքին[9] մահու մեռանիցիմք։ Եւ հայեցեալ Եւա ի գազանն յայն, և ասէ. Ո՛վ գազան չար, ո՞չ երկնչիս մարանչելով ընդ պատկերիդ Աստուծոյ։ Ցնայնժամ դոչեաց գազանն այն, և ասէ.

1. Բ. յորդիսն (Գ. Ա.ս յորդիսն) իւր և յոգոց։
2. Բ. Եւայ։
3. Բ Ա Գ. տերէր, յերէցս (Գ. յորոցիալ) և վեր ցոանդնչն ի գազան ինչ, և։
4. Բ Ա Գ. ի վերայ գլխոց չի-բոց։
5. Բ. ի խոսոյն։
6. Բ. չունի դառնապէս։
7. Բ. յաւելու սրտ. Գ. սիրնայն դեղասրտ։
8. Բ. չունի ինչ։
9. Բ. սիրնիսիան... դեռանիմ։

Ո՛վ կին դու, ոչ երթէ ի մէնջ եղեւ սկիզբն ագահութեան՝ այլ ի քէն. վասն զի սկիզբն արձակման գազանաց ի քէն եղեւ. քանզի ահա որպէս բացաւ բերան քո ուտել ի պտղոյ ծառոյն՝ յորմէ հրամայեաց ձեզ Աստուած չուտել ի նմանէ, և[1] դու կերար և յանցեար զպատուիրանաւն Աստուծոյ, յայնժամ բընութիւնս մեր փոխեցաւ յանհնազանդութիւն մարդկան։ Եւ արդ մի՛ այսուհետեւ վիճաբաներ ընդ իս՝ այլ լռեա՛. զի[2] ոչ կարես դիմանալ ինձ երթէ սկսանիմ յանդիմանել զքեզ։ Իսկ Սէթ ասէ ցգազանն. Փակեա՛ զբերան քո և լռեա՛ և ի բաց կաց ի պատկերէս Աստուծոյ՝ մինչեւ յօրն դատաստանին։ Յայնժամ ասէ գազանն այն ցՍէթ. Ահա ի բաց կամ ի պատկերէդ Աստուծոյ՝ և երթամ ի բնակութիւն իմ։ Իսկ Սէթ և մայր իւր Եւա հրաժարեալք ի գազանէն՝ երթային մերձ առ դրախտն Տեառն, և ողբալով լային և աղաչէին զՏէր՝[3] զի առաքեսցէ զհրեշտակս իւր և տացէ նոցա զօծումն ողորմութեան։ Եւ առաքեաց Տէր զհրեշտակապետն իւր[4] Միքայէլ, և ասէ ցՍէթ. Այրդ Աստուծոյ, մի՛ աշխատիր[5] վասն խնդրուածոյդ այդորիկ, յաղագս առնլոյ քեզ յօծմանէ ծառոյն ողորմութեան՝ զի օծանիցես նովաւ զհայր քո զԱդամ. զի այժմ ոչ լինիցի այդ, այլ երթեալ տեսցես զհայր քո վաղճանեալ ի ժամանակեայ կենաց իւրոց. և զի մերձեալ է ժամանակ նորա, քանզի զկնի երից աւուրց փոխեսցի, և տեսանիցես զվերափոխումն նորա փառաւոր և սոսկալի։

Զայս իբրեւ ասաց հրեշտակն Տեառն՝ վերացաւ ի նոցանէ յերկինս. իսկ Սէթ և մայր նորա դարձեալ եկին ուր անկեալ դնէր Ադամ հիւանդացեալ։ Եւ ասէ Ադամ ցԵւա. Ո՛վ Եւա, զի՞նչ գործեցեր դու ընդ իս, զի ածեր ի վերայ իմ ցասումն մեծ, որ և

1. Բ. յաւելու «անդի դու յրգամ յիշեցեր զԵրեն ես և ուրեր է դողոյն և ի երբոր և յանցեար։
2. Բ. Լռեն զի։
3. Բ. Աստուծոյ։
4. Գ. չունի էր։
5. Բ. յաւելու «զաղերով Աստուծոյ։

մահ ժառանգել ունի[1] զամենայն ազգս ծննդոց իմոց[2]։ Պատասխանի տուեալ[3] ասէ ցնա. Վայ ինձ, վայ ինձ հաղար[4] բերան, վասն զի պարտաւորեցայ հաւատալով բանից խաբէութեան օձին։

Եւ իբրեւ ասաց[5] զայս Եւա, սկսան ի միասին լալ և ողբալ դառնապէս. և իբրեւ դադարեցան յողբալոյ անտի՝ յահագին տրտմութենէն յաղթեալ Ադամայ՝ ի քուն նիրհէր։ Իսկ որդիք նորա հանդերձ Եւայիւ նստէին շուրջ զմահճաք հօրն իւրեանց՝ և ողբային յոյժ։ Ասէ ցնոսա մայրն իւրեանց Եւա. Որդեակք, ահաւասիկ հայրն ձեր մեռանի և ես իսկ ընդ նմին. և արդ, որդեակք իմ, լուարուք ինձ և[6] պատմեցից ձեզ զնախանձ և զչարութիւն թշնամւոյն, եթէ որպիսի՞ հնարիւք[7] խաբէութեամբ զրկեաց զմեզ ի դրախտէն փափկութեան և ի յաւիտենական կենացն։ Եւ սկսաւ ասել այսպէս. Աստեղծ մարդասէր և ողորմածն Աստուած[8] զհայրն ձեր զԱդամ և զիս ի կողէն, և եդ զմեզ ի դրախտին փափկութեան՝ տիրել և իշխել ամենայն տնկոցն[9] ի նմա. իսկ ի միոյ ծառոյ հրամայեաց ի բաց կալ ի նմանէ։ Տեսեալ սատանայ զփառս և զպատիւն մեր[10], և գտեալ զօձն միայն խմաստնագոյն քան զամենայն գազան[11] ի վերայ երկրի, և մերձ եղեալ առ նա և ասէ. Տեսանեմ զքեզ խմաստնագոյն քան զամենայն գազան, և կամիմ յայտնել քեզ զիսորհուրդս սրտի իմոյ[12]։ Ասէ

1. Ցաւելու ունի՝ ըստ Բ. օրինակին։
2. Բ. Դրոց։
3. Բ. յաւելու Եւա։
4. Բ և Գ. չունին հազար բերան։
5. Ասաց եղաւ ըստ Բ և Գ. օրինակաց, զի Ա. ունէր սկսաւ։
6. Բ. չունի և պարտեցէք ինչ։
7. Բ. յաւելու արդոյ։
8. Բ և Գ. Աստուած զիս և զհայր ձեր Ադամ, և եդ։
9. Բ. յաւելու որ։
10. Բ. յաւելու զոր պարարտութիւն զԱստուած, նախանձեցաւ ընդ պարտիսն մեր։
11. Բ. յաւելու որ ի ի վերայ սիրելի երկրի. Գ. գազան որ ի ի վերայ սիրելի երկրի։
12. Բ. յաւելու և գաւրել. Գ. և գաւրել։

ցօձն. Տեսանե՞ս եթէ ո՞րչափ պատուոյ[1] արժանի ե-
ղեւ մարդն յԱստուծոյ. իսկ մեք անարգեցաք. արդ
լուր ինձ, և եկ երթիցուք արտաքսել զնա[2] ի դրախ-
տէն՝ յորմէ մեք արտաքսեցաք յաղագս նորա։ Ասէ
օձն ցնա. Երկնչիմ գործել զայդ, զի մի բարկացի
Տէր ի վերայ իմ։ Ասէ ցնա սատանայ. Մի՛ երկնչիր
յաղագս այդորիկ, այլ դու միայն անօթ լեր ինձ,
և ես խօսեցայց բերանով քոյով[3] առ ի պատրել
զնոսա։ Եւ առժամայն կախեալ[4] օձն անկանէր զպա-
րըսպաւ դրախտին. և իբրեւ ելանէին հրեշտակքն
յերկրպագութիւն Աստուծոյ[5], և յայնժամ սատա-
նայ[6] եղեալ ի կերպարանս հրեշտակի՝ երգէր[7]
զերգս օրհնութեան։ Եւ ես հայեցեալ տեսանէի զնա
ի պարսպի անդ ի կերպարանս[8] հրեշտակի. և նա
ձայն[9] տուեալ ասէ ցիս. Դո՞ւ ես Եւա։ Եւ ես ա-
սեմ. Այո՛ ես իցեմ։ Եւ ասէ ցիս. Զի՞նչ առնիցես ի
դրախտի այդր։ Եւ ասեմ ցնա. Աստուած եդ զիս[10]
ասա։ Եւ զիա՞րդ հրամայեաց ձեզ Աստուած ոչ ու-
տել յամենայն ծառոյդ որ ի դրախտիդ այդր են։
Եւ ասեմ ցնա. Ոչ այդպէս է, այլ յամենայնէ ուտեմք՝
բայց[11] ի միոյ ծառոյ, որ է ի մէջ դրախտին, զոր
հրամայեաց մեզ Աստուած ոչ ուտել ի նմանէ, ասե-
լով ցմեզ. Եթէ ուտիցէք ի նմանէ մահու մեռանի-
ցիք։ Յայնժամ առէ ցիս օձն. Կենդանի է Աստուած,
վասն զի յոյժ տրտմութիւն ունի[12] անձն իմ վասն
ձեր, և ոչ կամիմ զտգիտանալդ ձեր. արդ ա՛ռ և
կեր ի պտղոյ անտի, և յայնժամ ապա գիտասցես

1. Բ. ֆ-ոոոոյ. իսկ Գ. չունի ոչ պոոոոյ և ոչ ֆ-ոոոոյ։
2. Բ. վ-ոոոս։
3. Բ. ֆ-վ բ-ան փ ոս է.... վ-ս։
4. Բ. կ-ոնիեալ։
5. Բ. Տ-ոոոն Աոոոոծոյ։
6. Բ. ֆ-ոյր սոոոանայ լեալ. Գ. ևս դնէ լեալ։
7. Բ. և ընդ հրեշտակս երգէր վերգս օրհ...։
8. Գ. է կերպս։
9. Բ. ձայնեալ։
10. Բ. զիս։
11. Բ. բայց փոյթ է փոյ։
12. Բ. է ինչ վասն...։

զպատիւ ծառայդ։ Եւ ես ասեմ ցնա. Երկնչիմ զի [1]
գուցէ բարկասցի Տէր ի վերայ մեր՝ որպէս և հրա-
մայեաց մեզ։ Եւ նա ասէ ցիս. Մի՛ երկնչիր, զի յորժամ
ուտիցես ի նմանէ, բանայցեն աչք քոյ առ ի ճանա-
չել զբարի և զչար, քանզի գիտէր Աստուած, թէ
յորժամ ուտիցէք ի նմանէ լինիք իբրեւ զԱստուած [2]
ճանաչել զբարի և զչար. և նախանձեալ ընդ ձեզ՝
վասն այնր ոչ ետ ձեզ հրաման ուտել ի դմանէ [3]. և
արդ գուա առեալ կերիցես ի պտղոյն, և տեսանիցես
զփառս վեհագոյնս։ Եւ իբրեւ լուայ զասացեալսն ի նմա-
նէ՝ բացի զդուռն դրախտին և մտայ [4] ի դրախտն փափ-
կութեան, քանզի արտաքոյ կայի յորժամ խօսեցաւ
օձն ընդ իս։ Իսկ նա [5] զհետ իմ մտեալ՝ ասէ ցիս. Եկ
զկնի իմ, ես տաց քեզ ի պտղոյ անտի. և սկսաւ
գնալ առաջի իմ և ես զհետ նորա։ Եւ իբրեւ գնա-
ցաք առ [6] սակաւիկ մի, դարձաւ յետս, և ասէ ցիս
խաբէութեամբ. Ոչ տաց քեզ ի պտղոյն յայնմանէ ու-
տել՝ եթէ ոչ երդնուցուս ինձ, զի յորժամ ուտիցես դու՝
տացես և առն քո ուտել ի նմանէ։ Եւ իմ ինչ ոչ
իմանալով զպատրողական [7] բանս նորա, և ես ասեմ
ցնա, եթէ Ոչ գիտեմ թէ որպէս երդնուցում քեզ,
բայց զոր ինչ գիտեմ ասացից. և արդ երդնում
քեզ յանթառն տէրունական, և ի քերոբէքն որ բար-
ձեալ ունին զնա, և ի փայտն կենաց, զի յորժամ
կերայց ես, և տաց առն իմում [8]։ Եւ իբրեւ լուաւ
զերդումն զոր երդուայ նմա՝ եկն նոյնժամայն մեր-
ձեցաւ ի ծառն, և առեալ ետ ինձ ի պտղոյ անտի
զծնունդս չարութեան իւրոյ, այսինքն զցանկութիւն.
քանզի ցանկութիւնն է առաջնորդ ամենայն մեղաց։
Եւ կալեալ նորա զնոյն ծառոյն գիտութեանն և

1. Բ և Գ. զի դ գոյգ։
2. Բ. զինքն։
3. Գ. ի նմանէ։
4. Բ. մտի։
5. Բ և Գ. նորա։
6. Բ. չունի առ։
7. Բ և Գ. յաւելուն խաբեբեան։
8. Բ և Գ. յաւելուն որդեա և աստուերդ։

խոնարհեցուցանէր յերկիր, ես [1] առեալ կերայ ի պըտ-
ղոյ անտի, և առժամայն բացան աչք իմ, և գիտացի
և ծանեայ թէ մերկ եմ յարդարութենէ յորմէ՝ զգեցեալ
ունէի, և լացի դառնապէս. և ասեմ [2] ցնա. Օ՜ն,
զի արարեր զայդ, ո՛վ [3] ծնունդ չարութեան. զի պատ-
բեցեր և զրկեցեր զիս ի փառաց զոր ունէի: Լա-
ցի յոյժ վասն երդմանն զոր երդուայ նմա. իսկ նորա
զայս լուեալ՝ ելանէր ի դրախտէն [4] և առժամայն
լինէր անարեւոյթ: Եւ ես խնդրէի տեսեալ ինչ առ ի
ծածկել զմերկութիւն մարմնոյ իմոյ՝ և ոչ գտանէի,
քանզի ոչ դադարէին ի վերայ մարմնոյս [5] տերեւ ծա-
ռոցն ամենեցուն, բայց միայն թզենւոյն. զոր առեալ
ոսպածայ և ծածկեցի զմերկութիւն մարմնոյն իմոյ. և
ձայն տուեալ իմ հօր ձերոյմ և ասեմ. Ադամ, ո՞ւր
ես՝ արի եկ առ իս՝ և [6] ցուցից քեզ զիրս զարմանա-
լիս: Եւ իբրեւ եկն առ իս հայրդ ձեր, ասեմ ցնա
բանս անօրէնութեան՝ որք և արտաքսեցին զմեզ ի
փառաց անտի. և բացի զբերան իմ, զի ստատնայ
տայր ինձ խօսել զբանս հայհոյութեան և զարհա-
մարհանաց. և ասեմ ցնա. Եկ տէր իմ Ադամ և
լուր բանից իմոց, և կերիցես ի ծառոյս յորմէ հրա-
մայեաց [7] մեզ Աստուած չուտել ի նմանէ, դու կեր [8]
և լինիցիս Աստուած: Պատասխանի տուեալ [9] հօրն
ձերում և ասէ ցիս. Երկնչիմ զի [10] բարկացի Ա-
ստուած ի վերայ իմ: Եւ ես ասեմ ցնա. Մի երկնչիր,
զի յորժամ ուտիցես ի նմանէ՝ լինիցի քեզ ճանաչել
զբարի և զչար: Եւ նորա լուեալ պատրողական բա-
նից իմոց՝ և ճաշակեաց ի պտղոյ անտի, և առժա-
մայն բացան աչք նորա՝ և ծանեաւ զմերկութիւն ան-
ձին իւրոյ. և ասէ ցիս. Ո՛վ կին դու, զի՞նչ գործե-

1. Բ և Գ. իմ:
2. Բ և Գ. ասէ՝ ցոյն, զի:
3. յԲ. չէք ո՛վ:
4. Գ. յաւելու անդէ:
5. Բ և Գ. մարմնոյ իմոյ:
6. Բ. և իս:
7. Բ. պատուիրեաց:
8. Բ և Գ. չուտին դու ներ:
9. Բ. ետ հայր ներ:
10. Բ. զի... ծեր. Գ. զի զ:

ցեր զայդ ընդ իս՝ և զրկեցեր զիս [1] ի փառացն Աստուծոյ։ Եւ առժամայն լուաք զձայն Միքայելի հրեշտակապետին, զի փող հարկանէր [2] ասելով ցհրեշտակն ամենայն, եթէ. Այսպէս ասէ Տէր զօրութեանց. եկայք ամենեքեան ընդ իս երթիցուք ի դրախտ անդր, և լուարուք զդատաստանն զոր կամիցիմ [3] դատել զԱդամ և զԵւա։ Եւ մեք իբրեւ լուաք զձայն փողոյն հրեշտակապետին Միքայելի և զասացեալսն ի նմանէ, ասեմք ցմիմեանս. Ահաւասիկ Տէրն գալոց է ի դրախտ այսր [4] առ ի դատել զմեզ, եկայք [5] յո՞ թաքիցուք։

Եւ եկն Տէր Աստուած ի դրախտն՝ նստելով ի վերայ կառաց քերովբէականաց, և հրեշտակք և ամենայն զօրութիւնք [6] առաջի նորա մատուցանէին զօրհնութիւն [7]. և իբրեւ եմուտ Տէր Աստուած ի դրախտ անդր, նոյնժամայն ծաղկեցան [8] ծառքն ամենայն որ շուրջ էին զԱդամաւ և որ [9] զինեւ. իսկ աթոռ աստուածութեան եդաւ առ ծառոյն կենաց։ Եւ Տէր Աստուած ձայն հօր ձերում Ադամայ, և ասէ. Ադամ ո՞ւր ես թաքուցեալ. և արդ կարծես [10] զքեզ թաքուցեալ յամենատես աչաց իմոց, զի ոչ կարիցեմ գտանել զքեզ, քանզի ոչ թաքչի տուն ի չինողէ իւրմէ։ Յայնժամ պատասխանի տուեալ հօր ձերում և ասէ. Տէր իմ, ոչ եթէ թաքչիմք [11] ի քէն՝ կարծելով թէ այլ ոչ գտանես [12] զմեզ. այլ երկնչիմք ի քէն՝ քանզի մերկ էաք։ Ասէ ցնա Աստուած. Ո՞վ պատմեաց քեզ եթէ մերկ ես, բայց եթէ անցեր զպատուիրանաւ իմով՝ զոր ետու քեզ և ոչ պահեցեր զնա։ Յայնժամ

1. Բ. զմեզ։
2. Բ և Գ. հարկանելով, ասէր։
3. Բ. կամիմ գտանել զԱդամ. Գ. ետ յուսեալ և զԵւա։
4. Բ. ասա։
5. Բ և Գ. և երկեսուք յոյժ և թաքեսուք։
6. ՅԲ և ՅԳ. պակասէ զօրութիւն։
ՐԻՆԴ։
7. Բ. յաւելու նմա։
8. Բ. ծաղկիցան։
9. Բ և Գ. նոյնպէս և որ շուրջ կային զինեւ։
10. Բ. կարծես գոս թաքչել։
11. Բ. թաքչիմ։
12. Բ և Գ. գտանիցես։

հայրդ ձեր զմտաւ ածեալ զբանն իմ զոր ասացի նմա, թէ աներկիւղ պահեցից զքեզ առաջի Աստուծոյ. դարձաւ յիս և ասէ. Ընդէ՞ր գործեցեր դու զայս։ Եւ ես ասեմ ցնա. Տէր, օձն պատրեաց զիս։ Յայնժամ ասէ Տէր Աստուած ցհայրն ձեր Ադամ. Փոխանակ զի արարեր դու զայդ և ոչ պահեցեր զպատուիրանս իմ՝ և լուար ձայնի կնոջ քո. անիծեալ լիցի երկիր ի գործս քո, զի գործեսցես զդա և ոչ տացէ զօրութիւնս իւր, այլ փուշ և տատասկ բուսցի քեզ, և քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո։ Եւ դարձեալ ցօձն՝ ասէ ցնա. Փոխանակ զի գործեցեր դու զայդ՝ և եղեր անօթ չարութեան և պատրեցեր [1] զուղիղս սրտիս, անիծեալ լիցիս դու յամենայն գազանաց և յանասնոց, և զրկեսցիս ի կերակրոյ քումմէ՝ յորմէ կերակրէիր. և հող կերիցես զամենայն աւուրս կենաց քոց, և ի վերայ պորտոյ և որովայնի քո գնասցես, և զրկեսցիս ի ձեռաց և յոտից քոց, և ոչ թողցի քեզ ունկն՝ և ոչ թեւք և ոչ այլ ինչ յանդամոց քոց՝ զոր ունիցիս. փոխանակ զի չար հնարիւք քոյով պատրեալ խաբեցեր զդուստ, և արարեր արտաքոյ լինելոյ [2] սոցա ի դրախտէն փափկութեան։ Եւ եղիցի զթշնամութիւն ի մէջ քո և ի մէջ կնոջդ, ի մէջ զաւակի քո և ի մէջ զաւակի դորա. նոքա սպասեսցեն քում դլխոյդ և դու սպասեսցես նոցա գարշապարացն՝ [3] մինչեւ յօրն դատաստանին։ Եւ դարձեալ Տէր ասէ ցիս. Փոխանակ զի լուար օձիդ այդմիկ՝ արհամարհելով զպատուիրանս իմ. եղիցիս դու յաշխատութիւնս անոտիս [4] և ի ցաւս անբառնալիս. ծնցիս որդիս բազում տրտմութեամբ, և յերկունս քո նեղեսցիս, և ի կեանս քո և ի նեղութիւնս քո խոստովան լինիցիս և ասասցես, թէ Տէր, Տէր փրկեա զիս այժմիկ, և այլ ոչ դարձայց ի նոյն՝ մեղան-

1. Ասա Բ և Գ. փոխանակ պատրեցիր դնեն պատրեցեր. և յետոյ երեքեան եւ փոխանակ պատրելոյ դնեն պատրեալ։
2. Բ. լինել այսմ դրախտի։
3. Բ և Գ. ֆոբլ-պոդին։
4. յԲ և յԳ. չիք անոգիս։

չել ի մարմին իմ. և այնպէս ի բանից քոց դատե-
ցայց զքեզ՝ յաղագս թշնամութեանց զոր սերմանեաց
ի քեզ թշնամին. և եղիցի դարձ քո առ այր քո և
նա իշխեսցէ քեզ։

Եւ յետ այսորիկ հրաման ետ Տէր հրեշտակաց իւ-
րոց [1] հանել զմեզ ի դրախտէն փափկութեան։ Եւ իբ-
րեւ հանեալ տանէին զմեզ՝ ողբայաք յոյժ և լայաք
դառնապէս. և ասէ հայրդ ձեր Ադամ. Թոյլ տուք
ինձ սակաւիկ մի զի աղաչեցից զմարդասէրն Աս-
տուած, զի թերեւս գթասցի ի վերայ իմ՝ զի ես միայն
մեղայ. և [2] թոյլ ետուն նմա հրեշտակքն որ [3] հանէին
զմեզ։ Եւ գոչեաց Ադամ ողբալով ի ձայն մեծ և ասէ.
Թող ինձ Տէր զյանցանսն իմ զոր ինչ գործեցի։
Յայնժամ ասէ Տէր ցհրեշտակս [4] իւր. Ընդէ՞ր թո-
ղացուցէք չարտաքսելոյ [5] զդոսա ի դրախտէդ. մի թէ
ե՞ս ինձէն [6] արարի՝ կամանիրաւութեամբ [7] դատեցի
զդոսա։ Իսկ հրեշտակացն անկեալ ի վերայ երեսաց
իւրեանց, և ասեն. Արդար ես դու Տէր և ուղիղ են
դատաստանք քո. և դարձեալ Տէր յԱդամ և ասէ [8].
Ոչ թողից զքեզ յայսմ հետէ լինել [9] ի դրախտի աստ։
Պատասխանի տուեալ Ադամ և ասէ ցՏէր. Տէր իմ
և Աստուած, աղաչեմ զքեզ [10] պարգեւեա ինձ ի տըն-
կոյն կենաց՝ զի ուտիցեմ ի նմանէ յառաջագոյն քան
զելանելն իմ ի դրախտէն կենաց։ Դարձեալ խօ-
սեցաւ Աստուած ընդ [11] Ադամայ և ասէ. Այժմ ոչ
առնուցուս ի դմանէ, քանզի հրամայեցաք քերուբ-
էիցն [12] բոցեղէն սրովն պահել զճանապարհ կենաց,
զի մի՛ ճաշակեսցես ի նմանէ և անմահ մնասցես ի

1. Գ. յաւելու սրբոց։
2. Բ. և ասա։
3. Բ և Գ. տա ի հանելոյ զմեզ։
4. Բ. ընդ հրեշտակսն։
5. Բ և Գ. ընդարտուել։
6. Բ. ի՞ն ինձ։
7. Բ և Գ. անիրաւ։
8. Բ և Գ. յաւելուն ցնա։
9. Գ. յաւելու տեղ։
10. Բ. յաւելու ինձ։
11. Բ. ցԱդամ։
12. Բ. սերուբէիցն։

յաւիտեան. այլ եղիցի ընդ քեզ մարտն քո[1] զոր սերմանեաց ի քեզ Թշնամին, և յորժամ հրաժարեսցես դու ի դրախտէս և պահեսցես զանձն քո յամենայն չարութենէ, և զմտաւ ածիցես զմահ զկնի վախճանելոյ քո, ի լինել յարութեանն յարուցանելոյ[2] զքեզ, և յայնժամ տաց քեզ ի պտղոյն կենաց, և մնասցես անմահ յաւիտեան։ Եւ զայս ասացեալ Տէրն, հրաման ետ հրեշտակաց արտաքս[3] հանել զմեզ ի դրախտէ անտի. և ապա հայրն ձեր Ադամ ելաց գառնապէս[4] ի դրախտին առաջի հրեշտակացն։ Եւ ասեն ցնա հրեշտակքն. Զի՞նչ կամիս զի արասցուք քեզ, Ադամ։ Պատասխանի ետ[5] և ասէ ցհրեշտակսն. Գիտեմ զի այժմ հանէք զիս, այլ թողացուցէք[6] ինձ զի առից անուշահոտ ինչ ի դրախտէ աստի՝ զի յորժամ լինիցիմ արտաքս[7] ի սմանէ և մատուցանեմ պատարագ Աստուծոյ, և Տէր լուիցէ խնդրուածաց իմոց։ Իսկ հրեշտակք մատուցեալք առ Տէր և ասեն. Ո՞յիլ[8] Ո՞յիլ՝ որ թարգմանի թագաւոր յաւիտենական. և հրամայեաց տալ Ադամայ խունկս անուշահոտութեան ի դրախտէ անտի. և հրամայեաց Տէր Աստուած ածել զԱդամ առաջի իւր՝ զի առնուցու խունկս անուշահոտութեան, և զսերմանիս կերակրոց իւրեանց։ Եւ թոյլ տուեալ հրեշտակացն. եկեալ Ադամ առաջի Տեառն, և Տէր Աստուած հրամայեաց տալ նմա չորք իրք, որ են այսոքիկ. կրաւկոն[9] որ է զափարան, և նարդոսն՝ որ է փայլասենի[10], կալամոն՝ որ է եղէգն, և կինամոն՝ որ է դարսենի[11], և այլ բազում սերմանիս ի կերակուրս մեր։ Իբրեւ զայն ամենայն առաք՝[12] ելաք ի դրախտէ անտի. և տեսանէաք եդեալ զմեզ

1. Բ. մարդն քո։
2. Բ. յարուցանիմ։
3. Բ. յունի արտաքս։
4. Բ. յունի գառնապէս։
5. Բ. եւ Ադամ։
6. Բ. Ինչ դու ինչ։
7. Գ. արտաքոյ։
8. Բ. Իսիլ, Իսիլ։
9. Բ. կրաւկոն որ է ղափարան։
10. Բ. քալամենի։
11. Բ և Գ. դարչինի։
12. Բ և Գ. ամ։

յերկրիս յայսմիկ։ Եւ արդ, որդեակք իմ, պատմեցի ձեզ կարգաւ[1] յաղագս ամենայնի և յաղագս խարդախութեան թշնամւոյն, եթէ ո՞րպէս խաբէութեամբ սրտաքսեաց զմեզ. իսկ դուք ահաւադիկ զդոյշ լերուք զի մի՛ և դուք զրկեսջիք ի փառացն Աստուծոյ։

Եւ զայս ամենայն պատուիրեաց Եւա որդւոց իւրոց, և Ադամ կայր առաջի նոցա եղեալ[2] ի ցաւս հիւանդութեան իւրում. իսկ Եւա և որդիք իւր սկսան լալ և ողբալ։ Եւ յորժամ լռեցին, զարթեաւ[3] Ադամ ի քնոյ իւրմէ՝ և ասէ ցնա Եւա. Ընդէ՞ր մեռանիս դու և ես կամ կենդանի, տէր իմ. և կամ քանի՞ ժամանակ գամ[4] զհետ վախճանելոյդ քում՝ ծանո՛ ինձ զհնմարիսն։ Ասէ Ադամ ցԵւա. Ոչ ինչ[5] փոյթ է քեզ հարցանել վասն այդոցիկ, վասն զի մի՛ յապաղեսցես դու գալ զկնի իմ, այլ հաւասար մեռանիցիմք ի միասին, և դիցեն զքեզ մերձ առ իս ի նմին տեղւոջ։ Եւ յորժամ մեռանիցիմ ես ծածկեա զիս՝ և մի՛ զոք թողուցուս տեսանել զիս յորդւոց քոց, մինչեւ հրեշտակն հրամայեսցէ թէ զի՛նչ պարտ իցէ առնել վասն իմ. քանզի ոչ անտես առնէ զիս Աստուած, այլ խնդրէ զանօթս իւր զոր ստեղծ։ Եւ արդ յաւրուցեալ յաղօթս կացցես՝ մինչեւ ելանիցէ հոգի իմ ի ձեռն Տեառն իմոյ տուողին ինձ զսա. ո՜հ, քանզի ոչ գիտեմ թէ ո՞րպէս հանդիպեցայց ստեղծողին. մի՛ թէ բարկանայցէ՞ ի վերայ իմ. և կամ թէ դարձցի՞[6] և ողորմեսցի ինձ գթութեամբն իւրով։ Յայնժամ յարուցեալ Եւա ելանէր արտաքս, և անկեալ ի վերայ երեսաց իւրոց յերկիր՝ լայր և ողբայր դառնապէս, և ասէր այսպէս. Մեղայ քեզ Աստուած, մեղայ քեզ, հայր ամենեցուն, մեղայ քեզ Տէր[7], մեղայ քեզ մարդասէր, մեղայ սերոբէից քոց, մեղայ անչարժ աթոռոյ քոյ, մեղայ քեզ Տէր, մեղայ և սրբութեանն սրբոց քոց,

1. Գ. չունի կարգաւ։
2. Բ. չունի եղեալ։
3. Բ. զարթնայր։
4. Գ. կամ։
5. Բ. զնա. ինչ փոյթ։
6. Բ. դարձցէ՞ ողորմեսցի։
7. Բ. յաւելու ծնողս և հրեշտակաց քոց։

մեղայ քեզ Տէր մեղայ յերկինս և առաջի քո Տէր. քանզի ամենայն մեղք և անօրէնութիւն յինէն սկըզբնաւորեցաւ յաչխարհս [1]։ Եւ իբրեւ զայս աղօթս մատուցանէր Եւա, եկն առ նա հրեշտակն Տեառն մարդկային տեսլեամբ՝ և յարուցեալ զնա ի գետնոյն՝ ասէ ցնա. Արի կաց կին դու յերկրպագութենէ քումմէ, զի ահա Ադամ այր քո փոխեցաւ ի մարմնոյ իւրմէ, և դու հայեաց և տես [2] զի հոգի նորա համբառնայ յերկինս առ արարիչն իւր յանդիման լինել։ Իսկ Եւա յարուցեալ, ձեռաքն իւրովք մաքրէր [3] զերեսս իւր ի բազում արտասուացն, և քանզի էին աչք նորա այտուցեալ ի լալոյն։ Եւ համբարձեալ զաչս իւր յերկինս՝ տեսանէր կառս հրեղէնս ամբարձեալ ի չորից կենդանեաց հրեղինաց, զորոյ լեզու մարդկան [4] ոչ կարէ պատմել զվայելչութիւն փառաց նորա. և տանէին զհոգի նորա ի տեղին՝ յորում կայ [5] Ադամ մարմնովն, և հրեշտակք [6] առաջի կառացն. և իբրեւ մերձեցան յայն տեղին, եկաց կառքն հանդերձ քերոբէիքն, և Ադամ ի վերայ նոցա, տեսանէր և բուրվառս ոսկիս, և երիս հովանոցս, և հրեշտակք [7] գնային խունկս անուշս և բուրվառս առնուին, և երթային [8] փութանակի ի խորանն սուրբ, և բորբոքեալ զհուրն՝ արկանէին խունկս [9] ի բուրվառն, և ծուխ խնկոցն այնպէս ելանէր՝ որպէս թէ ծածկէր զհաստատութիւն երկնից. և խոնարհեալ երկիր պագանէին Աստուծոյ հրեշտակք ամենայն աղաղակելով՝ և ասէին. Ելիսայել [10], որ թարգմանի, Տէր թագաւոր յաւիտենից թողու-

1. Բ. յինին սկզբնաւորեցան յաչխարհի։
2. Բ և Գ. տես զոքի նորա առ թանալով։
3. Բ. մաքրէր զաչսսսսսս յերեսսոց իւրոց։
4. Բ և Գ. մարդկան գլխարանայ սա ի պատմել։
5. Գ. կայր։
6. Բ. հրեշտակք երթային սառ նորա կացան։
7. Բ. հրեշտակն զի գային սանելով խունկս. Գ. զի գնային։
8. Բ. յանելու սառ նորա։
9. Գ. զխունկն ի բուրվառն։
10. Բ. Իլիսել։

թիւն չնորհեա Ադամայ[1] և գործոյ անարատ ձեռաց քոց։

Տեսանէր Եւա այլ եւս զքանչելիս[2] առաջի Աստուծոյ, և լայր դառնապէս։ Դարձաւ[3] Եւա՝ ձայն ետ որդւոյ իւրոյ Սեթայ, և ասէ. Որդեակ իմ, արի՛, կաց ի վերայ մարմնոյ հօր քոյ[4], և տես զհրաշալի տեսիլն զոր ոչ ոք ետես. և տես, թէ որպէս աղաչեն հրեշտակք ամենայն զՏէր՝ յաղագս հօրն քում Ադամայ։ Իսկ Սէթ յարուցեալ երթայր առ մայրն իւր. և ասէ ցնա. Ընդէ՞ր լաս, մայր իմ։ Պատասխանի ետ նմա մայրն իւր և ասէ. Նայեա ի վեր. և տես աչաք քոյովք զհաստատութիւն երկնից բացեալ՝ և[5] զանձն հօր քո, թէ որպէս անկեալ կայ առաջի Աստուծոյ ի վերայ երեսաց իւրոց. և հրեշտակք[6] եւս զի աղաչէին զՏէր վասն նորա ասելով այսպէս. Թողութիւն չնորհեա, Տէր, Ադամայ, որ Աստուածդ ես անոխակալ և Տէր ես ամենեցուն, քանզի պատկեր քոյ է։ Արդ, որդեակ իմ Սէթ, զի՞նչ[7] լինիցիմ ես եղկելիս՝ յորժամ տանիցեն զիս առաջի աներեւութին Աստուծոյ. և արդ, ո՞վ իցեն երկու արքն այնքիկ Եթոպացիքն[8] որ կան առաջի Աստուծոյ, աղաչելով զնա յաղագս հօրն քո Ադամայ։ Ասէ ցնա Սէթ. Ո՛վ մայր իմ, արքն այնքիկ[9] զոր տեսանես՝ արեգակն և լուսին են, որ կան և աղաչեն զԱստուած՝ անկեալք ի վերայ երեսաց իւրեանց՝ յաղագս հօրն իմոյ Ադա-

1. Բ և Գ. յաւելուն ։ոնդի պարգեր ։ո և ։ որդի։ անարատ։
2. Բ. յաւելու ։ զնանչն և զարմանալիս։
3. Բ. Ե՝ դարձեալ յոյժ զարմացեալ Սեթոյ արդոյ իւրոմ և ասէ. Գ. ։ետ զնէ և դարձեալ։ իւրոմ։
4. Բ. ։ոյ, և ել ։ա ։, և տես զարմանալի ։ոյ։ ։ զարմանալի։
5. Բ. և տես.
6. Բ. և զհրեշտակս ամենայն, զի։ իսկ Գ. զհրեշտակսն ամենայն։
7. Բ և Գ. զինչ լինիցի ինչ յարմամ լայցեմ ապագի։
8. Գ. Եթիոպացիքն։
9. Բ. յաւելու Եթիոպացիք։

մայ։ Եւ ասէ ցնա Եւա. ո՞ւր իցէ լոյս նոցա, զիարդ մթացեալ[1] երեւին։ Պատասխանի ետ Սէթ և ասէ. Ոչ եթէ ի բաց եդեալ է լոյսն ի նոցանէ, այլ ոչ երեւի լոյս նոցա առաջի Հօրն լուսոյ, վասն զի ծածկի պայծառութիւն նոցա ի փառաց և ի մեծապայծառութենէ[2] յերեսաց Հօրն Աստուծոյ[3]։

Իբրեւ զայս խօսէր[4] Սէթ ընդ մայրն իւր Եւա յանկարծակի մի ոմն ի հրեշտակացն հնչեաց[5] զփողն և առժամայն յարեան հրեշտակք ամենայն՝ որք անկեալ դնէին[6] ի վերայ երեսաց իւրեանց առաջի Աստուծոյ. և գոչէին մեծաձայն[7] հնչմամբ և ասէին Օրհնեալ են փառք Տեառն յարարածոց իւրոց, վասն զի ողորմեցաւ ստեղծուածոյ ձեռաց իւրոց՝ Ադամայ Եւ զայս իբրեւ աղաղակեցին հրեշտակք, եկն մի ոմն ի վեցթեւեանն սրովբէիցն, և յափշտակեաց զԱդամ և տարաւ զնա ի ծոմն անձեռագործ, և լուաց զնա երիցս անգամ, և դարձեալ երեր և եդ զնա առաջի Աստուծոյ. և արարեալ նորա ժամս երիս[8] անկեալ ի վերայ երեսաց իւրոց յերկիր։ Իսկ յետ այսորիկ արձակեալ զձեռն իւր որ հայրն է ամենեցուն՝ ոչ կայր նստեալ ի վերայ աթոռոյ իւրոյ, և առեալ զԱդամ ետ զնա ի ձեռն Միքայելի հրեշտակապետին. ասելով ցնա. Տար զդա յերկրորդ յերկինս, հանգիր մինչեւ յօրն մեծի նորոգման. զի[9] կամիմ առնել զփրկութիւն յերկրի՝ յաղագս Ադամայ և ամենայն ծննդոց իւրոց։

Յայնժամ առեալ զԱդամ Միքայէլ հրեշտակապետն և տարեալ հանդոյց[10] զնա. ուր հրամայեաց նմա Աստուած. և ամենայն հրեշտակքն երգէին զօրհնաբանութիւնս և զերգս հիեշտակական. զարմանային ընդ

1. Գ. մթնացեալ։
2. Բ. Ի ի պայծառութենէ Հօրն։
3. Գ. լուսոյ։
4. Բ. ասէր Սէթ մայրն։
5. Բ. հնչեցոյց։
6. Բ և Գ. նստին։
7. Բ և Գ. հնչմամբ մեծաձայն ահաւոր. որ և։
8. Ամենեքեան դնեն երիցս։
9. Բ և Գ. զոր։
10. Բ և Գ. հանդիսացանէր։

մարդասիրութիւնն Աստուծոյ և ընդ[1] առնել զթողութիւն Ադամայ։ Իսկ յետ անչափ խնդութեանս որ լինէր վասն[2] Ադամայ, խօսեցաւ Միքայէլ հրեշտակապետն ցՀայրն լուսոյ վասն[3] Ադամայ. և ասէ. Տէր, ժողովեցին հրեշտակք ամենայն առաջի Աստուծոյ, իւրաքանչիւր ոք ըստ կարգի իւրում։ Եւ ժողովեցան ամենեքեան. ոմանք զբուրվառս ի ձեռն[4] ունելով, և ոմանք քնարս և փողս հնչէին[5]։ Եւ ահա Տէրն համբարձաւ[6] փառօք ի վերայ չորից հողմոց, և սերովբէք բուռն հարեալ ունէին զհողմոց, և հրեշտակք յերկնից իջանէին[7], և դային առաջի նորա ամենեքեան, և իջանէին յերկիր ի տեղւոջն յայնմիկ, յորում կայր անկեալ մարմին Ադամայ. և անտի երթեալ Տէրն մտանէր ի դրախտն[8] երկնաւոր զօրքն։ Յայնժամ տունկք և ծառք[9] ծաղկեալ պտղաբերէին առ հասարակ, և բուրէր անուշահոտութիւն. մինչեւ ամենեցուն որ ծնեալ էին յԱդամայ, թմբրեալք լինէին, և ի քուն ննջէին ի բուրմանէ անուշահոտ ծաղկանց դրախտին. բայց միայն Սէթ[10] որ ոչ թմբրեցաւ. քանզի Տէր կամեցաւ ցուցանել նմա զաքանչելիսն զոր գործելոց էր։ Իսկ Տէր Աստուած նայեցեալ տեսանէր զմարմինն Ադամայ այնպէս յերկիր անկեալ, տրտմեալ լինէր յոյժ՝ մարդասիրութեամբն իւրով, և ասէ. Ո՞վ Ադամ. ընդէ՞ր գործեցեր զայդ, զի թէ պահեալ էիր զպատուիրանս զոր ետու քեզ, ոչ ուրախ լինէին այնոքիկ՝ որք ածին զքեզ ի տեղիդ յայդմիկ. բայց այժմ ասեմ քեզ, զի յորժամ փրկութիւն իմ յայտնեսցի աշխարհի, զու-

1. Ա և Գ. ունէին այսպէս. և զընդարձակել ի թողութիւն Ադամայ. իսկ մեք եղաք ըստ Բ. օրինակին։
2. Բ. չունի վասն։
3. Բ. չունի վասն Ադամայ։
4. Բ. ասելով ի յեռ իւրեանց։
5. Բ և Գ. չունին հնչէին։
6. Բ. Եւ ամբարձեալ յերկին ի վերայ։
7. Բ. իջեալ էին առաջի նորա, և դային ամենեքեան։
8. Բ. յաւելու հանգիստ։
9. Բ. յաւելու գրեթէ։
10. Բ և Գ. ի Սեթայ,

բախութիւն նոցա դարձուցից ի տրտմութիւն, իսկ զտրտմութիւն քո դարձուցից յուրախութիւն։ Զի զքեզ դարձուցանեմ յառաջին փառսն քո, և նստուցանեմ զքեզ յաթոռ պատրոդին քո. և նա եկեսցէ յայդմ տեղիդ՝ յորում դու կաս անկեալ[1] այժմիկ. և տեսանելով զքեզ վերագոյն եղեալ քան զինքն, և ապա դատապարտեալ[2] տեսանէ զինքն և զամենայն կամարարս իւր. յայնժամ առաքեմ զնոսա ի գեհենն հրոյ՝ և զարհուրեսցին յոյժ, և տրտմիցի ի տեսանելն զքեզ նստեալ ի յաթոռ նորա։

Եւ իբրեւ խօսեցաւ Աստուած զբանս զայս ընդ[3] Ադամայ, դարձեալ Աստուած ասէ ցհրեշտակապետն Միքայէլ. Երթ յարքայութիւն որ է յերկինս, և առցես անտի երիս պատառակաւ ի սպիտակս և ծիրանիս, և բերցես այսր. և նա[4] երթեալ կատարէ զհրամայեալսն ի Տեառնէ։ Եւ հրամայեաց Աստուած Միքայէլի հրեշտակապետին[5] պատել զմարմինն Ադամայ, ասելով այսպէս. Սփռեցէք զպաստառակալսդ զայդոսիկ և պատեցէք զդա, և բերջիք յիւղոյն օծման անուշահոտութեանն, և արկջիք ի վերայ դորա. և աբարին հրեշտակապետքն Միքայէլ՝[6] և Ուրիէլ որպէս հրամայեաց նոցա Տէր։ Եւ իբրեւ պատեցին զմարմինն Ադամայ, հրամայեաց Աստուած ածել զմարմինն Աբելի արդարոյ, և նոքա բերին[7] և եդին առաջի Աստուծոյ. և հրամայեաց Աստուած բերել[8] պաստառակալս՝ և պատել զմարմին Հաբելի արդարոյ. վասն զի ոչ էր պատեալ յումեքէ մարմինն նորա՝ յօրէ

1. Բ. չունի անկեալ։
2. Բ և Գ. դատապարտեալ ինքն և ամենայն կամարարս իւր, և տուտիքն է հուրն գեհենին (Գ. է գեհենն հրոյ և զամենայն) և տեսանելով զքեզ նստեալ։
3. Բ և Գ. զԱդամ, դարձեալ։
4. Բ և Գ. նորա.. կատարեր։
5. Բ. յաւելու և Գաբրիէլ հրեշտակապետին և Ուրիէլ հրեշտակապետին։
6. Բ. չունի Միքայէլ և Ուրիէլ։
7. Բ. բերեալ։
8. Բ և Գ. յաւելուն այնպիսի։

։ոյին։ Եւ Յովսէփ եկեր և արբ. և ասէ, ցանկունսն
։ի լծեսցեն զձիս և զկառսն. վասն զի ասաց թէ
Յրթայց ընդ երկիրս ընդ այս։ Եւ ասէ Պետափրէ
։Յովսէփ. Հանգիցէ տէր իմ այսօր աստ, և վաղիւն
։երթիցես զճանապարհն քո։ Եւ ասէ Յովսէփ. Ոչ
։այդպէս. այլ գնացից այսօր, վասն զի այս օր է յո-
։ւմ սկսաւ առնել Տէր զամենայն արարածս իւր։
Յեւ յաւուրն եօթներորդի յորժամ դարձցի օրս այս՝
։արձայց և ես առ ձեզ, և[2] հանգեայց առ ձեզ։

Եւ գնաց Յովսէփ զճանապարհ իւր. և Պետափրէ

1. Գ. ոգեղ ծնեալդ քո։ 2. ՀԳ. չէք և հանգիստ առ ձեզ։

ընտանեաք իւր գնացին ի ժառանգութիւն իւրեանց. և մնաց Ասանէթ միայն հանդերձ եօթն կուսանաք. և ծանրանայր և լայր մինչեւ ի հաչել արեւուն. և հայ ոչ եկեր և ջուր ոչ էարբ։ Եւ եղեւ իբրեւ մերձեցան գիշերն, և ննջէին ամենեքին որ ի տանն էին, և Ասանէթ միայն արթուն էր, և զմտաւ ածէր զՑովսէփ, և լայր և կոծէր [1] զկուրծսն սաստկապէս, և երկնչէր երկիւղ մեծ և դողայր ի դողումն սաստիկ։ Եւ իբրեւ խաղաղացան ամենեքեան, յարեաւ Ասանէթ ի տախտէն իւրմէ, և էջ հանդարտ ընդ սանդուխն՝ ի վերնատանէն, և եկն մերձ ի յերկանս երկանաղացն և երկանաղացն ննջէր հանդերձ որդւովքն. և փութացաւ Ասանէթ և քակեաց ի դրանց զխորգ վրագուրաց, և ելից զնա մոխրով ի հնոցարանէն. և հանեալ ի վերնատուն՝ եդ ի վերայ գետնոյն, և առեալ զդուրսն փակեաց դռնափակովքն. և հառաչեաց հառաչմամբ մեծաւ և արտասուաք։ Եւ լուան դայեակն հանդերձ կուսանաքն՝ որ էին ընդ նմա ննդակից, զոր սիրէր Ասանէթ քան զամենայն կուսանան [2]. եկին ի դուրսն Ասանեթայ, և գտին զդրունսն փակեալ, և լուան զհառաչանսն և զլալումն, և եկին ի դուրս նորա և ասէին. Զի՞ է քեզ, տիկին մեր Ասանէթ, և զի՞նչ է որ վշտացուցանէ [3] զքեզ. բայց մեզ և տեսցուք զի՞ եղեւ քեզ։ Եւ ոչ երբայց Ասանէթ զդրունսն. բայց ի ներքուստ ասէ ցնոսա. Գլուխս իմ ծանրացաւ, և ոչ հանգչիմ յանկողնի իմում. և յառնել և բանալ ձեզ ոչ կարեմ. վասն զի տկարացայ յամենայն անդամոց իմոց. և դուք գնացէք յիւրաքանչիւր սենեակս և հանգերուք, և թոյլ արարէք ինձ, զի ես դադարեցիս, և [3] սակաւ մի հանգիստ առիս։

Եւ կուսանաքն վասն բանի նորա չոգան իւրաքանչիւր ի սենեակն։ Ցայնժամ յարեաւ Ասանէթ, և երբայ

1. Գ. յաւելու յԵրուսաղէմ։
2. Գ. յաւելու և զորիոյց զայլ և զի՞ յոսանան, և փրկի։
3. Գ. զարգիցուցանէ։
4. Ա և Գ. զգիրովիրմոլցաւ ծանրացաւ։
5. յԱ. չէք և սակաւ ի հանգիստ առիս։

դուրան լռելեանս, և չոգաւ յերկրորդ[1] սենեակն, ուր էին սապատք զարդուց նորա. և[2] բացեալ զարկղն՝ և եհան զագանելիսն սեաւս և թիւրաթուխս[3]. և այն որ հանդերձ նորա սգոյ, յորժամ մեռաւ եղբայրն նորա կրտսեր՝ զայն հանդերձն զգեցեալ էր Ասանէթ, և զայնիւ սգայր զեղբայր իւր։ Եւ ագաւ[4] Ասանէթ զսեաւ զագանելիս իւր, և եբեր ի սենեակս իւր. և եդեալ զդրունսն փակեաց դռնափակովքն. և փութացաւ Ասանէթ, և եհան զհանդերձսն զարքունականսն և զբեղեղսն և զընդելուզեալ ոսկւով ծիրանիսն, և զգօտին ոսկի, և զթագն գլխոյ, և զապարանջսն ի ձեռացն և յոտիցն. և առեալ ընկէց զամենայն ընդ պատուհանն, որ հայէր ընդ հիւսիսի. և փութացաւ Ասանէթ և էառ նոյնպէս զչաստուածսն[5] ամենայն զոսկեղէնս և զարծաթեղէնս, որոց ոչ գոյր[6] թիւ համարոյ, ընկէց ընդ պատուհանն ի վերնատանէն[7]. և առ զընթրիսն իւր զարքունականսն Ասանէթ զհացն և զձուկն և զմիս երնջոցն, և զամենայն ողջակէզս չաստուածոցն իւրոց, և զկահ գինւոյն՝ յորում ողջակէզն առնէր, և ընկէց վնա ընդ պատուհանն. և ետ զամենայն կերակուր չանց օտարաց. վասն զի ասաց Ասանէթ. Մի գուցէ կերիցեն չունք իմ յընթրեաց[8] ի յողջակիզացն զառանց կռոց, այլ կերիցեն չունք օտարաց։ Եւ եղեւ յետ այսորիկ, և առ Ասանէթ[9] զմաշկ քրձին, քակեաց զոր ելից մոխրով, և տարեալ զայն ի վայր. և ածաւ քուրձ ընդ մէջ իւր, և լու-

1. Ա. յերրորդ։
2. ՅԱ. պակասին բառք ինչ։
3. Ա. Ի-ուրաթուխս՝ վասն զի այն։
4. Ա և Գ. ուղղագոյն դնեն և զոր Ասանէթ։
5. Ա. յաւելու եէէպտոսի. ՅԳ. պակասք սոյնպէս և արձանիւ-զին։
6. Ա. զէ գոյր համար. Գ. որոց զէ էր համար։
7. Ա. յաւելու ի վայր։
8. Ա. յընթրեաց և յողջակիզաց կռոցն՝ զի մի զգիտիցին յայսմ հետէ՝ այլ կերիցեն վասն օտարաց։
9. Ա. Ասանէթ զգուրյան զոր ի էր մոխրով, և արկ ի վերայ յատակի գետնոյ տանն, և տկնոյց զմալն երկին և եղծ ընդ գետին, և տկնոյց զհնոյն։

ծեալ զհիւսեակս հերացն, և արկ ի վերայ գլ
իւրոյ[1] զմոխիրն ի մէջ գետնոյն, և բախեաց ձե
զկուրծսն, և ելաց լալիւն մեծ[2] դառնապէս զգլ
ամենայն կոծելով մինչեւ ցառաւօտն։ Եւ եղեւ
առաւօտանալն, և ետես Ասանէթ զմոխիրն կաւա
յարտասուացն՝ որ ի վերայ տանն յատակին։ Եւ
ձեալ անկաւ[3] ի վերայ երեսաց իւրոց մինչեւ
կոյն մերձ ի հաչել արեւուն. և այսպէս արար
նէթ մինչեւ յեօթներորդ օրն. այլ չարչարէր և
ռապեցուցանէր զանձն իւր յեօթն աւուրսն, հ
եկեր և ջուր ոչ արբ։ Յաւուրն ութերորդի ընդ առ
տանալն յորժամ սկսաւ ճանչիւն հաւուցն լինել, և
ջիւն չանց ի ճանապարհորդսն, համբարձեալ զ
իւր ի վեր, վասն զի էին կթուցեալ և լուծեալ
դամք իւր առ կարօտութեան կերակրոցն եօթն աւո
և անկեալ[4] ի ծունկսն՝ եդ զձեռն ի վերայ գես
ի վայր ունելով զգլուխն. և էր հեր գլխոյն լու
և փթթեալ ի սաստկութենէ մոխրոյն. և ձեռն կ
Ասանէթ աչխարէր զգլուխ իւր, և կոծէր զկ
իւր, յոգւոց հանէր մեծապէս և հառաչէր, զհեր գ
իւր ճողէր, և մոխիր ի վերայ արկանէր։ Եւ
պէս աչխատեցաւ Ասանէթ և նեղասրտեցաւ և
րացաւ ի զօրութենէ իւրմէ. և դարձաւ յորմն
և նստաւ ի վերայ պատուհանին որ հայէր յարեւ
և զգլուխն եդ ի գոգ իւր, և կցեաց զձեռն ի

1. Ա. իւրոյ և ցանիւոյ (Գ. ցընդ-
ուոյց) զմոխիրն ընդ մէջ գետ-
նոյն։

2. Ա. մեծ. և այսպէս ասէր Ա-
սանէթ զգիւլուն ամենայն։ Եւ
յաւուրն եօթներորդի յորժամ
սաստիկ եղև և սկսաւ ճչել
(Գ. ճաչիւն) հաւուցն լինել,
համբարձեալ զաչս իւր։

3. Ա. կանգնեալ (Գ. ելանգնեալ) է
ծունկս իւր, յոգոց եհան մեծ-
պէս, և զհեր գլխոյն իւ-
րոյ և մոխիր ի վերայ ի
նէր։ Եւ ապա գոչեաց
նէն։

4. Գ. յաւելու է վերայ
գանն։

5. Գ. յեսուսէց լալ։

6. Ա. ընդ յորսելս, և
իւր եդ է գոգ իւր, և ի
գրալ նէն։

-նկացն իւր. և խօսք ամենեւին հատեալ էին ի բե-
ռանոյ նորա, և ոչ եբաց Աստանէթ զբերան իւր
ռօթն[1] օր ի նեղութեան իւրում. և ասաց Աստանէթ
ռ սրտի իւրում, թէ Զիմնչ գործեցից, կամ զո՞ արա-
ռից ապաւէն, կամ յո՞ երթայց կոյս որբ և անոք[2].
Ծողեալ ատեցեալ ամենեցուն զիս՝ ի հօր իմոյ ատեցեալ
ռղէ. վասն զի ես ատեցի զաստուածսն նոցա, զոր կո-
ռուսի զնոսա, և կոխումն արարի ամենայն մարդկան,
ռ վասն այսորիկ ատեցին[3] զիս հայր և մայր իմ և
ամենայն ազգականքն իմ. և ասաց հայրն իմ. Ոչ եւս
ռոչեսցի մեզ դուստր Աստանէթ, վասն զի կորոյս զչաս-
ռուածսն մեր զոսկեղէնս և զարծաթեղէնս. և ահա ա-
ռեալի եղէ ամենայն մարդկան, վասն զի ամբարտաւա-
ռեցի ես զամենայն մարդովք և զամենեքումբք[4] որոց
ռասէին զիս. և այժմ յայս նեղութեանս իմում ատելի
ռղէ ամենեցունց. և ուրախ եղէ ընդ նեղութիւնս
ռմ։ Զայս միայն խորհէր, և[5] ասէր. Տէր Աստուած
ռարձրեալդ Յովսեփայ, որ ատես զամենեսեան որ պաշ-
ռտեն զկուռս մեռեալս և համերս և անշունչս, վասն զի
ռու ես Աստուած վրէժխնդիր և ահաւոր ի վերայ
ռաստուածոց օտարաց։

Յաղագս այսորիկ և զիս ատեաց[6] Աստուած. զի ես
ռպաշտեցի զկուռսն անմռունչս և համերս և անշունչս, և
ռրհնեցի զնոսա և[7] կերայ ի զոհից նոցա, և բերան
իմ պղծեցաւ ի սեղանոյն[8], և ոչ ունիմ իշխանութիւն
ռարդալ առ Աստուած երկնից[9] և առ բարձրեալ փեր-
ռչիչն Յովսեփայ. վասն զի ապականեցաւ անձն իմ ի
զոհից կռոցն և ողջակիզաց նոցա. և արդ լուայ յո-
Ռանց՝ զի Աստուածն ճշմարիտ է Եբրայեցւոցն, և Աս-

1. Ա. վեցն օր և ասաց է արդ
իրամ։
2. Ա. տիրեալ զիս ... ա-
գրեալ։
3. Ա. ատեալ։
4. Ա. զամենեքումբ որ խօսեին ընդ
ի։
5. Ա. և յեր այսորիկ։
6. Ա. ատեցեալ։
7. Ա. յաւելու և ՝ի երայ զհոց
նոցա։
8. Ա. ի զոհից նոցա։
9. Ա. երնի և երնի։

տուած կենդանեաց է, Աստուած ողորմած, երկայնամիտ է և բազումողորմ[1], և ոչ համարի մարդոյ[2] զմեղս. համբերէ ապաշխարողի, և ոչ յանդիմանէ զմարդ ի ժամանակի նեղութեան իւրոյ։ Եւ արդ համարձակեցայց և դարձայց առ նա, ապաւէն արարիցն զնա, և խոստովան եղէց նմա զամենայն մեղս իմ, և հեղից զպաղատանս իմ առաջի նորա, և ողորմեսցի ինձ։ Ո՛ գիտէ եթէ հայի ի տառապանս իմ[3], թերեւս հայեսցի յամայութիւնս և գթասցի յիս։ Ո՛ գիտէ[4] եթէ տեսցէ զողբումն իմ, և օգնեսցէ ինձ. վասն զի նա է հայր որբոց և օգնական նեղելոց. համարձակեցայց և աղաղակեցից առ նա, զի թերեւս թողութիւն արասցէ ինձ։

Եւ յարեաւ Սանէթ յորմոյն յոր[5] նստէրն, և դարձաւ ի պատուհանն որ հայէր ընդ արեւելս. և կանգնեցաւ ի ծունգսն իւր, և համբարձեալ զձեռս իւր յերկինս, և երկեաւ Սանէթ բանալ զբերան իւր յերկինս և ասել զանունն Աստուծոյ։ Դար՝ աւ անդրէն յորմն կոյս և նստաւ, և եհար ձեռամբ[6] զկուրծս իւր և զգլուխն բազում անգամ, և խօսէր ի սրտի իւրում, զբերանն ոչ բանալով, և ասէր. Ո՛վ տառապեալ՝ որբ և ամայացեալս. բերան իմ ի զոհից կռոցն պղծեալ է յօրհնելոյ զաստուածսն Եգիպտացւոց. և այժմ արտասուօք իմովք այսու և մոխրովք չարչարեցից զմարմին իմ. սակայն և այժմ ոչ իշխեմ բանալ զբերան իմ, և օրհնել զանուն քո սուրբ և ահաւոր. մի՛ դատեցէ բարկասցի ինձ Աստուած վասն կարդալոյ զանունս նորա սուրբ։ Արդ զի՞նչ գործեցից ես թշուառականս. համարձակեցայց և բացից զբերան իմ առ նա, և եթէ սրտմտեալ ընթադրեսցէ զիս՝ կարող է դարձեալ

1. Ա. յաւելու և հարբերող։
2. Ա և Գ. ողորմիչ. և ոչ յանդիմանէ։
3. Ա. իմ և ողորմեսցի ինձ, ինչու հայեսցի յամաստանիս իմ և գթասցի։
4. Ա. ՝ գիտէ զի՞ զողորմանս և օգնեսցէ։
5. Ա. յորմ. Բն. որ։
6. Ա. զգլուխ իւր յեռամբ իւր և ասէ. Արդ զի՞նչ գործեցից։

բժշկել զիս։ Եթէ[1] խրատեսցէ զիս տանջանաք, կա-
ղող է կրկին[2] մխիթարել զիս, և ի խրատելն դար-
ձեալ նորոգեսցէ զիս ողորմութեամբն իւրով։ Եթէ
տրտմեսցի[3] վասն մեղաց իմոց, հաշտեսցի ընդ իս, և
թողցէ զամենայն մեղս իմ։ Արդ համարձակեցայց և
բացից զբերան իմ առ նա, թերեւս ողորմեսցի ինձ և
թողցէ զմեղս իմ[4]։

Եւ յարեաւ Ասանէթ յորմոյ անտի, և կանգնեցաւ
ի ծունգս իւր, և համբարձեալ զձեռս իւր յարեւելս՝
հայեցաւ յերկինս, երաց զբերան իւր առ Աստուած,
և ասէ. Տէր Աստուած յաւիտեանց[5], որ ստեղծեր զա-
մենայն և կենդանացուցեր[6], կենդանութիւն ամենայն
արարածոց քոց. որ հաներ զաներեւոյթս ի լոյս[7]. որ
ստեղծեր զարարածս քո զերեւելիս յաներեւութից և
յոչէից[8]։ Որ բարձրացուցեր զերկինս և հիմնեցուցեր
զնա ի վերայ հողմոց. որ հաստատեցեր զերկիրս ի
վերայ ջուրց սուրբ քարամբք քով։ Որ հեղեր[9] քարինս
մեծամեծս ի վերայ ջուրց. քարինք ոչ ընկղմին, այլ
են իբրեւ զտերեւ կաղնոյ ի վերայ ջուրց. և են քա-
րինքն կենդանի, և ձայնի քում լսեն, Տէր։ Վասն
զի դու, Տէր, կենդանարար ես ամենայն արարածոց
քոց. ի քեզ ապաւինիմ, Տէր, և առ քեզ սփռեմ ըզ-
պաղատանս իմ, և քեզ[10] յայտնեցից զանօրէնութիւնս
իմ։ Խնայեա յիս, Տէր, զի մեղայ և յանցեայ առա-
ջի քո, Տէր. բազմապատիկ մեղայ և անօրինեցայ,
ամբարշտեցայ, և խօսեցայ բանս չար և անճառելի.
պղծեցաւ բերան իմ ի զոհից կռոցն. յաղագս որոյ
բազում անգամ պղծեցայ անգիտութեամբ, և պաշ-

1. Ա. յաւելու դարձեալ։
2. Ա. դարձեալ նորոգելոյ զիս ողոր-
մութեամբ իւրով։
3. Ա. տրտմեսցի (Գ. ևս տրտմեսցի)
ընդ իս, դարձեալ հաշտեսցի ի-
նոցին զմեղս իմ։ Արդ։
4. Ա և Գ. ինչ։
5. յԱ. չիք յաւիտեանց։
6. Ա. և Գ. որ հոգոյ լուսոյ ինն-
դանութիւն։
7. Յաւելու բառս լոյս ըստ Ա.
օրինակին։
8. Ա. յունչ։
9. Ա և Գ. եղեր... ի վերայ անդնդ-
դոց ջրոց։
10. Բն. ի։

տեցի զկուռս մեռեալս և զհամերս։ Եւ արդ ոչ եմ
արժանի բանալ զբերան իմ վասն բազում մեղաց ի-
մոց։ Ես Աստանէթ դուստր Պետափրէ քրմին[1] դշխոյ
որ եմ, էի երբեմն դժոխք և ամբարտաւան և ամբարա-
հաւաճ, և բարձրացեալ մեծութեամբ քան զամենայն
մարդ. այժմ որբ եղէ և ամայի[2], թողեալ յամե-
նեցունց. առ քեզ ակն ունիմ[3], Տէր, և առ քեզ ա-
ղաղակեմ. դու փրկեա զիս յառաջ քան զհատանելն
հալածանաց իմոց։ Զի որպէս մանուկ տղայ զարհու-
րեալ[4] փախչի առ հայրն իւր, և հայրն ձգեալ զձեռն
առցէ[5] զնա ի գետնոյն. և մանուկն պնդէ ձեռամբն
զպարանոցաւ հօրն, և ապահովասցի յահէն[6] և
հանգչիցի ի գիրկս հօրն իւրոյ. այնպէս և ես խոռ-
վեալ եմ յամենայն կողմանց, և առ քեզ, Տէր և հայրդ
իմ, փախստական անկանիմ. արդ դու ձգեա զձեռն
քո, և յափշտակեա զիս յերկրէ։ Զի ահաւասիկ վայ-
րենի և ծերացեալ առիւծն փախստական[7] առնէ
զիս. զի նա է հայր աստուածոցն Եգիպտացւոցն. վասն
զի որդի[8] առիւծի են ամենայն կուռք հեթանոսաց.
և ես ընկեցի զամենայն աստուածսն ի բաց և կորուս-
սի զնոսա, և առիւծն հայրն նոցա սրտմտեալ հալա-
ծէ զիս։ Ապրեցո զիս, Տէր, ի ձեռաց նորա, և ի բե-
բրանոյ նորա փրկեա զիս. մի՛ գուցէ յափշտակէ զիս
և զէշ զէշ պատառէ և արկցէ[9] ի հուր հնոցի, և հուրն
արկցէ ի մէջ մրրկի. մրրիկն շաղապատէ զինեւ, և խա-
ւարեցուցանէ զիս, և արկանէ զիս յանդունդս խորոց,
և կլցէ զիս կէտն[10] մեծ, որ ի սկզբանէ էր, և կորեայց[11]
յաւիտեանս ժամանակաց։ Փրկեա զիս, Տէր, յառաջ

1. Ա. երդն որ ալիսուրեի երբեմն և
ամբարտահաւաճեի և ամբար-
տաւան եի և բանդրացեալ մե-
ծութեամբ. Գ. որ եմ և եի երբ-
եմն դժոխք։
2. Ա. ապեալ։
3. Ա. անդանիմ։
4. Ա. յորժամ (Գ. ևս յորժամ),
զարհուրեալ։
5. Ա. առնու զնա յափշտակեալ է
ի գետնոյ։
6. Ա. յերկիւղն։
7. Ա. հալածական։
8. Ա. որդիք աստուածոցն և ընդ-
ի զամենայն։
9. Արկանէ զնա ի հուր հնոցի,
և հնոցն։
10. Ա. գետն մեծ։
11. Ա. խրեսա։

ան զգալն այսր ամենայնի ի վերայ իմ. փրկեա և ամ-
ացո[1] զօտարացեալս, վասն զի մայր իմ և հայր իմ ուրա-
ան զիս և ասացին. Ոչ է մեր[2] դուստր Աստանէթ, վասն
ի կորոյս զաստուածսն մեր և ատեաց զնոսա[3]. յա-
ագս այսորիկ ատելի եղէ նոցա և[4] ամայի և որբ.
լոյս ի քեզ եղէ, Տէր, և ոչ այլ ոք. յայլ ոք ոչ ապա-
ենիմ, բայց միայն ի քեզ, Տէր. զի դու ես հայր որբոց
հալածելոց և օգնական նեղելոց։ Ողորմեա ինձ
ուանիս և տառապելոյս և որբոյս. զի դու ես բարի
քաղցր հայր և մայր։ Ո՞ հայր է իբրեւ զքեզ, Տէր[5],
աղցր, և ո՞ր մայր գթած որպէս զքեզ Տէր. և ո՞վ
ոկայնամիտ մեղուցելոց իբրեւ զքեզ։ Ահա զամե-
այն[6] զոր ես ինձ հայր իմ Պետափրէս[7] ի ժառանգու-
ւիւն անցաւոր և առժամանակեայ, ոչ են անապական
յաւիտենական, իսկ քո ամենայն ինչ շնորհք և ժա-
անգութիւն անանց է և անվաղճան։ Եւ այժմ հա-
եաց յիս ի տառապեալս և ողորմեա ինձ։
Ահաւասիկ փախստական եղէ յամենեցունց, և զքեզ,
Տէր, ապաւէն ինձ արարի. ահաւասիկ զամենայն
արութիւնս երկրի թողի, և զքեզ յոյս ինձ արարի։
Եւ արդ խորգով և մոխրով աշխարեմ[8] առ քեզ, և լամ
մեղս իմ. ահա ի բաց մերժեցի յինէն զթագաւորական
գեստն[9], զբեհեզ, զգնդապահոյնն և զոսկեհուռն, և
զեցայ զհանդերձ սգոյ. ահա լուծի զգօտի իմ ոսկեղէն,
զգեցայ քուրձ. ահա զթագն իմ և զպսակն իմ ընկե-
ի ի գլխոյ իմմէ, և զգեցայ[10] զմոխիր. ահաւասիկ

1. Ա. Գ. ազատեցո զզատարացեալսն, վասն զի հայր իմ և մայր իմ։
2. Բն. մեզ։
3. Ա. ես որբ, և յոյս իմ է միայն. և այլոք ոչք քոյ է միայն, Տէր, և ոչ զոք ապահովն ունիմ... զմեզ...
4. յԱ. տող մի պակասէ. և ամ։
5. Ա. յաւելու ժառանգութիւնս։
6. Ա. Պետափրէս՝ անցաւոր է և ապատամանակեայ (Գ. ժամանակեայ է) իսկ ի ս մինչև ընդհանրական ժառանգութիւնն անապատնան են և յաւիտենական։ Եւ այժմ։
8. Ա. ապաւիսրիմ զմեզ իմ. ահա
9. Ա. զգեցայ ես և զսգեհուռս իմ, և զգեցայ սեռս զի իմ ես սգաւոր։
10. Ա. և փոխանակ այնր մոխրով զգեցայ։

յատակ տան իմոյ յօրինեալքս էին կճայովք[1] և պա-
ծառ ծիրանովք. և որպէս յառաջագոյն զանոյշս ցա-
նէի, և պայծառ կտաւովք մաքրէի. այժմ ցանեցա-
արտասուօք իմովք, և ընդ մոխրեալն յամօթ եղէն. ա-
հաւասիկ յարտասուաց իմոց մոխիրս կաւացաւ[2] և ե-
ղեւ իբրեւ կաւս գոռհաց և ճանապարհաց։ Ահաւասիկ
յարտասուաց իմոց զընթրիսն իմ արքունական ետ-
կերակուր շանց օտարաց, և ես զեօթն[3] գիշեր հա-
ոչինչ ճաշակեցի, և ջուր ոչ արբի. բերան իմ ցամաքե-
ցաւ զօրէն[4] թմբկի, և լեզու իմ եղեւ որպէս զեղջիւ-
չոր, և շրթունք իմ իբրեւ զխեցի. դէմք իմ ի վայր խո-
նարհեցան, և աչք իմ այտուցեալ ամօթալից ի սա-
տիկ արտասուաց իմոց[5], և նուազեցաւ յինէն ամ-
նայն զօրութիւն իմ. արդ ես զչատուածսն զոր յա-
ռաջագոյն պաշտէի անգիտութեամբ, և այժմ ծանեա-
զի էին կուռք անմռունչք և խուլք, և ետու զնոսա
ի կոխան, և գողք յափշտակեցին զոսկին[6] և զար-
ծաթն, և կորուսի զամենայն յերեսաց իմոց։ Վա-
զի ի քեզ ապաւինեցայ, Տէր աստուած Յովսեփայ-
դու ապրեցո զիս, Տէր, և թողութիւն արա ինձ. զի
վասն մեղաց անգիտութեամբ և տխմարութեամբ մո-
լորեցայ, և խօսեցայ բանս հայհոյութեան վասն տեառն
իմոյ[8] Յովսեփայ, զի ոչ գիտէի թէ իբրեւ զորդ-
սիրելի իցէ քո։ Այլ[9] խօսեցան ընդ իս մարդիկ
իբրեւ պարզմտութեամբ, և ասացին թէ Յովսէփ որ-

1. Ա. կինոցիւ ծիրանիւ և պայ-
ծառ. և զոր յառաջագոյն խաղ-
անոյշ (Գ. խաղ անոյշս) ցանէի,
և մաքրէի կտաւով պայծառաս-
նօք... արտասուաւ իմ ընդ մոխ-
րով յամօթ եղէն։
2. Ա. կաւացաւ իբրեւ զմանապուր-
հաց գոռհիցաց. Գ. կաւացաւ
իբրեւ զայրս գոռհիցաց և մա-
նապարհաց։
3. Ա և Գ. զիօրն տիս և զիօրն
գիշեր։
4. Ա. իբրեւ զրիմբիլ (Բն. ՚Ի՚մբիլ)
5. Ա և Գ. լուսոյ և նուազեաց յի-
նէն զօրութիւն իմ։
6. Ա. զանոյն ոսկիսն և զար-
ծաթսն։
7. Ա. զի ծերոյ անգիտութեամբ
տիմարութեան մոլորեցայ։
8. Ա. Տերոյ։
9. Ա. արդ։

ն է հովուի միոյ յերկրէն Քանանացւոց. և ես հա-
ստատցի նոցա, մոլորեցայ և արհամարհեցի զնա, և
տարեցայ բանս չարութեամբ վասն նորա, և ոչ գի-
տէի թէ Յովսէփ իբրեւ զորդի սիրելի է քեզ. վասն
ո՞վ ոք ի մարդկանէ ծնցի այսպիսի գեղեցկութիւն,
այսքան իմաստութիւն և առաքինութիւն։ Պահեա
զա, Տէր, իմաստութեամբ շնորհի քո. և զիս յանձն
զա նմա իբրեւ զաղախին և սպասաւոր. զի և ես ար-
ժան զանկողինս նորա և լուացից զոտս նորա, և ե-
ղից նմա որպէս զաղախին։

Եւ եղեւ իբրեւ դադարեաց Ասանէթ ի խօսելոյ[1]
առ Տէր, և արուսեակն ծագեաց. և զաստղն տեսեալ
Ասանէթայ՝ ուրախ եղեւ և ասաց. Լուսաւ[2] Տէր ար-
եւաք աղօթից իմոց, զի ահաւասիկ աստղն Աստուծոյ,
զոր Տէր հրեշտակ և քարոզ՝ ծագեաց։ Եւ դարձեալ տե-
սանէր Ասանէթ, և ահա մերձ յերկինսն[3] պատառեալ
ածանէր երկինք, և երեւեցաւ լոյսն մեծ և անճա-
ռելի. և[4] զայս տեսեալ՝ անկաւ ի վերայ երեսաց իւ-
րոց ի վերայ մոխրոյն։ Եւ իջեալ յերկնից ի նմանուա-
թիւն առն, և կացեալ հանդէպ գլխոյն Ասանէթայ,
կոչեաց և ասէ. Ասանէթ։ Եւ նա ասէ. Ո՞վ է որ
կոչեացն զիս. զի դուրք սենեկիս փակեալ են, և աշ-
խարհս բարձր է. զիարդ արդեաք[5] մարթեաց մտա-
նել ի սենեակս իմ։ Եւ կոչեաց երկրորդ անգամ այրն
նա և ասէ. Ասանէթ։ Եւ Ասանէթ ասէ[6]. Եթէ ո՞վ
դու՝ պատմեա ինձ։ Եւ ասէ այրն. Ես եմ իշխանն
արայելի[7], և զօրաւոր քան զամենայն սուրբս բարձրե-
լոյն. արի կանգնեաց և կաց ի վերայ ոտից քոց, և խօսէ-

1. Ա. խօսելոյն զՏեր։
2. Ա. Լուսաւ ինչ Տեր և զաղթից.. զաղթն Աստուծոյ և և քարոզ ծագեաց.
3. Ա. յարբեալ ի սրտոյ։
4. Ա. և Գ. յաւելուն ահաւասիկ եմ դեր։
5. Ա. զի կարցուս։
6. Ա. և Գ. յաւելուն ահաւասիկ եմ դեր։
7. Ա. Տեառն (Գ. եւս) և զբաւոր ոգեանն զբաւութեամբ (Գ. զբաւութեան բարբելոյն)։

ցայց ընդ քեզ զբանս իմ։ Եւ ամբարձ Ասանէթ զգլուխ
իւր և ետես. և ահա այրն էր ամենեւին նման ցոլ
սեփայ՝ պատմուճանաւն և պսակաւն և թագաւորակա
գաւազանաւն. բայց դէմք նորա էին որպէս փայլակն
և աչք նորա որպէս զճառագայթս արեգական, և հ
գլխոյ նորա իբրեւ [1] զբոց, և ձեռք նորա որպէս ե
կաթ հրացեալ, և կայծակունք թօթափէին ի ձեռաց
յոտից նորա՝ իբրեւ յեռանդնացեալ հրոյ [2]. զոր տեսեա
Ասանէթայ՝ անկաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր
և երկեաւ երկիւղ մեծ, և զդողումն [3] հարան ամենայ
անդամք ոսկերաց նորա։ Եւ այրն [4] ասէ ցնա. Քա
ՀՀալերեաց, Ասանէթ, և մի՛ երկնչիր. այլ արի կաց
վերայ ոտից քոց, և խօսեցայց ընդ քեզ զբանս ի
Եւ յարեաւ Ասանէթ, և եկաց ի վերայ ոտից իւրոց։ Ե
ասէ այրն. Երթ՝ և ի բաց հան զպատմուճանդ [5] քո զոր
սեաւ և սգոյ՝ զոր զգեցար. խորգդ՝ որ զմիջոցդ է ի բ
դիցես, և ի բաց թօթափեալ զմոխիրդ ի գլխոյ քում
մէ, և լուա զքեզ [6] ՀՀրով կենդանութեան, և զգեցի
զպատմուճանն աղէկն [7] և փառաւորեալն, և ած զգ
տի ոսկի՝ որ է կուսութեան քո. և եկ խօսեցայց ընդ
քեզ զբանս իմ։ Եւ փութացաւ Ասանէթ, եմուտ յեր
կրորդ սենեակն իւր, ուր էին սապատք զարդու նոր
և բացեալ զարկղն՝ առ անտի զգեստս կուսաւեայս
երեւելիս, որ ոչ էին երբեք չօշափեալք յումեք
և մերկացեալ յինքենէ զպատմուճանն սեաւ և սգոյ
և ի բաց եհան զխորգն ի միջոյն իւրմէ. և զգեցա
զՀանդերձան զերեւելիս, և ածեալ զերկոսին գօտիսն
որ էին կուսութեան իւրոյ, զմինն ած ընդ մէջ իւր,
զմինն [8] ածաւ ի վերայ կրծոց իւրոց՝ հանդէպ ստեանցն

1. Ա. էբրեւ վրէոն հրոյեալ։
2. Ա. երէոնոյ. և տող մի պա-
կասէ։
3. Ա. զդողէ հարան ոմենայն ան-
ՀՀրէ նորա։
4. Ա. ասէ այրն. գալ վրէոց, ՀՀոց
է վերայ։
5. Ա. պատմուճանդ օգոյեալ զարդ
է գլոյ գոտի է քոց։
6. Ա. զՀՀրա գ։
7. Ա և Գ. նոր երեւելի և գա-
ռրեալ. և չՀՀ յԳ. ա
մինչև գառնացաւ։
8. Ա. գան։

եւ փ բաց թօթափեաց զմոխիրն ի գլխոյ իւրմէ, և
տուաց զձեռս և զերեսս իւր, և առ զվարշամակ[1] կտա-
ւեայ՝ նոր և պայծառ, և ծածկեաց զգլուխն իւր. եկն
առ այրն յառաջին սենեակն, և եկաց առաջի նորա։
Եւ ասէ ցնա այրն. Ի բաց առ զվարշամակդ ի գլխոյ
տումէ. ընդէր արարեր[2] զայդ այսօր. և դու կոյս
տուրբ ես և պարկեշտ՝ մինչեւ ցայսօր ժամանակի. և
զուի քո է իբրեւ զառն երիտասարդի։ Եւ եհան Աստ-
ծոյ զվարշամակն ի գլխոյ իւրմէ. և ասէ ցնա այրն.
Քաջալերեաց, Աստանէթ, կոյսդ սուրբ. ահա լուայ բա-
նից քոց խոստովանութեանն և աղօթիցդ[3]. ահա տե-
ա զտառապանս եօթն աւուրց կարօտութեանց քոց.
Հաւասիկ՝ ի մոխրոյ և յարտասուաց՝ կաւ սաստիկ
տեսանեմ ես առաջի աչաց իմոց. քաջալերեաց, Աստ-
ծոյ, կոյս սուրբ, ահա գրեալ է անուն[4] քո մատամբն
Աստուծոյ ի գիրն կենդանեաց յերկինս՝ ի սկզբանէ
աշխարհի, և յառաջ քան զբազմաց՝ գրեցաւ անուն քո
ընտրեալ[5] յաւիտեանս յաւիտենից։ Ահա յայսմ հետէ
տրոգեսցիս, վերստին կենդանասցիս[6], և կերիցես
հաց օրհնութեան կենդանարար, և զրաժակ օրհնեալ
նմահութեան արբցես, և օծմամբ անապականու-
թեամբ օծցիս[7]։ Քաջալերեաց Աստանէթ, կոյս սուրբ.
ահա ետու զքեզ այսօր հարսն[8] Յովսեփայ յաւիտեանս
ամանակաց։ Եւ անուն քո ոչ եւս կոչեսցի Աստանէթ,
այլ կոչեսցի Քաղաք ապաւինի. վասն զի քեւ ապա-
ւինեսցին ազգք բազումք ի Տէր Աստուածն երկնից.
ընդ հովանեաւդ քո ծածկեսցին[9] յուսացեալք ի
Տէր Աստուած, և ընդ պարսպաւդ քո պարսպեսցին[10]

1. Ա. վարշամակ նոր և երեսի, և
2. Ա. տրիր։
3. Գ. տոշ մի պակասէ մինչև
4. Ա և Գ. անուն քո յերկինս ի
5. Ա. ոչ ընտրեալ. Գ. մատամբն
Աստուծոյ ոչ ընտրի։
6. Ա. կենդանասցիս։
7. Բն. ծնցիս։
8. Ա. յաւելու յամենասրբեան.
Գ. և նա եղիցի տեղ տեսոյ։
9. Ա և Գ. յաւելուն ծոցովքդ։
10. Ա. մրջասցին։

հնազանդեալք բարձրելոյն՝ անուամբ ապաշխարու-
թեան. որ հանէ[1] մերձ յերկինս, իբրեւ զսիրելի բարձ-
ձրելոյն առնէ զմարդն, որ զնա կատարեալ մտաք խնդ-
դրեսցէ. զի նա է տուիչ[2] ամենայն պարգեւաց, և զոյ-
բացուցիչ ամենայն կուսանաց, և խնդրէ զկուսութիւն
և սիրէ յոյժ, և ի վերայ ձեր ակն ածէ յոյժ յամե-
նայն ժամ, և զամենեսեան՝ որ եթէ ապաշխարեն՝ ա-
ինքն ի յարկն իւր ընդունի, և տեղի հանգստեան
պատրաստէ նոցա յերկինս, և հանգուցանէ զամենայն
ապաշխարողս. ընդ այցելութեամբ նորա եղիցին հա-
նապազ յաւիտեանս ժամանակաց, և նա խնայեսցէ
նոսա։ Եւ ես ահաւասիկ երթամ առ Յովսէփ, և խո-
սեցայց ընդ նմա վասն քո զամենայն բանս իմ. և
մտցէ[3] առ քեզ Յովսէփ այսօր, և ուրախ եղիցի վա-
քո, և սիրեսցէ զքեզ. և եղիցի քեզ ի փեսայութեան
և դու եղիցես նմա ի հարսնութեան յաւիտեանս։ Ե-
արդ, լուր ինձ, Ասանէթ կոյսդ, և զգեցիր զպատմու-
ճան հարսնութեան քո, որ ի սկզբանէ պատրաստեալ
է քեզ. և ամենայն զարդուք կարգեալ[4] և պանու-
ճեալ զքեզ իբրեւ հարսն բարի. և յարուցեալ գնա-
ցես ի պատահումն Յովսեփայ, վասն զի նա ահա այս-
օր եկեսցէ առ քեզ։

Եւ եղեւ իբրեւ կատարեաց այրն զխօսսն, խնդաց
Ասանէթ ի խնդութիւն մեծ ի վերայ ամենայն բանի
նորա[6]. և անկեալ ի վերայ ոտից նորա՝ երկիր եղա-
նմա ի վերայ երեսաց, և ասէ. Օրհնեալ է Աստուա-
բարձրեալն, որ առաքեաց զքեզ և փրկեաց[7] զիս ի
խաւարէս յայսմանէ, և վերածեաց ի հիմանց անդն-
դոց, և օրհնեալ է անուն քո յաւիտեան։ Եւ ասա-

1. Ա և Գ. վասն զի ապաշխարու-
թիւն հանէ։
2. Ա. տիրոջ ամենայն խնամոց
և տիրէ զնոսա՝ ամենայն յոյժ. և յեր
վերայ ամն ածէ յամենայն ժամ.
և զամենայնս ի երիկ զնարբու-
թիւնքն (Գ. զարբութիւնքն) ա-
պաշ. յերկինս ընդունի։
3. Ա. տեսցէ զքեզ և ուրախա-
և։
4. Ա. զարդարեալ և պանծալի։
5. Ա. ցիծաց։
6. Ա. յաւելու զոր խօսեցաւ։
7. Ա. ազատեալ։
8. ՅԱ և ՅԳ. չէր և ասա։

Ինչ է անուն քո, ասէր. պատմեա ինձ, զի օրհնեցից
զքեզ, ասէր, յաւիտեանս ժամանակաց։ Ասէ ցնա այրն.
Զի անունս յերկինս է՝ ի գիրն բարձրելոյն գրեալ է
յաւիտեանս ժամանակաց՝ մատամբն Աստուծոյ ի սկզբան
գրեալոցն՝ յառաջ քան զամենեցունց. վասն զի ես
զ իշխան բարձրելոյն. և ամենայն անուանք՝ որ եթէ
գրեալ են ի գիրս բարձրելոյն, անպնդելի են, և
զգոյ ոչ է լսելի և ոչ տեսանելի յայսմ աշխարհիս[1].
Վասն զի մեծ են անուանք նոցա և աքանչելի և գո-
ղաք յոյժ։ Եւ Ասանէթ ասէ. Գոտի շնորհս առաջի
քո, և գիտեմ զամենայն բանս զոր խօսեցար ընդ իս[2].
Այլ սակայն խօսեսցի աղախին քո առաջի քո։ Եւ նա
ասէ. Խօսեաց։ Եւ ասէ Ասանէթ. Աղաչեմ զքեզ,
[illegible][3]։ Եւ ընդ ասելն՝ մերձեցաւ ձեռն իւր ի ծունկս
[illegible], և պաղատելով ասէր ցնա. Նի՛ստ[4] փոքր մի
վերայ տախտիս այսմիկ. վասն զի տախտս այս մա-
[illegible]ր է և առանց պղծութեան, և այր և կին ոչ երբեք
[illegible]տեալ[5] է ի վերայ սորա. և եղիցի առաջի քո սե-
[illegible]ն, և բերիցի յշտեմարանաց հաց և գինի հին և ա-
[illegible], և դու կերիցես և արբցես, և ապա[6] երթիցես
[illegible]նապարհն քո։ Եւ ասէ ցնա այրն. Փութացիր և
[illegible][7]։ Եւ փութացաւ Ասանէթ, և եբեր առաջի նո-
[illegible] սեղան ունայն. և ինքն գնացեալ յերեսաց նորա,
[illegible]մէր մտանել յշտեմարանս իւր, զի բերցէ և դնի-
[illegible] առաջի նորա հաց։ Ասէ ցնա. Բե՛ր ինձ խորիսխ
[illegible]ղու[8]. և զտեղի առեալ Ասանէթ՝ տրամեցաւ. վասն
[illegible] ոչ ունէր խորիսխ մեղու[9] յշտեմարանս իւր։ Ասէ
[illegible]ն. Ընդէ՞ր զտեղի առեալ տրամեցար։ Եւ ասէ Ասա-
[illegible]թ. Առաքեցիր մանուկ արտաքոյ քաղաքիս, վասն

1. յաւելու և ընդ-ունիսն եղև։
2. վասն իմ։
3. և յգիրոց գլուխն իւր և ծերացեալ է յերեսն նորա և ի ծունկսն և պաղ..։
4. հանդիր։
5. նոգաս։
6. յետ ապարդի։
7. Ա. արա։ Եւ փութացաւ Ասանէթ, և եբ զտեղի, և եբ զտեղի զսեղանն առաջի նորա։
8. Ա և Գ. մեղրոց։
9. Ա. մեղրոց զի զտեղի առաջի նորա։ Եւ ասէ ցնա այրն. Ընդէ՞ր ինքնինեցար և առեր զտեղի։

զի մերձ է այսր ժառանգութիւնս մեր, և բերցի
անտի վաղվաղակի խորիսխ մեղուաց, և եդից առ
ջի քո, տէր իմ։ Ասէ ցնա այրն. Գնացեալ մտա
յչտեմարանս քո, և գտցես խորիսխ մեղուաց ի գ
բայ սեղանոյն, զոր առեալ բերցես այսր։ Ասէ այր
ե՛ր մուտ, և գտցես։ Եւ եմուտ Ասանէթ յչտեմ
բանս իւր, և եգիտ մաղս[2] մեղուաց՝ որ կայր ի գ
բայ սեղանոյն. և էր մաղն[3] մեծ և սպիտակ իբր
զձիւն, լի մեղու. և էր մաղն որպէս զցօղ երկնից
հոտ նորա որպէս զհոտ կենդանութեան։ Եւ զարմ
ցաւ Ասանէթ, և զմտաւ ածէր թէ[4] ի բերանոյ առ
այսորիկ ել արդեօք խորիսխս այս. վասն զի հոտ
բա իբրեւ զհոտ առնս[5] այսորիկ է։ Եւ առ Ասան
զխորիսխն զայն[6], և եբեր առաջի առն, և եդ ի գ
բայ ունայն սեղանոյն, զոր պատրաստեաց յառաջ
գոյն։ Ասէ ցնա այրն. Զի՞ է՝ որ ասացեր թէ ոչ գոյ խ
բիսխ մեղու յչտեմարանս իմ. և արդ[7] բերաւ աւա
խորիսխ մեղուաց յչտեմարանացդ աքանչելապէս։
զարհուրեալ Ասանէթ ասաց. Ես, տէր, խորիսխ մ
ղուաց ոչ ունէի յչտեմարանս իմ. բայց դու խօսեցար
եղեւ. գուցէ ի բերանոյ քումմէ ելեալ է սա. վասն
հոտ սորա իբրեւ զհոտ բերանոյ քո է[8]։ Եւ կոչ
զմտաւ ածէր զԱսանեթայ զգաստութիւնն։ Եւ կոչ
զնա առ ինքն, և մերձեցոյց զալ[9] ձեռն ի գլուխ նո

1. Ա. Բերցի խորիսխ մեղուաց։ Ե-
ռեալ այրն. Ահռոռուել կայ ի
վերայ սեղանոյ յչտեմարանէդ
քո, ռոռելբերցես այսր, և ա-
ռեալ (Գ. հս) Առանեի խորիսխ
մեղուաց յչտեմարանս իմ ել
գոյ. և ասեալ այրն երթ...
2. Ա. Դալ մեղուաց որ կայր։
3. Ա. Դալն... լի մեղրով, և էր
Դալն.
4. Ա. Վասն ասելոյ առնն զիսորիսխ
սասրի արդեօք լեալ խորիսխս
այս, վասն զի։
5. Ա. Բերանոյ առնն զիսորիսխ
6. Ա. Զայն և եդ վերայ սե-
ղանոյն՝ զոր էր յառաջագոյն։
7. Ա. և արդ սասրի ե խորիսխ
մեղուաց յչտեմարանս քո ել
վեալ։
8. Ա. յաւելու անուանեալսոյ։
9. Ա. Զալոյ ձեռն և եդ ի վերայ
գլխոյ նորա։

երկեաւ Աստանէթ ի ձեռանէ առն. վասն զի կայ-
տակունք թափէին[1] ի բերանոյ նորա իբրեւ յերկա-
ւոյ եռանդնացելոյ։ Եւ զարհուրեալ Աստանէթ՝ պը-
ռուցեալ հայէր ի ձեռս առն։ Եւ[2] տեսեալ՝ ժպտելով
ասէր. Երանի՛ է քեզ, Աստանէթ, զի յայտնեցան քեզ
ծածուկքն[3] Աստուծոյ բարձրելոյն. և երանի՛ ամենե-
սուն՝ որ կացցեն առաջի Տեառն ապաշխարութեամբ,
և ի խորսխոյս յայսմանէ կերիցեն. վասն զի այս խո-
սեսխս չունչ կենդանութեան է. և զսա գործեցին մե-
ռուք դրախտին փափկութեան Աստուծոյ, այսինքն ի ցо-
ոյ վարդենեաց[4] կենդանութեան Աստուծոյ. վասն զի
ամենայն հրեշտակքն Աստուծոյ ի սմանէ ճաշակեսցեն.
ամենայն որդիք բարձրելոյն, և ընտիրքն Աստուծոյ[5].
և խորիսխ կենդանութեան է սա. և ամենայն ոք որ
երիցէ ի սմանէ՝ ոչ մեռցի յաւիտեանս ժամանակաց։
Եւ ձգեաց այրն զձեռն և երեկ[6] ի խորսխէն մսան
ոչ սակաւ, և կերաւ ինքն՝ և զմնացորդսն որ ի ձեռին՝
տուեալ ի բերան իմ, և ասէ ցիս. Աստանէթ, ահա կե-
նար հաց կենաց, և սրբեր բաժակ անմահութեան,
ուրախար օծմամբ անապականաւ. ահա յայսմհետէ մար-
մին քո բողբոջեսցէ որպէս ծաղիկ, և հանցէ կրկին որ-
պէս[7] յերկրէ բարձրելոյն. և ոսկերք քո պարարտաս-
ցին որպէս զմայրս[8] փափկութեան դրախտին Աստու-
ծոյ, և զօրութիւնք անաչխատք պարփակեսցեն զքեզ,
մանկութիւն քո զծերութիւն ոչ տեսցէ, և գեղեց-
կութիւնդ քո յաւիտեան ոչ պակասեսցի. և եղիցիս
պաղաք ամենեցուն որպէս պարսպեալ յանուն տեառն
Աստուծոյ թագաւորին յաւիտենից։ Եւ[9] ձգեաց այրն
ձեռն իւր, և մերձեցոյց ի խորսխին յոր բեկեալն

1. Ա. ասորիկ հրացեալ թափէին ի յերանի նորա։
2. Ա. և այրն նորոգեալ ժպտելով. Գ. և առն պատուալասաց ժըպտելով։
3. Ա. յայտնեսցին։
4. Ա. արդենից։
5. Ա. յաւելու է սմանէ ի բարձրէն։
6. Ա. եաս մսան ինչ սակաս և ի ի բեր ինքն և զմնացորդսն։
7. Ա և Գ. զմայրի ինքանէ յերկրէ։
8. Ա. զմարդ։
9. Ա. և յետ այսորիկ ձգեաց։

էր. և անդէն կատարեալ առլցաւ[1] բեկուածն և ան-
դէն եղեւ ողջ որպէս[2] էր յառաջագոյն։ Եւ դարձեա
ձգեաց զաջ ձեռն իւր և զմատն իւր ցուցական, և մեր
ձեցոյց յեզր խորսխին՝ որ հայէր ընդ յարեւելս,
ած[3] ի կողմն՝ որ հայէր ընդ յարեւմուտս. և եղ
տեսիլ մատին նորա որպէս[4] զարիւն. և ձգեաց ե
կրորդ անգամ զձեռն իւր, և մերձեցոյց յեզր[5] խորս
խին՝ որ հայէր ընդ հիւսիսի, և ած ի կողմն՝ որ հ
յէր[6] ընդ հարաւ. և տեսիլ մատին նորա[7] որպէս զ
բիւն։

Եւ Ասանէթ հայէր[8] և տեսանէր՝ զոր ինչ առն
այրն։ Եւ ասէ այրն ցխորխսխ մեղուաց. Ե՛կ այր։
համբարձան մեղուքն յարկաց մաղին[9] այնորիկ, բիւ
բիւրոց և հազարք հազարաց մեղուք՝ սպիտակ իբր
զձիւն, լի մեղու. և թեւք նոցա ծիրանիք երկայն
գոյնք որպէս զորդան կարմիր, և ոմանց որպէս[10] բ
հեղս ընդելուզեալս, և զօրէն ոսկեղէն պսակաց շու
զգլխովն իւրեանց. պատուական էին կերպարանօք,
խայթոցք էին նոցա սուրք, և ոչ ումեք վնասէին.
շուրջ պատեալ ամենայն մեղուքն զԱսանեթաւ՝ յատ
մինչեւ ցգլուխն։ Եւ այս[11] մեղուքս ընտիրք էին և մ
ծամեծք որպէս զթագուհիք. և յարուցեալ յերեսս
մաղին՝ պատեցան զերեսաքն Ասանեթայ, և գործեց
զերեսաքն նորա գործ. և շրթունք խորսխին[12] էր
բերանն Ասանեթայ։ Եւ ասէ այրն ցմեղուսն. Երթա
իւրաքանչիւր ի տեղի իւր։ Եւ յարեան ամենայ
մեղուքն և թռեան, և չոգան հանդէպ երկնից[13] և ո

1. Ա. Լէց։
2. Ա. էբրև զ-ողջին։
3. Ա. +ուրեր է կողմն որ էր յարևմուտս։
4. Ա. և հետն էբրև զարիւն։
5. Ա. զմատն է կողմն հիւսիսոյ։
6. Ա. էր։
7. Ա. յաւելու և հետն եղև։
8. Ա. կայր հիւսելու։
9. Ա. յամենայն ուրեք ծաղ զ-
փոխանակ մաղի։
10. Ա. որոց ընդելուզիալ ո-
նայ սոկեղի։
11. Ա. այլ։
12. Ա. խորսխոյ էին։
13. Ա. երկրին և որ կանգ-
նուել է վերայ. սուտ։

ամեցան վնասել Ասանեթայ՝ անկան և մեռան։ Եւ գեալ այրն զգաւազանն ի մեղուսն մեռեալ, և ասէ նոսա. Արիք և դուք երթալ ի տեղիս[1]։ Եւ յարեան մեռեալ մեղուքն, և չոգան հանդէպ ապարանիցն Ասանեթայ, և նստան ի վերայ ծառոց պտղաբերաց։ Եւ ասէ այրն ցԱսանէթ. Իմացար զտեսիլդ։ Եւ նա ասէ. Իմացայ[2]։ Եւ ասէ այրն. Այսպէս եղիցի քեզ բանք մի այսօր։ Եւ ձգեաց երրորդ անգամ զալ ձեռն իւր, հասոյց ի հատուածս խորսխին, և եկեր զխորխսխն. սեղանն ոչ վնասեցաւ, և հոտ հատուածի խորսխին՝ ելից զսենեակն. և էր հոտ յոյժ հեշտալի։ Եւ ասէ Ասանէթ ցայրն. Են առ իս եօթն կուսանք աննդասք իմ. ի միում գիշերի ծնեալք ես և նոքա. և ես մերեմ զնոսա որպէս զքորս իմ. կոչեցից սոսա՝ զի օրհնեսցես զնոսա, որպէս և օրհնեցեր զիս։ Եւ ասէ այրն. Կոչեա։ Եւ կոչեցեալ կացոյց զնոսա առաջի առնն. և ասէ զնոսա այրն. Օրհնեսցէ զձեզ Տէր Աստուած բարբրեալն. եղիջիք սիւնք եօթն քաղաքի[3], և ի ձեր վերայ հանգիցէ օրհնութիւն Տեառն յաւիտեանս ժամանակաց։ Եւ ասէ ցԱսանէթ. Փոխեա ի բաց զսեղանդ տեղւոյդ։ Եւ Ասանէթ էառ զսեղանն ի տեղւոջէն դարձաւ ի միւս կողմն, զի դիցէ զսեղանն ի տեղն իւր. և այրն անհետեւոյթ եղեւ յԱսանեթայ։ Եւ տես Ասանէթ որպէս կառս՝ զի գնային[4] յարեւելս երկինս. և կնոքն էին որպէս գհուր, և ձիք նորա որպէս փայլակն, և այրն այն կայր ի վերայ կառացն ոսնորիկ։ Եւ ասէ Ասանէթ. Անմիտս յանդուգս, զի խօսեցայ համարձակութեամբ և ասացի՝ թէ մարդ եկն ի սենեակս իմ, և ոչ գիտացի՝ թէ հրեշտակ Տեառն եկն այսօր յերկնից առ իս. և ահա գնաց ի տեղի իւր։ Եւ ասէ. Քաւեա զիս, Տէր իմ, և խնայեա յանխին քո. վասն զի խօսեցայ առաջի քո յանդգնասար անզգամութեամբ զամենայն զբանս իմ։ Եւ մինչեւ զմտաւ ածէր Ասանէթ վասն այսորիկ, և ահա

1. Ա և Գ. յաւելուն չէր։ 3. Բն. փոխանն ոչխարիկ։
2. յԱ. ասա թուղթ անկեալ է։ 4. Գ. փոխանն ընդ յարեալս։

մանուկ մի ընթացեալ ի սպասաւորացն Պետափրեայ
և ասէ. Ահա Յովսէփ զօրաւորն Աստուծոյ գայ ա
մեզ. զի կառքն[1] առաջի գաւթիս է: Եւ փութացա
Ասանէթ և կոչեաց զդայեակն իւր՝ որ էր ի վերա
ամենայն ստացուածոցն, և ասէ. Փութա և կազմե
զտաճարն, և արա ընթրիս ազնիւս վասն Յովսեփայ զ
բաւորին Աստուծոյ, որ գայ ասա այսօր: Եւ տեսա
զնա դայեակ իւր, և ահա ի վայր անկեալ էին երե
նորա ի կարօտութենէ կերակրոց եօթն աւուրցն.
տրամեցաւ յոյժ, և ելաց. և կալաւ զաջոյ ձեռան
նորա, և համբուրեաց զնա, և ասէ. Զի[2] ես, որդեա
զի այսպէս ի վայր անկեալ են երեսք քո: Ասէ Ասա
նէթ. Ցաւ ծանր անկաւ զգլխով իմով, և քուն հ
տաւ յաչաց իմոց. վասն այնորիկ վատեալ են երե
իմ: Եւ չոգաւ դայեակ նորա և պատրաստեաց զտա
ճարն, և կազմեաց զընթրիսն: Եւ յիշեաց զայրն
զպաստուիրանս նորա. և փութացեալ եմուտ ի սենեակ
իւր երկրորդ, ուր էին սապատք զարդուց նորա.
բացեալ զարկղն մեծ, և եհան զագանե[3]ին իւր հար
նութեան զաւաջինն և զընտիրն՝ իբրեւ զփայլակն,
զգեցաւ զնա. և ածաւ զգօտին ոսկի և զթագաւորա
կան, որ էր բեւեռաք յօրինեալ ազգի ազգի. և ի ձեռ
և յոտս իւր ագաւ[4] ապարանջանս ոսկի, և զարդ
պատուականաք զարդարեաց զպարանոց իւր, յորմ
էին ակունք պատուականք յեղյեղեալք՝ անհամարք
բիւրք. և պսակ ոսկի եդեալ ի վերայ գլխոյ նորա
և[5] էր պսակին աջոյ կողմանէն՝ հանդէպ ճակատ
ակն՝ ակունք մեծ աստի և անտի, վեց ակունք պատուա
կանք և մեծագինք. և ամարանոց արկեալ զգլուխ իւ
որպէս զհարսն. և ա՛ռ զգաւազանն թագաւորական
ձեռին իւրում: Եւ յիշեաց Ասանէթ զբանս դայեակ
իւրոյ, որ ասաց նմա՝ թէ տրամեալ են երեսք քո. յո

1. Գ. վասն զի կարապետն նորա ա-
ռաջի:
2. ՅԳ. չէք զի ես:
3. Գ. զարիանելի իւր:
4. Գ. արկաս:
5. ՅԳ. պսակսին քառք ինչ մի
չև և ամարանոց:

ոց եհան և տրամեցաւ յոյժ, և ասաց. Եթէ դէմք մեր վատեալք են, եթէ տեսանիցէ զիս Յովսէփ՝ արամարհէ զիս։ Եւ ասէ ցննդակիցն իւր. Բեր ինձ՝ զուր յստակ յաղբերէն և լուացից զերեսս իմ։ Եւ բերեալ արկ ի դաշխուրանն. և խոնարհեալ Ասանէթ՝ զի լուասցէ զերեսս իւր. և տեսեալ զդէմս իւր ի ջուրն՝ փ էին որպէս զարեգակն, և աչք նորա որպէս զաստեղակ զի ծագէ, և գնացք ոտից նորա որպէս զաստղս հարթ և գեղեցիկս. այսք նորա կարմիր որպէս ծոտորս նռան, և շրթունք իւր որպէս զվարդ փթթեալ՝ որժամ ի հակուկացն ի դուրս վազէ, ատամունք նորա[1] որպէս զաշտարակ գեղեցիկ։

Եւ այսպէս տեսեալ Ասանէթ զինքն ի ջուրն, և ուսախացաւ ուրախութիւն մեծ, և ոչ եւս լուաց զերեսս իւր։ Եւ եկեալ դայեակն ի պատմել նմա վասն ամենայնի՝ զոր ինչ հրամայեաց նմա. և եղեւ իբրեւ տեսս զնա՝ հիացաւ և եկաց յափշտակեալ[2] իբրեւ ամս երկուս. և երկեաւ երկիւղ մեծ ի տեսլենէ նորա, և խոնարհեալ յոտս նորա, ասէ. Զի՞նչ է այս, տիկին իմ, և կամ ուստի՞ է այդ մեծ գեղեցկութիւնդ ոչ, աքանչելի և հրաշալի. կարծեմ թէ տէր Աստուածն ի կենդանեաց ընտրեաց զքեզ ի հարսնութիւն Յովսեփայ։ Եւ զինչ դեռ խօսէին՝ ահա եհաս եկն մանուկ մի, և ասէ Ասանէթ. Ահաւասիկ Յովսէփ առ դուրսն գաւթիս։ Եւ փութացեալ Ասանէթ՝ էլ ընդ սանդուխան եօթն աստիճանաք ի պատահումն Յովսեփայ. և եկաց ի փոքրացս ապարանիցն։ Եւ եմուտ Յովսէփ ի գաւթին, և բակեցան դրունքն, և արտաքոյ մնացին ամենայն օտարականքն։ Ասանէթ ել ի փողոցն ի պատահումն Յովսեփայ։ Եւ տեսեալ զնա Յովսէփ, և զարհուրեցաւ զասն յոյժ գեղեցկութեան նորա, և ասէ. Ո՞վ ես դու, զատմեա՛ ինձ վաղվաղակի։ Եւ նա ասէ. Ես եմ ա-

1. Գ. Նոր կարգեալ գեղեցիկ որ- պէս վահանաց ի պարի- բոյ։ 2. Գ. պակաս։

պարանոց նոր որպէս զարդ- բոյ։

զախին քո Ասանէթ, որ ըստ հրամանի քում զամե-
նայն զկուռսն ի բաց ընկեցի և կորուսի. և այր ոմն
եկն այսօր ետ ինձ հաց կենաց և կերայ. և բաժակ
օրհնութեան արբի. և ասէ ցիս. Ահա ետու զքեզ հարսն
Յովսեփայ, և նա եղիցի քեզ փեսայ յաւիտեանս ժա-
մանակաց. այլ նա ասաց ցիս՝ թէ ոչ եւս կոչեսցիս
Ասանէթ, այլ Քաղաք ապաւինի. վասն զի քեւ ա-
պաւինեսցին ազգք բազումք ի տէր Աստուած բար-
ձրեալն։ Եւ ասաց ցիս. Գնացիս առ Յովսէփ և խօսե-
ցայց յականջս նորա զբանս իմ վասն քո։ Եւ այժմ
դու ճանաչես, տէր իմ, եթէ եկն այրն այն առ քեզ
և խօսեցաւ ընդ քեզ զբանս իմ։ Եւ ասէ Յովսէփ
ցԱսանէթ. Օրհնեալ ես դու ի Տեառնէ Աստուծոյ
բարձրելոյն. վասն զի Տէր Աստուած հիմնաւորեաց
զպարիսպ քո[1] անդամանդեայ՝ պարիսպ կենդանու-
թեան. վասն զի բազումք կենդանիք որդիք մարդկան
բնակեսցեն ի Քաղաքիդ ապաւինի, և Տէր Աստուած
թագաւորեսցէ նոցա յաւիտեանս ժամանակաց։ Զի
այրն այն եկն այսօր առ իս, և ըստ բանիցս այսոցիկ
խօսեցաւ վասն քո։ Այժմ ե՛կ առ իս, կոյս սուրբ. և
ընդէ՞ր կացեր հեռի յինէն։ Եւ ամբարձ զձեռն իւր
և կոչեաց զԱսանէթ[2]. և եկն առ Յովսէփ, և անկաւ
ի վերայ գրկաց նորա. և կենդանացան հոգիքն նո-
յս, և լցան ուրախութեամբ։ Եւ ողջունեալ Յովսէփ
զԱսանէթ, ետ նմա հոգի կենդանութեան և հոգի
իմաստութեան և հոգի ճշմարտութեան. և շաղապա-
տեալք ընդ միմեանս՝ բազում ժամս զուարճանային
ընդ իրեարս։ Եւ ասէ Ասանէթ. Ե՛կ այսր, տէր իմ
մուտ ի տունս մեր. զի և ես պատրաստեցի զտաճար
մեր, և կազմեցի ընթրիս մեծամեծս։ Եւ կալեալ զձե-
ռանէ նորա՝ արկ ի տունն. և նստոյց յաթոռ հօր
իւրոյ. և եբեր ջուր՝ զի լուասցէ զոտս նորա։ Եւ ա-
սէ Յովսէփ. Եկեսցէ մին ի կուսանացն և լուասցէ
զոտս իմ։ Ասէ Ասանէթ, թէ Ոչ այդպէս, տէր իմ

1. Գ. քո է Բարձրելոյն պարիսպ քո։
2. Գ. յաւելու և քաղցրացաւ Ասանէթ։

յայսմ հետէ ես եմ աղախին քո. և ընդէ՞ր է քեզ այդ, զի այլ ոք լուսացէ զոսս քո. վասն զի ոտքդ քո ոտք իմ են, և անձն քո՝ անձն իմ. և բռնադատեաց զնա և լուաց զոտս նորա։ Եւ տեսանէր Յովսէփ զի ահա ձեռք նորա էին որպէս զձեռս կենդանութեան, և մատունք նորա էին որպէս գրիչ արագագրի։ Եւ զկնի այսորիկ կալաւ Յովսէփ զաջոյ ձեռանէ նորա, և համբուրեաց զնա. և Ասանէթ համբուրեաց զգլուխ նորա. և նստաւ ընդ աջմէ նորա։ Եւ եկին հայր և մայր նորա յագարակէ իւրեանց, և ամենայն ազգականքն նորա. և տեսին զԱսանէթ որպէս ի տեսլեան լուսոյ, և էր գեղեցկութիւն նորա որպէս գեղեցկութիւնս երկնայինս. և[1] տեսին զնա զի նստէր ընդ Յովսեփայ, և զգեցեալ էր հանդերձ հարսանեաց. և զարհուրեցան և աքանչացան վասն գեղեցկութեան նորա. և ետուն փառս Աստուծոյ՝ որ կենդանի առնէ զամենայն։ Եւ զկնի այսոցիկ՝ կերան և արբին և ուրախ եղեն։ Եւ ասէ Պետափրէս ցՅովսէփ. Ի վաղիւն կոչիցես զնախարարս և զմեծամեծս Եգիպտացւոց, և արարից ձեզ հարսանիս, և առցես զդուստր իմ զԱսանէթ քեզ ի կնութիւն։ Եւ ասէ Յովսէփ. Ոչ այդպէ՛ս. այլ վաղիւն գնացից առ Փարաւոն արքայ, վասն զի նա իմ է որպէս զհայր, և կարգեաց զիս իշխան ի վերայ երկրի. և խօսեցայց վասն Ասանէթայ յականջս նորա, և նա տացէ զԱսանէթ ինձ ի կնութիւն։ Եւ ասէ Պետափրէս. Երթ ի խաղաղութիւն։ Եւ մնացեալ Յովսէփ զօրն զայն առ Պետափրէս, բայց ոչ ննջեաց ընդ Ասանէթայ. վասն զի ասէր Յովսէփ՝ թէ ոչ վայել է առն աստուածապաշտի նախ քան զհարսանիսն՝ ննջել ընդ ամուսնոյ իւրոյ։ Եւ յարեաւ ընդ առաւօտն Յովսէփ, և չոգաւ առ Փարաւոն, և ասէ ցնա. Տո՛ւր ինձ զԱսանէթ դուստր Պետափրէ քրմի ի կնութեան, յԱրեգ քաղաքէն։ Եւ ասէ Փարաւոն. Ո՞չ ահա[2] զնա խօսեալ էր քեզ[3]

1. յԳ. ասղ մի պակասէ։
2. Ա. -հա- յ-ի-ոյ։ եղ է հարսանե-ութիւն։
3. Գ. -եղ է -ի-ք-ոնէ և եղ-ոյ։ եղ է հարսանե-ութիւն։

ի հարսնութիւն յայսմհետէ յաւիտեանս ժամանակաց։ Եւ առաքեաց Փարաւոն, և կոչեաց զՊետափրէս[1]։ Եւ ած զԱսանէթ և կացոյց առաջի Փարաւոնի. և հիացաւ Փարաւոն ընդ գեղեցկութիւն նորա, և ասէ. Օրհնեսցէ զքեզ Աստուածն Յովսեփայ, որդեակ. և Մնասցէ ի քեզ գեղեցկութիւն քո յաւիտեանս յաւիտենից. զի յիրաւի ընտրեաց զքեզ[2] տէր հարսն Յովսեփայ՝ յաւիտեանս ժամանակաց. վասն զի սա է որպէս զորդի Աստուծոյ, և դու կոչեսցիս յայսմհետէ դուստր բարձրելոյն։ Եւ ա՛ռ Փարաւոն զՅովսէփ և զԱսանէթ, և եդ նոցա պսակս ոսկիս, որ էր[3] ի տան գանձուց յաւիտեանս ժամանակաց[4]։ Կացոյց Փարաւոն զԱսանէթ յաջմէ Յովսեփայ, և եդ զձեռս ի վերայ գլխոյ, նորա և զաջ ձեռն ի վերայ գլխոյն Ասանեթայ, և ասէ. Օրհնեսցէ զքեզ[5] Աստուած բարձրեալն, և փառաւորեսցէ զքեզ[6] յաւիտեանս ժամանակաց։ Եւ դարձոյց զնոսա Փարաւոն յիրեարս, և մերձեցոյց զնոսա, և համբուրեցին զմիմեանս։ Եւ[7] զկնի այսորիկ արար Փարաւոն հարսանիս և ընթրիս մեծամեծս և ուրախութիւնս բազումս՝ զաւուրս եօթն։ Եւ կոչեաց[8] զամենայն իշխանս Եգիպտացւոցն և զթագաւորս ազգաց։ Եւ քարոզ կարդայր ամենայն երկրին Եգիպտացւոց, և ասէր. Ամենայն ոք որ գործէ զգործ զեօթն օր հարսանեաց Յովսեփայ և Ասանեթայ՝ մահու մեռցի։ Եւ եղեւ յետ այսորիկ՝ եմուտ Յովսէփ առ Ասանէթ, և յղացաւ, և ծնաւ զՄանասէ[9] ի տուն Յովսեփայ, ի փառս Աստուածոյ. ամէն։

1. Ա. յաւելու հանդերձ դրոշոմ։
2. Ա. յաւելու Աստուած Յովսէփայ... ժամանակաց։
3. Ա. որ էին ի տան գանձուց նորա ի սկզբանէ ժամանակաց։
4. Ասի մինչև դարձոյց պակասէ ՅԳ։
5. Ա. զնիզ։
6. ՅԱ. չէք զնիզ։
7. Ա. չունի և։
8. Ա. յաւելու յաստուծոյ. ՅԳ. երկուս տողս պակասէ։
9. Ա. զՄանասէ և զեփրեմ (Գ. և ունի զեփրեմ) ի տունն Յովսեփայ զորս-ՐԻՄՔՆ Աստուծոյ ՅԻՆԳՈՆԱՅ։

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ԱՍԱՆԵԹԱՑ ԱՌ ԱՍՏՈՒԱՆ

1. Մեղայ, Տէր, մեղայ առաջի քո և բազում յանցեայ, ես Ասանէթ դուստր Պետափրեայ քրմի Արեգ քաղաքի[1], որ վերակացուն էր աստուածոցն ամենայնի։
2. Մեղայ, Տէր, մեղայ առաջի քո և յանցեայ և պաշտեցի զաստուածսն, որոց ոչ գոյ թիւ, և ուտէի ի զոհից նոցա։
3. Մեղայ, Տէր, մեղայ և յանցեայ. ես էի կոյս հպարտ և ամբարտաւան։
4. Մեղայ, Տէր, մեղայ առաջի քո և բազում յանցեայ. զհաց հեղձուցիկ կերայ և զբաժակ յորոգայթից արբի, և ուտէի ի սեղանոյն մահու։
5. Մեղայ, Տէր, մեղայ առաջի քո և բազում յանցեայ, և ոչ գիտէի զՏէր Աստուած երկնից, և ոչ յուսացայ ի բարձրեալն Աստուած ի կենդանին յաւիտենից։
6. Մեղայ, Տէր, մեղայ[3] և բազում յանցեայ. և յուսացայ ի մեծութիւն փառաց իմոց և ի գեղեցկութիւն, և էի հպարտ և ամբարտաւան։
7. Մեղայ, Տէր, մեղայ, և առաջի քո բազում յանցեայ, արհամարհելով զամենայն մարդով, և ոչ էր այր՝ որ երեւէր առաջի իմ։

1. Ա. փաղաքն սարսաֆոցն որ Վիրոյոյս էր ամենայնի։
2. Ա. Նախ զԳ. տունն գնել և ապա զԲ։
3. Ա և Գ. յաւելուն առաջի քո։

Ը[1]. Մեղայ, Տէր, մեղայ առաջի քո. յանցեայ, բազում յանցեայ. զի ասէի՝ ոչ գոյ իշխան երկրի՝ որ լուծանէ զգօտի կուսութեան իմոյ։

Թ. Մեղայ, Տէր, մեղայ առաջի քո և բազում յանցեայ[2]. և պատեցի զամենեսին՝ որք կամէին զիս ի հարանութիւն, և արհամարհէի զնոսա և անգոսնէի։

Ժ. Մեղայ, Տէր, մեղայ առաջի քո և բազում յանցեայ. այլ[3] գթութեամբ քո եղէց հարսն որդւոյն մեծի թագաւորի. այլ արա ինձ թողութիւն[4]։ Մինչ եկն զօրաւորն Աստուծոյ Յովսէփ, նա ինքն իջոյց զիս ի զօրութենէ իմմէ[5]. և խոնարհեցոյց զիս յամբարտաւանութենէ իմմէ, և գեղեցկութեամբ իւրով որսաց զիս, իմաստութեամբն իւրով[6] որպէս ձուկն թակարդիւ՝ կալաւ զիս։ Եւ հոգւով դեղ կենաց արբոյց ինձ, և զօրութեամբ իւրով հաստատեաց զիս, և մատոյց զիս Աստուծոյ յաւիտենից, և ետ ուտել ինձ հաց կենաց, և ըմպել զրաժակ անմահութեան արբոյց ինձ, և եղէ նմա հարսն յաւիտեանս։

Եւ[7] յետ այսորիկ անցին եօթն ամ լիութեան. և սկսաւ գալ եօթն ամ սովոյն։

Եւ[8] լուաւ Յակոբ վասն Յովսեփայ որդւոյ իւրոյ և եկն յԵգիպտոս ամենայն ազգականաք իւրովք յերկրորդ ամսեան նիսանի[9] ԻԱ ամսոյն, և բնակեցաւ յեր-

1. Ա. նախ դնէ զԹ. տունն՝ ապա զԸն։
2. Գ. յանցեայ, այլ գթութեամբ ... ինձի թողութիւն։
3. Ա. այլ ի համբերէ զիս հարսն ինձի որդւոյ փարաւանի, ինչ։
4. Ա և Գ. յաւելուն զԱյլ գթութիւնն իբր զխորագիր։
5. ՅԳ. տող մի պակասէ։
6. Ա. իւրով հնազանդեցոյց զիս և որսաց որդիս յոսին թակարդիս։ Եւ հոգւով որդիս գիտեցոյ և զբութեամբն։
7. ՅԱ. ասաի մինչև, ցսովի խորագիր է երկրորդի մասին, և չէր խորագիր եգեալի ի բնագրին։
8. Բն. ունի իբր զխորագիր Վասն գալստեան Յակոբայ ածեալի ընդանեաւ և բնակելոյն ի Գիսեմ։
9. ՅԱ. չէր նիսան։

գրին Գեսեմ։ Եւ ասէ Ասանէթ ցՑովսէփ. Երթամ տեսանեմ զհայրն քո, վասն զի հայրն քո Յակոբ որպէս Աստուած է իմ։ Եւ [1] Յովսէփ. Եկեսցես ընդ իս, և տեսցես զհայրն իմ։ Եւ եկին Յովսէփ և Ասանէթ երկիրն Գեսեմ. պատահեցան նոցա եղբարքն Յովսեփայ, երկիր պագին նոցա, մանաւանդ [2] Ասանեթայ, և վերայ երեսաց իւրեանց յերկիր։ Եւ մտին առ Յակոբ, և [3] տեսին նստեալ ի վերայ մահճաց իւրոց։ Եւ էր ինքն ալեւոր և ծերացեալ յոյժ։ Եւ ի տեսանելն զնա Ասանեթայ՝ զարհուրեցաւ անձն նորա. վասն զի էր Յակոբ բարի [4] տեսլեամբ և ծերունի, և ծերութիւն որպէս զառն մանկան՝ յոյժ գեղեցիկ երիտասարդի. և գլուխ նորա ամենեւին սպիտակ իբրեւ ձիւն, և հեր գլխոյ նորա գանգուր [5] յար ի գլուխն և խիստ յոյժ իբրեւ զառն հնդկի, և մորուան՝ սպիտակ և վայելուչ՝ նստեալ ի վերայ լանջացն նորա, և աչք նորա խանդացուցիչ և փայլուն [6] և գեղեցիկ, և լանջք նորա և ուսքն և բազուկքն և մատունք ձեռաց նորա իբրեւ զհրեշտակի զօրաւոր, և բարձք նորա և գրունք նորա որպէս զհսկայի. և [7] այնպէս երեւէր այրն Յակոբ՝ որպէս թէ կռուիցի ոք ընդ Աստուծոյ։ Եւ [8] ելեալ զնա Ասանէթ և զարհուրեցաւ, և երկիր եպագ նմա ի վերայ երեսաց իւրոց յերկիր։ Եւ ասէ Յակոբ ցՅովսէփ. Այս է հարսն իմ կին քո. օրհնեալ [9] ողիցի սա յԱստուծոյ բարձրելոյն։ Եւ կոչեաց զնա զանուն ինքն, համբուրեաց զնա և օրհնեաց. ձգեաց և Ասանէթ զձեռս իւր, և կալաւ [10] զպարանոցէն Յակոբ

1. Ա. Եւ ասէ։
2. յԱ. չեմ մանաւանդ Ասանեթայ։
3. Ա. Ի Իսրայէլ նոցա։ Գ. Ի Յակոբ նոցա։
4. Ա. Բարի ի իր ծերութիւն նոցա որպէս մանկութիւն և գեղեցիկ յոյժ։
5. Ա. յաւելու այսքան ի գլուխ հեր գլխոյ նորա, և խուրն յոյժ որպէս զառն հնդկի։
6. Ա. փայլուն. և երեսն լանջք... բազուկքն երեսն զհրեշտակի, և բարձք...։
7. Ա. Եւ էր այրն Յակոբ երեսն ինչ։
8. Ա. երեսն։
9. Ա. Ի։
10. Ա. անկեալ զպարանոցն։

բայ, և կախեցաւ զուսովք[1] հօր իւրոյ, որպէս ոք յոր-
ժամ ի պատերազմէ ապրեալ եկեսցէ ի տուն։ Եւ յետ
այսորիկ կերան և արբին. և գնացին Յովսէփ և Ա-
սանէթ ի տունս իւրեանց[2]։ Եւ յուղարկեցին զնա
եղբարքն Յովսեփայ որդիքն Լիայ միայն. բայց որ-
դիքն Զելփայ և Բալլայի՝[3] յաղախնոյն Լիայ և Ռա-
քելի, ոչ ուղարկեցին զնա ընդ նոսա, վասն զի նա-
խանձէին և թշնամիք էին նոցա։ Եւ էր Ղեւի յաջմէ
կողմանէ Ասանեթայ, և Յովսէփ ի ձախմէ կողմանէ նո-
րա. և էր Ասանեթայ կալեալ զձեռանէն Ղեւեայ. և սի-
րէր Ասանէթ զՂեւի քան[4] զամենայն եղբարսն Յով-
սեփայ. վասն զի գիտէր Ղեւի զանճառսն բարձրելոյն[5],
և յայտնէր զամենայն Ասանեթայ գաղտնի բանիւք
և Ղեւի սիրէր զԱսանէթ յոյժ, և տեսանէր զտեղի
հանգստեան նորա ի բարձունս, և պարիսպ նորա որ-
պէս զպարիսպ անդամանդեայս, և զհիմունս[6] վիմ-
երկրորդ երկնից։ Եւ եղեւ ի գալն Յովսեփայ և Ա-
սանեթայ, ետես զնա անդրանիկ որդին Փարաւոնի ի
պարսպէն, և զղջացաւ և թշուառացաւ[7] ծանրութեամբ,
և զչարէր ի վերայ գեղեցկութեանն Ասանեթայ, և ա-
սէր. Ոչ այդպէս եղիցի։ Առաքեաց հրեշտակս որդին
Փարաւոնի, և կոչեաց առ ինքն զՇմաւոն և զՂեւի.
և եկին կացին առաջի նորա։ Եւ ասէ ցնոսա որդին
Փարաւոնի՝ անդրանիկն. Ճանաչեմ ես այսօր, զի դուք
էք արք հզօր քան զամենայն մարդիկ՝[8] որ են ի վե-

1. Ա. զուսովքն նորա՝ զոր օրինակ յոյժ ոգ զուսովն հօր իւրոյ՝ յոր-ժամ ոգոյն ի պատերազմէ և ի-նեսցէ ի տուն իւր. իսկ Գ. զուսովգ նորա, զոր օրինակ յոյժ ոգ զուսովգ հօր իւրոյ։
2. Ա սա առաջի Գ. օրինակն այս-սու բանիւք փոխաբերելով զԱստուծոյ որ ի երկնիս յա-ւիտեան ոմն։
3. Ա. Զուղալ և Զելգայ ուլելն ընդ նոսա յուղարկել զնոսա, վասն զի նախանձէին և թշնամի-էին նոցա. փանզի ուղարկեցին Լիայն և Ռաքելայ։
4. Ա. սուսուել փան։
5. Ա. յաւելու և զդանձելի իւր հանդերձն Աստուծոյ..
6. Ա. զհիմունս նորա որպէս զհի-մունս վիմ։
7. Ա. զգթութեամբ ծանրութիւն։
8. Ա. մարդ որ ի։

ռայ երկրի, և յաջոյ ի ձեր[1] յայդոցիկ երկուց՝ աւե-
ռեցաւ քաղաքն Սիկիմացւոց, և յերկուս աւուրս[2] յա-
ջոյ ձեր յայսոցիկ կոտորեցան երեսուն հազար արանց
պատերազմողաց։ Եւ ահա առից զձեզ որպէս զընչ-
գերս[3], և տաց ձեզ ոսկի և ծառայս և աղախնեայս
և տունս և վիճակս մեծամեծս և բարիս. բայց սա-
ջոյն զբանս դայս արարէք, և ընդ իս արարէք ողորմութիւն. վասն զի թշնամանեցայ ես առնաբար[4] յեղբօրէն ձերմէ Յովսեփայ, վասն զի առ զԱսանէթ զկինն իմ, զոր ինձ էր խօսեցեալ[5] ի սկզբանէ։ Եւ այժմ ես-ջայք կռուեցարուք ընդ Յովսեփայ եղբօր ձերում. և սպանանեմ զնա սրով իմով, և առնում զԱսանէթ ինձ ի կնութիւն. և դուք եղիցիք ինձ յեղբարս և սիրելիս և հաւատարիմս. բայց զբանս զայս դուք ինձ արարէք։ Իսկ եթէ դուք դանդաղիցէք[6] առնել զբանս զայսոսիկ, և արհամարհիցէք զխորհրդովք իմովք, ահա ասուր իմ պատրաստ է առ ձեզ։ Եւ մինչ դեռ զայս ասէր՝ մերկացոյց զսուր իւր և եցոյց նոցա։ Եւ իբրեւ լուան զբանս զայսոսիկ արքն Շմաւոն և Ղեւի, և զզինացան յոյժ, վասն զի ձեւով գոռոզի խօսեցաւ ընդ Նոսա[7] որդին Փարաւոնի։ Եւ էր Շմաւոն այր յանդուգն և համարձակ, և խորհեցաւ արկանել զձեռն իւր ի դաստակն[8] սրոյ իւրոյ, և ձգել զնա ի պատենից իւրոց, և սպանանել զորդին Փարաւոնի, վասն զի խստութեամբ խօսեցաւ ընդ Նոսա։ Եւ ետես Ղեւի զխորհուրդս սրտի Նորա, և զի էր Ղեւի այր մարգարէ[9], և տեսանէր սրբութեամբ մտաց իւրոց, և աչքն իւրովք կարդայր զգրեալսն ի սիրտ մարդոյն[10]. և կոխեաց ոտամբն իւր[11] առաջոյ զոտն Նորա, և նե-

1. Ա. յեռն յեր երկոցդ սուրբ-
ցաս։
2. Ա. սուրբ յեր։
3. Ա. զընդերս։
4. Ա. արհամարհաբար։
5. Ա. խօսեալ եր ի սկզբանէ։
6. Բն. դանդաղիցի+ սուրալ զբանս։
7. Ա. յաւելու ոգոռնալով։
8. Ա. գաստաման։
9. Ա. յաւելու ծանիցեալ։
10. Ա. սրդարոյն։
11. Ա. իւրով զաջոյ զոտն Շմաւոնի։

զեաց զնա, և նշանակեաց[1] դադարել նմա ի բարկութենէ իւրմէ. և ասէ Ղեւի հեզաբար ցՇմաւոն. Ընդէր դու բարկութեամբ ցասեար ի վերայ առնս այսորիկ. և մեք արք[2] աստուածապաշտք, և ոչ վայել է մեզ՝ նմա հատուցանել չար փոխանակ չարի։ Եւ ասէ Ղեւի ցորդին Փարաւոնի հանդերձ համարձակութեամբ. և բարկութիւն ոչ գոյր ի նմա, և ոչ սակաւ մի ի հեզութեան[3] սրտի նորա, և ասէ ցնա. Ընդէր խօսիս մեր ըստ բանիցս այսոցիկ. և մեք եմք աստուածապաշտք, և հայր մեր սիրելի է Աստուծոյ բարձրելոյ, և Յովսէփ եղբայրն մեր սիրելի է Աստուծոյ։ Արդ, զիարդ արասցուք մեք զբանդ զայդ չար, և մեղանչիցեմք առաջի Աստուծոյ մերոյ, և առաջի Հօրս մերոյ Յակոբայ, և առաջի եղբօր մերոյ Յովսեփայ։ Եւ այժմ լուր բանից իմոց. ոչ վայել է առն աստուածապաշտի զրկել զամենայն ոք ըստ ամենայն օրինակի. իսկ թէ ոք կամի զրկել զայր աստուածապաշտ[4], վասն զի սուր է ի ձեռն նորա. և դու պահեա[5] այժմ խօսել վասն եղբօր մերոյ Յովսեփայ ըստ բանիցս այսոցիկ։ Իսկ եթէ[6] դու մնաս ի չարի խորհրդեանդ այդմիկ, ահա սուրք մեր հանեալ են ի յաջոյ ձեռս մեր՝ վասն քո։ Եւ ձգեցին զսուրսն իւրեանց արքն Շմաւոն և Ղեւի՝ ի պատենից իւրեանց, և ասեն. Ահա տեսեր զսուրս զայս ի ձեռս մեր. սուրք որով խնդրեաց Տէր զվրէժ և զթշնամանս ի Սիկիմացւոցն, որով թշնամանեցին զորդիսն Իսրայելի վասնքեռ[7] մերոյ Դինայի, զոր պղծեաց Սիւքեմ[8] որդին Եմովրայ։ Եւ տես որդին Փարաւոնի զսուրն[9] երկսայրի, և յոյժ զդողաց ամենայն ոսկերք նորա. վասն զի փայլէին սուրքն որպէս զբոց հրոյ. և շլացան աչք որդւոյն Փարաւոնի և անկաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր[10]։

1. Ա. Նշաց։
2. Ա. Խմ։
3. Ա. հեզ–Բինեն։
4. Ա. յաւելու և թարգմանոյ այլն այն աստուածապաշտ, և սուրբ էր նորա Բեն սպանանի վնա։
5. Բն. պահէ։
6. Ա. Եթէ զ հան սուրբ։
7. Ա. ի–ը–Եբն մեր։
8. Ա. ի Սեմ։
9. Ա. զսուրն և։
10. Ա. յաւելու և երկիրս յոյժ։

Եւ ձգեաց Ղեւի զձեռն իւր և կալաւ զնա, և ասէ
նա. Արի՛ և մի՛ երկնչիր. բայց պահեա զքեզ՝ զի մի՛
ոչ խօսեսցիս յաղագս Յովսեփայ եղբօր մերում բան
ար։ Եւ ելին յերեսաց որդւոյն Փարաւոնի՝ Շմաւոն և
Ղեւի։ Եւ էր որդին Փարաւոնի լի ահիւ և տրտմու-
թեամբ. վասն զի երկնչէր յերեսաց Շմաւոնի[1]։ Եւ
զեւ զի ծանրանայր ի գեղոյն Ասանեթայ, և տրտմէր
տրտմութիւն մեծ՝ առաւել քան զչափն։ Եւ խօսե-
ան ծառայքն նորա յականջս նորա և ասեն. Ահա որ-
դիք Բալլայ և որդիքն Զելփայ աղախնոյն[2] Յակոբայ
Յշնամի են ընդ Յովսեփայ և ընդ Ասանեթայ, և նա-
ատանձին ընդ նոսա. և եղիցին նոքա ձեռամբ քով ըստ
ամաց քոց։ Եւ առաքեաց որդին Փարաւոնի հրեշ-
տակս[3], և կոչեաց զնոսա առ ինքն, և եկին առ նա
ժամ գիշերոյն, և կացին առաջի նորա։ Եւ ասէ ցնոս
որդին Փարաւոնի. Բանք իմ են ընդ ձեզ[4], վասն
դ դուք էք արք զօրաւորք։ Եւ ասեն ցնա Դան և
ադ երկու եղբարքն. Խօսեսցի այժմ տէր մեր, և
ուիցուք ծառայք քո, և արասցուք ըստ կամաց քոց։
Եւ խնդաց որդին Փարաւոնի խնդութիւն մեծ, և ասէ
ծառայս իւր. Ի բաց կացէք յինէն ամենեքեան սակաւ
ն. վասն զի բանք իմ են գաղտնիք[5] ընդ արսդ ընդ այ-
սիկ. և ի բաց կացին ամենեքին։ Եւ ասէ ցնոսա որ-
ին Փարաւոնի. Ահա օրհնութիւն և մահ առաջի ա-
ց ձերոց. առէք առաւել զօրհնութիւն քան զմահ.
ասն զի դուք,[6] արք զօրաւոր էք, և ոչ մեռանիք որ-
էս զկանայս[7]. վասն զի լուայ ես ի Յովսեփայ եղ-
բէն ձերմէ, զի ասէր ցՓարաւոն ցհայրն իմ յա-
ագս ձեր՝ եթէ որդիք աղախնեաց մօր իմոյ են և
ՀՇ են եղբարք իմ, և անսամ մահուան հօր իմոյ, և

- Ա. յաւելու և Ղեւոյ։ Եւ ծանրանայր և նեղեր ի գեղոյն։
- Ա. որդիք աղախնոյն։
- Ա. յաւելու առ նոսա։
- Ա. յեղ. ասէն ցնա խրիատոց եղբարքն Դան և Գադ։
5. յԱ. չէք գաղտնիք։
6. Ա. դուք էք արք, և։
7. Ա. յաւելու այլ տոլմրեցուք և լիրուք արք, և հարցուցեք ընտրեցց յերոց... վասն զի...

խորտակեցից զնոսա և զազգս նոցա, մի գուցէ ժա-
ռանգեսցեն ընդ մեզ. վասն զի որդիք ազախնեաց են
և դոքա են որ վանառեցին զիս Իսմայելացւոցն. և և
հատուցից նոցա ըստ ամենայն չարեացն՝ զոր չարացա-
ի վերայ[1] իմ. միայն մեռցի հայր իմ։ Եւ գովեաց զն
Փարաւոն հայր իմ, և ասէ. Բարի ասացեր, արդ ա-
յինէն արս հազարս պատերազմողս, և ես եղէց ք
օգնական։ Եւ իբրեւ լուան արքն զբանս որդւոյն Փ-
րաւոնի՝ խռովեցան յոյժ և տրտմեցան, և ասեն ցորդի
Փարաւոնի. Աղաչեմք զքեզ, տէր, զի օգնեացես մեզ
Եւ նա ասէ. Ես եղէց ձեզ օգնական, եթէ լուիցիք ինձ
Եւ ասեն. Մեք եմք ծառայք քո առաջի քո, հրամա-
տո՛ւր մեզ՝ և արասցուք ըստ կամաց քոց։ Եւ ասէ ցնա-
որդին Փարաւոնի. Ես սպանանեմ զհայրն իմ[3] յոյ-
գիշերիս, վասն զի Փարաւոն է հայր Ցովսեփայ. ա-
օգնեցէք[4] ինքեան առաջի ձեր, և դուք սպանէք զՑ-
ովսէփ. և առից զԱսանէթ ինձ ի կնութեան. և դուք[5]
եղբարք ձեր եղիցիք ինձ ժառանգակիցք. բայց սակ-
զբանս զայս արարէք։ Եւ ասեն ցնա Դան և Գա-
Մեք եմք ծառայք քո այսօր, և արասցուք զոր ինչ
հրամայեցեր[6] մեզ. և մեք լուաք այսօր ի Ցովսեփ-
զի ասէր ցԱսանէթ. Գնա վաղիւն[7] ի ժառանգութի
մեր, զի ժամանակ է կթոյ։ Եւ ետ նմա արս վե-
հարիւրս՝ զօրաւորս ի պատերազմի, և յիսուն ա-
յառաջընթացս։ Եւ այժմ լուր մեզ, և խօսեացուք ք-
քեզ։ Եւ խօսեցան ընդ նմա գաղտնի բանս. և և
որդին Փարաւոնի չորից եղբարցն՝ առ այր իւրաքան-
չիւր եօթն հազար[9] այր, և զնոսա կացոյց իշխան-

1. Ա. ընդ նս։
2. Ա. ՝՝՝՝ յեղ արս հազարս, և
իւր ընդ նոսա ի պատերազմն
և եղէց յեղ օգնական ինչ լուր-
ջիւ բոյ. և ասին նոսա դա խմ։
3. Ա. յաւելու Փարաւոն։
4. Ա. օգնեցէք բոյ, և ես իրեանց
՝՝՝՝ջի յեր և պատնէ..
5. Ա. և դուս իւրիցն իմ իրեան
և ժառանգակիցս։
6. Ա. Պատերազմեցեր դոս մեզ։
7. Ա. վաղն։
8. յԱ. չեր վեց։
9. յԱ. չեր եօթն։

առաջնորդս։ Եւ ասեն ցնոսա[1] Դան և Գադ. Մեք
գնասցուք ի գիշերիս[2], և դարանակալ լիցուք ի ճա-
նապարհին, և թագիցուք ի հիւթս եղեգանն. և դու
տար քեզ յիսուն այր աղեղնաւոր՝ ձիով հանդերձ և
գնա ի հեռուստ. եկեսցէ Ասանէթ և անկանի ի ձեռս
մեր. և մեք կոտորեսցուք զզօրսն՝ որ ընդ նմա իցեն,
և փախչի Ասանէթ առաջի կառացն, և անկանի ի
ձեռս քո, և արասցես նմա որպէս ցանկանայ անձն
քո. և յետ այսորիկ սպանանեմք զՅովսէփ[3], մինչ-
և տրտմեալ է վասն Ասանեթայ. և զորդիսն նորա
սպանանեմք առաջի աչաց նորա։ Եւ խնդաց որդին
Փարաւոնի իբրեւ լուաւ զբանս նոցա, և առաքեաց զնո-
սա և երկու հազար արանց զինուորաց ընդ նոսա։ Եւ
եկին ի հեղեղատն, և թագեան ի մէջ հիւթոց[4] եղե-
գանն. և նստան յանցն հեղեղատին աստի և անտի,
և ի միջի նոցա ճանապարհ լայն և ընդարձակ։ Եւ
յարեաւ որդին Փարաւոնի ի գիշերին յայնմիկ, և եկն
ի տուն հօր իւրոյ՝ զի սպանցէ նա սրով զհայրն իւր։
Եւ պահապանք հօր նորա արգելին զնա մտանել առ
հայր իւր, և ասեն ցնա. Զի՞նչ խնդրես[5], տէր մեր։ Եւ
ասէ ցնոսա որդին Փարաւոնի. Զի տեսից զհայր իմ,
և երթամ կթել զայգին զնորատունկն։ Եւ ասեն ցնա
պահապանքն. Գլուխն ցաւեցաւ[6] հօրն քո, և արթուն
եկաց զամենայն գիշերս, և այժմ դադարեցաւ սա-
ղաւ մի. և ասաց հայրն քո. Մի՛ ոք մերձենայ առ իս։
Եւ գնաց որդին Փարաւոնի և առ զզօրս իւր, և ի լու-
սանալն եղեւ դարանակալ։ Եւ ահա գայր Ասանէթ կա-
ռաքն և զօրքն առաջի և զկնի։ Եւ ի յարձակել թշնա-
մեացն՝ Դան և Գադ և որդին Փարաւոնի յարձակե-
ցան ի վերայ նոցա. և ետես Ասանէթ, և կարդաց առ
Աստուած բարձրեալն։ Եւ ահա այրն Աստուծոյ՝ որ[7]

1. Ա. ցնա։
2. Ա. գիշերիս ի ճանապարհն և թաքեցա՛ ի հիւթ եղեգանն։
3. Ա. յաւելու և զորդիս նորա առաջի աչաց նորա, զնոսա։
4. Ա. հիւթոցն։
5. Բն. Հարցանիս տեր։
6. Ա. ցաւեաց։
7. Ա. որ յարալեալ։

եկեալ էր առ Ասանէթ՝ երեւեցաւ, և Տէր պաշտպան և
ղեւ նմա. և ջարդեցան սուրք նոցա [1], և ամենայն պատե-
բազմունք հալեցան որպէս զմոմ առաջի հրոյ. և ան-
կաւ որդին Փարաւոնի ի յերկիր առաջի Ասանեթայ,
և կործանեցաւ, և եղեւ նման մեռելոյ. և լուաւ որդ-
ւոցն [2] Յակոբայ, զային բարկութեամբ [3]:

Եւ Դան և Գադ տեսեալ զի Տէր պատերազմեցաւ
երկեան և ասեն. Տէր պատերազմի ընդ մեզ. և ան-
կան առաջի Ասանեթայ, և ասեն. Տիկին մեր և թա-
գուհի դու ես, և մեք անօրինեցաք առ քեզ, և Տէր
հատոյց մեզ ըստ գործոցն մերոց: Եւ աղաչեմք մի
ծառայքս քո, ողորմեա մեզ և փրկեա զմեզ ի ձեռաց
եղբարցն մերոց. քանզի և նոքա վրէժխնդիրք թշնա-
մեաց եկին առ մեզ, և սուրք նոցա առաջի մեր [4] են:
Եւ ասէ Ասանէթ. Քաջալերեցարուք և մի՛ երկնչի-
յեղբարցն ձերոց. վասն զի նոքա են արք երկիւղած
ի Տեառնէ, աստուածապաշտք, և ամաչեն յամենայն
մարդոյ. երթայք դուք ի հիւթոց [5] եղեգանդ այգ-
ւոյ, մինչեւ քաւեցից զնոսա վասն ձեր, և ցածուցի
զբարկութիւն նոցա. վասն զի դուք մեծապէս հա-
մարձակեցարուք [6], և մի՛ երկնչիք. բայց դատ արասցէ
Տէր ընդ [7] ձեզ: Եւ փախեան ի պուրակս եղեգանց
Դան և Գադ և եղբարք նոցա: Եւ ահա գայլն որ-
դիքն Լիայի՝ ընթանալով իբրեւ զերամս [8] եղջերուաց
և էջ Ասանէթ ի կառացն իւրոց ծածկելոց, և ընկա-
լաւ զնոսա հանդերձ արտասուօք: Եւ նոքա անկեան
երկիր պագին նմա ի վերայ երկրի, և լացին մեծա-
ձայն. և խնդրեցին զեղբարսն իւրեանց: Եւ ասէ Ա-
սանէթ. Խնայեցէք [9] դուք յեղբարսն ձեր, և մի՛ առ-

1. Ա. Ինքնիւրոյն:
2. Բն. որդւոյն:
3. Ասա զոյ էջ մի միջանկեալ ի կատակէն Յովսեփայ որում ոչ հանդիպեցաք ի բուն կատակի իւրում, զոր ի վերջոյ գնեալք ի վայելս բանասիրաց:
4. Ա. ալաց մերոց:
5. Ա. ի տեղի:
6. Ա. յաւելու ընդդէմ նոցա, զոր Լամբրեցորոյ և մ:
7. Ա. ընդ զս և ընդ: Եւ նոյն զոր ի զոլ եղեալն:
8. Ա. Բազմամ:
9. Բն. Խնդրեցէք զվիճաբան ցեր:

նէք չար՝ փոխանակ չարի. վասն զի Տէր պաշտպան
եղեւ ինձ ի նոցանէ, և ջարդեաց զսուրս նոցա, և հա-
լեցան ի վերայ երկրի իբրեւ զմոմ առաջի հրոյ։ Եւ
է այս բաւական, զի [1] Տէր է պատերազմող զպատե-
րազմն. և դուք խնայեցէք ի նոսա, զի եղբարք ձեր են
և արիւն [2] հօր ձերոյ Իսրայելի։ Եւ ասէ ցնա Շմա-
ւոն. Ընդէր տիկին [3] մեր խօսի բարի վասն Թշնամեաց
մերոց. ոչ, այլ կոտորեսցուք զնոսա սրովք մերովք.
վասն զի նոքա խորհեցան յաղագս ձեր և հօրն մե-
րոյ Իսրայելի, և վասն եղբօր ձերոյ Յովսեփայ, ահա
այս երիցս անգամ. տիկին մեր և Թագուհի դու ես։
Եւ ձգեաց զձեռն իւր Ասանէթ, կալաւ զմօրուացն նո-
նա և համբուրեաց զնա, և ասէ ցնա. Մի [4] երբեք զայդ
առնես, եղբայր իմ, և չար փոխանակ չարի հատու-
ցանես. Տեառն տացես Թշնամութիւն. և նոքա եղ-
բարք ձեր են, և ծնունդք հօր ձերոյ, և փախեան ի
Արէաստանէ [5] յերեսաց ձերոց։ Եւ մատեաւ առ նա
Ղեւի, և համբուրեաց զձեռս նորա, և իմացաւ եթէ
պարեցուցանել կամի զեղբարսն իւրեանց։ Եւ նոքա
ելին ի պուրակս հիւթոց եղեգանն. և ծանեաւ յեղ-
բարցն նոցա. ոչ ծանոյց զնոսա, քանզի երկեաւ մի
ուցէ բարկութեամբ իւրեանց սպանանիցեն։ Եւ որ-
դին Փարաւոնի յարեաւ յերկրէ [6] և նստաւ. և խա-
նայր արիւնն ընդ ականջս և ընդ բերանն նորա։ Եւ
ընթացաւ առ նա Բենիամին, և առ զսուսերն նորա,
և ձգեաց ի պատենից իւրոց, և կամէր սպանանել զնա՝
և հարկանել ի լանջսն որդւոյն Փարաւոնի։ Եւ ըն-
թացաւ առ նա Ղեւի, և կալաւ զձեռանէ նորա և ա-
սէ. Եղբայր իմ, մի՛ առներ զգործս զայդոսիկ. վասն
զի մեք եմք աստուածապաշտք, և ոչ վայել է [7] աս-
տուածապաշտի հատուցանել չար փոխանակ չարի. և

1. Ա. զոր Տէր պատերազմեցու-
ցանէ և դուք խնայեցէք։
2. Ա. արդէ։
3. Ա. տիկին խորհուրդ բարի...
4. Ա. մի առներ զայդ եղ։
5. Ա. ի հեռաստանէ։
6. Ա. ի գեղանի։
7. Ա. ոչ պարտ։

ոչ ումեք՝ անկելոյ[1] ի ձեռս ուրուք կոխել կամ նա
զթշնամին՝ մինչեւ ի մահ։ Եւ այժմ դարձո զսուր
ի տեղի իւր. եկ օգնեա ինձ, և բժշկեացուք զնս
վիրացն Նորա, և կեցցէ և եղիցի մեր սիրելի
այսորիկ, և Փարաւոն է որպէս զհայր մեր։ Յալ
Ղեւի զորդին Փարաւոնի, և Ընկեաց[2] զարիւնն յե
սաց Նորա, և պատեաց վարշամակաւ զերեսս Նո
և եդ զնա ի վերայ ձիոյն իւրոյ. և տարաւ առ հ
իւր Փարաւոն, և պատմեաց նմա զամենայն բ
զայսոսիկ[3]։ Եւ յարեաւ Փարաւոն յաթոռոյն և եր
եպագ Ղեւեայ։ Եւ յերրորդումն աւուր մեռաւ որ
Փարաւոնի[4]։

1. Ա. և ոմինիւեան անկիալ։
2. Ա. որբիւոյ.
3. Ա. յաւելու զառաջին և զեր-
գին։
4. Ա. յաւելու որ էր իսրայել
թագաւոր է Տիրոնի։

Ե

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄՈՎՍԷՍԻ

ԱԽԱՄԱՐԳԱՐԷՆ և աստուածախօսն Մովսէս՝ որ առաջին էր ամենայն մարգարէիցն, և յԱստուծոյ՝ աստուած Փարաւոնի անուանեցաւ. և Ահարոն եղբայր նորին՝ առաջին[1] քահանայապետ ձեռնադրեցաւ ի Մովսէսէ. զի Աստուած զՄովսէս ձեռնադրեաց և նա զԱհարոն և զորդիսն նորա: Սոքա էին յազգէն Ղեւեայ, որդիք Ամրամայ՝[2] որդոյն Յաւկոբայ, որդոյն Իսահակայ, որդոյն Աբրահամու. և Յակոբ յօրհնութիւնս որդւոցն ետ զքահանայութիւն Ղեւեայ և զթագաւորութիւնն Յուդայի: Մովսէս ծընաւ որդի Ամրամայ յՈգաբեթայ մօրէ, որ էր դուստր Ղեւեայ: Եւ այսպէս եղեւ ծնունդն Մովսէսի: Գէտք Եգիպտացոց ասացին Փարաւոնի, թէ յայս նիշ աւուրս՝ յայս քանիս՝ այս անուն ամսոյ՝ փրկիչ ծնցի Իսրայելի. և նա ազատեացէ զԻսրայէլ ի ծառայութենէ քաւմէ: Զայս իբրեւ լուաւ Փարաւոն զգուշացաւ խորհրդոյն. և ի նոյն ամսեանն էառ զամենայն արսն[3] Իսրայելի և գնաց յորս էրէոց. և մնաց ի դուրս ամիսս[4] ութ՝ լոյն: Իսկ նախախնամութիւնն Աստուծոյ այնպէս տնօ-

1. Բ. որ առաջին:
2. Բ. յաւելու որդւոյն Կոհաթայ որդւոյն Ղեւեայ:
3. Բ. որդիսն:
4. Բ. վեցն:

րինեաց, որ տարաւ Ամրամ զՈՔաբէԹ ընդ իւր. և
յղացաւ ի նշանակեալ աւուրսն՝ զոր ասացին աստղա-
գէտքն։ Եւ յորժամ ծնաւ Մովսէս՝ Թագուցին ի տան-
ամիսս երիս. և զի էր կայտառ մանուկն՝ և Թաքու-
ցանել ոչ կարէին, վասն որոյ պրտուեայ տապանա-
ի գետն ընկեցին ի յահէ մանկասպանն Փարաւոնի։ Զի
Փարաւոն յորժամ զգացաւ զծնունդ փրկչին Իսրա-
յելի, հրամայեաց[1] զորս ի ծնունդն հեղձուցանել, և
զորս ի գետն ընկենուլ։ Վասն այսորիկ զՄովսէս և-
րիս ամիս Թագուցին ի տանն, և[2] այլ ոչ կարացին
պահել. և յընկենուլն ի գետն՝ դադարեցաւ տապան-
ի պտոյտ մի գետոյն։ Եւ յիջանելն դստերն Փարա-
ւոնի առ ափն գետոյն՝ տեսեալ նաժշտացն զտապանն
առին ի խաղէ պտուտին և տարան առաջի դստերն
Թագաւորին. և[3] տեսեալ խանտաղատեցաւ զնովա
և ասաց, ի մանկանցն Եբրայեցոցն է դա։ Իսկ Մա-
րիամ քոյրն Մովսէսի՝ որ մի և նա էր ի նաժշտաց
դստերն Փարաւոնի, առ զմանուկն և տարեալ[4] ետ
ի մայրն իւր յՈՔաբէԹ՝ իբր ի դայեակ սնուցանել
զտղայն վասն դստերն Փարաւոնի. զոր սնոյց և եբեր
առ դուստրն Փարաւոնի։ Եւ նա առեալ տարաւ զնա
առ հայրն իւր Փարաւոն, և ասաց. ի մանկանցն Եբ-
րայեցոցն է սա, զոր ի գետոյն առեալ արարի ինձ
յորդէգիրս[6]։ Եւ էր Մովսէս մանուկն կայտառ և բա-
րետեսակ. ընդ որ դիւր Թուեցաւ Փարաւոնի՝ և առ
զնա ի գիրկն իւր՝ և համբուրեաց։ Եւ նոյնժամայն
բուռն եհար Մովսէս տան մատամբ զմորուացն Փա-
րաւոնի, ընդ որ բարկացեալ Թագաւորն[7] հրամայեաց
սպանանել զտղայն։ Իսկ իմաստունքն որ անդ կային՝
ոչ Թողին զարքայն[8] նենգել տղային. ասելով՝ ԹԷ ի

1. Բ. յաւելու զանենայն արուս-
նոյսն Եբրայեցոց։
2. յԲ. պակասի և այլ ոչ կար-
ցին պահել։
3. Բ. և նա։
4. Բ. տարաւ։
5. Բ. չունի զնա։
6. Բ. յորդեգիր։
7. Բ. Փարաւոն թագաւոր։
8. Բ. արքայն։

ւթենէ արար[1] և ոչ գիտութեամբ արքայ.
ամիս փորձեսցուք, ասեն։ Եւ բերին առաջի
սկուտեղ[2] մի կայծակունս հրոյ, և սկուտե-
ի ոսկի կարմիր որպէս զհուր, ասելով. եթէ[3]
առցէ՝ յայտ է զի խորամանկութեամբ էարկ
ւր ի մորուան արքայի. Իսկ եթէ զհուրն առ-
ւի թէ անմեղութեամբ արար[4] վասն տխմա-
ն։ Եւ ձգեաց Մովսէս զձեռն իւր ի հուրն և
սւ կայծակն ի ձեռն[5] տղային. և նա տարեալ[6]
ակի լալով ի բերանն զձեռն կափուցեալ կայ-
ի մատն էր մածեալ՝ եղ ի վերայ լեզուին՝ և
եւս յայրեցաւ. վասն այնորիկ ծանրալեզու և
խօս էր Մովսէս ի տան Փարաւոնի, փրկիչն
ի։ Եւ վարժեցաւ Մովսէս[7] ամենայն իմաս-
մբն Եգիպտացւոց, զի Մառի՝ դուստր Փարա-
ա որդէգիր արար, և եղեւ զօրավար Եգիպ-
. և յորժամ գերեցին Եթոպացիքն զՄառի՝
ւեալ մայրն Մովսէսի. վասն որոյ տասն ամ
ռզմեցաւ Մովսէս, և էառ զԵթոպիա և դար-
ատի. ատ[8] գերի և զթագուհի նոցա զԹեսրի։
մահուանն Մառեայ անուանեալ[9] մօրն Մով-
սխանձեցան Եգիպտացիքն[10] և փախեաւ ի
Ր, և կեցեալ անդ ամս քառասուն ի տան
ելի[11], ուր ծնաւ երկուս որդիս՝ զԳերսամ և
ար։ Իբրեւ եղեւ Մովսէս եօթանասուն ա-
եւեցաւ նմա Աստուած ի մորենոջն[12] ի հուր
, և ասաց երթալ յԵգիպտոս և ազատել զազգն

ր զ-ն։
զ-մ թ ---ի ի-ր-ի ի-ր-ր-
-ր, և հ--ր ընդ նմին է
---ելով։
ի։
ր զ-ն։
ն։
--- վ-զվ-զ-ի լ-լ-վ է
, և էր։
Մ-վ-ս-։

8. Բ. ---ել։
9. Բ. յուն ի ---ն---ն-ել։
10. Բ. յաւելու ընդ Մ-վ-ս-ի և
ի-ն-ցան ---ն---ն-ել զն-, և ի-
ր-ն-ել Մ-վ-ս-ի ի---ն զի-
ն-ի-ա-ն-ն, և։
11. Բ. Հ---ի-ի։
12. Բ. հր-վ է ր-ր-ն-ն և ---ց
ի-ր-ն-ել։

Իսրայելի։ Եւ նա ոչ կամէր գնալ, այլ յապաղեաց
տասն ամ՝ պատճառելով զնրբութիւն ձայնին և զծան-
րութիւն[1] լեզուին։ Եւ դարձեալ երեւեցաւ նմա Աս-
տուած յութսուն ամի կենացն, և ասաց նմա երթա-
յեգիպտոս և ազատել զազգն Իսրայելի. և նա դեռ ես
յապաղէր ի գնալն, մինչեւ ետ առնել նմա Աստուած
զաքանչելի նշանսն։ Եւ ասաց նմա. Ո՞ արար զխուլն և
զհամրն, զկոյրն և զականին. ոչ ապաքէն ես Տէր Աս-
տուած. և արդ երթ գնա յեգիպտոս, և Ահարոն եղ-
բայր քո եղիցի քեզ բերան, և դու նմա պատգամա-
բեր յաստուածակոյս կողմանէ։ Եւ գնացեալ Մովսէս
արար զնշանսն առաջի Ահարոնի և ամենայն ժո-
ղովրդեան նորա. որք հաւատացին յԱստուած և ի
ծառայն նորա Մովսէս. և ապա գնացին Մովսէս և
Ահարոն առաջի Փարաւոնի և արարին մեծամեծ նշանս։
Զի ձգեաց Մովսէս զգաւազանն իւր առաջի Փարա-
ւոնի և եղեւ վիշապ։ Յայնժամ յառաջ կացին դիւ-
քքն Փարաւոնի ցանէս և ցամբէս. արհամարհեցին
զՄովսէս, և ասացին Փարաւոնի, թէ սա աշակերտ
է մեր, և մերովս ուսմամբ առնէ[2]։ Եւ ընկեցին նոքա
երկոքեանն զգաւազանս իւրեանց յերկիր, և եղեն
օձք առ աչօք և ոչ ճշմարտութեամբ։ Զի Մովսէս
օձն եկուլ զկախարդացն զերկու գաւազանսն՝ և առ-
ժամայն հալեալ[4] մարսեաց. և ձգեաց Մովսէս զձեռն
իւր և կալաւ զտուն օձին և եղեւ գաւազան ի ձե-
ռին նորա։ Արար և զայլ երկու նշանսն. արարին և
կախարդքն առ աչօք և ոչ ճշմարտութեամբ։ Ասաց Փա-
րաւոն ցԱհարոն. Զի՞նչ խնդիր է ձեր. ասաց Ահարոն.
Տէր Աստուած հարցն մերոց ասէ ցքեզ[5], արձակեա
զժողովուրդ իմ զիսրայէլ։ Ասաց Փարաւոն. Զ Տէր ոչ
ճանաչեմ, և զիսրայէլ ոչ արձակեմ։ Ասաց Ահարոն բա-
նիւն Մովսէսի ցՓարաւոն. թէ դու զՏէր ոչ գիտես՝ ինչ-
յերեւան գայցէ[6] քեզ. զայս ասացին ուժով, և ելին

1. Բ. չունի զծանրութիւն։
2. Բ. յաւելու զոր ինչ առնէ։
3. Բ. չունի նոքա։
4. Բ. հալեաց։
5. Բ. տէր։
6. Բ. գայ։

, և Ահարոն յերեսացն Փարաւոնի։ Եւ տասն
ծովք պատժեաց[1] Տէր զԵգիպտոս, և եհան
էլ. և հերձեալ զծովն կարմիր անցոյց զժողո-
և ընկղմեաց զՓարաւոն զօրաք իւրովք։ Եւ ե-
սրայէլ յանապատն, և զամս քառասուն կե-
ոց զնոսա մանանայիւն երկնից և լորամարգիւն
ն. և արբոյց նոցա ջուր ի վիմէն։ Եւ սեամբ
. ամբոյ լուսատու և հովանի եղեւ[2] նոցա ի
ւ ի գիշերի։ Պահեաց երեք քառասուն և ըն-
զտախտակս քարեղէնս՝ գրեալ մատամբն Աս-
, զտասն բանս օրինացն։ Կազմեաց զխորանն
ուԹիւն երկնից, և ձեռնադրեաց զԱհարոն և
նորա ի քահանայուԹիւն Տեառն. կարգեաց
տացիսն ի սպաս[3] պաշտաման Տեառն. և վա-
ղաղաղաղաղ օրԹիւք և տարածմամբ ձեռացն զԱմաղէկ[4].
Սեհոն և զՈգ արքայ, և զամբարշտեաւքն
ելէ սատակեաց. բորոտեցոյց զքոյրն իւր զՄա-
և Ահարոնի բարկացաւ Տէր ի սատակել զնա
Մովսէսի. քանզի քոյրն և եղբայրն բամբասե-
Մովսէս[5] զծառայն Աստուծոյ, որ հեզ էր քան
այն մարդիկ։ Եւ զի պատուէր զԹագուհին
ացոց մեծարանաք՝ զոր ինքն գերեալ էր ան-
ի[6] ի ժամանակին յայնմիկ որ Մովսէս էր
ի Փարաւոնի՝ տասն ամ պատերազմեցաւ ընդ
իայ. և անոյց եղունս և ձագս արագելաց. և
պատերազմեցաւ ընդ ԵԹովպիայ և էառ զնա.
ւտ էր ճանապարհն որ մտանէր ի Հապա-
ն. և նոքա եղունքն և արագիլքն զօձն սատա-
և ապա կարաց Մովսէս ի Հապաշատան մտանել
ել զնոսա։ Զայն ԹագուհԻն զոր, գերեալ էր
՝ դեռ. եւս յԵգիպտոս էր. յետ քառասուն և

[1] Տասն չեղեալ պատուհասք։ [2] Ամբոյ պաշտաման։ [3] Նշանակել։ [4] Ամաղեկ։ [5] Զոր հեղ..

[6] Ասա Բ. օրինակն փոփոխեալ վրի-
էր։ պակաս զպարբերութիւնս ի
տեղւոջէ ի տեղի, որովհետեւ
զոգ պատմութեանն։

երկու ամաց գերութեան, և ի հանել ժողովրդեան
յԵգիպտոսէ՝ զնա եւս եհան անտի, իբր թէ գութ և
ողորմութիւն առնել նմա։ Եւ սոյնպէս[1] մեծարանք
չրջեցուցանէր զնա յանապատին՝ ընդ ժողովրդեան
Իսրայելի. վասն այնորիկ բամբասեցին զՄովսէս Մա-
րիամ և Ահարոն՝ և պատուհասեցան։ Եւ ապա վաղ-
ճանեցաւ Ահարոն ի Հոր լեառն, և թաղեաց զնա
Մովսէս ի գլուխ լերինն. և յառաջ քան զմեռանելն
Ահարոնի՝ մերկացոյց Մովսէս զպատմուճանն ի նմա-
նէ, և զգեցոյց Եղիազարու որդոյ նորա[2]։ Եւ ապա
մեռաւ Ահարոն և թաղեցաւ. և լացին զԱհարոն որ-
դիքն Իսրայելի զաւուրս երեսուն։ Եւ երեք ամաւ մե-
էր Ահարոն քան զՄովսէս. և երեք ամաւ յառաջ մե-
ռաւ քան զնա։ Եւ կացոյց Մովսէս զԵսու որդի Նա-
ւեայ փոխանակ իւր առաջնորդ Իսրայելի. և ինքն ել
ի գլուխ լերինն Նաբաւու[3], և անդ վաղճանեցաւ Մով-
սէս հարիւր և քսան ամաց։ Եւ ոչ վատեցան աչք
նորա, և ոչ թարշամեցան ծնօտք նորա, զի յերեւ-
մանէն Աստուծոյ լուսաւորեցան երեսքն Մովսէսի՝
իբրեւ զպայծառութիւն հանդերձեալ կենացն, և զոր
Ադամ ի դրախտին ունէր. մինչ զի ոչ կարէին որ-
դիքն Իսրայելի հայել ի նա՝ զատ յԱհարոնէ և Յե-
սուայ. վասն որոյ եօթն քօղ ձգէին ի վերայ երե-
սացն Մովսէսի, և ապա կարէին խօսել ընդ նմա որ-
դիքն Իսրայելի։ Եւ մսրուա ոչ ունէր Մովսէս ի պայ-
ծառ[5] լուսափայլութենէ դիմացն։ Սա ցանկացաւ տես-
սանել զԵրուսաղէմ և զայլ տնօրինական տեղիսն. և
ոչ թողացոյց նմա Աստուած. զի բարկացոյց զՏէր ի
վերայ ղուրցն բամբասանաց. և պատճառն այս է։ Զի
Մարիամ քոյրն[6] Մովսէսի՝ որ էր կոյս և մարգարէ՝
մեռեալ էր, և Մովսէս ի սուգ մտեալ[7]. և ժողովուրդն

1. Բ. Ե ոյնպէս։
2. Բ. յաւելու Ե յԵռանոգրիաց զնա փոխանակ հօր նորա։ Եւ ապա։
3. Բ. Նոբա։
4. Բ. Նորա։
5. Բ. չունի պայծառ։
6. Բ. փոյրն Ահարոնի Ե Մովսէսի մեռեալ էր։
7. Բ. Նոգեալ։

Խարաւեալ տրտնջեաց զԱստուծոյ, և բամբասեցին զՄովսէս։ Վասն որոյ գնաց Մովսէս տրտմութեամբ և սիրտ զվէմն բարկութեամբ[1]. զի պարտ էր խոնարհութեամբ և աղօթիւք հարկանել զվէմն, որպէս և յայլ աւուրսն սովոր էր առնել՝ և ոչ բարկութեամբ։ Վասն այսորիկ ոչ եթող նմա Աստուած տեսանել զերկիրն աւետեաց. այլ ասաց նմա ելանել ի լեռն Նաբաւու[2], և անտի տեսանել զերկիրն Երուսաղեմայ, և մեռանել անդ ի գլուխ լերինն Նաբաւու՝ մերձ ի տուն Փեղրովրայ[3] կռոցն, յայնդիման Երիքովի, յայնկոյս[4] Յորդանանու։ Եւ թաղեաց զնա Միքայէլ հրեշտակապետն, և ոչ ոք գիտաց զգերեզման նորա և զոսկերսն ի մարդկանէ մինչեւ ցայսօր, վասն երկուց պատճառաց. նախ՝ զի Աստուած անուանեալ էր Մովսէս, վասն[5] այն գաղտ մեռաւ և անյայտ ի մարդկանէ, զի մի տեսցեն զաստուածն իւրեանց մեռեալ։ Եւ դարձեալ՝ զի մի առնուցուն մարդիկ ի պաշտօն զգերեզման նորա[6] և զոսկերսն։ Զի ոչ եղեւ մարգարէ յիսրայելի իբրեւ[7] զՄովսէս՝ զոր ծանեաւ Տէր յանդիման նշանաւք և արուեստիւք զոր արար նովաւ։ Եւ լացին զՄովսէս որդիքն Իսրայելի յԱռարովթ Մովաբու՝ յանդիման Երիքովի՝ զաւուրս երեսուն, և ոչ աւելի կամ պակաս։ Զի թիւ լուսին երեսուն օր է, և արդ[8] նոր ծնանի, և ցուցանէ յարութիւն մեր ի հողոյ, և զվերստին նորոգումն յանհաւութիւն։ Մարգարէն Մովսէս չորս ծննդեան հանդիպեցաւ, առաջին՝ ի մօրէն, երկրորդ՝ ի ջրոյ, երրորդ՝ ի հրոյ, որ մնաց առ Աստուած ի գլուխ լերինն Սինեայ աւուրս քառասուն ի մէջ հրոյն, և ապա ծնաւ նա հրոյն. չորրորդ ծնունդն Մովսէսի ի վիմէն, որ եղ զնա Աստուած ի փապ վիմին, որ ետես զյետոյսն Աստուծոյ, և անտի ծնաւ Մովսէս որդի վիմի։ Պահեաց Մովսէս երեք

1. Բ. յաւելու ընդ որ բարկոյս- Աստուածն, և ուղիղ կարգ ի վիմն։
2. Բ. Նաբաս։
3. Բ. Փեղրովրայ։
4. Բ. չունի յայնկոյս Յորդանանու։
5. Բ. չունի վասն այն։
6. Բ. չունի և զոսկերսն։
7. Բ. որպէս։
8. Բ. անդ։

քառասուն, ըստ թուոյ ամաց նորա օր ընդ տալ զի ամք կենաց նորա էին երեք քառասուն, որ[1] հարիւր և քսան տարի. և ոչ ոք գտաւ նման յամենայն ազգս[2] և ի մարգարէսն Իսրայելի. զի բան ի բերան ընդ Աստուծոյ խօսեցաւ. և նորա տարեալ յարութիւն եղեալ է, որ յարուցեալ է թարօր վկայ աստուածութեանն Յիսուսի Քրիստոսի որդւոյն Մարիամու։

1. Բ. չունի որ է։ 2. Բ. չունի ազգս։

ՄԱՀ ՄԱՐԳԱՐԷԻՑ

ՄԱՀ ԵՍԱՅԱՑ ՄԱՐԳԱՐԷԻ

Ա էր որդի Ամովայ ի Թեկուայ ի ցեղէ Յուդայ. և մեռաւ ի Մանասէէ սղոցեալ յերկուս. եւ եղաւ ի ներքոյ կաղնւոյն Ռոգելեայ, մերձ յանցս ջրոյն զոր կորոյս Եզեկիա Թագաւոր՝ խցեալ զնա. վասն այնորիկ զնչանն ի Սելովամ Աստուած վասն մարգարէին արար. զի յառաջ քան զմեռանելն Ժողովուրդն ի ծարաւոյ, յաղօթս եկաց զի գտցեն ջուր ըմպելոյ, և վաղվաղակի առաքեցաւ նմա ի յԱստուծոյ. վասն այնորիկ կոչեցաւ Սելովամ՝ որ Թարգմանի առաքեալ։ Եւ առ Եզեկիայիւ յառաջ քան զառնելն զՋրհորսն և զաւազանն. աղօթիւք Եսայեայ սակաւ մի ջուր բղխեաց, յորժամ էր ժողովուրդն պաշարեալ յայլազգեացն. ունէին զՍելովամ, զի մի ապականեսցի ժողովուրդն առ ի չգոյէ ջրոյ. և պատեալ զքաղաքն պատնիշաք. նստէին շուրջ պատերազմողքն աւուրս բազումս. և հարցեալ, թէ ուստի՞ ըմպեն ջուր քաղաքացիքն, և ուսեալք՝ նստան այնուհետեւ այլազգիքն առ Սելովամ։ Եւ յորժամ գային Հրեայքն. հանդերձ Եսայեաւ, գայր յանկարծակի ելանէր ջուրն. և յորժամ այլազգիքն գային՝ ոչ ելանէր. վասն որոյ մինչեւ ցայսօր ելանէ ջուրն զի ցուցցի խորհուրդն։ Արդ վասն զի Եսայեայ աղաւաւ այն եղեւ, վասն յիշատակի նորին, ժողողուրդն՝ մօտ ի Սելովամ եդին զնա

փառաւորապէս, զի ի ձեռն աղօթից նորա, և յեռ
մահուան նորա ունիցին վկայ զՔրիստն. քանզի և հրա-
ման իսկ տուան նոցա այնպէս առնել։ Եւ է գերեզ-
ման նորա մօտ ի գերեզմանս թագաւորացն յետուստ
կուսէ առ գերեզման քահանայիցն ի հարաւոյ կող-
մանէ։ Եւ է մինչեւ ցայսօր անյայտ ի բազմաց, ի քա-
հանայից անտի, և յամենայն ժողովրդեանն։

ՄԱՀ ՈՎՍԷԻ ՄԱՐԳԱՐԷԻ

ՈՎՍԷԷ էր ի Բեղմովթայ[1], ի ցեղէ Իսաքարայ,
և շատ մարգարէացաւ ի վերայ Իսրայելի։ Մեռաւ և
թաղեցաւ յերկրի իւրում խաղաղութեամբ[2]. և ե-
նչան, եթէ եկեսցէ Տէր յերկրի[3], և ընդ մարդկան շրջ-
ջեսցի։ Եւ կաղնին որ ի Սելով՝ բաժանեսցի յերկո-
տասան մասն, և եղիցի երկոտասան կաղնի. և զհե-
երթիցեն և հնազանդեսցին երեւելոյն Աստուծոյ, և
նովաւ կեցցէ ամենայն երկիր։

1. Զ. ԲԻԲԼՈՎԹՈՅ. ԺԸ. ԲԻԲՈՅ-
ՄՎԹՈՅ. ԺԹ. ԲԻԴԼԵՈՎԹՈՅ։
2. ԺԹ. ՀՈՒՆԻ ԽՈՂՈՂՈՒԹԵՄԲ։
3. ԺԹ. ՅԵՐԿԻՐ։

ՄԱՀ ԱՄՈՎՍԱՑ ՄԱՐԳԱՐԷԻ

Ամովս էր ի Թեկուայ, և Ամասիա կոչկոճեաց նա[1]. յետոյ և սպան զնա որդի նորա՝ բեկեղբ[2] ջաղաքեալ զծամելիսն[3]. և ոգւովն եկն յերկիր իւր, և յետ եկաւ աւուրց մեռաւ և թաղեցաւ անդ[4]:

ՄԱՀ ՄԻՔԻԱՑ ՄԱՐԳԱՐԷԻ

Միքիէ էր ի Մոսորովթայ[5], յազգէ Եփրեմի. զոր զում ինչ արարեալ ընդ Աքայաբ, սպանաւ յՊոբոայ[6] որդւոյ նորա, և թաղեցաւ յերկրի իւրում միայն, ոչ ի շիրիմն Ենակիմայ[7]:

1. Զ. ոչ էր ի Թեկոայ, և Ամասիայ երդն Բեթելայ յոճախ կոչկոճեալ զնա. ԺԸ և ԺԹ. նման են քնագրիս միայն յաւելուն՝ բազմամ անգամ կոչկոճեր զնա:
2. ԺԸ. Բակեղբ:
3. Զ. ունի և զայս. Եթէ դեռ է նմա ի յային ղանդն, գոբցեալ որդի նորա եհար բրովզնոյ դեզ նորա:
4. Զ. ի Նեբրոյ Թեկոայ:
5. Զ և ԺԹ. Մոսովրեանոյ:
6. Զ. յԱբիմայ որդւոյ նորա, ընկեցեալ եղեալ ի վրեր. վասն զի յանդգնմանէր զնա ի վերայ ամպարշտութեան հարցն նորա. այսպէս ունին և ԺԸ և ԺԹ:
7. ԺԸ. Անակիմայ:

ՄԱՀ ՅՈՎԵԼԱՑ ՄԱՐԳԱՐԷԻ

Յովէլ՝ էր յազգէ Ռուբենի. մարգարէացաւ վասն սովոյն և նուազութեան զոհիցն[1] և վասն չարչարանաց մարգարէին արդարոյ. և եթէ նովաւ նորոգիցի արարածք ի փրկութիւն։ Մեռաւ խաղաղութեամբ։ Թաղեցաւ յագարակի[3] իւրում։

ՄԱՀ ԱԲԴԻՈՒ ՄԱՐԳԱՐԷԻ

Աբդիոն՝ էր յերկրէ Սէքիմայ[4], յագարակէ Բեր[illegible]քարայ[5]։

Սա՝ էր աշակերտ Եղիայ, բազում ինչ վիշտս կրեաց[6] վասն նորա՝ զի ապրեցուսցէ զնա։ Սա էր երրորդ յինանպետն՝ յոր խնայեաց Եղիա և էջ [illegible] արքայ[8]. և յետոյ թողեալ զպաշտաւորութիւնն աստ[illegible]քային՝ մարգարէանայր։ Մեռաւ և [illegible]ղեցաւ առ հայրս իւր։

1. ԺԸ. հոյին։
2. Զ. ԺԸ և ԺԹ. յաւելուն սա [illegible]նայն։
3. ԺԸ. յերէրէ։
4. Զ և ԺԹ. Սէ-տրոյ. ԺԸ. Սէ-տեմայ։
5. Զ. ԺԸ և ԺԹ. Բեր-տրեմայ։
6. Զ և ԺԹ. վշտուէրեաց։
7. Զ և ԺԹ. չունին սա էր, [illegible] հգեալ են՝ և։
8. Զ. և ԺԹ. Ո-զիա, իսկ ԺԸ Ա-սաբ։

ՄԱՀ ՅՈՒՆԱՆՈՒ ՄԱՐԳԱՐԷԻ

Յունան՝ էր յերկրէն Կարիաթմաւուսայ՝[1] որ
երձ յԱզովտոս՝ ի քաղաքն այլազգեաց ի[2] Ծովեզե-
ին։ Եւ ընկեցիկ եղեալ արտաքս ի կիտէն[3], չոգաւ
ուսանգամ[4] ի Նինուէ, և դարձեալ միւսանգամ ան-
ի, ոչ մնաց յերկրի իւրում, այլ առեալ զմայր իւր
գաւ պանդխտեցաւ ի Սուր, և[5] ի գաւառին այլազ-
եաց ընդ հեթանոսս. զի[6] ասէր թէ այսպէս բարձից
ախատինս իմ, զի ստեցի ի մարգարէանալ իմում
ան Նինուէի քաղաքի մեծի[7]։ Յայնժամ յանդիմա-
էր[8] Եղիա զԱքայաբ՝ և զեզարել կին նորա։ Եւ կո-
աց սով ի վերայ երկրին, և փախեաւ[9] ի Սարեփ-
ա[10], եգիտ զայրին հանդերձ որդւովն իւրով, և մնաց
ռ նմա[11], քանզի ոչ կարէր լինել ընդ անթլփատս, և
հնեաց զնոսա վասն օտարընկալութեանն. զի յառա-
գոյն գիտէր[12] զնոսա ի վաղուց հետէ, զորոյ զոր-
ին յարոյց Աստուած[13]. ցուցանել նմա թէ ոչ աք կա-
փախչել յԱստուծոյ։ Եւ յարուցեալ Յունան յետ
ոյն եկն յերկիրն Յուդայ, և մեռաւ մայրն Նորա
ճանապարհին. թաղեաց զնա մօտ ի կաղնին Դե-
ոյրայ, և բնակեցաւ Յունան յերկրին Սաբարայ. մե-

· ԺԸ· կարիաթարիմայ։
· Զ և ԺԹ· որ է։
· ԺԸ· և ընկեցեալ է կիտէն որ-
պատոյ։
· Զ· ԺԸ և ԺԹ· չունին գեան-
դամ։
· Զ· ԺԸ և ԺԹ· չունին և։
· Զ և ԺԹ· տանչ այսպէս։
· ԺԸ· չունի գեղ։
8· ԺԸ· յանդիմանեաց։
9· ԺԸ· Եկեալ։
10· ԺԸ· է Սարեպտա Սիդոնայ-
ոց։
11· Զ և ԺԹ· Նոսա։
12· Զ· ԺԸ և ԺԹ· ճանաչէր։
13· Զ· ԺԸ և ԺԹ· ունին և զայս-
է գրեալ ի գրոցն Եղիայի մար-
գարէ Աստուծոյ։։

ռաւ և Թաղեցաւ յայրին Կենազայ[1] դատաւորի եղե-
լոյ ի ցեղէ միոջէ յաւուրս անիշխանութեանն։ Եւ ե-
նչան յԵրուսաղէմ, թէ յորժամ տեսանիցեն[2] զքա-
զի գոչեսցէ գորովալիր, և զբոտոտ[3] ի փայտի, զի ա-
ղաղակեսցէ մերձ լինել զիրկութիւն[4]. յայնժամ տես-
ցեն զԵրուսաղէմ տապալեալ ի հիմանց, և մտցեն ի նա
յամենայն ազանց[5] յերկրպագութիւն Տեառն։ Եւ ա-
ռեալ զքարինս նոցա[6] դիցեն ի կողմանէ արեւելից[7]
և անդ լիցի[8] երկրպագութիւն օծելոյն՝ վասն պղծե-
լոյն[9] Երուսաղեմի յաւերածին զազանաց և յամե-
նայն գարշելեաց. և յայնժամ եկեսցէ կատարած ա-
մենայն երկրի։

ՄԱՀ ՆԱՒՈՒՄԱՑ ՄԱՐԳԱՐԷԻ

Նաւում՝ էր յեղկեայ[10] յայնկոյս Ցորդանանայ
ի Բեղաբրէէ[11], ի ցեղէ Շմաւոնի. նա[12] ետ հանդեր-
ձունանու նշան ի Նինուէ թէ ի քաղցր[13] ջրոյ և
հրոյ գետնականէ կորիցէ. վասն որոյ և եղեւն իսկ. զի
ծովակն որ շուրջ զնովաւ հեղեղեաց զնա շարժմամբ

1. Զ. ԺԸ և ԺԹ. կենդեղոյ։
2. ԺԸ. տեսանիցեն։
3. ԺԸ. բոբոտ։
4. Զ և ԺԹ. և զբոտոտ զի է փայ-
տի ոտ Ասորոյ ազազելեան,
թերյն ի լինել երլոնիան.
ԺԸ. և զբոբոտ զի զփայտի
ազազելեանն. պակասէ թերյն ի
լինել երլոնիան։
5. Զ. ԺԸ և ԺԹ. ամենայն հե-
նանոտ։
6. Զ և ԺԹ. նոցա։
7. ի լս. բնագրիս և ԺԳ. տի-
նակին գնի. արևմտից։
8. ԺԸ. եղիցի։
9. Զ և ԺԹ. պղծանիան։
10. Զ և ԺԸ. յեղկեանայ ոչ ի։
11. Զ և ԺԸ. բիբանբրէ։
12. Զ և ԺԸ. ոտ։
13. ԺԸ. չունի քաղցր։
14. Զ և ԺԸ. քանզի։

կորոյս[1]. և հուր յանապատէ եկեալ զբարձաւանսկ[2] նորա այրեաց։ Եւ մեռաւ խաղաղութեամբ և աղեցաւ[3] յերկրի իւրում։

ՄԱՀ ԱՄԲԱԿՈՒՄԱՑ ՄԱՐԳԱՐԷԻ

Ամբակում էր ի ցեղէ Շմաւոնի, յագարակէ Եթուքարայ[4]։ Սա ետես յառաջագոյն զգերութիւնն. վասն աւերածոյն Երուսաղեմի սգացաւ յոյժ. և որժամ եկն Նաբուգոդոնոսոր յԵրուսաղէմ՝ փախեաւ Ուստրակինէ[5], և եղեւ պանդուխտ յերկրին Իսմաելի. և իբրեւ դարձան Քաղդէացիքն յերկիրն[6] իւեանց, և մնացորդք Հրէիցն՝ որ էին յԵրուսաղէմ՝ ի-ն յԵգիպտոս։ Յայնժամ դարձեալ եկն յերկիր իւր պաշտէր զհնձօղս ագարակի իւրոյ. և իբրեւ առ նորտիկն՝ մարգարէացաւ ընտանեաց իւրոց և ասէ. Եթէ յամիցեմ՝ դուք տարէք[7] ճաշ հնձողացն։ Եւ երեալ[8] ի Բաբելոնն ի ձեռն հրեշտակին որ առաջնորդեաց նա, և տարեալ ճաշ[9] Դանիելի, և դարձեալ չոգաւ[10] ու հնձողն։ Եւ տարաւ[11] նոցա ի տանէ այլ խորտիկս, յամեալ ինչ զսովորական ժամն, և ոչ ումեք պատմեաց եղեալն[12]. և իմացաւ եթէ վաղվաղակի դարձցի ողովուրդն ի Բաբելոնէ։ Եւ յետ երկուց ամաց դար-

1. Ի Զ. պակասէ և կորոյս։
2. Զ և ԺԸ. Բարձրաբանդակս։
3. Ի Զ. պակասէ և Բուլեցաւ։
4. Զ և ԺԹ. Ս-ատրայ. ԺԸ. Ս-ատրայ։
5. ԺԸ. ՅՈ-ատրակինս։
6. ԺԸ. Ի Գէղս։
7. Զ և ԺԹ. Գարայք։
8. Զ և ԺԸ. Յաւելուն նորա։
9. Զ. ԺԸ և ԺԹ. ՋՀ-ն.
10. Զ և ԺԹ. Դարձեալ։
11. ԺԸ. Գարեալ է Դանէ նոցա։
12. Զ. ԺԸ և ԺԹ. Ցվալելն։

ձան[1] ի գերութենէ. և ետ նշան որոց ի Հրէաս-
տանի, եթէ ի կատարածի՝ մարգարէ[2] որդի Աստու-
ծոյ յարիցէ և ուսուցցէ, ի տաճարին, և[3] որք հաւա-
տան ի նա տեսցեն զլոյս հայեցեալ ի փառս Միա-
ծնին, և որք ոչ լսեն նմա, եղիցին ի խաւարի։ Եվ
վասն վախճանի տաճարին, ասաց յառաջագոյն, եթէ
յարեւմտից[4] ազգէ աւերեսցի։ Յայնժամ, ասէ, վարա-
գոյր դաբիրային մանր[5] ծուէնս պատառեսցի, և ելեալ
սրբոյ հոգւոյն ի տաճարէն, և աղաւաղագէաք[6] երդ-
կուց սեանցն բարձցին, և[7] ոչ որ գիտասցէ թէ ուր
լինիցին. այլ ի հրեշտակաց բերցին յանապատ ուր
ի սկզբանէ կառուցաւ խորանն վկայութեան. և նա
քաջ ծանիցի Տէր և լուսաւորեսցէ զփախուցեալսն յո-
ձէն, և պատսպարեցուսցէ[8] զնոսա յարդարութիւն
յաւիտենից։ Եւ մեռաւ[9] և թաղեցաւ յագարակի ի-
բրում միայն։

1. Աստի մինչև ցվերջ պակասէր յորինակին, յաւելաք ըստ Ջ և ԺԹ օրինակաց։
2. ԺԸ. մարգարէութիւնն։
3. ԻԺԸ. պակասէ մինչև և որ։
4. ԺԸ. արեւմտեան։
5. ԺԸ. չունի մանր։
6. ԺԸ. ազաւաղագէաք։
7. ԺԸ. չունի մինչև այլ։
8. ԺԸ. պատսպարեսցէ։
9. ԺԸ. յաւելու խաղաղութիւն

ՄԱՀ ՍՈՓՈՆԻԱՑ ՄԱՐԳԱՐԷԻ

ՍՈՓՈՆԻԱ՝ էր ի ցեղէն Շմաւոնի, յազգարակէ աբրաթայ[1]։ Սա մարգարէացաւ վասն քաղաքին Երուսաղեմի, և վասն վախճանի[2] նորին և վասն փրկութեան և մտին հեթանոսաց, ամօթոյ ամպարշտաց, վասն դատաւորին ամենայն[3] շնչոց որդւոցն[4] Աստուծոյ։ Մեռաւ[5] և թաղեցաւ յազգարակի իւրում։

ՄԱՀ ԱՆԳԷԻ ՄԱՐԳԱՐԷԻ

ԱՆԳԷԱՍ մարգարէ՝[6] էր ի ցեղէն Ղեւեայ. ծնաւ Բաբելոն. և մինչ դեռ մանուկն էր՝ եկն ի Բաբեղ յԵրուսաղէմ, և յայտնապէս վասն դարձի ժողովրդեանն մարգարէացաւ, և ետես զշինուածս տաճարն։ Մեռաւ խաղաղութեամբ և թաղեցաւ Յերուսաղէմ մերձ ի գերեզմանս քահանայիցն փառաւորաբէս, զի[7] և նա յազգէ քահանայապետիցն[8] էր։

ԺԸ. Մանրիայ։
ԺԸ. գոնարէ։
Զ և ԺԹ. այսպէս յարմարեն զբանդ. գոգաւորին աստիճանիկ որդոյն Աստուծոյ։
ԺԸ. եզական դնէ ընդ որդոյն։
5. ԺԸ. յաւելու խաղաղութիւնքն։
6. Զ. ԺԸ և ԺԹ. չունին մարգարէ։
7. Զ և ԺԹ. վասն զի. իսկ ԺԸ. գանգի։
8. Զ. ԺԸ և ԺԹ. գահանայիցն։

ՄԱՀ ԶԱՔԱՐԻԱՑ ՄԱՐԳԱՐԷԻ

ԶԱՔԱՐԻԱ՝ էր յազգէն[1] Ղեւեայ, և ծնաւ ի Գադ-
դի յերկրին[2] Քաղդէացւոց[3]։ Երիտասարդ հասակաւ
շատ մարգարէացաւ վասն ժողովրդեանն և նշան եղ-
ի հաստատութիւն բանիցն։ Սա ասաց զՅովսեդեկ
կեայ թէ ծնցի որդի և[5] յԵրուսաղէմ քահանայա-
ցի անարատութեամբ յօրինակ ճշմարիտ քահանայա-
պետին։ Սա զՍաղաթիէլ վասն որդւոյն[6] օրհնեաց
և անուանեաց Զօրաբաբէլ։ Եւ առ Կիւրոսիւ՝ եղ նշան
ի յաղթութիւն[7]. և վասն սպասաւորութեան նորա
յառաջագոյն ասաց, զոր առնելոց էր[8] յԵրուսաղէմ
և օրհնեաց զնոսա[9] յոյժ. և զհանդերձեալսն մար-
գարէացաւ յԵրուսաղէմ, և վասն կատարածի նորին
և սկիզբն[10] հեթանոսաց և վախճանի տաճարին և ա-
ւերածոյն, և դատարկութեան մարգարէիցն[11] և շ-
բաթուցն։ Եւ վասն կրկին դատաստանի նշանակեաց
Եւ մեռաւ խաղաղութեամբ և բարւոք ծերութեամբ[12]
և թաղեցաւ մերձ յԱնգէ։

1. ԺԸ. է ցեղէ։
2. Զ և ԺԸ. յԵրիէրն։
3. ԺԸ. յաւելու ասա, ե՞ Երի՞ալ յԵրիէրն Քաղդեացւոց Երիտասարդ։
4. Զ և ԺԹ. նշանս եղ։
5. ԺԸ. այսպէս ունի՝ ծնցի որդի յԵրուսաղէմ, և քահանայոյ։
6. Զ և ԺԹ. չունին որդւոյն։
7. Զ և ԺԹ. նշան յաղթութեան։
8. Զ և ԺԹ. սահմանս էցեն։
9. ԺԸ. զնս։
10. Զ. ԺԸ և ԺԹ. է սկզբան։
11. Զ և ԺԹ. յաւելուն՝ և քահանայիցն։
12. Զ և ԺԹ. է բարւոք ծերութեան. իսկ ի ԺԸ. պակաս բարւոք։

ՄԱՀ ՄԱՂԱՔԻԱՑ ՄԱՐԳԱՐԷԻ

ՄԱՂԱՔԻԱՍ՝ յետ դարձի գերութեանն[1] ծնաւ ի Յովփերայ ի ցեղէն[2] Ղեւեայ. և մինչ դեռ մանուկ եւս էր՝ բարի վարս եցոյց յանձին։ Եւ վասն զի[3] ամենայն ողովուրդն պատուէր զնա իբրեւ զանարատ և զհեզ, կոչեցին զնա Մաղաքիաս, որ կոչի հրեշտակ. զի զ տեսլեամբ վայելուչ. այլ որպէս ինքն ասաց ի մարգարէանալն[4] իւրում, ի նմին աւուր հրեշտակ երեւեալ[5] զկրօրդէր զբան նորա, և զհրեշտակն ոչ ոք յանարանիցն տեսանէր, այլ միայն զձայն նորա լսէին[6]։

Իսկ արժանաւորքն[7] և զտեսիլ նորա տեսանէին, զ եղեւ յաւուրսն անիշխանութեանն. որպէս և գրեալն ի Սիփրասփոտեիմն[8], այսինքն դատաւորացն գիրս[9]։ Մինչ դեռ եւս մանուկ էր յաւելաւ առ ժողովուրդ[10] էր. և թաղեցաւ յագարակի իւրում։

- Զ. դ-ուչն գեր-ութեան։
- Զ և ժթ. է Սփ-ուրայ յ-ազգն։
- Զ և ժթ. չ-ունին վասն զի։
- Զ և ժթ. է Մ-ուրգ-ուրթ-ութեան։
- Զ և ժթ. ԻՔ-ալ հրեշտ-ակ Ա-գ-ա-ծ-ոյ։
- Զ և ժթ. լսեր։
- Զ և ժթ. տ-ուրգ-անին։
- Զ և ժթ. Սփ-ուրս-ուփ-ուն։
- Զ և ժթ. չ-ունին գեր-ս։
- ժթ. հ-ուր.

ՄԱՀ ԴԱՆԻԵԼԻ ՄԱՐԳԱՐԷԻ

Ըստ ԲԾ.

ԴԱՆԻԷԼ էր յազգէ Յուդայ, ի գլխաւորաց՝ յարքունի սպասաւորութենէ. այլ մինչ դեռ մանուկ էր ածաւ ի Հրէաստանէ յերկիրն Քաղդէացւոց։ Եւ ծնաւ ի Բեթովրի[1] վերնումն. և էր այր քարձ, մինչեւ կարծել Հրէիցն թէ ներքինի իցէ։

Բազում սգով սգացաւ սա ի վերայ քաղաքին, և պահովք կրօնաւորեցաւ յամենայն ցանկալի կերակրոց, և էր այր վտիտ երեսաք, այլ գեղեցիկ էր շնորհաք բարձրելոյն։

Սա՝ բազում աղօթս արար վասն Նաբուքոդոնոսորայ, քանզի աղաչէր զնա Բաղտասար

Ըստ ԺԸ օր.

ԴԱՆԻԷԼ էր ի
ղէն Յուդայ՝ յիշխան
ի թագաւորական ս
սաւորութենէն. այլ մ
դեռ մանուկ եւս էր,
գաւ ի գերութիւն ի
աստանէ ի Քաղդէա
Բայց ծնեալ էր ի
Թորոմն վերնումն. և
այր զգաստ և տեսլե
քարձ, մինչեւ կարծ
զնմանէ Հրէիցն եթէ
քինի իցէ։ Սա շատ
ցաւ ի վերայ տաճար
քաղաքին Երուսաղեմ
ի պահս ճգնեցաւ՝
գեղեալ զինքն, յամե
ցանկալի կերակրոց՝ ո
ուտելով ամս քսան և
և էր ցամաք տեսլեւ
այր գեղեցիկ շնո
բարձրելոյն։ Սա շաւ
աղօթս արար վասն Նա
գոդոնոսորայ. աղաչէ
նա վասն Բաղտասա

1. Զ. Բեթ-ովի

ուրա յորժամ եղեւն
և անասուն, զի մի
ցի։ Քանզի առա-
հանէ՝ եղին էր գըլ-
անդերձ, և ոտքն
հանդերձ՝ առիւ-
յայտնեցաւ սրբոյն
որհրդոցն այնորիկ.
ասուն՝ վասն ցան-
ութեան և խստա-
ոցութեանն, զի իբ-
զն ընդ լծով լի-
լայ, եթէ զնոյն ու-
իշխանքն ի Բելայ.
ոյ գազանք լինին,
յափշտակեն սա-
, սպանանեն և կո-

Իմացեալ Աստու-
ուրբն՝ թէ իբրեւ
՝ խոտ ուտիցէ, և
մարդկեղէն բնու-
կերակուր. վասն
Նաբուքոդոնոսոր
նդարտելոյն, յոր-
միտս մարդկան ե-
յր և աղաչէր զՏէր
ոյն տիւ և զգիշեր՝

որդւոյ նորա, յորժամ ե-
ղեւ նա գազան և անա-
սուն, զի մի կորիցէ։ Եւ
էր նորա առաջի կողմն
գլխով հանդերձ՝ իբրեւ
զեղին, և յետի կողմն ո-
տիւքն հանդերձ՝ իբրեւ
զառիւծու։ Եւ յայտնե-
ցաւ սրբոյն Դանիելի վասն
խորհրդոյն այնորիկ, ե-
թէ անասուն՝ յաղագս ա-
նառակ ցանկութեան ե-
ղեւ և խստապարանոցու-
թեանն, զի ընդ լծով ծա-
ռայութեան եղեւ բելիա-
բայ։ Եւ առիւծ վասն բըռ-
նաւորական և յափշտակո-
ղական և գազանական
բարուցն. քանզի զայս
ունէին բռնաւորքն յիշ-
խանութեան զառաջինն.
և յետոյ ի կատարածին
գազանք լինէին յափշտա-
կողք և սատակիչք և ամ-
բարիշտք, և զնոցին փո-
խարէնս առին և առցեն
յարդար դատաւորէն Աս-
տուծոյ։ Գիտաց սուրբն
Աստուծով՝ թէ իբրեւ զեղն
ուտէ զխոտ, և լինէր նմա
մարդկեղէն բնութեանն
կերակուր վասն այնորիկ և
Նաբուգոդոնոսոր՝ յետ հա-
լելոյ զկերակուրն, ի մար-
դոյ միտս եղեալ, լայր և
աղաչէր քառասնակիցս, և
խնդրէր զպատսպարու-

քառասուն անգամ խընդրուածս մատուցանէր Բեէմութ Աստուծոյ, յորժամ հասանէր ի վերայ նորա, և մոռացաւ զայն յորժամ մարդն եղեւ, բարձաւ լեզու նորա զի մի խօսեսցի. և յորժամ իմանայր՝ անդէն զարտասուս արկանէր։ Աչք նորա շաղղացեալ էին ի լալոյ. բազումք ելանէին ի քաղաքէն և տեսանէին զնա։ Բայց Դանիէլ միայն, զի ոչ կամեցաւ տեսանել զնա, զի զամենայն ժամանակս նորա՝ առնէր աղօթս վասն նորա, քանզի ասէր թէ միւսանգամ լինելոց է մարդ և չհաւատային նմա։ Եւ Դանիէլ զեւթն ամն զորս կոչեաց եւթն ժամանակս՝ արար նմա լինել եւթն ամիս. և խորհուրդն եւթնժամանակեան կատարեցաւ ի վերայ նորա. զի դարձոյց յեւթն ամիս զվեց ամն և զվեց ամիս։ Եւ ապա անկանէր առաջի Տեառն, և խոստովան լինէր զամպարշտութիւնն իւր, և յետ թողութեան անօրէնութեանն, դարձոյց անդրէն ի նոյն զթագաւորութիւնն. ոչ հաց եկեր և ոչ միս, և ոչ գինի արբ ի խոստովանութիւն իւր, և լինէր ե
զի մոռանայր եթէ
սիրտ իւր իբրեւ զմա
զի բարձաւ լեզու նոյ
ի չխօսել. և իմացեալ
վաղակի արտասուս
աչք նորա էին իբրև
շաղիղ ի լալոյն, և
զումք ելանէին ի ք
քէն և տեսանէին
Բայց Դանիէլ միա
կարէր տեսանել զնա
զամենայն ժամանակ
լափոխման նորա ա
վասն նորա. քանզի
եթէ դարձեալ մար
նիցի, և յայնժամ
զնա. և նոքա հաւա
նմա։

Իսկ Դանիէլ
ամ զոր ասաց նմա
տուած՝ եօթն ժամա
կալով յաղօթս առ
ձրեալն, արար լինել
ամիսս. և խորհուրդ
ժամանակացն կաս
ցաւ ի վերայ նոր
պատսպարեալ յետ
ամսեանն՝ զայլ եւս
ամն, և զհինգ ամիսն
կանէր առաջի Տեառ
խոստովանէր զամ
ամբարշտութիւնս լ
զանօրէնութիւնս։ Ե
թողութեան անօր
թեանց նորա, ետ նմ

, զի Դանիէլ պա-
ետ նմա ընտաւք
վք և դալարուք՝
ել պաղատանս ա-
Լատուծոյ։

զթագաւորութիւնն իւր.
և հաց և միս ոչ եկեր, և
գինի ոչ արբ. խոստովա-
նելով Տեառն զվեց ամն
և զհինգ ամիսն։ Քանզի
Դանիէլ հրամայեաց ըն-
դովք թրջելովք և բանջա-
րովք և ողորմութեամբ
հաշտեցուցանել զԱ-
տուած։ Վասն այնորիկ
ն այնորիկ կոչեաց անուանեաց զանուն նո-
նորա Բաղտասար,
գակից որդւոյն[1] ըրա Բաղտասար, զի կա-
ամէր առնել զնա։ մեցաւ զնա ժառանգակից
ուրբն ասէր. Քա՛ւ կացուցանել որդւոյ իւրոյ։
ն թողուլ զժառան- Իսկ Դանիէլ ոչառ յանձն,
ն հարցն իմոց, և ասէ. Քա՛ւ լիցի ինձ թո-
ի ժառանգութիւն զուլ զժառանգութիւն
ատիցն։ Եւ առ այ- հարց իմոց, և ժառանգա-
Ցագաւորաք Պար- կից լինել անթլփատից
թագաւորաց Պարսից։

ազում նշանս արար Բազում նշանս արար Դա-
գրեցին։ Եւ անդէն նիէլ՝ որք ոչ են գրեալ
և թաղեցաւ յար- ի գիրս տեսլեանց նորա։
այրսն միայն մե- Մեռաւ խաղաղութեամբ
աք։ անդրէն ի Բաբելոն, և ե-
դաւ յայրի թագաւորա-
կանի միայն փառաւորա-
պէս։ Եւ ետ նշան զլե-
Եւ նա ետ նշան ռանցն որ ի վերայ Բաբելո-
ան որ ի վերոյ կան նի, և ասէ, եթէ յորժամ
ինի, թէ յորժամ հիւսիսային հողմն ծխեսցի,
խեսցի ի հիւսիսոյ եկեսցէ վախճան Բաբե-
ւ, եկեսցէ վախ- լոնի. և յորժամ յարեւե-
աբելոնի։ Եւ յոր- լից ջուր բխեսցէ, յայն-
ով վառեսցի՝ վախ-

[1] գ—ոց է—րոց։

ման ամենայն երկրի։ Եւ եթէ ի հարաւոյ կողմանէ ջուր բղխեսցէ՝ դարձցի ժողովուրդն յերկիր իւր։ Եւ եթէ արիւն բղխեսցէ՝ սատակումն եղիցի ի Բեռ-լայ ամենայն երկրի. և ամիսոփեցաւ խաղաղու-թեամբ։

ժամ Աստուած յե
երեւեսցի որպէս մ
և յինքն առցէ զամեն
անօրէնութիւնս աշխ
հի, ի խաչելն իւրում ի
հանայից և ի ծերոց ժ
վրդոցն Իսրայելի։ Ց
ժամ սպանումն եղ
բելիարայ և պիղծ հ
նորա, և վաղվաղակի
գի շնորհաց հեղցի յ
նայն հեթանոսս։ Եւ
ժամ հարաւակողմն
այրեսցի, յայնժամ
տարած եղիցի ամեն
երկրի. և եթէ հարաւ
բխեսցէ, դարձցի ժ
վուրդն յերկիր իւր. ե
թէ արիւն բղխեսցէ ս
նումն եղիցի ամենայն
պղծոյ։ Եւ ննջեաց
նիէլ սուրբն Աստուծ

ՄԱՀ ԵՐԵՄԻԱՑ ՄԱՐԳԱՐԷԻ

Ա՝ էր յԱնթովթայ Բենիամինի յաւուրս հանայիցն։ Ի Տափնաս քաղաքի յԵգիպտացւոցն կոծեալ մեռաւ. և եդաւ մերձ յապարանսն Փարանի. քանզի Եգիպտացիքն փառաւորեցին զնա՝ գտեալ ի նմանէ ի ձեռն աղօթից նորա, վասն զի սարար. և քարքն որ սպանանէին զնոսա սատակեցին նոյնպէս և դազանք ջրոցն զորս Եգիպտացիքն կոչեն

ոտ. և ցոյնք անուանեն Կրոկոդիլոս. և որք միանգամ
սաստացեալ են յԱստուած, մինչեւ ցայսօր յաղօթս
ան առ Աստուած ի տեղւոջն յայնմիկ, և առնուն
ողջ յերկրէն, և զհարուածս քարբիցն բժշկեն. և
ջրային գազանսն փախուցանեն։ Լուաք մեք ի ծերոց
տրանց, եթէ Աղեքսանդրոս Մակեդոնացի հասեալ ի
տեղին ուր էր գերեզման նորա, և գիտացեալ զքան-
ելիսն զայն և զխորհուրդսն, զնչխարս նորա բար-
եեալ տարաւ յԱղեքսանդրիա. և անդ եդեալ փառա-
որապէս, և սատակեցան որ անդ քարբքն, նոյնպէս
կրոկդիլոքն։ Այս Երեմիա՝ ետ նշան քրմացն Ե-
գիպտոսի, թէ պարտ է կոց նորա անկանել և փշրել
ձեռն փրկչի մանկան ծնեցելոյ ի կուսէ ի մուր
աստուածացուցեալ։

Այս մարգարէ յառաջ քան զաւերել տաճարին յա-
ղագս ընտակեաց զտապանակ օրինացն և որ ինչ ի նմա, և
զարբ զնոսա կլանել վիմին։ Եւ ասէ. Գնաց Տէր ի Սիո-
ն յերկինս, և դարձեալ եկեսցէ օրէնսդիրն Սիոնի,
շանաւոր լիցի ձեզ ի նորա գալստեանն։ Ցայն-
ամ փայտի ամենայն ազինք երկիր պագանիցեն. և
ասէ. թէ, զտապանակս զայս ոչ ոք հանցէ եթէ ոչ Ա-
հարոն. և զտախտակս որ ի սմա ոչ ոք բացցէ եթէ ոչ
Մովսէս ընտրեալն Աստուծոյ։ Եւ ի յարութեանն,
ախ տապանակն յարիցէ ի վիմէն. և դիցի ի լերինն
Սինայ, և ամենայն սուրբք առ նա ժողովեսցին սպա-
սելով Տեառն, և փախիցեն ի թշնամւոյն որ կամիցի
նոսա սպանանել։ Եւ ի վիմին կնքեաց մատանեաւ
անունն Աստուծոյ, և եղեւ օրինակ իբրեւ զդրոշմած
րկաթոյ. և ամպ լուսաւոր ծածկեաց զանունն, և ոչ
ք իմանայ զտեղին և կամ կարդալ զնա, և է մին-
եւ ցայսօր, և մինչեւ յաւիտեան։ Եւ է վէմն յա-
ապատին ուր զառաջինն եղեւ տապանակն, ի մէջ
րկուց լերանցն յորս կան Մովսէս և Ահարոն, և ի
իշերի ամպ լինի լուսոյ ի տեղւոջն յայնմիկ՝ ըստ ա-
ապնում օրինակին։ Քանզի ոչ դադարեն շնորհքն Ա-
ստուծոյ յօրինացն իւրոց։

ՄԱՀ ԵԶԵԿԻԵԼԻ ՄԱՐԳԱՐԷԻ

Ըստ ԲԾ.

Եզեկիէլ էր յերկրէն Սարիրայ[1] ի քահանայեցն. և մեռաւ յերկրին Քաղդէացւոց։ Եւ քանզի առ գերութեամբն էր, բազում ինչ մարգարէացաւ այնոցիկ որ ի Հրէաստանի էին։ Սպան զնա իշխան ժողովրդեանն Իսրայելի, անդէն, քանզի յանդիմանէր զնա վասն կռապաշտութեանն։ Եւ թաղեաց զնա ժողովուրդն յագարակին Մաւուրայ՝ ի գերեզմանին Սեմայ և Արփաքսադայ՝ հարցն Աբրահամու։ Եւ է գերեզմանն այրք կրկին, զի և Աբրահամ ի Քեբրոն ըստ այմ նմանութեան արար զգերեզմանն Սառայի. և կրկին յայն սակս ասի զի շրջանակաւ է և յայտ։ Վեց՝ կրկին վերնատուն և կախեալ զվիմէ։ Այս մարգարէ նը-

Ըստ ԺԸ օր.

Եզեկիէլ էր յեր
Աբիսիքա ի քահանա
և մեռաւ յերկիրն Վ
տէացւոց ի գերութե
Շատ մարգարէացա
ցոց ի Հրէաստանի. Ա
պան զնա առաջնորդ
մենայն ժողովրդեան
ցայելի, յանդիմանե
նմանէ վասն կռապաշ
թեան։ Եւ թաղեցին
յագարակին՝ որ կ
Մաւսիրա, ի գերեզմ
Սեմա Արփաքսադա
ցըն Աբրահամու. և
գերեզմանն այր կր
և Աբրահամն ի Քե
ըստ նմանութեան Ս
արար զգերեզմանն
ռայի։ Կրկին ասի՝ ա
զի շրջանաւ էր, և ի
ծուկ ի ներքնատանն՝
նատուն, և յերկրի ի
մի ծածկեալ։ Այս
գարէ նշան եւ ժողո

1 · Զ · Իսրայէլ։

ետ ժողովրդեանն դեանն ուշ ունել Քոռաբ
նել Քովրաբ գետոյ, գետոյ, զի յորժամ նուա-
ուրժամ ՝ Ղուրքն պա- զիցի գալ ի վերայ զա-
ցեն՝ ակն ունել գե- ւերածոյն մինչեւ ի վախ-
ոյն աւերածոյն որ ճան. և յորժամ յարիցէ
է զերկիրն վախ- գետն դարձեալ լինել զե-
։ Եւ յորժամ յա- լոյն յԵրուսաղէմ, քան-
ակն ունել դարձին զի անդ բնակեալ էր ի
սաղէմ, քանզի անդ սահմանսն, և բազումք յօ-
նակեալ էր սուրբն. բրինապահացն ընդ նմա
ղումք առ նա ժողո- շրջէին. և երբեմն վասն
և յորժամ կարի բազմութեան որ ընդ նմա,
մք երբեք ժողովէին երկուցեալ Քաղդէացւոցն
ս՝ կասկածէին քա- յապստամբութենէ Եբ-
ղիքն եթէ գուցէ ա- րայեցւոցն, հասին ի վե-
սմբիցեն, և գայիր նոցա սպանանել զնո-
ել զնոսա. և կացու- սա։ Եւ հրաման ետ մար-
զզուքան, զի յայն- գարէն բաժանել ջրոյն, զի
նախնուցուն. և որք փախիցեն յայնկոյս, և ի
ին ի Թշնամեացն թշնամեացն որք իշխե-
երթալ նոցա, ընկըղ- ցին հալածել՝ բազումք
ի ջուրսն։ ընկղմեցան։

Սոյն- Սա ի ձեռն աղօթից ի
ղօթիւք իւրովք ինք- ժամանակի սովոյն առա-
երակուր ձկան ա- տուութիւն ինքնամատոյց կե-
թեամբ շնորհէր նո- ղակրոց շնորհեաց ձկանց,
բազմաց պարտա- և բազում թալկացելոց
կենդանանալ յԱ- կեանս տալ՝ զԱստուած
աղաչէր։ աղաչեաց։

ի կորստեան ժո- Այս Եզեկիէլ ի կորնչել
ողովրդեանն ի Թշնա- ժողովրդեանն ի Թշնա-
մեացն, մատեաւ առ ա- մեացն, մատեաւ առ ա-
ռաջնորդսն Քաղդէաց- ռաջնորդսն Քաղդէաց-
ւոցն՝ զնշանս խաւարի ւոցն, և նշան խաւարի
արարեալ ի վերայ նոցա՝ արարեալ ի վերայ նոցա՝

[1] ղանագործութեամբքն։

Եւ յայնժամ ասէր Իսրայէլ թէ սպառեցաք, կորեաք, հատաւ յոյս մեր, և նշանաք ոսկերացն որ յարոյց՝ հաւանեցոյց զնոսա թէ լինելոց է յոյս Իսրայելի, և աստ և ի հանդերձելում աշխարհին։ Սա՝ մինչ դեռ անդ էր՝ ցուցանէր ժողովրդեանն Իսրայելի որ ինչ Յերուսաղէմ գործէր ի տաճարին։ Սա՝ յափշտակեցաւ անտի և եկն Յերուսաղէմ առ ի յամբաստանութիւն[1] ապրստամբացն։

Սա՝ ըստ օրինակի Մովսիսի ետես զձեւ տաճարին և զպարիսպն և զպատուարն ընդարձակ[2], որպէս և Դանիէլ ասաց, թէ չինելոց է։

Սա՝ դատեցաւ Բաբելոն զազգն Դանայ և զԳադայ, զի ամպարիշտք էին[3] ի Տեառնէ, հալածելով զօրինապահսն. և աբար նոցա նշան մեծ, զի օձք կոտորէին զմանկունս

և դադարեցոյց զպ
բազմողն զարհուր
ցեալ զնոսա յերկ
Յայնժամ ասէր Իսր
Կորեաւ յոյս մեր
ռաք, և նշանաւ ոս
մեռելոցն հաւանեցոյ
սա, եթէ կայ յոյս
վերդեանն ի հա
ձեալսն, և աստ և
եւս։ Սա ի Բաբելո
բեւեցուցանէր ժող
դեանն Իսրայելի,
Յերուսաղէմ ի տաճ
գործիւր։ Սա յափշտ
ցաւ և եկն Յերուս
ի նմին ժամու ի
դիմանութիւն անկ
տիցն Յաստուծոյ։

Սա իբրեւ զՄովսես զօրինակ տաճ
և զպարիսպն և
տուարան, և զդուռն
Տէր մտցէ, և եղիցի
փակեալ, և ի նա յոյ
ցին ամենայն հեթա
Սա դատեաց ի Բա
լոնի զցեղն Դանայ և
դայ, վասն զի ամբ
տէին ի Տէր, հալա
զօրինապահսն. և
նշան մեծ. քանզի
խածանէին զտղայս

1. Զ. յապստամբութիւն։
2. Զ. ընդարձակն։
3. Զ. ամպարշտին։

և զամենայն զխա-
նոցա ։

Եւ յառաջա-
գասէր վասն նոցա,
դառնայ ժողովուր-
դերկիր իւր, այլ ի
լինելոց են մինչեւ
սահան մոլորութեան
և ի նոցանէ էր որ
զնա. քանզի հա-
կակայր նմա զամե-
նաւուրս կենաց իւ-

և զանասունս վասն ամբա-
րշտութեանն, և դադա-
րեցոյց զմահ նոցա ։ Եւ յա-
ռաջագոյն ասաց, վասն նո-
ցա թէ Ոչ դարձցի ժողո-
վուրդն յերկիրն իւրեանց,
այլ ի Բաբելոն լիցին մին-
չեւ ի վախճան մոլորու-
թեան նոցա, և ի նոցանէ
էր որ սպան զնա. քան-
զի հակառակ կային նմա
զամենայն աւուրս կենաց
իւրեանց ։

Է

ՎԱՍՆ ՍՈՂՈՄՈՆԻ ԱՐՔԱՅԻ

ԱՍՆ զի գրեաց Մովսէս, թէ[1] մի՛ առնուցու
զուստր նորա դստեր քում, և մի՛ տացես զ
ւակի քում փեսայանալ նոցա, զի մի՛ մոլորեցուցանիցե
զնոսա[2] զկնի դիցն իւրեանց. այլ զբագինս նոցա հրա
այրեսցես, և զդիս նոցա խորտակեսցես, և մի՛ դնիցՍ
ընդ նոսա ուխտ՝ զի ոչ կամեցան նոքա ձեռն տալ ի
ղովրդեանն, որպէս Գաբաւոնացիքն և որպէս տու
Ռահաբու եօթանասուն հոգւով։ Իսկ Սողոմոն արդ
իւր կանայս ըստ[3] բազմութեան եօթն հարիւր։ Եւ
ոչ չատացաւ այսուիկ, այլ դիմեաց նա ի վերայ հ
թանոսաց, և առ հարեա երեք հարիւր պիղծս ի ն
նանացւոց անտի, զդստերս Թագաւորաց և զիշխան
նոցա, ի գայթակղութիւն անձին իւրոյ և յարհամար
հութիւն բազմութեան կանանց իւրոց. որք ժողովե
ցան առ նա վասն զարմանալի գիտութեանն իւրոյ
որպէս իմաստուն կինն՝ որ եկն յԵթիոպացւոց անտ
վասն օրհնութեան առն իմաստնոյ, և գիտել զիմաս
տութիւնն նորա, զոր լուաւ ի վաճառականաց անտ
Քիրամայ արքայի։ Այլ էառ նա զկանայս զատեալ
ի բազում գայթակղութիւն որդւոցն Իսրայելի։ Ո

1. Բ. չունի թէ։
2. Բ. չունի զնոսա։
3. Բ. չունի ըստ։

ն պոռնկեալն՝ այլ և հաղորդեալն պաշտաման գայ-
ղութեանն։ Զի խաբեցաւ ի պատճառս իմաստու-
ն իւրոյ, և թոյլ ետ խորհրդոցն գնալ ի ճանա-
հս կանանցն որք խորհեցան միաբանութեամբ զլու-
ն անձին նորա. մինչեւ կանգնեաց զպատկերս ի
սյ լերանց. և յայտնապէս պոռնկեցաւ դէմ յան-
ն տաճարին սրբութեան և թշնամեաց իւրոց։

ՀԱՐՑՄՈՒՆՔ ԴՇԽՈՑԻՆ

ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ ՍՈՂՈՄՈՆԻ ՈՐԴԻՈՑ ԴԱՒԹԻ

ոյն. ասէ. Զի՞նչ է Աստուածն քո, և ո՞ւմ նման է,
և որո՞վ կերպարանի։
մոն. Աստուածն իմ Է է, և ամենայն է՝ ի նմա-
նէ է, և ամենայն էից վերագոյն է, և ի
յինչ ոչ կերպարանի. զի ամենայն ինչ յե-
ղումն և հակառակ ունի. և իմ տէրն անյեղ
և անհակառակ է։
ոյն. Ո՞րպէս շարժի գունդն երկնից. յա՞ղ թէ յա-
հեակ. և ի շրջագայութեանն իւրում բոլո-
ր ինն շրջագայի թէ մասամբ։
մոն. Երկուս ունի զօրինակ շրջագայութեանն։
ոյն. Ո՞րպէս։
մոն. Շրջաբոլորն հաստատութեանդ՝ յարեւելից
յաղակողմ շարժմամբ՝ ընդ հարաւ յարեւ-
մուտս կոյս գնացեալ դառնայ ընդ հիւսիս
ի նոյնն, և այնպէս սրասաց եղեալ հրամա-
նաւ հարկի ընդ տիւ և ընդ գիշեր շուրջ մի
կատարէ։ Իսկ մոլորական կոչեալ լուսաւոր-
քդ՝ շրջագային յարեւմտից ընդ ձախակողմ
յարեւելս կոյս. և իւրաքանչիւր ոք ի նոցա-
նէ ըստ բարձրութեան և ըստ ցածութեան,

ըստ արձակութեան և ըստ նեղութեան գ
տեացն՝ կատարեն զշուրջն իւրեանց, յամ
երեսնից մինչեւ յաւուրս երեսուն ի Կո
նոսէ մինչեւ ի Սահր, որ է յԵրեւակէն մի
չեւ ի Լուսին։

Դշխոյն. Նախ քան զէանալն ամենայնի ոչ կայր ա
մենարարն. և զկնի լուծմանն ամենեցուն
յորոմ տեղւոջ կացցէ անշարժականն։

Սողոմոն. Նախ քան զգոյանալ եղականացս՝ կայր ա
բարողն յինքեան, և լի էր յէական բնու
թեանն, և զուարճանայր յանեզրական բա
րիսն։ Եւ յորժամ ոչ իցեն էացեալքս, նոյն
պէս կայ յիւրում անշարժութեանն. և այժ
ի նա են ամենայնք, և յայնժամ ի նա ի
ցեն մաքրոցն հոգիքն, և նա ի նոսա։ Փա
ռաւորէ և փառաւորի անյեղաբար և նոյ
նապէս։

Դշխոյն. Զիւնչ է պատճառ կնոջ հնդկայնոյ, զի յո
ուտելոյ նուռն ոչ եւս յղանայ։

Սողոմոն. Նուռնն հով է և գէճ, և Հնդիկն ջերմ
է և չորին. իսկ կինն գիջին է և ցրտին.
բնութիւն կնոջ խառնեալ ընդ նռան՝ ընդ
դէմ բնութեան երկրին ոչ լինի յղութիւն

Դշխոյն. Զիւնչ է զի այր Հնդուի գինըմբռ՝ անպտուղ
է սերմամբ։

Սողոմոն. Բնութիւն գինոյ յաւելու ի քուն. և առ
ուել ի հնդիկք. և է ջերմին և չորին. գինի
և երկիրն միաւորեալ ի միասին՝ առնի
անբեղնաւոր։

Դշխոյն. Իմաստութիւնն ընդհանո՞ւր է թէ մասնա
կան, և բնութեամբ է թէ պարգեւաք։

Սողոմոն. Ընդհանուր է և մասնական. ընդհանուր
սեռիւ. և մասնական՝ տեսակաք։ Եւ բնու
թեամբ է՝ և պարգեւաք. բնութեամբ՝ հա
սարակ է գոյեղինաց կենդանականաց մա
սանց. և պարգեւականն՝ ոչ է հասարակ
կան այլ յատկական. և ընտրութիւնն՝ ա

տուողին է, և նորին է և բնութեամբն։

սոյն. Տունկն թագ կապեաց և ոչ ի բնութենէ, և բոցով շառաւեղք վարսեցան. և պսակ փառաց հիւսեաց որդւոցն անարժանից։

սոմոն. Լուեալ է քո զի Աստուած վառեալ մորենեաւ յայտնեցաւ Մովսէսի, և ի տեսլենէ անտի հարցուածք և դարձուածք խօսից եբեւեցան։

սոյն. Լուեալ էաք զիմաստից քոց, այլ թէ խորհրդոց ծածկատես ես՝ ոչ կարծէաք. և արդ հաւատամ եթէ Աստուածն քո՝ նա է ճշմարիտ Աստուած, Աստուած երեւելեաց և աներեւութից։

սոյն ասէ. Մայր օտար, և որդիք օտար, սպանող և սնուցանող անօրինաց, յայտնեալ գողութիւն և ապրեալ գողն, սնոյց թագաւորս արաստով։

սոմոն. Զհայրն իմ և զիս նախատեաս. զի թամար կարծողն սպանող արանցն՝ գողութեամբ ի ցուդայէ սնոյց զհարսն մեր։

սոյն. Ո՞ր է զազիրն որ փոխմամբ սնուցանէ ըզթագաւորս. և պատուեալ ամպօք յանդաստանս կանայաք երթայ։

սոմոն. Ի դաշտանէ կանանց փոխեալ ի ստինս ամպոց, թագաւորք և աղքատք սնանին։

սոյն. Խորտկարար թագաւորի յաճախեալ զխահարարան, յաղագս զանազանութեան համոց աշխատի և աշխատէ, և մի է ճաշակն։

սոմոն. Թէ ունիս աղնիւ խահագործ յերկրէն քո, յաւել ի հազարս մեր. այլ որպէս և ասեսըզ՝ մի է ճաշակն. բայց դառն է անօրէնն և հեռի ի Տեառնէ խմէ, և մնայ ի դատաստան։

սոյն. Փեսայն ոչ երեւի, և հարսանիքն ոչ փոփոխի, և սենեակն անախտ կայ. և կատաղեալ հարսինն ամաչէ։

սոմոն. Մի նախատեր զժողովուրդս մեր հարսնա-

ցեալ անմահապէս Աստուծոյ անճառելի խօսմամբ, և ոչ պոռնկիմք ընդ օտար աստուածս, որ թէ ամաչեմք և դուք ամաչէք պաշտելով զթրանէ թուչունն։

Սողոմոն. Բայց ա՛ռ ի մէնջ և դու առակ մի.

ասէ. Աշտարակ մի զօրաւոր, և անօթ վիրաւորութեան. տաճար երեքանկիւնի, քարինք նորա ցնծութիւն և հիմն նորա սէր, և շինուած նորա ջուր. հիմնարկութիւն նորա գգուանք. և ձեղունք նորա կաքաւք. սիւն նորա ուրախութիւն, և գիւտ սորա օտար. և բնակողաց նորա ոչ գոն անձինք. և հեռեւող սորա ընդ վայր է և անհաստատ. և մարդակաք ի նմանէ և յինքն. և լուսամուտք նորա առանձնականք են և մեկնակք, և գործիքն հակառակք են շինմանն, և պահանորդք նորա ոչ երեւին։

ՎԱՍՆ ԳՐԵԱՆՑՆ ՍՈՂՈՄՈՆԻ

ՅՈՐԺԱՄ յարոյց Աստուած սատան Սողոմոնի զԱդրազար արքայ Եդովմայ, և նա բազում անգամ կռփահարեալ և վատնեալ ի նմանէ, ծանեաւ եթէ ձեռն Տեառն դարձաւ ի թշնամութիւն ի վերայ իւր, և եղեւ զօրավիգն թշնամեաց նորա, զի բարկացոյց զԱստուած երեք մոլորութեամբ խորհրդոց։

Նախ՝ խափանեաց զօրէնսն որ յառաջագոյն գրեալ էր ի ձեռն Մովսիսի. Մի՛ սրասցես խնամութիւն որ չուրջ գրեւ ազգք իցեն։ Երկրորդ՝ վասն շինելոյ զտունն Տեառն ի մայրից Լիբանանու, և զտուն դստերն փարաւոնի յոսկոյ կեփազեայ և յոսկերաց փղաց։ Երրորդ, զի խոտորեցաւ սիրտ նորա զհետ Աստարտայ գարշելոյն Քիդոնայ։ Եւ իբրեւ մերժեցաւ նա յօգնա-

անուքենէ Տեառն, հրամայեաց սենեկապետին իւ-
ր հրկէզ առնել զիւր գրեանն՝ որ էին հոգւով գի-
ութեամբ երեք հազար առակաց։ Ի մայրիցն Լիբա-
նանու մինչեւ ցզոպայն որ յորմն ելանէ. և ի թռչնոց
ի գազանաց և ի սողնոց. բայց առեալ մասն ինչ
ագուցանէր, զոր և յետոյ իսկ գրեցին բարեկամքն
զեկիայի։ Եւ իբրեւ հարցանէր Սողովմոն վասն պա-
ուիրանացն հրկիզութեան, թէ արդարեւ կիզեցցէ բո-
որ գրեանն, և զինչ նշան հայեցածն ցուցանէր։ Պա-
ասխանեալ սենեկապետն ասէ. Բորբոքեալ բոցոյն՝
ուր կիզանող վերացեալ մտանէր ընդ երկնիւք։ Պա-
ասխանեալ Սողովմոն ասէ. Այն՝ Հոգին սուրբ էր որ
զգեալ էր ինձ խօսել զնոսա։ Եւ եղեալ յարտասուս՝
զլացեալ ելաց դառնապէս. և համարեցաւ նմա Ա-
ուուած յապաշխարութիւն։

ՑԱՂԱԳՍ ԳՐԵԱՆՑՆ ՍՈՂՈՄՈՎՆԻ

Ասանելին Եփրեմ ասէ այսպէս. Եթէ Սողոմոն
մատուանն յետ մեղացն և հեռանալոյն յԱստուծոյ ի
աբից կանանցն, յաւուր միում նստէր ի ձմերոց՝ ի տան
օր իւրոյ Դաւթի, և յիշեաց զպատուիրան նորա ի
ամ մահուն, և եմուտ ի սենեակ իւր, և ելաց առա-
ի Տեառն լալիւն մեծ. և եդ սահման անձին իւրոյ
ալ մինչեւ ի գուռն սենեկին, առանց ձեռին բացցէ
որ այլք ասեն փակեսցի. բայց բանալն է ի դէպ նշա-
ակ լինել բացման դրան ողորմութեան Աստուծոյ.
րպէս և եղեւն։ Չի բացաւ գուռն սենեկին ինքնին.
ապա ելեալ արտաքս և ասաց ի մտի իւրում, եթէ
ազմութիւն գրեանցն իմ պատճառ լինի բազմաց կո-
ըստեան, թերանալոյ յԱստուծոյ և ի բարեաց գոր-
ոց։ Քանզի ասեն, թէ նա այն ամենայն իմաստու-
եամբ ընդէր մեկնեցաւ ի Տեառնէ, եթէ բարի է

պաշտելն զնա։ Եւ հրամայեաց հաւատարմաց իւրոց այրել զամենայն գրեանն՝ որք էին ի նմանէ սասցեալքն յառակս և յօրհնութիւնս, իբրեւ ութ հազար։ Որք և տրտմութեամբ ելին յերեսաց նորա, խորհեցան և ոչ այրեցին, և դարձան պատմեցին նմա, թէ եղեւ զոր հրամայեցերն։ Եւ ասէ զի՞նչ տեսիք. և ասեն. Ոչինչ։ Եւ ել ի նմանէ ցասումն սաստիկ, և բարկութեամբ հրամայեաց այրել. և ելին այրեցին. և եկեալ պատմեցին, եթէ լուսով և անուշ հոտով լցաւ ամենայն երկիր. և ապա հաւաքեալ վերացաւ յերկինս որպէս զաղաւնի, և մտեալ ծածկեցաւ։ Եւ լուեալ զայս՝ եհար զնա սիրտ իւր, և տրտմեալ սաստիկ ի խղճէ մտացն հեղձնոյր։ Եւ իշխան ոմն պահեալ ունէր ի ծոց իւր ի խնամոցն Աստուծոյ զգիրս զայս զԱռակաց, որ գտանի յեկեղեցի յԱռակացն Գ գլուխ, և մի զղջման գիրք՝ որ Ժողովողն կոչի. և գլուխ ՃԿ օրհնութեանցն՝ որ Երգ երգոց ասի, զոր երիս հաստուածս որոշեալ՝ կատարէ զերիս հասակս մարդկան. իսկ Սիրեցէք գլուխն՝ ընդ կասկածանաք է, թէ իցէ նորա. և այս է ուղիղն։

Բայց զի եղեւ նմա ժամ պարապոյ ի սենեկի իւրում, և խորհեցաւ ի միտս իւր յիշել զպատուէր հօր իւրոյ, գնալ նմա ի ճանապարհս Ցեառն, և յօրէնսն Մովսիսի ծառայի նորա։ Եւ յիշեաց նա զպատուէր հօր իւրոյ և զժամ մահուն Դաւթի. և եւլաց նա ի խորոց սրտէ իւրմէ, մինչեւ առուգանել զսենեակն և զմահիճսն իւր ի տան ձմերոցաց արքայութեան իւրոյ, և զդուրս սենեկին իւրոյ ինքնին ձգեաց առանց ձգողի։ Զի Դաւիթ ելաց զամենայն գիշերս, և Սողոմոն հեղեղեաց զսենեակ իւր։



Ը

ԱՂՕԹՔ

ՄԱՆԱՍԷԻ ԹԱԳԱՒՈՐԻ

ԷՐ ամենակալ, Աստուած Աբրահամու, Սահակայ, Յակովբայ, զաւակի նոցա արդարոց։

արարեր զերկինս և զերկիր՝ և զամենայն զարդ նոցա։

ապեցեր զծով բանիւ հրամանաւ քով, փակեցեր զխորս, կնքեցեր ահաւոր և փառաւորեալ անուամբ քով։

ամենայն ինչ սարսեալ և դողայ յերեսաց ահի զօրութեան քո։

նքաւ է մեծվայելչութիւն փառաց սրբութեան քոյ. սաստիկ է բարկութիւն սպառնալեաց քոց ի վերայ մեղաւորաց, անչափ և անքնին են ողորմութիւնք աւետեաց քոց։

ւ, Տէր, բարձեալ երկայնամիտ բազումողորմ, և զղջանաս ի վերայ չարեաց մարդկան։

ւ, Աստուած, ոչ եդիր ապաշխարութիւն վասն արդարոցն Աբրահամու, Սահակայ, Յակոբայ, որք ոչն մեղան քեզ։

լ եդիր ապաշխարութիւն վասն իմ մեղաւորիս, զի մեղայ աւելի քան զաւազ առ եզր ծովու. և բազմացան անօրէնութիւնք իմ։

Զեմ արժանի հայել և տեսանել զբարձրութիւնս երկնից՝ ի բազմութենէ անօրէնութեան իմոյ։

Կորացեալ եմ ես ի բռնութենէ կապանաց երկաթեաց. և ոչ գոյ ինձ հանդիստ։

Բարկացուցի սրտմտութեամբ, և չար առաջի քոյ արարի, կանգնեցի պատկեր և բամբասացուցի զցասումն։

Եւ արդ խոնարհեցուցանեմ զծունր սրտի իմոյ, և խնդրեմ ի քաղցրութենէ քումմէ։

Մեղայ, Տէր, մեղայ, և զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ։

Աղաչեմ և խնդրեմ ի քէն, թող ինձ, Տէր, թող ինձ. և մի՛ կորուսաներ զիս ըստ անօրէնութեան իմոյ։

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ, և մի՛ յիշեր զչարիս իմ, և մի՛ պարտաւորեր զիս ընդ այնոսիկ որ իջանեն ի ներքոյ երկրի չարեաք։

Զի դու, Աստուած, Աստուած ապաշխարողաց ես, և յիս ցոյց զբարերարութիւնդ քո՝ որ անարժանս եմ։

Զքեզ, Տէր, օրհնեն ամենայն զուարթունք երկնից, և քո են փառք յաւիտեանս. Ամէն։

ՏԵՍԻԼ ԴԱՆԻԷԼԻ

ԵՕԹՆԵՐՈՐԴ

. . . [1] մի . . Զկնի ամենայն յայտնութեան՝ որ տուան Դանիէլի, առաքեցաւ ի Տեառնէ Գաբրիէլ հրեշտակ, առաքեալ առ նա յառաջագոյն, և ասաց ցնա. Դանիէլ, այր ցանկալի, առաքեցայ ի Տեառնէ առ քեզ ասել քեզ բանս, և ցուցանել քեզ զկատարումն աւուրցն՝ որ լինելոց են զկնի գալստեանն բանին, որ ի ձեռն իմ աւետարանեսցի։ Եղիցի կոյս յիսրայեղի և ընկալցի ի բանէն բան. Եւ նա մարգարէասցի վասն աշխարհի, և կեցուսցէ զբազումս ի մէջ Իսրայեղի։ Եւ դիր զմիտս քո և լուր զյաւաջիկայ պատահումն ի կատարումն աւուրցն, յամենայն քաղաքս և ի գաւառս, վասն անօրէնութեան մարդկան։ Եւ ասացի ես Դանիէլ. Ասա՛, Տէր իմ։ Եւ ասաց ցիս. Յետ կատարելոյ զամենայն բանս մարգարէականս՝ վասն ամենայն քաղաքաց և գաւառաց, Ասիաս, Պոնդոս, Փռիւգիաս, Գաղատիաս, Կապադովկիաս, Կարպաթիաս, Զմիւռնէս, Անդիոքաս, Աղեքսանդրիաս, Եգիպտու, Նիկէաս, Նիկոդեմիաս, Կաղքեդոնիոս, Բիւզէս և Բաբելոնիոս. Հռովմայ[2] . . .

. . . Արտասուք որդւոց, և աճումն սովոյ՝ ապականէ զերկիր պտղաբեր. իշխանք քո որդիք հեծմանց. և որ շուրջ զքեզ ստացուածք քո՝ յապականութիւն եղիցին։ Փախիցեն ի քէն Բաբելոնի յԵօթնբլուրն. Պոնդու իշխանն անկցի, և սուր ծակեսցէ զորդիս նորա. զորք

1. Սկիզբն պակասէ յօրինակին։ 2. Ասա պակասէ յօրինակին։

նորա անկցին ի բերան սրոյ. գրաւումս տարցին ի
Բիւզէ. և անդ թաղեցին: Փոխագիացւոց մանկունք
ծախեցին ի սովոյ հացի և ի ջրոյ. երկիր նորա պա
տառեցի. ի կերակուր թաշնոց եղիցին. և բազումք
ի նոցանէ փախիցեն ի Քարկեդոնէ:

Ի Գաղատիա յերկնից հուր երեւեցի. և որոմ
մունք և փայլատակմունք ծախեցին զնա. և աթոռ
իշխանաց նորա յերկիր կործանեցին. և հարաւայ
կողմն նորա յարիւն և ի հուր այրեցի. և բազումք
փախիցեն յայնժամ ի Հռոմ:

Ի Փոքր Կապադովկիայ. որդիք նոցա զմիմեան
կոտորեցին. և զմիմեանս գերեցին. և իշխանք նո
ցա ի պարտութիւն մատնեցին. և որ շուրջ զնովա
իցեն՝ ի նեղութեան և ի հառաջման եղիցին:

Ի Փոքր ի Բարելոն. ի Կարպաթիսս. որդիք նո
ցա ի նեղութեան եղիցին. զիրակիզութիւնս տեսցին
և մի հաւատացեն. պատառումն եղիցի, ամենեքեան
մինչեւ ի դժոխս հասցեն. բազումք փախիցեն յեգ
իպտոս:

Ի Զմիւռնէ բարկութիւն յանախեցի. լցցի որդ
զրաժակ արեամբ. և անդումն ի բարձանց եղիցի
իշխանք քո բարձցին. և մեծամեծք քո անկցին. վասն
զի որ բարկութեան Ցեառն եղիցի ի քեզ:

Անդիոքու մանկունք ապականեցին, և յօրինեա
չինուածք նորա մի վայելեցին. անկումն շարժման
եղիցի ի քեզ. և բազմութիւն մեծութեան քո կորուս
ցէ զքեզ:

Ցաղեքանդրի յուզմունք պատերազմի բազում է
զիցին. և պարանոց ուսոյ հակութեան նորա մինչ ի
նեռալարս պարապց նորա. իշխանք նորա հալա
ծեցին:

Եգիպտացւոց մանկունք փախիցեն՝ հարեալք ի սո
վոյ. ստացուածք քո եղիցին յաչին, և նեղաս ցամա
քեսցի. և իշխանք քո կորիցեն:

Նիկէացւոց դստերք ի սուգ և ի տրտմութեան է
զիցին. վասն ազգականաց և արանց գերութեան ի
պարաւոր ի մարդկանէ..և իշխանք քո ծառայեսցին

զրս ոչ գիտիցեն։ Վայ քեզ Նիկոմիդիայ, որ բարացեալ ունիս զեղջիւր քո և կերար զմարմինս սրբոց քոց որ էին ի քեզ ապականեսջիր արեամբ անոց արդարոց, որք հատուցանեն զփոխարէնս քո, ի դժոխոց յատակեսջիր։ Լաց և ողբա, ով թշուառացեալ, զի ընչեսցիս հանդերձ որդովք քովք. իշխանք՝ իշխանք հեծութեանց, և քահանայք քո ոսկեսէրք և ծածաթասէրք. և գեղեցկութիւն պայծառութեանդ քո եկղմեսցի։

հեցին. զինչ պատասխանի ունիցին տալ յաւուրն վախճանի, զի այնչափ ժամանակս երկայնամտեաց բարձրեալն, և նոքա արհամարհելովն կորուսին զանձինս իւրեանց։ Եւ ասաց պատասխանի և ասեմ ցհրեշտակն Տեառն. Խնդրեմ ի քէն, Տէր, ասա՛ ինձ, եթէ յետ մահու յորժամ պահանջի ի մէնջ զիւրաքանչիւր զոգիս մեր. երթայցեմք ի տեղի տանջանաց, եթէ յանդորրութեան լինիցիմք մինչեւ ցօր դատաստանին, եթէ յայսմ հետէ մտանիցեմք ի տանջանս։ Եւ պատասխանի և ասէ. Ասացից և զայս քեզ. դու մի՛ հաշուիր զքեզ ընդ մահապարտսն. զի քեզ և նմանողաց քոց պատրաստեալ է գանձն լի բարեաւք, որ ոչ յայտնեսցին քեզ, մինչեւ ի վախճան ժամանակաց։ Լո՛ւր այսուհետեւ վասն որոց հարցերդ, այսպէս է բանն. զի յորժամ հրաման մահու ելանէ յառաջ քան զմարդոյն ոգիս հանելոյ, անդէն վաղվաղակի բաժանի շունչն ի մարմնոյն, և երթայ ի տեղի որոշմանն իւրոյ. և եթէ իցէ լի գործովք բարեաւք, և պահեալ զպատուիրանս բարձրելոյն. և յորում ժամանակի էր յապականական ի բնական մարմնոյն բնութեան, ծառայեաց ամբծութեամբ ի հաստատութեան յամենայն ժամու վչտաց. նա ցնծայ և ուրախ լինի ի հանգստեանն յեւթնեկեան ճանապարհին։ Առաջին ճանապարհն՝ որ բազում աշխատութեամբ ճգնեցաւ առ ամենայն մեղս։ Երկրորդ ճանապարհն՝ տեսեալ զպատրաստական զմեղացն զանձնանն։ Երրորդ ճանապարհն՝ վկայութեանն զոր վկայէ նմա Աստուած, եթէ մեծ հաւատովք պահեաց որ տուան նմա օրէնքն։ Չորրորդ ճանապարհն՝ յորում յայտնին նմա պատրաստեալ բարիքն, եթէ որպէս ընդ հրեշտակս ի բազում խաղաղութեան սպասաւորեալ պահի։ Հինգերորդ ճանապարհն՝ փառաւորեալ է ուրախութեամբ. զի մերկացաւ զապականութիւն, և այնուհետեւ ընդ հրեշտակս հաշուի ժառանգել զանվախճան լոյսն։ Վեցերորդ ճանապարհն՝ յորում ցուցանի թէ որպէս երեսք իւր լուսաւորին իբրեւ զարեգակն, և ոչ այնուհետեւ սպականութեամբ մթանան։ Եւթներորդ ճանապարհն՝ որ ի վեր է քան

մենայն ճանապարհս, յորում պարծի վստահու-
ամբ և համարձակութեամբ, ոչ ամաչելով և կամ
ոկառելով, այլ ցնծալով փութայ տեսանել զե-
սս Աստուծոյ. որպէս ծառայեաց ամբծութեամբ ի
նդանութեան, որով և փառաւորելոցն է. և ընդու-
ոց է զվարձս հաստուցմանն։ Այս են ճանապարհք
ուոցն արդարոցն։ Իսկ ամբարշտացն հոգիք, և որք
պահեցին զպատուիրանն բարձրելոյն, և արհա-
ուհեցին զօրէնս նորա. և գարշեցան ի ծառայից նո-
. Նոքա ոչ մտցեն յաւիտեան ի տեղի հանգստեան,
վաղվաղակի որոշեալ հոգիքն ի մարմնոյն տրտմու-
ամբ և վշտաք ընդ երթն ճանապարհ մտցեն ի տան-
նան յաւիտենից։ Առաջին ճանապարհն՝ զի թողին
ուէնս և փոխեցին զհրամանս բարձրելոյն։ Երկրորդ
նապարհն, զի ոչ կամեցան դառնալ և ապաշխա-
մինչդեռ յայսմ աշխարհի էին։ Երրորդ ճանա-
ուհն՝ յորում նեղին տեսանելով զարդարսն ի հան-
ան, և զիւրեանց տանջանան։ Չորրորդ ճանապար-
՝ որ կայ և մնայ ի վախճան ժամանակաց ի մըշ-
նջենաւոր հուրն։ Հինգերորդ ճանապարհն՝ յորում
տանեն զայլոց հանգիստ հանոյ բարձրելոյն, և պահ-
նեալ ի հրեշտակաց սպասաւորութեան և յանբը-
թեան յոյժ։ Վեցերորդ ճանապարհն՝ որ տեսա-
յայնմ հետէ զպատրաստեալ արքայութիւն սրբոց՝
լիւրեանց անձանցն ամենեւին զկորուստն։ Եւթնե-
դ ճանապարհն՝ որ է քան զամենայն ճանապարհս
ներ՝ յորում հաշին և մաշին ամօթով և անարգա-
, և պաշարեալ են իմաստութեամբ և երկեղիւ.
ուեւ տեսանեն զճանապարհս բարձրելոյն որոյ ա-
ի մեղան կենդանիքն ի մարմնի, և առաջի արդ-
ոցն տանջելոց են։ Եւ ասեն պատասխանի և ասեմ.
ցի ժամանակ հոգւոց առ տեսանել թէ որպէս տան-
ին յետ հրաժարելոյ նոցա ի մարմնոյ անտի։ Եւ
է ցիս. Տացի ժամանակ, ոչ անդորրութեան՝ այլ
նջանաց. զի ի տեղիս խոշտանգանաց արգելեալ
մեղաւորաց ոգիք, և պահին ի տանջանս սահմանաւոր
շտակաց մինչեւ յօրն յանդիմանութեան և դա-

տատանաց և հատուցման բարւոյ և չարի։ Ասա
Խնդրեմ ի քէն՝ ներեա՛ ինձ և զայս հարցանել. Ի
արդ՝ յաւուրն դատաստանի կարիցե՞ն արդարքն հր
ժարեցուցանել զամբարիշտն, և կամ տանել յոդ
չանս վասն նոցա, որպէս հարք վասն որդւոց, և կա
որդիք վասն հարց. և կամ եղբարք վասն եղբարց
կամ ազգ վասն ազգի, և կամ սիրելիք վասն սիրե
լեաց։ Եւ պատասխանի և ասէ ցիս. Մի՛ ոք խաբեա
յայսմ, զի յաւուրն դատաստանի անանչառութիւն ի
նի. և ամենայն ճշմարտութիւն կնքեսցի. զի զոր օրինա
ո՛չ ոք զոր առաքեսցէ զոմն ի մեռանել ընդ նորա, կա
ի քուն կալ, կամ հիւանդանալ, կամ յուտել կա
յլմպել, նոյնպէս և ո՛չ այն ժամ ոք կարասցէ վա
ուրուք պաղատել. և կամ զոք հրաժարեցուցանել
տանջանաց. իւրաքանչիւր իւրեանց գործքն բարեխ
սեն։ Եւ պատասխանի և ասեմ. Զիարդ զատանեմք,
եթէ Աբրահամ աղաչեաց զԱստուած վասն Ղովայ
վասն տան նորա, և Մովսէս վասն հարցն մերոց՝ որ մ
ռան յաւուրս նորա, և Դաւիթ վասն հարուածոց ժո
վրդեանն, և Սողոմոն վասն սրբութեան, և Եղ
վասն գալոյ անձրեւին, և Եղիսէ վասն կենաց մեռ
լոյն, և Եզեկիայ վասն ժողովրդեանն յաւուրս Սեն
քերիմայ, և վասն իւրոյ առողջութեան, և այլք վ
այլոց. զի թէ յորժամ ապականութիւն զարգան
և անիրաւութիւն աճէր, խնդրեցին արդարքն վ
ամբարշտացն յԱստուծոյ, և ընկալան. ընդէ՞ր յ
ժամ այս ո՛չ լինի։ Եւ պատասխանի և ասէ ցիս
Ցայսմ աշխարհի եթէ խնդրեսցեն արդարք՝ առ
քանզի յօգուտ է նոցա ապաշխարութիւն վասն
բարեխօսեանն. զի յաշխարհս այս կատարման է, և
փառաց։ Իսկ յայնմ աշխարհի՝ կենաց, յորում անցա
կարգ ապաշխարութեանն, և վախճանեալ է ապական
թիւն, և լուծեալ է աղքատութիւն, և խափանեալ
հաւատք, և զարգանայ արդարութիւն, և ծագէ ճշմ
տութիւն, ո՛չ ոք կարէ ողորմել, որ վասն իւրոց յանց
նաց գործոցն է ի տանջանս և ի դատաստանի։ Եւ ասա
ցի ցնա. Ո՞չ ի սկզբանէ իսկ ասացի զայս, եթէ

:ր՝ եթէ չէր իսկ ծնեալ ի վերայ երկրի, քան թէ
լաղվաղակի կորուսեալ. զինչ օգուտ իցէ մարդոյն,
եթէ հասեալ իցէ ի բազում ժամանակս, և կեանքն
որմունթեամբ իցեն, և յետ մեռանելոյն՝ ակնունի-
լի տանջանաց. մեզ զինչ օգուտ իցէ մեղաւորաց,
եթէ խոստացեալ իցէ յարութիւն յետ մահու. և մեք
սրժանի մահու գործս գործեցաք. զինչ օգուտ իցէ
մեզ, եթէ արդարոցն պատրաստեալ իցեն անճառ բա-
ւիքն, և մեզ մեղաւորացս ամօթ. զինչ օգուտ իցէ
մեղաւորացս, եթէ չտեմարանք բարեաց՝ արդարոց
ոն, և մեք մոլորեալք եմք չարեաք. զինչ հաղորդու-
թիւն իցէ մեր ընդ յուսոյն բարեաց որ գանձեալն է
ուարեաց. մեք ընդ դժուար ճանապարհ գնացաք. զի
ստանէ մեզ, եթէ երկնաւոր դրախտն պատրաստեալ
ոցէ անբծացն, որոյ պտուղն անթառամ է. յորում
ոյ փափկութիւն և ցնծութիւն անվախճան, թէ մեք
ոչ մտանիցեմք. և յորժամ արդարոցն երեսք լուսա-
որեսցին իբրեւ զարեգակն, և մեր երեսք մթասցին
իբրեւ զգիշեր աղջամղջին. արդարեւ իսկ ո՛չ երբէք
ծանաք զմտաւ ի կենդանութեան եթէ զինչ ունիցիմք
ետ մահուն կրել։ Ո՛վ Ադամ զինչ գործեցեր. դու
միայն մեղար, և քեզ միայնոյ չեղեւ վիշտ, այլ առ
ասարակ ամենեցուն որ ի քէն ծնան։ Եւ պատաս-
սանի և ասէ. Աշխատեսցին յերկրի մերժել զչարն,
ի մի կրեսցեն զայն զոր ասացին. այլ մերժելով զչ-
արն՝ ընկալցին զբարիս, առ մարդկանէ ընտրել զչ-
ուանս և զմահ։ Քանզի Մովսէս ասաց զայս նոցա,
և նոքա ոչ հաւատացին նմա, և ամենեցուն յետ
ասրա մարգարէից, և Աստուած որ խօսեցաւ ընդ
ասա։

Եւ պատասխանի և ասեմ. Գիտեմ և այդպէս
աւատամ, եթէ յողորմել ողորմած է բարձրեալն և
գթալ գթած է՝ որք դառնան առ նա. երկայնա-
միտ է որք մեղանչենն. և պարգեւիչ, քանզի յօժար
և ի շնորհել և ի թողուլ զյանցանսն. զինչ շահ
ցէ բարձրելոյն, եթէ կորիցեն այնչափ ոգիք զոր ա-
ստեր, և սակաւ ոգիք միայն մի կորիցեն. գիտեմ զի

բազումողորմ է. եթէ ո՛չ ողորմեսցի, ոչ կարէ ապ-
րել ամենայն մարդ. նոյնպէս և շնորհիչ է, եթէ ո՛չ
շնորհեսցէ և թեթեւացուսցէ զմեղս մեր իւրով մար-
դասիրութեամբն, ո՛չ կարասցէ ամենայն մարմին ապ-
րել։ Դատաւոր է որ յանդիմանէ և դատէ, և յեռ
յանդիմանութեան չմեղադրէ. զի թէ ո՛չ մեղադրիցէ
և տանջիցէ զբազմութիւն ստահակութեան, ո՛չ աջ
ՊՈասցէ յամենայն բազմութենէ արտաքս քան զսա-
կաւն. և ուր իցէ ողորմութիւն նորա զոր խոստա-
ցաւն, կամ գթութիւն, կամ քաղցրութիւն, կամ
մարդասիրութիւն. ո՛ւմ օգուտ իցէ այն, եթէ ոչ տա-
ռապեալ մեղաւորացն։ Մի թէ վասն այնորիկ ստեղծ
զայնչափ ոգիս՝ զի կորուսցէ. քաւ լիցի. որ գիտու-
թեամբ լի է, չգիտիցէ թէ զի՞նչ գործիցէ մարդն՝ յա-
ռաջ քան զծնանելն նորա. և ամենայնի նա գիտակ
է յառաջ քան զլինելն նորա։

ԳԼՈՒԽ Ե.

Եւ պատասխանի և ասէ ցիս. Որ ի վերս է քան
զքեզ մի խօսիր զայն, և մի կեղծաւորիր առաջի Աս-
տուծոյ. որ հրամայեալ է քեզ զայն իմաց։ Զայս աշ-
խարհս վասն բազմաց արար, իսկ զայն վասն սակաւուց.
զի թէպէտ և յառաջգիտութիւն առ ի նմանէն բազում
է, այլ զինքնակամ կամն շնորհեաց մարդկան՝ զգոր-
ծոյն գիտութիւն, զի գիտասցեն զոր գործենն՝ թէ ո՛չ
տանջին. ընդէ՞ր որք զնոյն մարմին ունին, և զնոյն ախտ
շարժմանցն և արդարոցն ոչ նմանեցին, ոչ միայն զնոցա
ճանապարհն ոչ գնացին, այլ և արհամարհեցին զնոս-
սա, և գարշեցան ի վարուց նոցա. վասն այնորիկ
բարձրեալն սակաւս պահեաց յայն յաշխարհ։ Ասա-
ցեց քեզ և առակ մի, և պատասխանի տուր ինձ. Թէ
խնդրեսցես զերկիր տալ քեզ՝ երկիր որ բղխէ տեսիլ
պատուականս և մեծազնի. և տացէ քեզ երկիր որ

ւէ տեսիլս ազգի ազգի, որպէս զպատուականն սա-
, և զանարգն կրկին. ո՛չ նատիցես ընտրիցես քեզ
տուականն, և զանարգն ի բաց ընկենուցուս։ Ի-
այ այսուհետեւ եթէ ճշմարիտ է օրինակդ. և ա-
ի թէ ուղիղ է. և սկսայ ասել ընդ միտս իմ.
անձն իմ, վայելեա որպէս և կամիս. և ցածո՛ ըզ-
ս երկիր՝ զի լուիցես, և երթիցես ուր ո՛չ կամի-
. զի ո՛չ եթէ քեզ տուեալ է կամ պատրաստեալ՝
ինքն վայելչութեան. բայց զայս միայն սակաւ ժա-
ակս կենաց։ Եւ եդի ի մտի դարձեալ ասել բանս
առաջի բարձրելոյն, եթէ որպէս տացէ մեզ սեր-
ին արդեանց, յորում լինիցի մեզ պտուղ. և կամ
էս բերիցէ ամենայն տեղի ապականեալ՝ արդիւնս
եաց գործոց՝ և ապրեսցէ, թէպէտ և ոչ տայցէ։
ծ եմք ձեռաց նորա, և վասն այնորիկ արժանի
ողորմութեան նորա, զի աստ կենդանացուցանէ
զ. յա՛յտ է յորոց յարգանդին ստեղծու հանապազ
րդն. և տայ կենդանութիւն և կերակուր, նոյն-
և տնտեսութեամբ ազգի ազգի սերմանցն գին-
և ձիթով, հրով և ջրով, իննամսեայ ժամանա-
ի բնութեան յարգանդի մօրն ծնանի զմանուկն,
ստութեամբ մատակարարէ նմա և զգուշութեամբ
;է զնա. և յորժամ հատուցանէ և տայ ի ժա-
ակի իւրում զտղայն, զոր նա հրամայեաց ծնանել,
իել զկաթն մինչեւ ցժամանակ մի, և յետ այնո-
վարել նմա իւրով իմաստութեամբ, և կերակրել
ովք պտղոյ իւրոյ. և խրատէ զնա իւրովք օրինա-
. և առ սակաւ սակաւ աճեցուցանել ի նմա զի-
տութիւն և զգիտութիւն ամենայն չարեաց և բա-
ց, և որ չեն նոյնպէս. և յետ այսր ամենայնի
ուցանէ զնա. այնպէս ունի իշխանութիւն ի վե-
գործոց իւրոց. իսկ ապա թէ կորուսցէ զնա յայն-
ժամանակս ստեղծեալ և ծնեալ աշխատութեամբ
աւաք և վաստակաք, սնուցեալ, և խրատեալ դիւ-
կարգաք՝ զի՞նչ օգուտ իցէ։ Եւ մինչդեռ զայս խոր-
, բացի զբերան իմ և սկսայ աղաչել զբարձրեալն՝
սէի. Տէր Աստուած, իբրեւ զԱստուած քում գոր-

ծոց ողորմեա՛, և քում արարածոց. և օգնական լեր քում ստացուածոց, և աւելի եւս քում ժողովրդեանն. վասն որոյ ես սգամս, և ժառանգութեան քում, վասն որոյ ես տրտմեալ եմ. և ազգիս Իսրայելի, վասն որոյ ես սգամ, և զաւակի Աբրահամու, վասն որոյ ես խռովեալ եմ. հայիս ի մեզ, և հաշուիս զմեզ, և զյանցանս մեր. զի լուայ ես զանխնայութիւն մեծ, զոր առ յապային լինելոց իցէ. վասն այնորիկ արարիչ ամենայնի երկայնամիտ բարձրեալ՝ լուր ձայնի իմում, և ունկնդիր բանից իմոց զոր խօսիմս առաջի քո, յաղօթս կալ առաջի քո։

ԱՂՕԹՔ ՄԱՐԳԱՐԷԻՆ ԵԶՐԱՑ

Որ բնակեալդ ես յաւիտեան, որոյ աչք զամենայն ինչ հաւաստեաւ տեսանեն և քննեն, և վերնայարկք իւր յօդս. որոյ աթոռ անճառ, և փառք անպատում. զորով շուրջ կան բազմութիւնք զօրաց հրեշտակաց՝ երկիւղիւ պաշտել, և հրամանաւ նորա և բանիւ զոգիս ի հուր դարձուցանէ. որոյ բանն անշարժ և հզօր, զամենայն յօրինէ ըստ իւրանքանչիւր կարգի, որոյ հրամանն սաստիկ, և կարգն ահաւոր, որոյ հայելն ցամաքեցուցանէ զանդունդս, և բանն ապառնալեաց՝ պատառէ զերկիր. զամենայն զոր կամի յոչընչէ ստեղծու, և զեղեալն զօրութեամբ փոխէ. որոյ ճշմարտութիւն վկայէ։ Լուր ձայնի ծառայի քո, և ունկնդիր խնդրուածոց պաշտօնէի քում, անսա՛ բանից իմոց. մինչդեռ կենդանիս եմ խօսեցայց. մի՛ հայիր ի գլորումն. որք ունին կամս պահել զհրամանս քո, յաղթեալ են ի խորհրդոց չարին. այլ ողորմեաց իբրեւ բարերար և փրկիչ. և խնայեա՛ և հաստատեա՛ իբրեւ զդարմանիչ, որ դու միայն ես առանց մեզաց.

խնդրեմ ի քէն մի հայիր յանցանս ժողովրդ-
ն քո, այլ որք ուղիղն ծառայեցին քեզ ճշմար-
թեամբ. խնայեա, մի՛ հատուցաներ ըստ գործս
նանց անօրինաց, այլ վասն այնոցիկ որք երկիւ-
պահեցին զուխտ քո՝ խնայեա՛. և մի՛ ածեր զմտաւ
ն այնոցիկ՝ որք գնացին չարութեամբ առաջի քո՛.
յիշեա՛ որք կամաք զերկեղ քո ծանեան, և մի՛ կա-
կորուսանել՝ որք զբարն իւրեանց անտանոց նմա-
ուցին, այլ հայեաց գթութեամբ ի ծառայս քո՝
ի փառս քո յուսացեալ են։ Զի մեք և որ յառաջ
զմեզ արժանի մահու կամաց գործեցաք, դու Տէր
դասէր, վասն մեր մեղաւորաց երկայնամիտ կո-
ար, զի թէպէտ և մեք ընդ որպիսի բարւոք գոր-
ք էաք, և ո՛չինչ ըստ կամաց քոց արարաք, այլ
ն մարմնոյ պղծութեան գնացաք, դու գթասցիս
ոմել. յայնժամ կոչեսջիր ողորմած, քանզի սրբովք
ք կամաք գործեցին սրբութեամբ, ո՛չ են կարօտ ո-
մութեան. զի իւրեանց գործոց ունին զվարձս հա-
ցմանն։ Զինչ եմք մեք մարդիկ, զի բարկասցիս
ստուգութեամբ։ Ո՛չ ոք է ի վերայ երկրի ծնեալ՝
ո՛չ մեղաւ. յայսմ ծանիցի քո գթութիւնդ, յոր-
ր ողորմեսցիս և ներեսցես մեզ. և թողցես զամ-
շտութիւնս մեր, որք ո՛չ ունին զհիւթ բարեաց
ծոց։ Եւ պատասխանի ինձ Տէր, և ասէ ցիս.
ի դառնալով դարձցին առ իս մեղաւորք յամե-
ն սրտէ իւրեանց, ո՛չ խորհեցայց ըստ առաջին մե-
նոցա հատուցանել. այլ ի վախճան ելից հոգ-
նոցա, որպէս գտից՝ և դատեցայց. և այնպէս
սխ եղէց ի նոսա, որ դառնան ի բարի գործս.
էս ուրախ իցեմ յարդարս իմ։ Նմանեցո՛ զիս միա-
մչակի. որպէս մշակ վարէ տնկէ՝ որչափ և կա-
ւ յօժարէ. և ըստ ժամանակի իւրաքանչիւր խնամ
ի, որպէս պարտ է. թէպէտ լինիցի ի նոցանէ
ք տկարանալ և մերձենալ յապականութիւն, որոց
էպ զհոգաբարձութիւն առնէ. և եթէ հոգաբար-
ձեամբն յաղթէ, ուրախութեամբն ուրախ լինի.
որ տկարանալն կամէր՝ զօրացաւ. ապա թէ ո՛չ ինչ

օգտիցի ի դէպ. ժամանակի, հոգաբարձութիւն ի բաց
եղիցի լի տրամութեամբ. այսպէս եղիցին ի վերայ
երկրի, երկայնամիտ լինիցի ի վերայ նոցա բարձրեալ
զի թէ զղջացին ընդ այն զոր անօրինեցանն, գոր
ծեցին զբարիս. ապա թէ ոչ տանջեսցին։ Պատասխա
նի ետու և ասեմ. Որովհետեւ միանգամ ներեցեր
ինձ խօսել առաջի քո, աղաչեմ զքեզ ասա՛ ինձ ծա
ռայի քում. սերմանիք մշակին, եթէ ոչ առցեն չա
փով զանձրեւն չորանայ, նոյնպէս և մարդ որում դա
ոչ ողորմեսցիս՝ ոչ կարէ ապրել. վասն այսորիկ խնայեա
Տէր ի ժողովուրդ քո, և ողորմեաց ժառանգութեան
քում, քոց ստացուածոց և գործոց ձեռաց քոց ողորմե
ցիս։ Եւ պատասխանի և ասէ ցիս. Թշուառութեամբ
Թշուառացին մարդիկ՝ որ բնակեալն են յայսմ աշ
խարհի. փոխանակ զի բազում ամբարշտութեամբ գէ
նացին. և վասն հանդերձեալ ժամանակին ոչ գտաւ ի
նոսա ումեք գիտութիւն, այլ դու վասն քո ա՛ծ զմտաւ
և վասն փառացն որ քեզ մնայ՝ հոգա՛. զի բաց կայ
քեզ ճշմարիտ դրախտն, և տնկեալ ծառն ճշմարիտ
դրախտին. և պատրաստեալ են կեանքն՝ հանդեր
ձեալ փափկութեանն. շինեալ է քաղաքն, յօրինեալ
է հանգիստն, պաճուճեալ է բարութիւնն, կնքեալ է ի
ձէնջ հիւանդութիւնն, խափանեալ է ի ձէնջ մահ. յա
մօթ եղեն դժոխք. հալածեալ է ի ձէնջ ապականութիւն.
անջատեալ է ի ձէնջ ամենայն աշխատութիւն. յայտ
նեալ են ձեզ գանձք անմահութեան։ Մի՛ եւս աղաչեր
վասն կորստեան ժողովրդեանն, զի որպէս ձեզ պատ
բաստեալ է՝ որպէս վերագոյնն ասացի. նոյնպէս և նո
ցա պապակումն հանդերձեալ են և տանջանքն։ Եւ ա
բարի զմարդն զի պահեսցէ զհրամանս իմ, և խորշեսցի
ի մահուանէն յաւիտենից. նոքա յամենայն ժամու հա
նապազ դառնացուցին զիս, վասն այսորիկ դատաստան
իմ հաստատուն է։ Եւ խօսեցայ ընդ Տեառն և ա
սացի։ Աղաչեմ զքեզ Տէր՝ խօսեաց ընդ Թշուառա
կան ժողովրդեանն. զի լուիցեն ի քէն՝ և հաւատաս
ցեն. երկիցեն և դարձցին՝ և մի՛ կորիցեն. այլ ապ
բեսցին. զի եթէ այլ ոք խօսեսցի, թերեւս ոչ հաւա

ոցեն յայսմ ի մարգկանէ։ Եւ պատասխանի Տէր և
։ Ես յամենայն ժամ ծառայից իմոց որ հաճոյ են
՝ երեւեցուցի զանձն իմ, և խօսեցայ ընդ արժանիս
իսկ այլոցն ի ձեռն մարգկան ծանուցի զիս։ Եւ եմ
։ որ քննեմ զսիրտս և զերիկամունս, և ճանաչեմ
ղդն։ որ յառաջ քան զերանելն նորա յորովայնէ։
գիտեմ՝ եթէ խօսեցայց ընդ նոսա յանդիման՝ նո-
ոչ հնազանդեսցին, այլ առաւել եւս ատամբակես-
ատամբակելով։ Եւ ասաց պատասխանի Տեառն և ասեմ.
ելեմ ի քէն՝ բարձրեալ, ընդէր ոչ տուաւ մեզ այնպի-
իրտ, զի գիտասցուք միայն զբարի, և զայն միայն ա-
ցուք, և նմա միայն ցանկասցուք, և զնա միայն գիտել
ղցր։ այլ յորժամ առաք զչարին գիտութիւնն՝ ընդ
կամիմք զոր դուն ատես։ ընդէր իսկ բնաւ ստեղ-
զմարդն, զի զայն ունիցիմք և նովաւ մեղանչի-
ք։ Եւ պատասխանի ինձ Տէր, և ասէ։ Եւ արա-
զմարդն զի մի՛ կորիցէ, այլ զի զայս կեանս պա-
ով կեցցէ։ և զայն կեանս ժառանգեսցէ, և հան-
ն հրեշտակաց իմոց ետու նմա զիմաստութիւն, զի-
եթէ զինչ է բարին, կամ զինչ է չարն։ և պա-
ցի զնա, և ետու նմա զիշխանութիւն առնել զոր
ամիցի։ և հնազանդ արարի նմա զամենայն որ ի
քոյ երկնից, զի իշխեսցէ նոցա։ ետու օրէնս և
տուիրանս զի ստս մարթասցեն կեալ, և կամ որ-
զանմահ բարիսն ստասցին։ Իսկ նա զայնպիսի
անութիւն յինէն առ։ զոր բարւոք ստեղծեալ էր՝
բարւոք ի կիր արկ՝ և մեղաւ։ ոչ եթէ յոռի ինչ
ղծի, այլ զամենայն զոր արարի բարի յոյժ, իւ-
ջանչիւր որ եղեն՝ ի պէտս իւրեանց եղեն։ զի որ-
եղեւ երկաթ, ոչ զի սպանցէ, այլ զի զերկիր գոր-
է, և ի պէտս մարդկան եղիցի։ իսկ մարդիկ ոչ
ստեղծան ի նմին կացին, այլ որ ոչն գործեցաւ
ուռք՝ յայն ձեռնամուխ եղեն։ նոյնպէս և զայլ ինչ
ուռք եղեալ՝ ի չար փոխեցին։ Ոչ այսուհետեւ որ
ուռքն ստեղծիցէ պատճառք, այլ որ ոչն վայե-
ց բարւոք՝ թշնամանեաց զարարիչն նոցունց։ վասն
որիկ կան մնան նոցա տանջանքն։ զի որք յինէն

եղեալքն իցեն՝ ամենեցուն պարտ է նոքաք առաջնորդեալ գիտասցեն զիս. նա և որ ոչն վայելեաց ի նոցանէն ծանեալ զիս. դադարեա այսուհետեւ, և մի՛ ինչ հոգար վասն նոցա։ Եւ ասաց պատասխանի և ասեմ. Խընդրեմ ի քէն Տէր՝ ո՛չ պահես զոխս, ո՛չ ունի ժոյժ անձրն իմ չհարցանել զքեզ. վասն այսորիկ լուր ծառայի քում. վասն այսորիկ յանձնեցեր ինձ զքաղմութիւն նշանացն. և ո՛չ ասացեր ինձ՝ թէ ե՞րբ իցէ կամ յորում ժամու։

ԳԼՈՒԽ Զ.

Եւ պատասխանի և ասէ ցիս Տէր. չափելով նշանակեա դու զգալուստ նշանացն, և իցէ՝ յորժամ տեսցես եթէ մերձ իցէ ամենայն առ ի կատարել. յայնժամ իմասջիր զկատարածն. պարտ է նախ լինել որ ասացան նշանքն, և այնպէս գալ կատարածին։ Եղիցի ի մերձենալ ժամանակին՝ խռովութիւն ժողովրդոց, շարժմունք տեղեաց հեթանոսաց, նենգութիւն առաջնորդաց, տատանումն սրբոց, հալածանք քահանայից. խոտորումն սուրբ հաւատոց, և երկմտութիւն ժողովրդեանն. չփոթ հեթանոսաց, նեղութիւն քաղաքի, բորբոքումն հրոյ ի տեղիս տեղիս. սասանութիւն բազում. որոշումն ազգի ազգի քաղաքաց և գիւղից, առաւելութիւնք մոլորութեանց յայսոց պղծոց. յայնժամ իմասցիս եթէ մերձ է վախճան։ Եւ որ յայնժամ գոցի ինձ արժանի, նա ապրեսցի և տեսցէ զփրկութիւն իմ. և զերկիր նոր, և զսահմանս իմ. զոր սրբեցի յառաջ քան զյաւիտեանս։ Եւ յայնժամ տեսցեն արհամարհողք, և կոծեսցին և զարմացին, որ այժմ տեսանեն զնանապարհս իմ. վասն այնորիկ կայ և մնայ նոցա պատրաստեալ դատաստանն. փոխանակ զի ո՛չ ծանեան զերախտիս օրինացն իմոց, պահել զամենայն որ ի նմա գրեալն է։ Բայց դու մի՛ խառներ զքեզ ընդ այնպիսիսն, զոր բոց հրոյն այրելոց է։ Եւ պա-

սխանի և ասեմ. Տէր, բազում անգամ ապացի ե-
է բազումք են կորուսեալք, և սակաւք են ապրեալք,
նոքա բազում աշխատութեամբ. ով կարասցէ զգու-
ութեամբ պատրաստել այնպէս, որպէս և քո օրէնքն
ամայեն։ Եւ պատասխանի Տէր և ասէ. Ո՛չինչ ի
ր քան զմարդն հրամայեցի, և ո՛չ անհնար. բայց
ւեմ քեզ համառօտիւք, թէ որպէս դու կամիս պա-
ուել ի ծառայէ քումմէ, զդոյն արա՛ և դու Աստուծոյ
նդանուոյ, և որ քեզ չար թուի՝ դու մի ընկերի քում
ուներ. և որպէս կամիս երախտաւոր լինել, եթէ սիրես-
ս զնոյն. և դու արասցիր. զի եթէ զայս կրել յեղբօրէ
ումմէ քեզ թիւր թուեսցի, և դու նմա արասցիր. զի
երդ ձեզ իսկ պատուիրեցի. զի որպէս և կամքն են,
յնպէս և գործքն. և որպէս գործքն են նոյնպէս և
ուրձքն։ Կորիցէ անզգամն և անմիտ ազգ, և ապրեսցին
ատուականքն և մարգարիտքն. զի ոչ կամիմ ընդ բազ-
ութիւն ամբարշտաց՝ որպէս փափաքեմ սակաւուց
արդոց. այսպէս եղիցի, և այս կացցէ, և այսպէս
հմանեալ է յինէն, և ո՛չինչ ի նոցանէն անցցէ մինչ-
և եղիցի դատաստան. և վախճան բանից իմոց։ Եւ
րեւ դադարեաց Տէր ի խօսելոյ ընդ իս, և տեսա-
ի զփառս բարձրելոյն բիւրապատիկ լուսաւորագոյն
ան զարեգակն. յայնժամ դեռ եւս ունէր զիս ահ
դողումն, յայնչափ ի փառացն զայր առ իս հրեշ-
ակն որ յառաջնումն խօսեցաւ ընդ իս, և զօրացոյց
ս, և դարձոյց զզարմանս իմ յիս։ Եւ պատուէր
ո ինձ և ասէ. Մի՛ երկնչիր և մի՛ դողար, զի գտեր
ծ չնորհս առաջի Աստուծոյ. պահեա դու այլեւս
ւուրս եւթն, երթալ ի դաշտն ուր ո՛չ գուցէ տուն
սմ յարկ, և ո՛չ այլ ինչ. բայց միայն ծաղիկք. և
ի՛ ինչ ճաշակեսցես, և բայց միայն ի ծաղկաց դաշ-
ին, ուր դուն իցես. և խնդրեա՛ ի բարձրելոյն ա-
անց ձանձրանալոյ. և յետ այնորիկ եկից ես առ քեզ։
ւ գնացի ես ըստ բանի նորա ի դաշտ՝ ի տեղին որ
նուանեալ կոչի Արդաբ. և նստայ անդ ի վերայ ծաղ-
ացն, և ճաշակէի անտի, և լինէր ճաշակն նոցա ինձ
քաղցրութիւն, և յագումն, և ի կարողութիւն զօրու-

թեան իմոյ։ Եւ եղեւ յետ աւուրց՝ մինչ բազմեալ կայի ես ի վերայ խոտոյն, և դարձեալ խռովէր յիս սիրտ իմ որպէս զառաջինն. և բացաւ բերան իմ և սկսայ խօսել առաջի բարձրելոյն՝ և ասել. Ո՛վ Տէր Աստուած՝ որ ամենայն հոգւոց աբարիչ ես. յայտնեալով յայտնեցար հարցն մերոց յերկիրն յանապատ, յորժամ ելանէին յԵգիպտոսէ անցանելով ընդ անապատն անջուր և անպտուղ. և ասացեր ցնոսա, թէ լուարո՛ւք որդիք Իսրայելի, և ունկնդիր լերուք բանից իմոց զաւակդ Յակոբայ. ահաւասիկ ես սերմանեմ զօրէնս իմ. եթէ արասցէ պտուղ փառաւորեցայց ի ձեզ. իսկ հարքն մեր ո՛չ պահեցին զօրէնս քո, վասն այնորիկ կորեան։ Նոյնպէս և մեք որ ընկալաք զօրէնս քո՝ յանցեաք և անօրինեցաք. բայց օրէնքն քո ո՛չ կորեան. այլ մնացին ի փառս իւրեանց։ Եւ մինչդեռ զայս ընդ իս խօսէի, համբարձի զաչս իմ և տեսի յալմէ կողմանէ. և ահա կին մի կոծէր և ցտէր և լայր մեծաբարբառ յոյժ, պատառեալ զհանդերձս իւր, և արկեալ մոխիր զգլխով իւրով. և Թողուի զառաջին զբանս իմ յորում էին, զմտաւ ածեալ զարմանայի, թէ յայսպիսում տեղւոջ կին մարդ երեւեցաւ, դարձեալ առ նա՝ ասէի ցնա, թէ ընդէ՞ր լաս, ընդէ՞ր կոծիս դառնապէս։ Եւ պատասխանի և ասէ ցիս. Թոյլ տուր ինձ տէր՝ զի լացից զիս՝ և յաւելից յաշխարել. զի յոյժ դառնացեալ եմ յոգի իմ, և լի եմ տառապանաք։ Եւ ասեմ ցնա. Զի՞ եղեւ, ասա՛ ինձ։ Եւ ասէ. Ամուլ եղէ ես աղախին քո, և ո՛չ ծնայ՝ զերեսուն ամ կեցեալ ընդ առն իմում. և ես հանապազ օ՛ր և ժամ յերեսուն յամն յայն խնդրէի ի բարձրելոյն ի տուէ և ի գիշերի, և եղեւ յետ երեսուն ամի, և լուաւ Աստուած աղախնոյ քում. և հայեցաւ ի տառապանս իմ, և ետ մեզ որդի. և ուրախ եղաք ի նա՝ ես և այր իմ, և ամենայն քաղաքակիցք իմ, և փառաւորեցաք զԱստուած. և սնուցաք զնա աշխատութեամբ բազմաւ. և եղեւ յորժամ աճեաց և զարգացաւ, և կամէաք առնուլ նմա կին, և առնէաք օր ուրախութեան։

ԳԼՈՒԽ Է.

Եւ եղեւ իբրեւ եկն որդին յառաջաստ իւր, անդաւ և մեռաւ. և անցուցաք զլոյսն, և յարուցաք փոքանակ մեծ ուրախութեանն սուգ անչափ, և յարեան ամենայն քաղաքակիցքն իմ վասն նորա մխիթարել զիս, և յետ բազում մխիթարելոյ զիս՝ դադարեցի մինչեւ ի վաղիւ անդր գիշերոյն. և եղեւ իբրեւ դադարեցին ամենեքեան ի մխիթարելոյ զիս, լուեցի և ես, և յարեայ գիշերի և փախեայ, և եկի այսր, որպէս տեսանես զիս յայսմ դաշտի զմտաւ ածեալ մի՛ եւս դառնալ ի քաղաքն, այլ աստէն դադարել. մի՛ ուտել և մի՛ ըմպել, այլ միշտ սգալ և պահել մինչեւ մեռայց։ Եւ թողեալ զբանս իմ յորում էին, եւ տու պատասխանի ցասմամբ՝ կնոջն և ասեմ. Զոր ի-մանասդ լաւ ինչ իմանաս քան զամենայն կանայս. ո՛չ տեսանես զսուգս մեր, որ եհաս ի վերայ Սիոնի, որ է մայր մեր ամենեցուն, հեծելով հեծէ Երուսաղէմ, և տրտում է և տառապեալ յոյժ. և արդ ո՛չ սգաս առաւել յոյժ. զի ամենեքեան ի տրտմութեան և ի զղջման և ի սուգ եմք, այլ տրտում ես վասն միոյ որդւոյ քո. հարց ցերկիր, և նա ասասցէ քեզ, թէ պարտ է նմա սգալ. զի այնչափ ծնեալ ի նմանէն բազմութիւն յապականութիւն դարձան. արդ ո՞ւմ արժան է սգալ. որ այնչափ բազմութիւն կորոյս. եթէ քեզ վասն միոյն ողբալ. եթէ ասասցես՝ եթէ ո՛չ է նըման տրտմութեան երկրին իմ սուգս, զի ես զպըտուղ որովայնի իմոյ կորուսի զոր ցաւաք ծնայ. իսկ երկիր ըստ ճանապարհաց իւրոց գնաց, մերժեցաւ և գնաց մօտաւոր սուգ նորա՝ որպէս և եկն. և ես քեզ ասացից, թէ որպէս աշխատութեամբ ծնեալ է, նոյնպէս և երկիր ետ զմարդն իսկզբանէ արարչին իւրում. արդ այսուհետեւ կա՛լ դու զտեղին քո, և առաքինու-

թեամբ համբերեա՛ վշտացն որ եղեն քեզ. զի և քո
որդին յարիցէ ի ժամանակի իւրում. և դու ընդ կա-
նայս անուանեսցիս. դարձ այսուհետեւ անդրէն ի քա-
ղաք առ այր քո։ Եւ ասէ ցիս. Ո՛չ արարից զայդ,
և ո՛չ մտից ի քաղաք, այլ աստէն մեռայց։ Եւ յա-
ւելի խօսել ընդ նմա և ասացի. Մի՛ առնել զայդ իրս.
այլ հաւանեաց վասն տրտմութեան Սիոնի, և մխի-
թարեա՛ց վասն քաղաքին Երուսաղեմի. հայիս ապա-
քէն և ի նա, զի սրբութիւն մեր ապականեալ է, և
սեղանն կործանեալ է. և օրհնութիւնքն դադարեալ
են, և պարծանքն մեր քակտեալ են. և լոյս ճրագին
անցեալ է. և տապանակն կտակարանաց մերոց ի գե-
րութեան վարեալ է, և սրբութիւն մեր պղծեալ են.
և անուն որ կոչեցեալ է ի վերայ մեր՝ յայնմանէ օ-
տարացեալ եմք. և ազատք մեր թշնամանեալ են, և
քահանայք մեր լացեալ են, և ղեւտացիք մեր ի ծա-
ռայութիւն անկեալ են, և կանայք մեր բռնադատե-
ցան. և հզօրք մեր ի պարտութիւն մատնեցան, և
քան զամենայն ոք աւելի անարգեցաւ Սիոն, իբրեւ
զանօթ անպիտան, և լուծաւ ի փառաց իւրոց, և մեք
մատնեցաք ի ձեռս թշնամեաց մերոց։ Բայց դու թո-
թափեա՛ ի քէն զբազմութիւն տրտմութեանդ, և ի
բա՛ց ընկեա՛ ի քէն զյամախութիւն ցաւոցդ, զի հաշ-
տեսցի ընդ քեզ հզօրն, և հանդուսցէ զքեզ ի ցաւոց
քոց և ի վաստակոց։ Եւ եղեւ իբրեւ խօսէի ընդ
նմա, զուարթանային երեսք նորա յոյժ, և տեսիլ նո-
րա լինէր իբրեւ զփայլակն, և կերպարանք իւր այսպի-
սի սհագին առ մերձաւորս իւր. և սիրտ իմ յոյժ զար-
հուրեալ էր, զմտաւ ածեալ ասէի՝ թէ զի՞նչ իցէ այս.
և նա յանկարծակի մեծաւ բարբառով աղաղակեաց
ահիւ, և ճչեաց առ ի շարժել երկրի ի ձայնէն. տե-
սանէի, և ահա ո՛չ եւս երեւէր ինձ կինն, այլ քա-
ղաք չինեալ ի հարուստ հիմանց. զարհուրէի՝ և ա-
ղաղակէի մեծաբարբառ և ասէի. Ո՞ւր իցէ Ուրիել
հրեշտակն որ յառաջնում աւուրն եկն առ իս, զի նա
արար ինձ գալ յայս տեղի զարմանալեաց, և եղեն
ինձ խնդրուածք իմ, և զվախճան ի թշնամանս յոյժ։

Եւ զայս մինչդեռ խօսէի, եկն հրեշտակն՝ և ետես զիս, և ահա անկեալ դնէի իբրեւ զմեռեալ, և իմաստութիւն իմ եղծանէր. և կալաւ զաջոյ ձեռանէ իմէ, և զօրացոյց զիս և հաստատեաց զիս ի վերայ ոտից իմոց, և ասէ ցիս. Զի՞ եղեւ քեզ, ընդէ՞ր խռովեցար, և կամ ընդէ՞ր եղծաւ իմաստութիւն քո, և միտք սրտի քո։ Եւ ասացի, թէ ընդէ՞ր թողեր զիս, զի ես արարի բան բանի քում, և ելի ի տեղիս յայս, և ահա տեսի որում ոչ կարեմ հասու լինել։ Եւ ասէ ցիս. Կաց իբրեւ զմարդ, և խօսեցայց ընդ քեզ։ Եւ ասացի. խօսեաց Տէր, բայց միայն մի թողուր զիս զի մի ընդ վայր մեռայց. տեսի՝ զոր ոչ էր տեսեալ, և լուայ՝ զոր ոչ գիտէի, բայց միայն միտք իմ մոլորեալ են, և անձն իմ ապականեալ է. արդ խնդրեմ ի քէն պատմեա ծառայի քում, վասն աքանչելեացս այսոցիկ։ Եւ պատասխանի և ասէ ցիս. ո՛ւր ինձ՝ և ուսուցից քեզ. վասն որոյ երկնչիսդ, վասն այնորիկ բարձրեալն յայտնեաց քեզ զբազում խորհուրդս. զի ետես զուղղութիւն քո, եթէ անձանձրոյթ տրամեալ ես վասն ժողովրդեանն. և յոյժ ագաս ի վերայ Սիոնի. այս իրք են։ Կինն որ երեւեցաւ քեզ փոքր մի յառաջագոյն, որ սգով էր. և սկսար մխիթարել զնա. արդ այսուհետեւ ոչ եւս ի կերպարան կնոջ տեսցես, այլ երեւեցաւ քեզ քաղաք չինեալ. և զի պատմէր քեզ վասն տրամութեան որդւոյ իւրոյ. այս կին այն Սիոն է՝ զոր տեսանէիր, զոր այժմ տեսանես քաղաք չինեալ. և զի ասացն ցքեզ, ամուլ եղէ ես ամս երեսուն, զի ամս բազումս ունէր յայսմ աշխարհի. և յորժամ եղեւն և չինեցաւ, մատեաւ ի նմա պատարագ. և յետ այնորիկ չինեաց Սողոմոն զքաղաքն և զտաճարն, և մատոյց ի նմա պատարագ։ Ե՞րբ էր յորժամ ամուլն ծնաւ աշխատութեամբ, այն բնակութիւն Երուսաղէմի էր. և յորժամ ասաց ցքեզ, եթէ որդին իմ իբրեւ եմուտ յառագաստ իւր և մեռաւ, պատահէր տրտմութիւն յոյժ, այն որ լինէր գլորումն Երուսաղէմի. տեսեր զի ագայր ի վերայ որդւոյն իւրոյ՝ և սկսար մխիթարել վասն տրտմութեանցն որ հասեալ էին նմա։ Իբրեւ ետես բարձրեալն

եթէ յամենայն սրտէ հոգաս վասն նորա, եցոյց քեզ զլուսաւորութիւն փառաց նորա, և զգեղեցկութիւն վայելչութեան նորա. վասն այսորիկ ասացի քեզ՝ զի Աստուածս ի դաշտին ուր տուն չինէր. գիտէի թէ բարձրեալն կամի ցուցանել քեզ զայս ամենայն, և վասն այնորիկ ասացի քեզ գալ ի տեղիս յայս, ուր ո՛չ էր չինուած հիման. ուր ո՛չ կարէր գործ չինուածոց մարդկան, ի տեղւոջն ուր ցուցանելոցն էր քեզ զքաղաքն բարձրելոյ. բայց դու մի՛ երկնչիր, և մի՛ զարհուրեսցի սիրտ քո, այլ մուտ և տե՛ս զպայծառութիւն քաղաքին, և կամ զմեծութիւն չինուածոյն, որչափ ակն քո բաւական է տեսանել. և յետ այսորիկ լուիցես որչափ բաւական իցէ քո լսելիք ականջաց. զի դու երանելի եղեր քան զբազումս. և հաճոյ եղեր բարձրելոյն որպէս սակաւք, մնա՛ դու աստ զվաղուեան գիշերն աստէն. և ցուցից քեզ որչափ բարձրեալն ի տեսիլ երազոյ ցուցցէ քեզ՝ որ լինելոցն իցէ ի վերայ բնակչաց երկրի յաւուրս վախճանի։ Եւ մտի ի տուն զերկուս գիշերսն որպէս և հրամայեաց ինձ հրեշտակն Ցեռուն։

ԳԼՈՒԽ Ը.

Եւ եղեւ յերկրորդում գիշերին, ահա ելանէր ի ծովէ՝ արծուի, որոյ էին թեւքն երկոտասան, և գլուխք երեք. և համբառնայր զթեւս իւր և թռչէր ընդ ամենայն երկիր, և ամենայն հողմք երկնից չնչէին՝ և առ նա ժողովէին. և տեսանէի ի թեւոցն նորա, այլ թեւ բուսեալ, և այն լինէր փոքրիկ թեւս և մանուանս. իսկ գլուխք արծուոյն ի լուութեան կային, և միջին գլուխն՝ մեծ էր քան զայլսն, բայց սակայն և նա ի լուութեան դադարեալ էր ընդ նոսա. և ահա համբառնայր զթեւս իւր տիրել երկրի և բնակչաց նորա։ Եւ տեսանէի որպէս հնազանդէր նմա ամենայն ինչ

որ ի ներքոյ երկնից, և ո՛չ ոք ընդդէմ դառնայր նմա
յարարածոց որ ի ներքոյ երկնից։ Եւ տեսանէի զի
դառնէր արծուին և կայր ի վերայ ոտից իւրոց, և
ասէր. Միանգամայն զամենեսեան կամիցիք արթուն
լալ. այլ ի քուն մտցէ իւրաքանչիւր ի տեղւոջ իւ-
րում, և ի ժամանակի իւրում զարթիցէ, և գլուխքն
ի վախճան պահեսցին։

Եւ տեսի և ահա ո՛չ ելանէր բարբառ ի գլխոյ նո-
ցա, այլ ի միջոյ մարմնոյ նորա։ Եւ թուեցի զաւելորդ
թեւս նորա, և այն է ութ. և տեսի յայմէ կողմանէ
նորա, զի կանգնէր թեւ մի, և իշխէր ի վերայ ամենայն
երկրի. և իբրեւ այն լինէր, հասանէր նմա վախճան.
զի ամենեւին մի երեւեսցի տեղի նորա։ Եւ երկրորդն
դառնէր, և տիրէր, և ունէր զբազում ժամանակս. և
յետ տիրելոյն հասանէր վախճան նորա, զի կորիցէ
իբրեւ զառաջինն։

Եւ լինէր բարբառ ընդ նմա և ասէր. Լո՛ւր դու զաւե-
տիս քո որ այնչափ ժամանակս կալար զերկիր յառաջ
քան զքո կորնչել. ո՛չ ոք յետ քո կալցի յայնչափ ժամա-
նակս իբրեւ զքեզ, այլ ո՛չ զկէս քո։ Եւ յարեաւ եր-
րորդն, և կալաւ զիշխանութիւն. և կորեաւ իբրեւ
զառաջինն և նա։ Եւ այնպէս ունէր իշխանութիւն
թեւոցն ամենեցուն. և դարձեալ կորնչէր։ Եւ տեսի
զամենայն թեւսն, և զայն ի ժամու իւրում կանգնեալ
յայմէ կողմանէ՝ ունել զիշխանութիւնն. ունէր ի նո-
ցանէն և վաղվաղակի կորնչէր. և ոմն ի նոցանէ կանգ-
նէր և չկարէր ունել զիշխանութիւնն։ Եւ յետ այնորիկ
տեսանէի, զի երկոտասանեքին թեւքն կորնչէին, և երկու
աւելորդ թեւոցն, և ոչինչ մնայր յանդամս արծւոյն,
բայց միայն յերից գլխոցն ղօղելոց. և վեց թեւն յո-
րոց բաժանէին երկուքն, և երթային դադարէին առ
գլխոյն յայմէ կողմանէ, և չորքն մնացին ի տեղւոջ իւ-
րեանց։ Եւ տեսանէի զի չորք թեւքն խորհէին կանգնել
և տիրել. և ապա տեսանէի զմին, որ թէպէտ և կանգնե-
ցաւ, վաղվաղակի կորեաւ. և տեսանէի և ահա երկուն
մնային ի նոցանէ, որ խորհէին առաւել լինել և տիրել։

Եւ մինչդեռ զայս խորհէին, մի ի գլխոց անտի ղօ-

զելոց որ էրն մեծագոյն. և ապա զերկոսին գլուխն առնոյր ընդ իւր, և դառնայր գլուխն մարմնովն հանդերձ, և ուտէր զաւելորդ թեւսն՝ որ կամէին տիրել. և այն գլուխ տիրէր ամենայն երկրի. և հնազանդեցուցանէր զբնակիչս նորա աշխատութեամբ բազմաւ, և բռնանայր բնակութեանց երկրի՝ քան զթեւոցն բռնութիւն: Եւ տեսի յետ այնորիկ զգլուխն միոյին կորուսեալ իբրեւ զթեւսն. մնային երկու գլուխքն, և նոքա տիրէին երկրի, նոյնպէս և բնակչաց նորա: Տեսանէի և ահա զի ուտէր զգլուխն, և ապականէր որ յայմմէն էր զձախակողմն: Եւ լուայ բարբառ որ ասէր ցիս. Հայեաց առաջի քո, և տես զինչ տեսանես: Տեսի և ահա առիւծ զարթուցեալ յանտառէ գոչէր և մռնչէր, և աղաղակէր ի բարբառ մարդոյ. և լսէի զի ասէր ցարծուին. Լուր ինձ և խօսեցայց ընդ քեզ. այսպէս ասէ բարձրեալն. ոչ դու մնացեր ի չորից կենդանեացն զոր արարի տիրել ի վերայ երկրի իմոյ, զի ի ձեռն նոցա եկեսցէ վախճան ժամանակաց. և դու չորրորդ եկիր և յաղթեցեր նոցա, և բռնացար միշտ վաստակով բազմաւ, վարեցեր զաշխարհս այսչափ ժամանակս նենգութեամբ, և դատեցար զերկիր ոչ ճշմարտութեամբ. յափշտակեցեր զհեզս, և վնասեցեր խոնարհաց, ատեցեր զճշմարիտն, և սիրեցեր զսուտն, աւերեցեր զամրութիւն գոյաւորաց, և քակտեցեր ըզպարիսպս որ ոչ յանցեան քեզ. և ելին թշնամանք քո առ բարձրեալն, և ամբարտաւանութիւն քո առ հզօրն. և հայեցաւ բարձրեալն ի ժամանակս իւր, և ահա կատարեալ էին. վասն այնորիկ կորնչելով կորիցես դու, արծուի, և թեւք քո անպիտանք, և գլուխ քո չար, և մագիլք քո դժնդակք, և ամենայն մարմին քո ապիրատ. զի հանգիցէ երկիր, և թեթեւասցի ամենայն աշխարհ՝ վճարել ի քումմէ բռնութենէ. ակն ունել դատաստանի, և ողորմութեան որ արար զնա:

ԳԼՈՒԽ Ժ.

Եւ եղեւ յորժամ խօսեցաւ առիւծն զբանս զայս ընդ արծուոյն. և ահա որ մնացեալ էր գլուխն՝ կորեաւ, և երկու թեւքն որ ընդ նմա էին՝ կանգնեցան և փոխէին առ ի տիրել. և էր իշխանութիւն նոցա վատթարութեամբ և չփոթութեամբ լի. և ապա նոքա եւս կորնչէին. և ամենայն մարմին արծուոյն կիզոյր. և ափ-չէր երկիր յոյժ։ Եւ ես ի շատ զարմանալոյն և ի բազում երկիւղէ զարթեայ՝ և ասացի ցանձն իմ. Ապաքէն դու արարեր ինձ քննել զհանապարհս բարձրելոյն. և ապա լուծեալ է անձն իմ, հոգի իմ, և տկար եմ յոյժ, և ո՛չ կայ յիս զօրութիւն ի բազում երկեղէն զոր երկեայ ի գիշերիս յայսմիկ. արդ ազաչեմ զբարձրեալն զի զօրացուցցէ զիս մինչեւ ի վախճան։

Եւ ասեմ. Տէր, Տէր իմ, եթէ գտի շնորհս յաչս քո, թէ արդարեւ երանացայ բազում անգամ ի քէն, և եթէ արդարեւ ել խնդիր իմ առաջի երեսաց քոց՝ զօրացո՛ զիս, և յայտնեա՛ ծառայի քո զպատգամս և զիրս, և զմեկնութիւն ահաւոր երազոյն զոր տեսի. զի լիով մխիթարեսցես զանձն իմ. որովհետեւ արժանի արարեր ցուցանել ինձ զամաց վախճան և զժամանակաց կատարած։

Եւ ասէ ցիս. Այս է մեկնութիւն երազոյն՝ զոր տեսեր. արծուին որ ելանէր ի ծովէն՝ չորրորդ թագաւորութիւն է որ յայտնեցաւ եղբօր քում Դանիէլի. *այլ ո՛չ յայտնեցաւ նմա այսպէս՝ որպէս և ես յայտնեմ քեզ։ Ահա աւուրք եկեսցեն՝ և յարիցէ թագաւորութիւն ի վերայ երկրի, և եղիցի ահեղ քան զամենայն թագաւոր որ յառաջագոյն էին, և առաջի նորա թագաւորեսցեն ի նմա թագաւորք երկոտասան մի ըստ միոջէ։ Իսկ երկրորդն ի թագաւորացն աւելի ժամանակս կալցի քան զերկոտասանս. այս է մեկնութիւն երկոտասան թեւոցն զոր տեսեր։ Եւ որում

լուար ձայնին որ խօսէր, որ ո՛չ ի գլխոյն բարբառէր, այլ ի միջոյ մարմնոյն իւրոյ. այդ բան է որ ի մէջ ժամանակի այնր արքայութեան, եղիցին որոշմունք ո՛չ սակաւք, մերձեսցի ի կործանել և ո՛չ անկցի երբեք, այլ կանգնեսցի կացցէ յառաջին իշխանութեանն։ Եւ զի տեսեր զաւելորդ թեւսն բազում բուսեալ շուրջ զմեծ թեւովք նորա, այս այն բան է. յարիցեն ի նմանէ ութ թագաւորք, որոց եղիցին ժամանակք թեթեւք, և ժամք փութով. երկու ի նոցանէն կորիցեն ի մերձենալ ժամանակին, և ի հասանել իշխանութեան նորա. չորքն պահեսցեն ի ժամանակն, յորժամ կամեսցի մերձենալ առ նորա կատարած ժամանակին. երկուն ի վախճան պահեսցին։ Եւ զի տեսեր ի նմա եբիս գլուխս լռեալս և դադարեալս, այս այն բան է. ի վախճանի նորա յարուսցէ բարձրեալն երիս թագաւորս, և նորոգեսցեն բազում ինչ. խրատեսցեն զերկիր, և զընակիչս նորա իշխանութեամբ բազմաւ, քան զամենայն ոք՝ որ յառաջն եղեալք էին. վասն այնորիկ անուանեցան նոքա գլուխք արծուոյն. նոքա եղիցին գլուխ թագաւորութեան իւրեանց, և լցցեն զվախճան նորա։ Եւ զի տեսեր զգլուխն մեծ ջնջեալ և կորուսեալ, մին ի նոցանէն վախճանեսցի չարչարանօք, և երկուքն որ մնայցեն՝ զնոսա սուր կերիցէ. և ընդ նոսին և ինքն միանգամայն ի վախճանի ի սուր անկցի։ Եւ զի տեսեր զերկուս աւելորդ թեւսն փախեալ ի գլուխն յաջակողմն կոյս, այս այն բանքն են՝ զորս պահեաց բարձրեալն ի վախճան նորա. որոյ իշխանութիւն նորա անարգ և լի խռովութեամբ. որպէս հայեցար ընդ առիւծն, և տեսեր ելեալ ի մորւոյ, ըսթափեալ և զարթուցեալ ի քնոյ, մռնչելով՝ խօսէր ընդ արծուոյն և յանդիմանէր զանիրաւութիւնս նորա, ըստ ամենայն բանիցն զոր լուարն։ Նա է օձեալն, զոր առաքեսցէ բարձրեալն ի ժամանակս վախճանի յազգէ Դաւթի. նա ինքն ծագեսցէ և եկեսցէ և խօսեսցի ընդ նմա, Քզամբարշտութիւնս յանդիմանեսցէ, և վասն անիրաւութեան նորա խօսեսցի. և դիցէ առաջի նորա զնզովս, և ածցէ զնա յիւր դատաստանն կեն-

դանի. և յորժամ յանդիմանեսցէ զնա. յայնժամ կո-
րուսցէ զնա. և զմնացեալ ժողովրդեանն նորա փրկես-
ցէ զթութեամբ, և զմնացեալսն ի սահմանսն նորա փո-
խեսցէ, և ուրախ արասցէ զնոսա մինչեւ եկեսցէ վախ-
ճան դատաստանին. վասն որոյ խօսեցաւ իսկզբանն։
Այս է զոր տեսերն, և այս է մեկնութիւն նորա. դու
միայն արժանի եղեր գիտել զխորհուրդս բարձրելոյն.
զրեա՛ զայդ ի գիրս զոր տեսեր, և դիր զդա յան-
քոյթ տեղւոջ, և ուսուցես զիմաստունս ժողովրդեան
քո զԱստուծոյ, և դիցես զնա ի դէպ տեղւոջ, և լու-
սաւորեսցես նոքաք զիմաստունս և զերկեղածս իմ,
զորոց գիտես զսիրտս թէ ընդունին զնա՝ առ ի պա-
հել զխորհուրդս զայս։ Բայց դու կաց և մնա՛ աստէն
այլ եւս աւուրս եւթն, զի ցուցից քեզ զայն զոր կամի
բարձրեալն յայտնել քեզ։ Եւ գնաց հրեշտակն յինէն։
Եւ եղեւ իբրեւ լուաւ ժողովուրդն, եթէ էանց
եւթն օրն, ես չե՛ւ եւս դարձեալ էի ի քաղաքն, ժո-
ղովեցաւ ամենայն ժողովուրդն ի փոքունց մինչեւ ցը-
մեծամեծս. և եկին առ իս, և ասեն. Զի՞նչ մեղաք
քեզ և կամ զի՞նչ յանցեաք, զի այսպէս քեր թողեր
զմեզ, և աստէն մնացեր յայսմ տեղւոջ. դու միայն
մնացեր մեզ յամենայն մարգարէից իբրեւ զողկոյզ
կթոց, և իբրեւ զճրագ յաղմղին տեղւոջ, իբրեւ
զնաւահանգիստ մի միայն փրկութեան. ո՛չ է բաւա-
կան չարս որ եհաս ի վերայ մեր, այլ և դու եւս զմեզ
թողեր քեր. որչափ լաւ էր մեզ կիզուլ և այրիլ ի հուր
ընդ Սիոնի. զի էր մեզ լաւ քան զհին մեռեալս նո-
րա։ Եւ յասել նոցա զայս՝ լացին մեծաբարբառ։
Եւ ես պատասխանի և ասեմ ցնոսա. Քաղաքերեաց
տունդ Յակոբայ, զի կայ յիշատակ մեր առաջի բարձրե-
լոյն. և հզօրն ո՛չ մոռացաւ զմեզ խպառ. այլ ես ո՛չ թողի
զձեզ, այլ եկի ի տեղիս. յայս՝ աղաչել զՏէր վասն
աւերածոյն Սիոնի, և խնդրել զողորմութիւն վասն
տառապանաց մերոց. և արդ երթիցեն իւրաքանչիւր
ոք ի ձէնջ ի տուն իւր, և ես եկից առ ձեզ յետ
այսց աւուրց։ Եւ գնաց ժողովուրդն ի քաղաքն՝ որ-
պէս ասացի նոցա. և ես նստայ ի դաշտին զեւթն օր,

որպէս և հրամայեաց ինձ հրեշտակն Տեառն. և ու-
տէի ի ծաղկանց և ի բանջարոց դաշտին, և եղեւ ինձ
ի կերակուր այն զաւուրսն։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Եւ դարձեալ տեսանէի ի տեսլեան գիշերոյ, և տե-
սանէի ի ծովէ կողմանէ հողմ մեծ՝ զի շարժէր զա-
մենայն ալիս նորա. և հանէր ինքն հողմ ի սրտէ ծո-
վուն ի նմանութիւն մարդոյ, և ընթանայր և թռչէր
ընդ նոսա մարդն ամպովք հանդերձ. և ուր զերեսս
իւր դարձուցանէր՝ դողայր յորս հայէրն. և ուր հա-
սանէր բարբառ բերանոյ նորա, հաշէին և մաշէին
ամենեքեան որ լսէին զձայն նորա, որպէս հալի մոմ
յորժամ մերձեսցի ի հուրն։ Եւ տեսանէի յետ այ-
նորիկ՝ ժողով լինէր բազմութեան մարդկան ի չորից
կողմանց երկրի, որոց ոչ էր թիւ, զի մարտիցեն ընդ
մարդոյն որ ելանէր ի ծովէ անտի, և տեսանէի թէ
որպէս կռփէր իւր զլեառն մեծ և մտանէր ի նա. և ես
խնդրէի գտանել զերկիրն և զտեղին ուր փորեցաւն,
և ոչ կարացի։ Եւ յետ այնորիկ տեսի և այս. ամե-
նեքեան ժողովեցան առ նա՝ մարտնչել ընդ նմա. եր-
կընչէին յոյժ, բայց սակայն կռուէին կռուելով. և
յորժամ ետես զբազումս դիմել գալ հասանել բազ-
մութիւն ի վերայ, ոչ համբառնայր զձեռն իւր առ-
նուլ զզէն ի վեր, և ոչ այլ ինչ անօթ պատերազմի,
բայց միայն տեսի ի պատերազմին, զի որպէս բոց հրոյ
բղխէր ի բերանոյ նորա, և ի շրթանց իւրոց իբրեւ
զփայլակն լուսոյ. և յարձակէր յարձակելով ի վերայ
պատրաստ բազմութեան կռուել, և կիզոյր յանկար-
ծակի զամենեսեան առհասարակ, առ ի չգտանել բնաւ
ամենեւին յայնչափ ի բազմութենէ, բայց միայն ա-
ճիւն մոխրոյ և հոտ ծխոյ տեսի, և զարմացայ ի միտս
իմ։

Եւ յետ այսորիկ տեսի այր մի՝ զի իջանէր ի

լեռնէ միոջէ, և կոչէր առ ինքն այլ եւս բազմութիւն խաղաղութեան, և զային առ նա տեսանել բազումք ի մարդկանէ. ոմանք ի նոցանէն ուրախութեամբ էին, և ոմանք տրտմութեամբ, և ոմանք ի նոցանէ կազեալս ածէին։

Եւ ես ի բազմութենէ ամբոխին զարթեայ և աղաչեցի զբարձրեալն, և ասեմ. Դու Տէր իսկզբանէ ցուցեր ծառայիս քում զաքանչելիս քո զայս, և արժանի համարեցար զիս ընդունել զինդրուածս իմ. արդ և այժմ յայտնեա՛ ինձ զայսր երազոյ մեկնութիւն, որպէս կարծեմ մտաք իմովք՝ եթէ այս իցեն որք մնացեն յաւուրսն յայնս, ապա եղո՛ւկ են մնացեալք յաւուրսն յայնս։ Տեսանեմ վիշտս մեծամեծս և տառապանս բազումս, որպէս և նշանակէ երազս այս. արդ ապաքէն օգուտ էր հասանել ի ժամանակն յայն, եթէ անցանել իբրեւ զամպ, և մի՛ տեսանել որ հասանելոցն իցէ վախճան ժամանակի։

Նա պատասխանի հրեշտակն և ասէ ցիս. Ասացիս քեզ և զայս երազոյ մեկնութիւն, այլ և վասն մնացելոցն, և վասն որոց խօսեցաւ նա՝ առ ի վախճան ժամանակաց, այս բանք են. Երանի՛ իցէ այնոցիկ որ հասանիցեն յաւուրսն յայնոսիկ, և որ պահիցեն ի համբերութեան՝ ըզհաւատսն և զճշմարտութիւն և զողորմութիւն. գիտեա՛ այսուհետեւ զի առաւել երանեցան մնացեալքն քան զանցեալսն։ Իսկ մեկնութիւն երազոյն այս է. Զայրն զոր տեսեր որ ելանէր ի ծովէ անտի, այն է զոր առաքեսցէ բարձրեալն յետ բազում ժամանակաց, և ի ձեռն նորա փրկեսցէ զարարածս իւր. և նա դարձուսցէ զմնացեալսն. և զի տեսեր զի ելանէր չունչ հրոյ, և զի ո՛չ ունէր ի ձեռին զէն, և ո՛չ կամ ինչ պատերազմի, և զի յաղթեաց բազմութեան յարձակելոցն որք գային կռուել ընդ նմա, այս այն բան է. զի ահա աւուրք եկեսցեն յորժամ կամեսցի փրկել բարձրեալն որ ի վերայ երկրի. հացցեն զարմանք ի վերայ ամենայն բնակչաց երկրի, խորհեսցին ընդ միմեանս տալ պատերազմն, տեղի ընդ տեղւոյ, ազգ ընդ ազգի, թագաւորութիւն ընդ թագաւորութեան,

ժողովուրդք ընդ ժողովուրդս, առաջնորդք ընդ առաջնորդս, քահանայք ընդ քահանայս, և հաւասաք պաշտաման բաժանեսցին յիւրաքանչիւր կողմանց. և եղիցի լինել նշանաց այսոցիկ, զոր ես քեզ ասացի. երեւեսցի բարձրեալն զօրութեամբ մեծաւ. սա է այրն այն զոր տեսեր երեւեալ ի ծովէ անտի. և փչրեսցեն ի հեթանոսաց զպատկերս պղծութեան իւրեանց։ Եւ յորժամ լուիցեն զնմանէ, հեռասցին չտալ ընդ միմեանս պատերազմ. և ժողովեսցին միանգամայն բազմութիւն այնչափ յամենայն բնակչաց երկրի, ծառայել տեառն հաւատովք. և սա ի մերձենալ վախճանին քակտեսցին ի միմեանց։ Այս է բազմութիւն զոր տեսեր, որ կամէր գալ և տալ պատերազմ ընդ նմա. այլ նա կացցէ ի վերայ լերինն գլխոյ որ է Սիոն. զի ի Սիոնէ եկեսցէ, և երեւեսցի ամենայն պատրաստողաց, և յանդիմանեսցէ զամբարշտութիւնս այլոց, և զչարաչար գործս նոցա. և ցուցցէ նոցա զդատաստանն որով դատեսցի զնոսա. և յետ այնորիկ առանց աշխատութեան կորուսցէ զնոսա։ Եւ զի տեսեր զնոսա, զի ժողովէր այլ բազմութիւն խաղաղութեան, նոքա են՝ որ յանարգ հեթանոսաց ժողովեալ վարեցան, և ի զաւակէն Աբրահամու խառնեցան ընդ նոսա. այս է բազմութիւն ժողովեալ և խաղաղական. և որք համբերեն ի նոցանէ՝ ցուցցէ նոցա բարձրեալն աւելի նշանս. և պաշտպանեսցէ նոցա։ Եւ ասացի՝ թէ երանի՛ իցէ այնմ ազգի, քան այժմու ժողովրդեանս։

Եւ ասէ ցիս. Այսպէս եղիցի որպէս տեսերն, և մեկնեցաւ քեզ։ Եւ ասեմ ցնա. Տէր, և զայս ես յայտնեա՛ ինձ. Ընդէ՞ր տեսի մարդ յայտ եղեալ գալ ի ծովէ անտի։ Եւ ասէ ցիս. Որպէս ոչ ոք կարէ տեսանել, կամ քննել կամ գիտել զանդունդս խորոց. այնպէս այժմ ո՛չ ոք կարասցէ ի վերայ երկրի ճանաչել կամ գիտել զխորհուրդս բարձրելոյն, եթէ ո՛չ ի ժամանակի փառաւոր յայտնութեան նորա։ Այս է մեկնութիւն երազոյն զոր տեսեր. և վասն այնորիկ քեզ միայնոյ յայտնեցաւ այս յերկրի. թողեալ զքո հոգս որ հոգաբարձու եղեր վասն անուանն, և վասն օրինաց

նորա. խնդրեցեր դու վասն ժողովրդեան նորա, և աղաչեցեր. զի զկեանս քո վարեցեր իմաստութեամբ և գիտութեամբ, վասն այնորիկ եցոյց քեզ զայս ա-մենայն. զի յետ այլ երից աւուրց ասացից քեզ. և երեւեսցին քեզ զարմանալիքս։

Եւ իբրեւ շրջեալ գնայի ի տեղւոջ դաշտին, և փա-ռաւորէի զմեծազօրն Աստուած, զի այնպէս դարմանէ և առաջնորդէ, և ոչ արհամարհէ զազգս մարդկան. և կացի անդ զերիս աւուրս։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Եւ եղեւ յետ երրորդ աւուրն, ես ննջէի ի ներքոյ կաղնւոյ միոյ, և այլադէմ յանդիման իմ ի մտրենւոջ ելանէր բարբառ, և ասէր ցիս. Եզրա՛, Եզրա՛. և ասացի. Ահաւասիկ եմ ես։ Իբրեւ զայս ասէի՝ յոտն կացի ի վերայ ոտից իմոց. և ասէ ցիս. Երեւելով ե-րեւեցայ ի մտրենւոջս, և խօսեցայ ընդ Մովսէսի. յոր-ժամ ժողովուրդն ծառայէր յԵգիպտոս. և առաքե-ցի զնա, և հանի զժողովուրդն իմ յԵգիպտոսէ. և ածի զնոսա ի լեառն Սինա և կալայ զնոսա աւուրս բազումս. և ցուցի նմա բազում աքանչելիս, և յայտնեցի նմա ըզ-խորհուրդս ժամուց, և ծանուցի նմա զվախճան ժամա-նակաց. և պատուէր ետու նմա ասել զբանս համարձա-կութեան յայտնի, և չէ՞ ինչ որ ծածկեալ է։ Եւ այժմ քեզ ասեմ զխորհուրդս այս զոր յառաջ նշանակեցի. և զե-բաղս զոր տեսեր, և զմեկնութիւնն զոր իմացար, ի մտի քում պահեա՛. զի դու համբարձցիս ի մարդկանէ, և ընդ իս լինիցիս այսուհետեւ, և որ քեզ նման ոք իցէ մին-չեւ ի կատարումն ժամանակաց. հրաման տուր այ-սուհետեւ և վասն տան քո, և մխիթարեա՛ զտառա-պեալս նոցա, և խրատեա՛ զժողովուրդ քո, և իմաստ-նացո՛ զիմաստունս նոցա։ Հրաժարեա՛ դու այսուհետեւ յապականական կենացս, և մերժեա՛ ի քէն զշփոթեալ միտս, և հեռացո՛ ի քէն զմարդկեղէն ծանօթութիւն,

և ի բաց ընկեալ ի քէն զհոգս, և զյուզական միտս. և փութա՛ փոխել յայսմ երկրէ, զոր այժմ տեսեր զպահեալն չարն։ Դարձեալ եւս քան զայս տեսցես, զի որչափ կեանքս այս անցանեն, նոյնչափ բազմանան չարիք ի վերայ երկրի. հեռասցի յոյժ ճշմարտութիւնն որ առ Աստուած և որ առ մարդիկս էր, մերձեսցի սրտմտութիւն և ատելութիւն. ահաւանիկ փութայ արծուին գալ՝ զոր տեսեր ի տեսլեան։

Ետու պատասխանի և ասեմ. Խօսեցայց սակաւիկ միւս եւս առաջի քո, Տէր. ահա երթամ որպէս և հրամայեցեր ինձ, և խրատեցեր զմօտական ժողովուրդն. իսկ որ միւսանգամն ծնանիցեն՝ ով խրատեսցէ. զի կայ աշխարհս ի խաւարի, և բնակիչք սորա առանց լուսոյ. քանզի օրէնք քո այրեցան, և ո՛չ ոք յետ այսոցիկ ծանիցէ զգործս զարմանալեաց քոց, և ո՛չ զպատուիրանս քո զոր պատուիրեցեր. զի եթէ գտի շնորհս առաջի քո, ա՛րկ յիս զՀոգի սուրբ, զի գրեցից զամենայն որ եղեւ իսկզբանէ յայսմ աշխարհի, և որչափ ինչ էր գրեալ յօրէնս քո. թերեւս կարասցեն մարդիկ զշաւիղս փրկութեան գտանել, ոյք կամին կալ ի սրբութեան ճանապարհին։ Ետ պատասխանի և ասէ ցիս. Երթ ժողովեա՛ դու զժողովուրդն, և ասասցես ցնոսա՝ զի մի՛ խնդրեսցեն զքեզ աւուրս քառասուն. և դու պատրաստեա՛ քեզ տախտակս բազումս, և սո՛ւ ընդ քեզ զԳարիան և զԱրարիան և զՀերմիան և զԵղկանա և զԵթեն, զնոսա հնգեսեան, զի պատրաստեսցեն ի գրել. և եկեսցես ի կարգի, և վառեցից բորբոքեցից ի սրտի քում ճրագ իմաստութեան, որ ո՛չ անցցէ մինչեւ ի կատարել զոր գրելոցն իցես։ Եւ յոյժամ զայս կատարեսցես՝ է ինչ ի նոցանէն զոր յայտնեսցես, և է ինչ զոր գաղտնի ի ծածուկ իմաստնոց ուսուսցես։ Վաղիւ յայսմ ժամու սկսիր գրել։

Եւ գնացի՝ որպէս հրամայեաց ինձ Տէր. և ժողովեցի զամենայն ժողովուրդն, և ասացի ցնոսա. Լսո՛ւր Իսրայէլ զբանս զայս զիմ. պանդխտութեամբ պանդըխտեցան հարքն մեր յԵգիպտոս ի նախնէ, և փրկեցան անտի, և ընկալան օրէնս կենաց՝ զոր ո՛չ պահե-

ցին, զորով և դուք անցէք. և տուաւ ձեզ երկիրն ի ժառանգութիւն, և յերկրի ձերում դուք և հարքն ձեր անօրինեցայք, և ո՛չ պահեցէք զճանապարհս զոր պատուիրեաց ձեզ բարձրեալն, և արդար դատաւորն, և զերծ հան ի մէնջ ի ժամանակի զպարգեւեալն. և արդ՝ դուք աստ էք, և եղբարք ձեր ներքսագոյն քան զձեզ են. թէ դնիցէք ի մտի ձերում և խրատիցիք, և հնազանդեցուցէք զսիրտս ձեր, կենդանիք պահեսջիք. զի դատաստանն յետ մահու եկեսցէ, յորժամ դարձեալ կենդանասցուք, յայնժամ արդարոցն անուն յայտնեսցի. և առ իս ոք մի՛ մերձեսցի այսուհետեւ, և մի՛ խնդրեսցէ ոք զիս մինչեւ ցքառասուն օր։

Եւ առի ընդ իս զՀնգեսեան արսն զոր հրամայեաց ինձ, և գնացի ի դաշտն և եղէ անդ. և եղեւ ի վաղիւ անդր, և ահա ձայն բարբառոյ կոչեաց զիս և ասէ. Եզրա՛, Եզրա՛, բա՛ց զբերան քո և կո՛ւլ զոր ես քեզ տամ։ Եւ բացի զբերան իմ, և ահա բաժակ մի տուաւ ինձ, և գոյն նորա էր ջրոյ, և առի արբի։ Իբրեւ արբի, սիրտ իմ բխեաց զիմաստութիւն, և միտք իմ յաւելին ըզհանճար, և հոգի իմ բխեաց զյիշատակս. և բացաւ բերան իմ և ո՛չ փակեցաւ. և բարձրեալն ետ զիմաստութիւն հնգեցունց արանցն, և գրեցին փոխանակաւ զասացեալ նշանն գրով, զորս ո՛չ գիտէին. և նստայ անդ աւուրս քառասուն, և նոքա ի տունջեան գրէին և ի գիշերի հաց ուտէին, և ես ի տուէ խօսէի և ի գիշերի դադարէի. և գրեցին ի քառասուն աւուրն գիրս ինսուն և չորս։ Եւ եղեւ յետ լնուլ քառասուն աւուրն՝ խօսեցաւ ընդ իս բարձրեալն և ասէ. Զառաջինն զոր գրեցեր յայտ դիջիր, և կարդասցեն զնա արժանիք. և զերկրորդն պահեսջիր առ յուսուցանել զիմաստունս ժողովրդեանն. զի ի նոսա են առակք իմաստութեան, և աղբիւր հանճարոյ և գիտութեան։ Եւ արարի այնպէս։ Յամին չորրորդի չաբաթիւն ամաց, յետ ամաց հինգ հազար արարածոց աշխարհի, և երկուց ամսոց աւուրց. և ինքն Եզր վերացաւ և համբարձաւ ի գունդ նմանողաց իւրոց ընդ սուրբս և ընդ արդարս։ Գրեցի զայս ամենայն. և յորջորջեցայ դպիր բարձրելոյն. որում փառք յաւիտեանս, ամէն։

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆ ԵԶՐԻ ՄԱՐԳԱՐԷԻՆ

ԸՆԴ ՀՐՇՏԱԿՆ ՏԵԱՌՆ ՎԱՄՆ ՀՈԳՈՑ ՄԱՐԴԿԱՆ

Տեսանէր եղբ մարգարէն զհրեշտակ Աստուծոյ, և հարցանէր ցնա բան առ բան. և հրեշտակն մատուցանէր նմա և ասէր զոր ինչ լինելոց է ի կատարածին։

Եհարց մարգարէն ցհրեշտակն և ասէ՝ թէ Զի՞նչ պատրաստեալ է Աստուած արդարոց և մեղաւորաց. և ի ժամանակին՝ յորում հասանէ որ վախճանին, ի՞նչ լինիցին կամ ո՞ւր երթան, ի պատի՞ւ եթէ ի տանջանս։

Պատասխանի ետ հրշտակն և ասէ ցմարգարէն. Պատրաստեալ է արդարոցն ուրախութիւն մեծ և լոյս յաւիտենից, և մեղաւորացն պատրաստեալ է զխաւարն արտաքին և զհուրն յաւիտենից։

Ասէ մարգարէն ցհրեշտակն. Տէր, ո՞վ է որ ոչ իցէ մեղուցեալ Աստուծոյ ի կենդանեաց. և թէ այդ այդպէս իցէ, ապա երանի է անասնոց և թռչնոց՝ որ ոչ ունան յարութեան, և ոչ ակն ունին վախճանին։ Եթէ զարդարան՝ որ ամենայն տանջանացն համբերեցին, և զմարգարէսն և զառաքեալսն և զմարտիրոսն պսակեսցես՝ յորժամ զգայլահազն առնոյին, և ծեծէին ոսամք զերեսս նոցա՝ մինչեւ երեւէին երիկամունք նոցա. նոքա վասն քո չարչարեցան. մեզ մեղաւորացս ողորմեա, որ գրաւեալ եմք և ըմբռնեալ ի ձեռն սատանայի։

Պատասխանի ետ հրեշտակն և ասէ. Եթէ ոք քան զքեզ ի վեր է, մի՛ յաւելուս խօսել ընդ նմա, եթէ ոչ մեծ չար լինիցի քեզ։

Ասէ մարգարէն ցհրեշտակն. Տէր, սակաւիկ մի յաւելում խօսել ընդ քեզ, արա ինձ պատասխանի։ Յորժամ հասանի օր վախճանին և առնու զհոգին, ի տեղի տանջանաց կարգէ զնա, եթէ ի տեղի պատուոյ՝ մինչեւ ի գալուստն։

Պատասխանի ետ հրեշտակն և ասէ. Մի մնայք մինչեւ ի յօր վախճանին. այլ որպէս արծիւ թռուցեալ փութացարուք գործել զբարիս և զողորմութիւնս։ Զի ահեղ է օրն այն ստիպող և պահանջող. ոչ զորդիս տայ հոգալ և ոչ զինչս։ Գայ հասանէ յանկարծակի, որպէս գերի վարէ անողորմ և անաչառ, յանկարծահաս անկասկած։ Եթէ լայ և եթէ ողբայ, ոչ ինչ լինիցի նմա ողորմութիւն։ Այլ յորժամ հասանի օր վախճանին, բարի հոգոյն բարի հրեշտակ գայ և չարին չար. որպէս առաքեալ ումն ի թագաւորացն առ չարագործսն և առ բարեգործսն, բարոյն բարի հաստուցանէ և չարին չար. նոյնպէս և բարի հոգոյն բարի հրեշտակ գայ, և չարին չար։ Ոչ եթէ հրշտակն է չար, այլ իւրաքանչիւր գործքն։ Առնու զհոգին՝ տանի ընդ արեւելս, ընդ հղեամն[1], ընդ ձիւն, ընդ խաւար, ընդ կարկուտ, ընդ սառն՝, ընդ մրրիկ, ընդ գունդս սատանայի, ընդ վտակս և ընդ հողմն սաստիկ անձրեւացն, ընդ ահեղ և ընդ զարմանալի ճանապարհսն, ընդ անձուկ կապանս և ընդ բարձրահամ լեռունս անցուցանեն։ Ո՛վ զարմանալի ճանապարհն. զի ոտնհետ ոտին է, և առաջի նորա հրեղէն գետք են։

Զարմանայր մարգարէն և ասէր. Ո՛վ զարմանալի և սոսկալի ճանապարհն այն։

Ասէ հրշտակն. Յայն ճանապարհն եւթն բանակք դիւաց կան, և եւթն աշտիճանք աստուածութեանն, եթէ ընդ այն կարեմ անցուցանել։ Քանզի առաջին օթեւանքն չար են և զարմանալի. երկուքն ահեղ և անպատումն. երեքն դժոխք են և սառամանիք. չորքն կռիւք են և պատերազմունք. ի հինգն ապա քննումն. եթէ արդար է՝ լուսաւորի, և եթէ մեղաւոր է՝ մթա-

1. Յորմնակին Եղիա։

նայ. ի վեցն ապա պայծառանայ հոգի արդարոյն իբրեւ զարեգակն. յետ ապա տարեալ հասուցանեմ զնա յերկրպագութիւն մեծի աթոռոյ աստուածութեանն, ընդդէմ դրախտին՝ յանդիման փառացն Աստուծոյ, ուր գերազանցիկ լոյսն է։

Ասէ մարգարէն ցհրշտակն. Տէր իմ, երբ ընդ այսպիսի արհաւիրքն, ընդ կռիւքն, ընդ պատերազմունքն, ընդ տապախառնիւքն անցուցանես զնա, ընդէ՞ր ոչ հանդիպեցուցանես զնա աստուածութեանն՝ քան աթոռոյն միայն հասուցանես։

Ասէ հրշտակն ցմարգարէն. Դու ի սնոտի մարդկանէ ես և զմարդկան բնութիւն խորհիս։ Ես հրշտակ եմ և հանապազ Աստուծոյ եմ ծառայել, և ոչ եմ տեսեալ զերեսս Աստուծոյ. դու զիա՞րդ ասես հանդիպեցուցանել զմարդ մեղաւոր առաջի աստուածութեանն։ Զի ահեղ և զարմանալի է աստուածութիւնն, և ո՞վ իշխեսցէ հայել ընդդէմ անեղին աստուածութեանն։ Եթէ հայեսցի ոք, իբրեւ զմոմ հալեսցի յերեսացն Աստուծոյ. զի հրեղէն է աստուածութիւնն և զարմանալի. քանզի այսպիսի պահապանք կան շուրջ զաթոռոյ աստուածութեանն։ Կայանք են, մանասբրանք են, խառոյք են, հրեղէնք են, կամարազգեստք են, լապտերք են։ Անդ որոտմունք են, անդ շարժմունք են, անդ կռիւք են, անդ պատերազմունք են, անդ տապախառնիւք են, շրջախառոյք են, զեռունք են, հրեղենազգեստք են, բոցեռացք են, հրեղենագունդք են։ Շուրջ զնովաւ սերոբէքն անմարմին, քերոբէքն վեցթեւեան. երկու թեւքն զդէմսն ծածկեն և երկու թեւքն զոտսն և երկու թեւքն թռուցեալ աղաղակեն՝ սուրբ սուրբ (սուրբ) տէր զօրութեանց, լի են երկինք և երկիր փառաք քո։ Այսպիսի պահապանք կան շուրջ զաթոռոյ աստուածութեանն։

Եհարց մարգարէն ցհրշտակն և ասէ. Տէր, զի՞նչ լինիցիմք. զի մեղաւորք եմք ամենեքեան և ըմբռնեալ ի ձեռս սատանայի։ Արդ ի՞ւ զերծանիմք, կամ ո՞վ հանէ զմեզ ի ձեռաց նորա։

Պատասխանի ետ հրշտակն և ասէ. Եթէ ոք մնայ

յետ մեռանելոյն, հայր, կամ մայր, կամ եղբայր, կամ քոյր, կամ որդի կամ դուստր, և կամ այլ ոք ի քրիստոնէից, և աղօթս մատուցանէ՝ պահաք տուաք քառասնաք, մեծ հանկիստ և ողորմութիւն լինի ի ձեռն ղենմանն Քրիստոսի. զի Քրիստոս վասն մեր պատարագեցաւ ի վերայ խաչին, և զվեց դարուն զհոգիքն ի ձեռաց սատանայի կորզեաց։ Որչափ ի ձեռն սրբամատոյց քահանային հոգին ազատի, եթէ քահանայն այսպէս կատարէ զքառասունն՝ որպէս հաճոյ լինի Աստուծոյ. զքառասուն օր յեկեղեցին կացցէ և ոչ ի հրապարակս երթալով. այլ ի ժամէ ի ժամ զերգս մարգարէին Դաւթի կատարեսցէ հանդերձ օրհնութեամբ։ Սա է՝ որ հանէ զմեզ ի ձեռաց սատանայի։ Ապա եթէ ոչ՝ տալ ի յաղքատս։ Զի աղօթքն ձեր այսպէս է. որպէս ելանէ մշակն՝ երթայ սերմանել, և ելանէ բոյս զուարթ և վայելուչ, և կամի առնել արդիւնս բազումս, և ելանէ փուշ և որոմն և հեղձուցանեն, և ոչ տայ ժողովեալ արդիւնս բազումս. նոյնպէս և դուք յորժամ երթայք ի դուռն եկեղեցոյն և կամիք աղօթս մատուցանել առաջի աստուածութեանն, ելանեն հոգք աշխարհիս և պատրանք մեծութեան, և հեղձուցանեն զձեզ. և ոչ տայ սերմանել արդիւնս բազում։ Զի եթէ աղօթքն ձեր այսպէս էր՝ որպէս Մովսէս ելաց աւուրս քառասուն, և բերան ընդ բերան խօսեցաւ ընդ Աստուծոյ, նոյնպէս և Եղիա հրեղէն կառաք յերկինքն վերացաւ, նոյնպէս և Դանիէլ եկաց ի գուբ առ.....[1]։

1. Աստանօր թուղթ անկեալ կայ. և յետ այնորիկ են եւս թուղթք վեց, ամենեքեան մաշեալք և պակասեալք կիսով չափ՝ ի չրթանց կողմանէ. և մնացորդ հարցաքննութեանն խպառ պակասէ ի վերջ կուսէ գրչագրին։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ԺԱ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍՏԵՂԾՄԱՆ ԵՒ ՑԱՆՑՄԱՆՆ ԱԴԱՄԱՑ*

ՅՈՐԺԱՄ ստեղծ Տէր Աստուած զերկինս և զերկիր, և արար նախ զզօրս հրեշտակաց ի Թագաւորութիւն աստուածութեանն իւրոյ։ Իսկ չարն Սատանայէլ և Բելիար՝ դասագլուխ էին դասուց սատանայի, մեծափառաւք զարդարեալ, բարձր քան զամենայն հրեշտակք և զամենայն դաս հրեշտակաց. օրհնէին, գովէին, բարեբանէին և փառաբանէին զԱստուած։

Իսկ պիղծն սատանայ՝ ոչ կամեցաւ օրհնաբանել զԱստուած. և հպարտացաւ ի սրտի իւրում, և կամեցաւ զաթոռ իւր բարձրացուցանել հաւասար Աստուծոյ աթոռին։ Եւ հրամայեաց Տէր Աստուած յուռնաւոր սերովբէից՝ մեծին Գաբրիէլի և ահաւորին Միքայէլի, և ինն դասուց հրեշտակացն. դիմեցին ի վերայ Սադաէլի և ամենայն կամարարացն նորա, հարին զնոսա և ի վայր տուին, որպէս զկարկուտ ի յամպէն։

* Զայս մեզէն յարմարեցաք, զի գտաք ի թիւ 729 գրչագրի Մատենադարանի վանացս առանց խորագրի, բայց ի միոյ ասաի. զկապիր Ա . . . ։ Սա բաժանեալ է՝ ուրոյն ուրոյն գլխագրութիւնքք կարմրագրիւք՝ ի հինգ մասունս. որպէս տեսցի յառաջիկայսդ ըստ կարգի։

Իսկ բարերարն Աստուած, վասն հպարտութեանն սատանայի, ստեղծ զԱդամ հողեղէն, զի լցուսցեն զտեղի անկելոց հրեշտակացն։ Եւ արկ Տէր Աստուած թմբրութիւն ի վերայ Ադամայ, և առ զմի ի կողից նորա՝ և ելից ընդ այնր մարմին. և իբրեւ զարթեաւ Ադամ ի քնոյ, տեսաւ զկին՝ հաւանեցաւ։ Եւ ասաց Ադամ. Ահա ոսկր ի յոսկերաց իմ, և մարմին ի մարմնոյ. սա կոչեսցի կին։

Եւ տարեալ զնոսա Տէր Աստուած, և եդ ի մէջ դրախտին Ադենայ, որ է փառաք մեծ. և ետ պատուէր նոցա Տէր Աստուած և ասէ. Ուտելով կերիջիք յամենայն պտղոց ծառերոյդ, բայց ի ծառոյն կենաց՝ մի՛ ուտիցէք և մի՛ հուպ լինիցիք. զի յորժամ ուտիցէք ի նմանէ՝ մահու մեռանիք։ Իսկ վասն այն եդ զԱդամ ի միջասահման դրախտին, (զի) եթէ պահեալ էր Ադամ զպատուիրանս Տեառն, վերանայր փառաք ի վերին Երուսաղէմ՝ ի տեղի անկեալ հրեշտակացն։

Վասն այն սատանայ նախանձեալ եմուտ յօձն։ Յայնժամ օձն թեւաւոր էր, լեզու ունէր, մտանէր ի դրախտն. և սատանայ՝ յահէն հրեշտակաց՝ ոչ իշխէր ի դրախտն մտանել։ Իբրեւ ետես զօձն ի դրախտին, ուսուց օձին խաբել զԵւայ և զԱդամ։ Իբրեւ գնաց օձն և տեսաւ զԱդամ և զԵւայ, զի շրջէին և պտղոյն ուտելովն զուարճանային ի մէջ դրախտին. իսկ օձն խրախեալ (խրատեաւ) էր ի սատանայէ. այնչափ որսաց, որ զԵւայ միայն գտաւ։

Ասէ օձն Եւայի. Ընդէ՞ր (յ)ամենայն ծառոյ պտղոյ ճաշակես, և (յ)այս գեղեցիկ պտղոյս ո՛չ ճաշակես։

Ասէ Եւայ. Զի Տէր Աստուած պատուէր ետ չուտել ի պտղոյդ. իբրեւ ուտիցէք, ասէ, մահու մեռանիցիք։

Ասէ օձն. Խաբեալ կամի զձեզ Աստուած. զի Աստուած իբրեւ զձեզ նման էր, քան զի չէր կերեալ ի պտղոյդ. իբրեւ կերաւ՝ աստուածութեան փառացն հասաւ։ Վասն այն ասաց ձեզ չուտել ի պտղոյդ, զի հաւասար լինիցիք՝ և փառակից և աթոռակից Աստուծոյ։

Յայնժամ առեալ ի պտղոյն՝ և կերաւ. ընդ ուտել պտղոյն՝ մերկացաւ ի լուսոյն։ Իբրեւ եկն Ադամ և Եւա զկինն մերկացեալ ի լուսոյն, տրտմեցաւ Ադամ և ասէ. Կերա՞ր ի պտղոյն։

Ասէ Եւայ. Զի քաղցրագոյն պտուղ է, սո՛ւտ և դոչ հաշակեայ և տես զքաղցրութիւն պտղոյդ։

Ասէ Ադամ. Ո՛չ կարեմ ուտել ի դմանէ, և մերկանամ քեզ նման։

Ասէ Եւայ. Շատ կերայ, վասն այն մերկացայ. դու տակաւ ճաշակեայ։

Ասէ Ադամ. Ո՛չ կարեմ ճաշակել և քեզ նման մերկանալ։

Ասէ Եւայ. Թէպէտ ուտես՝ ո՛չ բարկանայ քեզ Աստուած, զի Աստուած զքեզ յոյժ սիրէ։

Եւ ապա առաւ զպտուղն՝ քննէր, և վախէր թէ կնոջ նման մերկանայր։ Թէ ոչ ճաշակէր, կինն լայր և աղաչէր՝ ասելով. Մեռանիմք՝ ի միասին, և թէ ապրիմք՝ ի միասին, մի՛ որոշիլ ի քէն։ Իսկ Ադամ, երբ հայէր ի կնոջ գեղեցկութիւնն, խեղքն թափէր ի գլխոյն. (որ) թէպէտ ի լուսոյ էր մերկացեալ՝ բայց գեղեցիկ էր, զի մարմինն՝ որպէս մարգարիտ՝ սպիտակափայլ էր. քանզի նորաստեղծ էր, զի Աստուած իւր ձեռաքն էր ստեղծեալ և զարդարեալ։ Իսկ Ադամ բազում քրնութիւն արար, ասաց. Մի՛ թէ Աստուած ողորմի՞ ինձ և ո՛չ մերկացուցանէ. երբ՝ թէ մերկանամ. զի լաւ է ինձ մեռանիլ՝ քան թէ բաժանիլ և որոշիլ ի կնոջէս։ Զի զայն ոչ իմացաւ, (զի) թէ պահեալ էր զպատուիրանն, կարող էր Աստուած՝ քան զայն և-այլ գեղեցիկ կին ստեղծանել։ Մինչեւ երեք ժամ պտուղն ի ձեռն քննութիւն արար, ասաց՝ թէ ո՛չ կարեմ ապրիլ առանց կնոջս. և եթող զխօսքն Աստուծոյ և՝ կնոջ խօսքով՝ կերաւ զպտուղն, և մերկացաւ ի լուսոյն։ Զի ոչ թէ պտուղն չար էր, քան զի չար պտուղն ի դրախտի մէջն ոչ կայր. այլ չարն այն էր, որ Եւայ՝ զԱստուծոյ խօսքն և զպատուիրանն եթող և զօձին լսեց. և Ադամ՝ զԱստուծոյ խօսքն և զպատուիրանն եթող՝ զիւր կնոջ խօսքն լսեց։

Վասն այնորիկ մերկացաւն ի լուսոյն. և գնացին ծածկեցան թզենի տերեւաւն. քանզի գիտէին տերեւի ծածկելովն կարէին ծածկել ի տեսութենէն Աստուծոյ. քանզի հանապազ երեւէր նոցա Աստուած, զի գայր հանդարտապէս, և քաղցր բարբառով խօսէր ընդ նոսա։ Բայց ի ժամուն՝ յորում կերեալ էին ի պտղոյն (և) մերկացեալ ի լուսոյն և տերեւովն ծածկեալ էին զմերկութիւնս իւրեանց, ձայնն կեցաւ ի վերայ թզենւոյն, և ձայնեաց ասելով. Ո՞ւր ես Ադամ։

Ասէ. Տէր, զքո ձայնն լուայ, փախեայ, թաքեայ։

Ասէ Տէրն. Ընդէ՞ր փախեար և թաքեար։

Ասէ Ադամ. Վասն այն փախեայ և թաքեայ, զի մերկ էի և ամաչէի ի քէն։

Ասէ Տէրն. Զի լուսով ծածկեցի զձեզ, ընդէ՞ր մերկացաք ի լուսոյն. մի՛ թէ կերա՞ք ի պտղոյն։

Ասէ Ադամ. Այս կինս, (զ)որ դու ստեղծեր, ասյ խաբեաց։

Դարձեալ Տէր խօսեցաւ ընդ կնոջն, և ասաց. Կին, զո՞ւ արարեր զայդ։

Իսկ կին ասաց. Տէր, զօձն՝ զոր ստեղծեր՝ նա խաբեաց զիս։

Յայնժամ Տէր բարկացաւ նոցա, և ասաց Ադամայ. Փոխանակ զի արարեր զայդ, ո՛չ լուար խրատոյ իմոյ, այլ փութապէս լսեցեր զխրատոյ կնոջ քո. փոխանակ անմահ տնկոյս՝ փուշ բուսանի քեզ. քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո. զի հող էիր և ի հող դարձցիս։ Եւ դարձեալ ընդ Եւայի, ասաց. Փոխանակ զի արարեր զայդ, բազմացուցանելով բազմացուցից զտրտմութիւն քո, ծնունդ քո՝ մահու չափ եղեցի, և ցաւաք կերիցես զաշխարհս, և եղիցի քեզ տրտմութիւն զամենայն աւուրս կենաց քոց։ Եւ դարձեալ ասաց ցօձն. Անիծեալ լիցիս յամենայն կենդանեաց մէջ, ի վերայ լանջաց և որովայնի քում սողացիս, և հող կերիցես զամենայն աւուրս կենաց քոց. եղիցս զթշնամութիւն ի մէջ քո և ի մէջ կնոջ՝ և ի մէջ զաւակի դորա, նա սպասեսցէ քում գլխոյ

և դու սպասեացես նորա գարշապարի։ Եւ հրամայեաց հրեշտակաց հանել ի դրախտէն, և հրեղէն սրով զահել զճանապարհս դրախտին կենաց։ Եւ հանին զԱդամ և զԵւայ ի դրախտէն։

Եւ եղեալ արտաքս ի տեղի մութն և խաւար, զօր ողջոյն անդ մնացին, առանց ուտելոյ, անմխիթար լային և կոծէին զանձինս իւրեանց։ Իսկ զվեց օրէն հետ, ողորմեցաւ Նոցա Տէր, և առաքեաց զՀրեշտակ իւր՝ հանել զնոսա ի խաւարէն, և առաջնորդեալ երեր զնոսա ի լոյս աշխարհս, և եցոյց Նոցա զպտղաբերս՝ այնով լիանալ և ապրիլ։ Իսկ իբրեւ տեսին Ադամ և կին իւր, ասացին. Թէպէտ չէ՛ բարութիւն, և աշխարհիս լոյս և պտուղս՝ չեն հաւասար՝ լուսոյ և պտղոյ դրախտին. բայց ոչ սովաւ (ի) մահ և կամ խաւար մնամք։ Այսպէս ուրախ կացին։*

* Ապա զհետ զայ ի գրչագրին մեկնութիւն իմն այսպիսի բանիցս՝ յանծանօթէ ումեքէ, նոյնագիր և նոյնալեզու ընդ մատանց Զատմութեանս, — յերկու հատուածս մի զմիոյ կնիք, որ ունին այսպիսի խորագիրս կարմրագրեալս. մին՝ Այս ի յայտնութիւն որ յայտնի մեզ վասն՝ Դարձեալ մինոնութիւն պտղոյն Ադամայ. զորս՝ հանդերձ յաջորդովքն՝ ի բաց թողեալ թողաք ի մէջս մատանց Զատմութեանս, որպէս անդէպ իմն ի ժողովածոյս սատ Անվանն Դոց. զնելով միայն զխորագիրս իւրաքանչիւր իւրաքանչիւրոյն։

ԳԱՏՄՈՒԹԻՒՆ ✗

ԵԼԱՆԵԼՈՑՆ ԱԴԱՄԱՑ Ի ԴՐԱԽՏԷՆ

Իսկ երբ անկաւ Ադամ ի դրախտէն յաշխարհս, ուրախութեամբ կացին ի վերայ արեգական և լուսնին՝ մինչեւ յերեկոյին։ Իսկ երեկուն, երբ որ արեգակն մտաւ, նոքա գիտացին թէ խաւար կալաւ զնոսա, (և) այլ ոչ տեսանեն զլոյս. քանզի դրախտն հանապազ լոյս էր, նոյնպէս գիտացին թէ աշխարհս ամենայն լուսաւոր եղիցի. զայն ոչ գիտէին թէ յաշխարհս գիշեր լինի, կամ ցերեկ կայ. վասն այն տրտմեցան իբրեւ մտաւ արեգակն, հանց գիտացին թէ այլ ո՛չ լուսանայ, (և) լացին և կոծեցան մինչեւ ցառաւօտն։

Իսկ առաւօտին հաւախօսին, եկն առ նա սատանայ ի կերպ հրեշտակի, և ասէ. Ընդէ՞ր տրտում էք։

Ասէ Ադամ. Վասն այն տրտմինք, քանզի ստեղծեալ էր զմեզ. Աստուած և եդեալ ի մէջ լուսեղէն դրախտին, և պատրանաք օձին ճաշակեցաք ի պտղոյն և ելաք ի դրախտէն, և անկանք ի խաւար՝ ժամանակս մինչ։ Դարձեալ ողորմեցաւ Տէր և առաքեաց զհրեշտակ իւր, (որ) եհան զմեզ ի խաւարէն. և բերեալ ի լոյս աշխարհս, թէպէտ (սա) չէր հաւասար լուսոյ արքայութեան, բայց լոյս էր։ Իսկ ոչ գիտեմք թէ զի՞նչ գործեցաք, որ բարկացաւ ի վերայ մեր Տէրն և խափանեաց զայն սակաւ լոյսն. վասն այն կոծամք և լամք։

Ասէ սատանայ. Զի՞նչ ետուք այն հրեշտակին, որ զձեզ եհան ի մութ տեղւոջէն և եբեր ի լոյս։

Ասէ Ադամ. Եւ ոչ ինչ։

Ասէ սատանայ. Զի՞ է, ընդէ՞ր ոչ ասացիք զձեզ ծառայ նմա ամենայն ծնընդովք ձերովք։

Ասէ Ադամ. Ցիմարութիւն կալաւ զմեզ և զայդ ոչ իմացաք ասել։

Ասէ սատանայ. Զինչ տաք ինձ՝ (որ) տամ ձեզ աւետիք լուսոյ։

Ասէ Ադամ. Եթէ մի անգամ լոյս տեսանիցեմք, քեզ ծառայ լինիմք մեք և ամենայն ծնունդքն մեր։

Իսկ սատանայ ցուցանէր նոցա յարեւելից, և ասաց. Հայեցարուք և անդ տեսանիցէք լոյս։

Իբրեւ ասաց սատանայ զայս բանս, և ինքն սակաւ մի հեռացաւ. և հայէին Ադամ և Եւայ դէպ յարեւելից կողմն, տեսանէին զնչան լուսանալոյն. յոյժ ուրախացան և խնդացին։ Իբրեւ սակաւ մի բարձրացաւ արեգակն, եկն առ նոսա պիղծն սատանայ, ասէ. Տեսա՞յք զաւետիսն՝ զի ուրախացուցի զձեզ։

Ասէ Ադամ. Ծառայ եմ քեզ և աւետեաց քոց, զի դու լուսաւորեցեր զմեզ. ամենայն ծնրնքն (ծնունդքն) մեր՝ ծառայ եմք։

Իսկ սատանայ բերեալ քար մի՝ և եդ առաջի Ադամայ, և ասաց Ադամայ. Դիր զձեռդ ի վերայ քարին և ասայ այսպէս. Ամենայն ծնունդքն իմ՝ ծառայ քո եղիցին։ Եւ թէ ոչ ասես այսպէս, խոր խաւար բերեմ ի վերայ քո։

Իսկ Ադամ եդեալ ձեռն ի վերայ քարին, և ասաց. Մինչեւ անծինն ծնանի և անմահն մեռանի, մեք և ամենայն ծնունդքն մեր՝ ծառայ եղիցի քեզ։

Եւ առեալ սատանայ զքարն, և տարեալ Թագեաց ի գետն Յորդանան։ Այն եղեւ ձեռագիր Ադամայ ի ձեռն սատանայի։

Մինչեւ յերեկոյն ուրախացան և խնդացին Ադամ և Եւայ. (և ապա իբրեւ իմացան) որ խաբեցան ի սատանայէ, լացին և ողբացին, մինչեւ եօթն օրն անօթի կացին և զՏէրն աղաչեցին։ Եւ յետ եօթն աւուրն՝ ողորմեցաւ նոցա Տէրն, և առաքեաց զհրեշտակ իւր, և բերեալ ձեռնագիր յԱստուծոյ՝ ետ ի ձեռն Ադամայ, և ասէ. Մի երկնչիր Ադամ՝ թէ խաբեաց զքեզ սատանայ. վասն այն ասաց քեզ՝ թէ մինչեւ անծինն ծնանի, զի անծին ես եմ՝ որ ոչ ոք ծնաւ.

անմահն՝ իմ աստուածութեան (ասաց), որ ոչ ունի զմահ. վասն այն այսպէս խաբէութեամբ էառ զձեռնագիրն ի քէն, որ մնաս դու գերի ի ձեռն սատանայի. բայց ոչ թողում զքեզ գերի ի ձեռն սատանայի, զի դու պատկեր իմ ես. ոչ կորուսից զքեզ և ոչ թողից ի ձեռն նորա։ - Զի այն եօթն օրն՝ որ պահեաց Ադամ, այն ասի առաջաւորս։ - Եւ ի մտանել վեց դարուն, առաքեցից ի լուսոյ աստուածութեան իմոյ՝ զորդի իմ սիրելի. որ եկեալ մարմնանայ ի զաւակէ քումմէ, ի սուրբ և յանարատ կուսէն. զի նայ եղիցի որդի որդւոյ։ Եւ որդին իմ ջնջեսցէ զձեռագիր քո, և ազատեսցէ զքեզ ի գերութենէ սատանայի, և տացէ քեզ զառաջին փառսըն քո։

Իբրեւ զայս աւետիքս լուաւ Ադամ, ուրախացաւ յոյժ. վեց հազար դարն (տարին)՝ իբրեւ ժամ մի եբեւեցաւ։ Օրհնեալ է Աստուած։*

ԱՑՍ Է ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ×

ՈՐԴԻՈՑՆ ԱԴԱՄԱՑ ԱԲԵԼԻ ԵՒ ԿԱՅԵՆԻ

Թոկ յորժամ Ադամ յետ խաբէութեան սատանայի՝ երբ հինգ օր պահեաց ծոմով, յորժամ յառաջաւոր ասեմք. քաղցրացաւ նմա Աստուած և առաքեաց զհրեշտակ իւր՝ և պատմեաց նմա զմարդանալն Աստուծոյ և զփրկութիւն նորա ի ձեռաց սատանայի։ Եւ բերեալ զեզն հնազանդեցոյց նմա՝ նովաւ վարել և վաստակել և գործել զերկիր, և զպտուղ նոցա ուտել

* Աստ զհետ զայ երրորդ հատուած մեկնութեան, այսպէս կարմիր մակագրեալ. Այս է Դիոնոսիոսի, և այլն։ (Սիւնք վեց)։

և լիանալ. և հրամայեաց ի պտղոյ անտի՝ բաժին հանել Աստուծոյ։

Զի Ադամայ առաջին զաւակն Կայեն էր։ երբ Կայէն եղեւ երեսուն տարեկան, ապա ծնաւ Աբէլ և քոյր նորա։ Եւայ երեսուն տարի՝ մի փոր կու ծնանէր, ջուխտակ՝ մին աղջիկ և մին տղայ։

Երբ Աբէլ եղեւ քսան տարեկան՝ խաչանց հովիւ եղեւ, իսկ Կայեն հողագործ էր։ Զի ասաց նոցա Ադամ, թէ ի վաստակոց ձերոց տասանորդէն՝ մին բաժին հանէք Աստուծոյ. զի Աբելի ոչխարն (որ) ծնաւ՝ հազար և մի պուտ ունէր, զայն Հաբէլ ընտրեաց Աստուծոյ բաժին. բայց ոչ մատոյց վասն սիրոյ եղբօրն. քանզի ասէր. Երբ հասանէ հունձն եղբօրն իմ, ապա ի միասին մատուցցուք զբաժինն Աստուծոյ։ Իբրեւ հասին հունձքն ցորենոյ Կայենի, երբ հնձէր զցորեանն իւր, զորն որ քամի տուեալ էր՝ փունջ անէր, և զայն խուրձն կապէր և ուրիշ դնէր ի բաժինն Աստուծոյ։

Եւ երբոր Հաբէլ զգառն իւր, զոր ընտրեալ էր՝ և բաժին Աստուծոյ խոստացեալ։ Իսկ Կայէն կանգնեցաւ յաղօթս առ Աստուած, և ասաց. Դու, Տէր, ստեղծող ամենայնի, գիտութիւն լիցի քեզ. զամենայն ինչ զոր վաստակեցին և գործեցի՝ հանի քեզ բաժին և տասանորդ, ըստ արդար վաստակոց իմ՝ մատուցի քեզ. իսկ դու գիտես, որպէս հաճոյ է քեզ՝ այնպէս եղիցին կամք քո։ Եւ բարկացաւ Տէր ի վերայ Կայենի. ապ մի հողոյ նման քամատարաց՝ զամենայն հունձն Կայենի ցորենեացն՝ ցրուեաց, և կորոյս զամենայն ինչս նորա, և հասկի միոյ ոչ գտաւ. կարկտիւ եհար զկայենի երեսն և սեւացոյց իբրեւ զդոծելի[1], և այնպէս մնաց երեսն սեւ։

Իսկ Հաբէլ մատուց զանդրանիկ գառն՝ Աստուծոյ. ձեռնատարած աղօթէր առ Տէր և ասէր. Տէր Աստուած, ստեղծող և արարիչ ամենայն բարութեանց, աղաչեմ զքեզ՝ ընկալ զնուէրս, որ մատուցանեմ քեզ բաժին՝ ի բարեստեղծեալ պարգեւաց քոց, զոր բաշխեցեր մեզ. (ի) քո բաշխեալ բարեացդ ի քեզ մատու-

1. Ածուխ։

ցանեմ ի հաճոյս։ — Իսկոյն քաղցր հողմն հնչեաց, և լոյս ծագեաց յերկնից և լուսաւորեցան երեսն Աբելի. և եկն յերկնից բարբառ որ ասէր. Լսելի եղեն աղօթքն քո, և ընդունելի եղեն ընծայն քո։ Եւ լուսափայլ հովանի եղեւ ի վերայ Հաբելի, և ընկալաւ զգառն Աբելի և վերացաւ յերկինս։

Իսկ Կայէն ոխացաւ ընդ Աբելի, կամէր սպանանել զնա՝ բայց ոչ գիտէր սպանանել, զի այլ ըսպանումն ոչ էր եղեալ։ Բայց Աբէլ ոչ գիտէր զչար խորհուրդն եղբօրն, և Աբէլ սիրէր զեղբայրն իւր, և հանապազ ուտէին և ըմպէին ի միասին և շրջէին։

Իսկ ի միում աւուր՝ ասէ Կայէն ցեղբայր իւր. Գընացուք ի դաշտն՝ շրջեսցուք։ Եւ ելեալ գնացին ի դաշտն, և կամէր Կայէն կապել զեղբայրն իւր. բայց Աբէլ ժիր էր աւելի քան զԿայէն, վասն այնորիկ ոչ յայտնել կարէր Կայէն զխորհուրդն իւր։ Սկիզբն արար խաղալ ընդ եղբօրն իւր՝ և արար գօտամարտիլ, և կշտի բռնել փորձիլ, զի տեսցէ յուժն իւր՝ յաղթել կարէ զնա. քանզի որ կշտի բռնեցին՝ վայր անկաւ և ոչ կարաց յաղթել զԱբէլ։ Եւ ելեալ Կայէն հայեցաւ աստ և անդ, և ետես մատն խաղողի բազում երկայն. իսկ Կայէն ասէր. Եկ եղբայր մատնաւ խաղաղասցուք[1]։

Ասէ Աբէլ. Ո՞րպէս խաղաղասցուք մատնեաւ։

Ասէ Կայէն. Դու գիւեայ[2] զծառս, և ես երեք մատնովս պատեմ զքեզ, տեսանեմ թէ կարիս կտրել զնա և արձակիլ. ապա ես գրկեմ զծառդ, և դու պատեա մատներաւդ ի վերայ իմ, տեսցուք զի ո՞վ կարէ կտրել զնա։

Եւ նա ուժով էր, այնու փորձեաց՝ թէ ո՞ւմ ուժն աւելի այ[3]։ Իբրեւ գնաց Աբէլ ի ծառն՝ Կայէն առեալ զուռն որթի և պատէր երեք պատ ձեռներովն և քամակովն. և

1. Այսպէս յօրինակին, որպէս և մեկնդ։
2. Ուղղագրն գրչեայ, որպէս և յստորեւ գնէ՝ գրչեմ զծառդ։
3. Գաւառաբար՝ այ, իմա՝ է։

ապա իմացաւ Աբէլ զչարութիւն եղբօրն. աղաչէր և ասէր. Եղբայր, արձակեա զիս ի կապէն։ Եւ Կայէն ոչ արձակէր, այլ պնդագոյն կապէր. այնչափ ուռով որ-թիւ պատեաց զնա ծառոյն՝ ոտից մինչեւ ցգլուխն։ Լայր Աբէլ և ասէր. Եղբայր, արձակեա զիս. այս ան-ցաւոր աշխարհիս համար մի հեղուր զարիւնն իմ. ես քեզ ի՞նչ չարութիւն արի, ընդէ՞ր բարկանաս ինձ. աշխարհս ամէն քեզ լինի։

Իսկ Կայէն ասա և անդ չրջէր թէ իրք մի գտցէ, և այնով սպանանիցէ զեղբայրն, և ոչ գիտէր թէ ո-րո՞յ տեղ է սպանելոյ։ Իսկ չարն սատանայ իբրեւ եղեւ երեկոյն, սեւ. գայլաքարաւ և քարածեծու-քար մի կայր, սուր իբրեւ ածելի, այնով սպանին մինն զմիւսն, և զսուր քարն ի վայր ձգեաց։ Եւ Կայէն ուսեալ ի նմանէ և առեալ զսուր քարն, և ե-կեալ առ Աբէլ. իսկ Աբէլ լայր, և ասէր. Ո՞չ ողորմիս մեր ծնողացն։ Իսկ Կայէն ոչ ողորմեցաւ նմա։ Իբրեւ եկն ի սպանումն՝ լալով ասաց Աբէլ. Եղբայր, բեր զերեսդ համբուրեմ. կարօտ չմնայ ի սրտիս. դու գիտես՝ դա-տաստանն Աստուծոյ։ Իբրեւ քարիւն կորէր զիբր-ճակն եղբօրն, յայնժամ եղբայրն ասաց. իմ մօրս ասես՝ զի զկաթն իւր հալալ արասցէ ինձ։ Քանզի քարն փոքր էր, հազիւ մինչեւ օգուտ ժամ մի մոր-թեաց։ Դարձեալ ի ժամ մորթելոյ ասէր եղբայրն. Ես գնացի յաշխարհէս և դու շահեա զսիրտ ծնողաց մերոց։

Իբրեւ սպանեաց զեղբայրն, (և) ուրախութեամբ եր-թայր. երեւեցաւ Տէրն ի ճանապարհին յիսուն կանգ-նաչափ բարձր, ասաց Կայենի. Ո՞ւր է եղբայրն քո։

Եւ նա լրբութեամբ ասաց. Ո՞վ ետ ինձ պահ՝ որ խնդրես յինէն։ – Վասն այն հարցանէր Աստուած՝ թե-րեւս մեղայ ասիցէ։ Իբրեւ ետես Տէրն՝ որ այնպէս ասաց Կայէն, բարկացաւ ի վերայ Կայենի և եօթն պատուհաս ետ Կայենի։

ա. Մէկ պատուհասն այն է, որ երկու կոտոշ բուս-սաւ ի վերայ գլխոյն։

բ. Երկրորդ պատուհասն այն էր, որ կոտոշն ձայ-

նէր և ասէր բարձր բարբառով. Թէ, Կայէն եղբայրասպան է։ Սար և քար և ձոր՝ ձայնէր և ասէր. Կայէն եղբայրասպան է։

գ. Երրորդ պատուհասն այն է, որ ոտիւք և ձեռաքն և ամենայն բոլոր անդամաքն դողդողայր իբրեւ զուռ։

դ. Չորրորդ պատուհասն այն էր, (զի) քան որ ուտէր ոչ լիանայր։

ե. Հինգերորդն պատուհասն այն էր, որ ինչ սիրտն ուզէր և յուտել չկարէր, և իբր Թէ ուտէր, ի վայր հեղոյր։

զ. Վեցերորդն պատուհասն այն էր, որ քուն չունէր՝ ոչ գիշերն և ոչ ցերեկն։

է. Եօթներորդն պատուհասն այն էր, որ Աստուած նմա մահ ոչ հրամայեաց, այլ ասաց Տէրն. Ով որ սպանիցէ զԿայէն, նա նորա պատուհասն ի վերայ ըսպանողին անկանիցի։

Եւ այնպէս մնաց մինչեւ ութ հարիւր և վաթսուն տարի. յետ անճար մնաց մնաց, (զի) մահուն փափաք ունէր՝ և ոչ մեռանէր։ Իսկ մորթի(ւ) մի վերէն էած և ծածկեաց զինքն։

Իբրեւ ել Ղամէք ի ձի, գնաց ի յորս. երեւեցաւ Կայէն ի հեռաստանէ կոտոշիւ և մորթիւ։ Իբրեւ տեսաւ Ղամէք, գիտաց Թէ եղջիւր[1] է. եհար նէտիւ աղեղան, և սպան զԿայէն։ Պատուհասն անկաւ ի վերայ Ղամեքայ։ Իսկ Ղամեքայ կինն բարի էր, աղաչեաց զԱստուած և ողորմեցաւ նմա Տէրն՝ վասն բազում արտասուելոյ կնոջն, բժշկեցաւ ցաւն և վերացաւ պատուհասն Ղամեքայ։

Իսկ Ադամ և Եւայ՝ (իբրեւ) իմացան զսպանումն Աբելի, լային և սգային բազում ժամանակս։ Քանի որ թաղէին զմարմին Աբելի՝ ելանէր յերեսս հողին. իսկ հանապազ արիւնն ոչ ցամաքէր, և ոչ հոտէր և ոչ որդնէր մարմինն։ Քանզի Աստուած Ադամայ ասաց հող լինի՝ և ապա իւր ծնունդն. պիտէր յառաջ Ադամ մեռանէր և

1. Այսպէս յոր. փոխանակ Եղջիւրի։

հող դառնայր, ապա ծնունդն նորա։ Մինչեւ ի մարմինն Աբելի՝ ոչ ոք էր մեռեալ, և այնու ոչ հողանայր և ոչ ցամաքէր արիւնն Աբելայ։ Մինչեւ Ադամայ մահն այնպէս անփորձ մնաց մարմինն, որպէս կենդանի ի քուն. (իսկ) երբ Ադամ մեռաւ, ապա թէ մարմինն Աբելի ի գերեզմանն մտաւ։

Բայց յորժամ որ Կայէն զԱբէլ եսպան, Կայէն զեօթն ցաւով կոծէր՝ վայ և եղուկ լայր դառնապէս. իսկ ծնողքն՝ Ադամ և Եւայ, տեսանէին զԱբէլ արեամբ շաղախեալ՝ և Կայէն պատուհասիւ վիրաւորեալ. իսկ Ադամ և Եւայ լային և ողբային վասն զաւակացն իւրեանց։ Մինչեւ երկերիւր տարի Ադամ ոչ մերձեցաւ ի կինն, ասէր՝ թէ վախեմ թէ այլ չարագոյն զաւակ ծնի իւրեանց կոծաւք։ Իսկ ողորմեցաւ Տէր, և առաքեաց աւետիք վասն Սեթայ, մխիթարեաց զԱդամ և զկինն իւր զԵւայ*։

ՎԱՍՆ ԱՒԵՏԵԱՑՆ ՍԷԹԱՑ

ԶՈՐ ՊԱՐՏ Է ՄԵԶ ՈՒՆԿՆ ԴՆԵԼ

Եւ քաղցրացաւ Տէրն ի վերայ Ադամայ, և առաքեաց զհրեշտակ իւր առ Ադամ, և ասէ. Մերձեցիր ի կին քո, զի լինի քեզ որդի փոխանակ Աբելի։

Ասաց Ադամ. Զկարեմ մերձենալ կնոջս. զի երկու անգամ մերձեցայ ի կինս, այն մեծ պատուհաս էր ինձ, քան զդրախտէն ի դուրս ելանելն իմ. զի զԱբէլ արեամբ տեսանեմ՝ սիրտս այրէ և կսկծայ. զայն թողի՝ և զկայենի պատուհասն կու տեսանեմ, արտասուք կու թափեմ. զի թէ այլ մերձենամ ի կինս, լինի ինձ կրկին նեղութիւն և տրտմութիւն։

* Դարձեալ ասա սկսանի՝ Մեհնաթիւն վասն գասանորդի, որ է թաւթն Ադամայ։ (Սիւնք ինն)։

Ասէ հրեշտակն. Մի երկնչիր Ադամ. քանզի տալոց է քեզ Աստուած որդի, և կոչեսցես զանուն նորա Սէթ, որ թարգմանի մխիթարանք. նա եղիցի զաւակ օրհնեալ և գլուխ նահապետաց, և մխիթարիս ի նմանէ. զի որչափ տրտմեցար վասն չարութեան Կայենին, նոյնչափ մխիթարիս ի Սեթայ։ Եւ բազմանայ զաւակ քո և զաւակ Սէթայ, և նոքօք լցցին աշխարհս. և ապա մի խառնակեսցեն Սէթայ զաւակքն ընդ Կայենայ, կամ այլ զաւակացն քոց՝ ընդ ազգին Կայենայ. (զի) երբ խառնին ընդ ազգս՝ բարի որդիքն քո չարանան, և զամենեսեան միատեղ պատուհասին։

Զի յայնժամ, որ հրեշտակն աւետիս ետ վասն Սէթայ, դեռ այլ զաւակ չունէր՝ բայց ի Կայենայ ազգէն։ Երեք հարիւր իննսուն կանայք կային, (և) քսանեւչորս այր՝ (երբ) որ Սէթ ծնաւ։ Երեսուն տարի էր ամուսնացեալ, երբ սպանեց Կայէն զԱբէլ. և Աբէլ այն տարին կամէր ամուսնանալ, բայց ոչ եղեւ, (այլ) կոյս նահատակեցաւ։ Իբրեւ ծնաւ Սէթ և այլ եղբայրքն նորա, մխիթարէին զնմանէ ծնօղքն՝ որ(ոց) հրեշտակն աւետեաց։ Եւ բազմացան ազգն Սէթայ և այլ եղբարքն. բայց հալածէին զազգն Կայենի և ոչ խառնակէին ընդ ազգին Կայենի, այլ սրբութեամբ կային։

Իսկ Սեթայ որդին՝ բարի պտուղն Ենովք, եհարց ի հօրէն՝ թէ պապն մեր Ադամ ընդէր տրտում (է)։

Ասէ Սէթ. Վասն ճաշակելոյ պտղոյն, որ ելաւ ի դրախտէն, վասն այն տրտում է։

Իսկ Ենովք ասէ ցհայրն. Հօր պարտքն պիտի որդին վճարիլ(–ել)։

Վասն այն ոչ ամուսնացաւ Ենովք։ Տնկեաց պտղի, այգի մեծ՝ լի ամենայն բարութեամբ. վաթսունեւչորս տարի սպասաւորեաց այգւոյն։ Ամենայն մարդ ճաշակէր ի պտղոյն. իսկ ինքն Ենովք՝ ոչ ճաշակեաց ամենեւին. այլ երկաթի սաղաւարտ ի գլուխն եդեալ, զի մի բարձր հայեսցի ի պտուղն ծառերոյն. քանզի վաթսունեւչորս տարի այգեգործ եղեւ և ոչ ճաշակեաց ի նմանէ։ Իսկ Աստուած հրամայեաց հրեշտակին իւրոյ՝

զի զնա մարմնով վերացուցին և եդին ի մէջ դրախտին, և է մինչեւ յայսօր։ Իսկ այլ որդիքն Սեթայ և Ադամայ, իբրեւ տեսին զԵնովք՝ որ կուսութեամբ և պահօք վերացաւ ի դրախտն. բազումք հրաժարեցան և ելին ի լերինս (և) կուսութեամբ ճգնէին։

Բայց (յ)ազգն Կայենի յոյժ բազմացան աղջկունք նոցա. զի մի մարդոյ հետ՝ հարիւր կանայս շրջէին և կուռէին ի վերայ մի մարդոյն՝ և խլէին ի միմեանց. զի մարդն սակաւ էր, (իսկ) կանայք և աղջկունք բազումք։ Ազգն Սեթայ և եղբայրք նորա՝ ոչ խառնէին ընդ նոսա, և սրբութեամբ կային ազգն Սեթայ։ Այնչափ բարի մարդ կայր. հինգհարիւրեւքսան կոյս և ճգնաւոր կային ընդ նոսա, և ոչ գոյր հնար խառնակելոյ ընդ ազգն Կայենի։

Իսկ աղջկունքն ազգին Կայենի, հնարիւք սահմանեցին զկարմրադեղն և զսպիտակադեղն, (որոք) զերեսս կարմրացուցանէին և սպիտակացուցանէին. զունքն քաշեցին և զաչսն դեղեցին և ծարուր դրին, զծամն և և զվարս(ա)ն սահմանեցին, և այլ պէսպէս սազ և երգ բանս սահմանեցին. զոտն և զձեռն խինեցին և կարմրացուցին, և այլ զարդարանաք զմարմնս իւրեանց զարդարեցին և պճնեցին։ Եւ այնպիսի պճնեալ զդեսիւք և ազգի ազգի եղանակաք գնացին ի լեառն խնդալով և պարելով, ծափ տալով և փողս հնչեցուցանելով, երկայն ածելով և պէսպէս ձայնիւ եղանակելով՝ խառնեցան ընդ որդւոցն Սեթայ, զամենեսեան խաբեցին։ Հինգհարիւրեւքսան ճգնաւոր էին, (և) մի Նոյ միայն մնաց կոյս, և այլ ամենեքեան խառնեցան ընդ նոսա և չարացան քան զնոսա, և եղեն պղծագործ քան զշուն. այլ ոչ հայր զդուստրն ճանաչէր և ոչ մայր զորդին ճոկէր, ոչ քոյր զեղբայր. և այնպիսի կենաք հանապազ շնային, և ոչ յիշեցին զԱստուած։

Իսկ վասն բազում մեղաց նոցա՝ բարկացաւ Աստուած ի վերայ նոցա, և կամեցաւ ջրով խեղդել զնոսա։ Հրամայեաց Աստուած Նոյի տապան շինել, և ամուսնանալ։ Իբրեւ եկն հրեշտակ և ասաց Նոյի ա-

մուսնանալ, և Նոյ ոչ կամէր ամուսնանալ, զի հինգ-հարիւր տարեկան էր։

Եւ ասաց հրեշտակն. ԶԱստուծոյ հրամանքն պիտի կատարես. զի զաշխարհս ամենայն ջրով անցուցանելոց է, զամենեսեան խեղդելոց է, և (դու) լինիս նոր Ադամ. զի ի զաւակէ քումմէ լցցի աշխարհս։

Ասէ Նոյ. Ո՞րչափ է աւուրց կենաց իմ ապրիլ յաշխարհս։

Ասէ հրեշտակ. Հինգհարիւր տարի ապրեր ես, չորս հարիւր տարի այլ պիտի ապրիս։

Ասաց Նոյ. Չորս հարիւր տարին՝ իբրեւ զերազ գիշերոյ անցանի. վասն միոյ անցաւոր երազոյ՝ ընդէ՞ր ապականեմ զկուսութիւնս իմ։

Ասէ հրեշտակն. Հրամանք Տեառն է, ո՛չ կարես արգելուլ։

Ասէ Նոյ. Ոչ գիտեմ՝ եթէ մաքուր կին մնացեալ է, զի առից զնա ի կնութիւն։

Ասէ հրեշտակն. Կուս մի կայ մաքուր, անուն նորա Նոյեմզառա. զնա առ քեզ ի կնութիւն։ Եւ սկիզբն արար (արա՛) տապան շինելոյ. հարիւր յիսուն կանգուն երկայնութիւն և յիսուն՝ լայնութիւն, (և) երեսուն կանգուն բարձրութիւն։

Եւ գնաց ի նմանէ հրեշտակն։ Եւ Նոյ ամուսնացաւ։ Եւ ի տապան շինէին, կացին ձայնէր, ուրաքն ձայնէր, աղոցն ձայնէր, փայտն ձայնէր՝ թէ Ահաւասիկ ջրհեղեղ երանէ և ապականէ զաշխարհս։ Երբ լուաւ Նոյ զձայնն, յայնժամ յարտասուս հարեալ և աղաչեաց զԱստուած, զի քսանեւեօթն օր համբերեսցէ նմա։ Եւ իբրեւ էլ Նոյ ի վերնատունն, երկու տախտակն եւ (եղ) ի վերայ մէկ մէկու. իսկ տախտակն ձայնէր՝ թէ Ջրհեղեղ կու գայ։ Ամենայն կենդանիքն երկու երկու եկին և մտան ի տապանն, և սուրբ անասունքն եօթն եօթն։ Իսկ անբան անասունքն իմացան զջրհեղեղն, և մարդիք ոչ իմացան։

Եւ եմուտ Նոյ ի տապանն, ինքն և որդիք իւր. փակեաց զդուռն և զհերթոն կղրեաց և ծեփեաց. բացան սահանք երկնից, և ջուրն էլանէր ի ներքուստ և

և վերուստ ի վայր թափէր։ Բազումք կամեցան փախ-
չել և մտանել ի տապանն, (այլ) ի ճանապարհին խեղ-
դուեցան։ Մինչեւ քառասուն օր բարձրացաւ ջուրն
և կոխեաց գծայրս լերանց. (և) մինչեւ ի մի տարին
տապանակն ի վերայ ջրոյն կեցաւ, և եկն դադարեաց
ի վերայ լեառն Մասիսայ։

Եւ յետ քառասուն աւուր՝ Նոյ բացեալ զպատուհան
տապանակին, և արձակեաց ագռաւ մի, զի գնացեալ
նշան բերցէ. և նայ գնացեալ ի ճաշակումն գէշերքուն,
այլ ոչ դարձաւ։ Իսկ (ապա) արձակեաց զաղաւնին, և
գնացեալ աղաւնին, չրջեալ ի գլուխս լերանց [illegible] եալ
երեք ծաղիկ և բերեալ նշան մատոյց (մատ[illegible]) Նոյի։
Իսկ Նոյ արձակեաց զամենայն թռչունս։

Եւ իբրեւ եղեւ երեք ամիս, բացեալ զտապանն,
ետես զի լերինք և բլուրք ցամաքեալ էին. բայց դաշ-
տքք ջրով ծածկեալ էին։ Արձակեաց զամենայն կեն-
դանիսն։ Իսկ (յ)անասնոց սրբոց և (ի) թռչնոց, որ
եօթն եօթն մտեալ էին, եօթնէն մին մատոյց բա-
ժին Աստուծոյ. և խնդրեաց յԱստուծոյ, զի այլ մի
ջրով անցուցանել զաշխարհս. (և) ընդունելի եղեն
[illegible]ատարագ նորա, և կատարեաց Տէր զինդիրքն նո-
ցա։

Եւ խնդրեաց ի Տեառնէ և ասաց. Տուր ինձ նշան
հաշտութեան։

Եւ ասաց Տէրն. Հայեաց ի յարեւելից կողման։

Եւ ետես Նոյ նշան աղեղան՝ կարմիր, կանանչ իջեալ
էին։ Եւ ասաց Աստուած Նոյի. Այս եղիցի նշան հաշ-
տութեան իմոյ ընդ որդիս քո. երբ տեսանեն զաղեղն՝
գիտասցեն (զի) քաղցրացեալ է Տէր ի վերայ նոցա.
զի այս եղիցի ուխտ իմ ընդ քեզ և ընդ որդիքն քո,
(որ) այլ ոչ ածից ջրհեղեղ ի վերայ աշխարհիս. (իսկ)
թէ չար գործեն՝ այլ ուրիշ պատուհանիս խրատեցից
զնոսա։

Իսկ Նոյ առեալ զօրհնութիւն Աստուծոյ, էջ ի լեռ-
նէն և բնակեցաւ (յ)Ակոռի։ Երբ բազմացան զաւակ նո-
րա՝ իջին (յ)իջեւան և անդ ապրեցան երեք հարիւր տա-
րի։ Եւ երկու որդիքն Անդուն և Մանեռուն և (մինս)

որդիքն՝ ամեցան և բազմացան և լցին զնախ իջեւան, և նովաւ լցին զաշխարհս։ Եւ անուն տեղւոյն կոչեցաւ Նախիջեւան. և այն է գերեզման Նոյի։ Այլքան առ այս*։

* Այսպէս ըստ սովորութեան սկիզբն լինի՝ Վասն Ներսէսեան Բանէ որ պարտէ ասել։ (Սիւնք չորս)։ Ապա ի վերայ բերէ կարմրիւ զՀինգերորդ մասն. Դարձեալ փաղբաց— Արարածն է Վերայ արդարոց և զարարչին Աստուծոյ. յորում քարոզանման թուէ զնահատանն սկսեալ յԱբելայ – հանդերձ իւրաքանչիւր մի մի յարակից դիպոք, – մինչեւ ի Քրիստոս. ուր յետ թուարկելոյ զամենայն անօրինական կիրսն անցողաբար, որպէս զայլոցն, առնու հառել երկարօրէն զյարութենէ նորա, որ թէպէտ և բերիցէ զնմանութիւն իմն զանկանոն գրոց, այլ յոչ պատշաճել հատորիս՝ ի բաց թողաւ, մանաւանդ զի և կեղակարծ իսկ է քարոզ՝ թէ պատմութիւն լինել։ (Սիւնք հնգետասան)։

ԺԲ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

ԱԴԱՄԱՅ ԵՒ ԵՒԱՅԻ ՆԱԽԱՍՏԵՂԾԻ ԹԷ ՈՐՊԷՍ ԱՐԱՐԻՆ

ԵՏ ելանելոյն Ադամայ ի դրախտէն, առեալ զԵւայ, հրամանաւն Աստուծոյ, և բնակեցան յանդիման դրախտին. զի միշտ տեսանելով ըզդրախտն, հանապազ տառապէին փափաքանաւք ի դէմ դրախտին։ Եւ աւր ըստ աւրէ կարաւտութիւնն յաւելոյր, և փափագ վայելչութեան դրախտին նեղէր զնոսա։ Յորժամ եղեւ երեկոյ, եմուտ արեգակն և եղեւ մութն և խաւար գիշեր. յայնժամ անկաւ ահ մեծ ի վերայ նախաստեղծիցն, և այնպէս կարծեցին՝ թէ այն էր մահն, որով մեռանելոց էին. և ահիւ մեծաւ՝ սարսեալ տագնապէին, մինչ որ լուսացաւ և ծագեաց արեգակն։

1. Ի տպագրել զՊատմութիւնս զայս, հարկ է մեզ յայտնել զսրտագին գոհութիւն մեր առ ազնուազարմ ասպետ անգղիացի Փրեդերիկ Կ. Կոնիբեար. որ ի 1895 ամի վերատին յայց եկեալ վանացս ընդ մեծուհի տուանոյ իւրոյ, — որ և սա հայասէր և հայագէտ է՝ հանդէս առն իւրոյ, — և տեղեկացեալ զի միաբանութեանս պատրաստեալ էր ի տպագրութիւն Զամանակագրութեան զիրս այսոսիկ, մատոյց մատգիր և զայս՝ որպէս և Զիւրոն Ադամայ՝ յամբողջութիւն հատորիս. զորոց էջս ինքն լուսանկարու հանեալ էր ի գրչագրէն յիշեալ ծիծին։ Աներկբայ եմք, զի ընդ մեզ և միահամուռ քանասէր ընթերցողք չնորհակալարտ զայսմ ազնուութեան ասպետի առնս։

Ապա դիւրացան սակաւ մի յերկիւղէ մահուն։ Քանզի ասաց Աստուած՝ թէ մահու մեռանիցիք. և այն բաւթ, սաստիկ վտանկէր զնոսա. և էր այն ապաշխարութիւն Ադամայ և կնոջ նորա Եւայի։ Զմտաւ ածեալ՝ յիշէին զվայրն վայելչութեան, և զդրախտն փափկութեան. զգեղեցկութիւն ծառոցն, և զզուարճութիւն տնկոցն. զպայծառութիւն վարդիցն, և զանուշահոտութիւն ծաղկանցն. զանթառամութիւն տերեւոցն, և զքաղցր ճաշակումն պտղոցն. զբարի հընչմունս հրեղինացն, և զքաղցրանուագ երգս հրեշտակացն. զախորժ բարբառ երկնաւորացն, և զհեշտալի եղանակս անմարմին զաւրացն։ Զայս ամենայն կորուսեալ Ադամայ. . . . . .

. . . . . .

առ Ադամ հրեշտակապետն Գաբրիէլ, և ասաց նմա, մերձենալ յԵւա վասն որդեգրութեան։ Եւ ետ Ադամայ ճեւղ մի ի ծառոց դրախտին, և ասաց. Այդ քեզ նշան; որ ծնանի քեզ Եւայ որդի մխիթարութեան. և կոչեսցես զանուն նորա Սէթ, փոխանակ Հաբելի՝ զոր սպան Կային։

Եւ յառաջ քան զսպանանելն Կայենի՝ զՀաբէլ. յաւուր միում տեսիլս պատմեաց Եւայ Ադամայ և ասաց՝ թէ Տեսի գիշերս յերազի, որ զարիւնն Աբելի՝ Կային ի բերանն առեալ՝ ըմպէր։ Եւ Հաբէլ աղաչէր զնա թէ թող յարենէդ և նա ոչ լսէր, և ոչ մնայր ի փորն, այլ փըսխէր ի դուրս զարիւնն Հաբելի։ Իբրեւ լուաւ զայս Ադամ յԵւայէ, ի կարծիս իմն անկաւ վասն բանին։ Եւ զի յառաջ քան զպատմելն Եւայի՝ զերազն, լուաւ Ադամ ի Կայենէ՝ որ ասէր ցՀաբէլ՝ թէ Եկ երթիցուք ի դաշտի անդ և տեսցուք զդրախտն իմ, զոր տնկեցի փոխանակ դրախտին, վասն որոյ ապաշաւեն և լան անդադար ծնաւղքդ մեր։ Եւ գնացեալ Ադամ փութանակի և ետես զի սպանեալ էր Կային զԱբէլ զեղբայր իւր. և ինքն Կային հեռացեալ էր ի տեղւոջէն։ Եւ թէ ո՞րպէս եսպան, և կամ զի՞նչ աւրինակաւ, այս է՝ զոր ասեմս. Տարեալ Կային զՀաբէլ յիւրատունկ դրախտն, և կալեալ կապեաց զնա ձեռս յետս ընդ ծա-

ռով միոյ. և առեալ քար մի գայլախազ, և այնքան քարազոհ արար զանմեղ պատանին, մինչ որ աւանդեաց զհոգին։

Եւ գնացեալ Ադամ, ետես այնպէս. և յոյժ սգացեալ՝ ելաց դառնապէս։ Եւ ապա աղէկիզեալ սրտիւ և դառնացեալ հոգով՝ գնաց Ադամ ասել Եւայի, զի եկեալ ի միասին լայցեն զՀաբէլ, և ամփոփեալ թաղեսցեն զնա։ Եւ յորժամ առեալ զԵւայ և եկն անդ, այլ ոչ եգիտ զմարմինն Հաբելի, զի ամփոփեալ էր ի հրեշտակաց Աստուծոյ. և երկիր կլեալ էր զարիւն նորա, որ բնաւ ոչ երեւեցաւ։ Յայնժամ կալաւ անհնարին և սաստիկ տրտմութիւն զԱդամ և զԵւայ, վասն Հաբելի որդւոյն իւրեանց։ Եւ յերկար սգով կացին ի տրտմութեան ամս հարիւր և քսան։ Մինչ որ հրամանաւն Աստուծոյ ծնան զՍէթ որդի մխիթարութեան։

Եւ ի սպանանելն Կայենի զՀաբել, եկն Գաբրիէլ առ Ադամ՝ և ասաց նմա. Դուք մի հարցանէք զԿային վասն Հաբելի. այլ Աստուած հարցանէ զնա և պատժէ։ Որպէս և արարն իսկ։ Վասն զի եհարց Աստուած զԿային, թէ՝ ուր է Հաբել եղբայրն քո։ Եւ նա ստեաց Աստուծոյ և ասաց. Ո՛չ գիտեմ։ Եւ Աստուած վասն այն եհարց զԿային, որ զզլանայր և մեղայ ասէր։ Իսկ նա լրբութեամբ ասաց. Ոչ գիտեմ. մի թէ պահապան իցեմ եղբաւրն իմոյ։ Եւ ասաց նմա Աստուած. Պահապան չես, սպանաւղ ընդէ՞ր եղեր։ Եւ եաւթն պատիժ էած ի վերայ նորա։ Նախ զի ասաց՝ թէ Անիծեալ լիջիր։ Երկրորդ՝ ի վերայ երկրի՝ ուր հեղեր զարիւն եղբաւր քոյ։ Երրորդ՝ Գործել զերկիր վաստակաւք և աշխատանաւք։ Չորրորդ՝ Եւ երկիր ոչ տայ քեզ զպտուղ իւր, զի արեամբ արդարոյ ներկեր զնա։ Հինգերորդ՝ Երերեալ լիցիս որպէս զծառ ի հողմոց։ Վեցերորդ՝ Տատանեալ լիցիս իբրեւ զծով՝ որ ծփի յալեաց։ Եաւթներորդ՝ զի նշան եդ ի վերայ նորա Աստուած՝ որ ամենայն ոք գիտենայր զնա, և նշանն՝ պիսակն էր։ Այլ և եղջեւր բուսաւ ի ճակատն. զի ընդ որ գնայր, եղջեւրն

գոչէր և աղաղակէր, թէ՝ գայ Կային եղբայրասպանն։

Եւ այնպէս եկեաց Ցնաց ամս ութ հարիւր։ Դողդոջէր միշտ, և երերալի շրջէր ի վերայ երկրի՝ անդադար զցայգ և զցերեկ։ Եւ այնու առաւել սաստկացաւ սուգն Ադամայ և Եւայի։ Նախ՝ զի մեղան Աստուծոյ։ Երկրորդ՝ զի մերկացան ի լուսոյն։ Երրորդ՝ զի արտաքսեցան ի դրախտէն։ Չորրորդ՝ զի յերկիրս ահիծից անկան։ Հինգերորդ՝ զի ընդ մահու գրաւեցան։ Վեցերորդ՝ զի յԱստուծոյ աւտարացան։ Եաթներորդ՝ զի ի չնորհաց դատարկացան։ Ութերորդ՝ զի անասնոց հաւասարեցան։ Իններորդ՝ զի որդեկորոյս եղեն, և աղեաց կսկիծ ընկալան։ Տասներորդ՝ զի զանդրանիկ որդին իւրեանց տեսին եղբայրասպան, դատապարտեալ և պատժեալ յԱստուծոյ։ Այս ամենայն անմխիթար սուգ էր Ադամայ և դառն կսկիծ Եւայի, և աւելորդ՝ զղջման և ապաշխարութեան։ [illegible] նախաստեղծիցն։

Որ հանապազ լային [illegible] դրախտին զամենայն աւուրս կենաց՝ իւրեանց [illegible] անէին. Ո՛վ պանծալի դրախտ, ո՛վ գեղեցիկ ծաղկոյ[illegible] ո՛վ անուշահոտ բուրաստան, ո՛ վայելուչ այգի, ո՛վ աստուածատունկ դարաստան. ողորմեցարուք, ողորմեցարուք զրկելոյս ի ձէնջ. կարաւտելոյս ձերոցդ բարեաց. ողորմեցարո՛ւք վըտանկելոյ ի ձեր դիմաց։ Ո՞վ տայ ինձ տեսանել զձեզ, ծառք բարեբերք. ո՞վ տայ մեզ տեսանել զձեզ, ծաղկունք անուշահոտք. ո՞վ տայ մեզ տեսանել զձեզ տերեւք անթառամք. ո՞վ տայ մեզ հաշակել ի ձէնջ, պըտուղք քաղցրահամք. ո՞վ տայ մեզ մտանել ի քեզ, դրախտ աստուածատունկ. ո՞վ տայ մեզ հանգիստ ի քեզ, վայրդ վայելման։ Ո՜վ աչք՝ որ հայեցայք ի պըտուղն, ընդէ՞ր ոչ խաւարեցայք։ Ո՜վ ոտք՝ որ գնացիք ի ծառն մահաբեր, ընդէ՞ր ոչ կոտորեցայք։ Ո՜վ ձեռք՝ որ հատիք զպտուղն, ընդէ՞ր ոչ գաւսացայք։ Եւ այսպիսի լալով և վայիւ եկեաց Ադամ, սգով և տառապանաւք ամս ինն հարեւր և երեսուն. և ապա հիւանդացաւ ի փորոյն։

Եւ ժողովեցան առ Ադամ՝ ամենայն ուստերք և դըստերք նորա վաթսուն, զորս ծնեալ էր Եւայ Ադամայ,

ծնունդս երեսուն՝ արու և էգ, որ էին ամենեքեան վաթ-
սուն։ Ժողովեցան որդովք և դստերաւք իւրեանց՝ առ
նախաստեղծն մարդն Ադամ։ Եւ նա խիստ ի վտանկի
կայր. և քաղէին ոգիքն ի սաստիկ ցաւոյն, որ կալեալ
էր զանձն նորա։

Իսկ Եւայ և ամենայն ծնունդք նորա՝ լային և ող-
բային զԱդամ. և Ադամ կայր առաջի նոցա չարա-
չար տանջեալ ի հիւանդութենէ իւրմէ։ Յայնժամ ասաց
Եւայ ցԱդամ. Տէր իմ, ասա զժամանակ իմ՝ թէ [illegible]
մեռ՞մ ես յաշխարհիս, թէ չուտով մեռանիմ։ Զի՞նչ [illegible]
նեմ զկնիքս, զի ես ոչ ինչ իմանամ։ Ասէ Ադամ. Ո՛չ յ[illegible]
մեռ, այլ ի միասին մեռանիմք և դիցեն զիս և զքեզ
ի մին տեղի։ Բայց դու այժմ ե՛րթ աղաչեա զՏէր, զի
թերեւս տացէ ի ծառոյն աւծմանէ, որ այնու աւծանէք
զանձն իմ, զի դիւրանամ ի ցաւոցս։

Եւ յարուցեալ Ե[illegible] զԱԷթ, և գնաց աղաչել
զՏէր, տալ պտուղ [illegible] ի ծառոյ դրախտին, վասն
առողջութեանն Ադ[illegible] հանդիպ[illegible] նոցա ահագին
գազանն Բեհմովթ. յ[illegible]եցաւ [illegible] Սեթայ և կա-
մէր ուտել զնա։ Յայնժամ ճիչ բա[illegible]ալ Եւայ, աղաղա-
կեաց ընդդէմ գազանին և ասաց. Սան[illegible] զբերան քո
և մի իշխեսցես մերձենալ ի ծառայդ Ա[illegible]ուծոյ. յիշեա՛
զի ընդ մերով իշխանութեամբ էիր, և մի համարձակիր
վնասել զորդիդ իմ։ Յայնժամ եթող գազանն զԱԷթ զոր
կալեալ ուտէր և ասաց Եւայի. Զեզ հնազանդ յայն-
ժամ էի, որքան դուք հնազանդ Աստուծոյ էիք, և ըզ-
պատուիրանս նորա պահէիք. իսկ ի յանցանելն ձերում
զհրաման արարչին, յարձակիմք ի վերայ ձեր և խրս-
տանամք, և ընդդէմ դառնամք ձեզ։ Զայս հրաման-
նաւն Աստուծոյ խաւսեցաւ գազանն և ասաց ընդ Եւայ
մարդկային բարբառով, խոժոռ խոլոր և ահարկու դի-
մաւք. և ապա թողեալ զնոսա գանց արար և գնաց։

Եւ մինչ դեռ մայրն և որդին, Եւայ և Սէթ, աղօթէին
յանդիման դրախտին, եկն առ նոսա հրեշտակապետն
Գաբրիէլ և ասաց. Արիք և գնացէք զի մեռաւ Ադամ
յերեկոյին ժամուն ընդ մտանել արեւուն։ Եւ նոքա
երկեալ գնացին լալով և հառաչանաւք, և տեսին զԱդամ

մեռեալ, և արարին կոծ մեծ ի վերայ նորա։ Եւ յետ երեք ժամու անցանելոյ ի վերայ մեռանելոյն Ադամայ, մինչ դեռ լայր և ողբայր Եւայ, նոյնժամայն ցաւեաց գլուխ նորա և ասաց. Վա՛յ գլուխս, վա՛յ գլուխս. և նա եւս մեռաւ ընդ Ադամայ։ Ի ստեղծանելն ընդ առաւաւտս ուրբաթուն ստեղծաւ Ադամ, և յերրորդ ժամու աւուրն՝ ստեղծաւ Եւայ ի կողէն Ադամայ։ Իսկ ի մեռանելն, մեռաւ Ադամ յերեկի ժամու ուրբաթուն. և [illegible] մեռաւ յերրորդ ժամու գիշերուոյն։ Իսկ որդիք և [illegible]երք նոցա, սգացին զնոսա աւուրս երեսուն. և [illegible]ացեալ զսպեցին զնոսա, և պատեցին անոյշ խնկաւք և մաքուր կտաւաք և եդին ի փայտեայ տապանի։ Եւ պատուէրին զաստուածաստեղծ մարմինս նախաստեղծիցն՝ որդիք նոցա, և որդոց որդիքն՝ մինչեւ ի Նոյ։

Իսկ յետ մեռանելոյն Ադամայ հազար երեք հարիւր և երկոտասան ամաց, եկն[illegible]ղն, և Նոյ . . . . . մ[illegible]անեալ կորիցեն ի ջուրցն հեղեղ[illegible]ցեւ յելա[illegible] ի տապանէն, ետ զմարմինս նախաստեղծիցն [illegible]գ որդին իւր ի Սէմ։ Եւ նա առեալ տարաւ ի վիճակն իւր, որ արդ եւս կոչի Շամայ տուն[illegible]ր է Սեմայ տուն։ Եւ անդ ամփոփեաց զնոսա, դնելով զԵւայ ի յայրն Բեթղահեմի, ուր յետոյ ծնաւ Քրիստոս ի սուրբ Կուսէն Մարիամայ ի վերայ գերեզմանին Եւայի։ Եւ զԱդամայն եդ ի Գողգոթայ, ուր խաչեցաւ Քրիստոս ի Հրէիցն ի վերայ գլխոյն Ադամայ. և արար զփրկութիւն ի մէջ երկրի։ Վասն այսորիկ կարգեցաւ և սահմանեցաւ յառաջին սրբոցն և ի հոգելի արանցն յաւուր ուրբաթու յիշատակել զննջեցեալսն ի Քրիստոս։

Որոյ ողորմութիւնն հասցէ մեզ և մեր ննջեցելոցն և ամենայն հաւատացելոց ի Տէր. մանաւանդ՝ ստացողաց սուրբ գրոցս Ստեփանոսին և Թումային, և իւրեանց քեռոյն Գրիգորին և հաւրեղբաւրն Զաքարին և Աւետիս քարտիս կոկողին, և ծնողաց նոցին. ամէն։

ԲԱՆԻՔ ԱԴԱՄԱՑ ԱՌ ՍԷԹ*

Ասէ Ադամ ցՍէթ. Որդեակ, ո՛չ է այս բնակութիւնս մեր. զի այս բնակութիւն գաղանաց և անասնոց էր. և մեր բնակութիւնն յԵդեմ ընդ արեւելս ի դրախտն էր։ Զի եստեղծ զմեզ Աստուած և եդ ի դրախտին, և պատուիրեաց մեզ յորո՛յ ուտել ի պտղոյն և յորո՛յ չուտել. (իսկ) մեք ո՛չ պահեցաք զպատուիրանն (և) մերկացաք (յ)աստուածային փառացն (և) զրկեցաք ի դրախտէն։

Եւ Սէթ որդին մխ[illegible]թեան զբանն զայն լուեալ ի հօրէն և ի մի[illegible] և երթեալ՝ զքառասուն տիւ և զքառասուն գիշերս հաց ո՛չ [illegible]եր և ջուր ո՛չ էարբ։ Եւ ասէ առ Տէր յաղօթելն իւրում. Ամենակալ, ամենակարող Տէր, կատարեա ի [illegible]արի զխընդրուածս իմ։ Եւ առ ժամայն տեսանէր զ[illegible]ետակն, զի գայր և ունէր ճիւղ մի ուրախութեան ի ձեռին իւրում. և ետ ի Սէթ, և ասէ. Այդ է մխիթարութիւն հօր քում։ Եւ Սէթ գոհանայր զտվողէն կենդանութեան զՔրիստոսէ, որ արար և կատարեաց զխընդրուածս նորա ի բարի։

Եւ առեալ զճեղն զայն Սէթ, տարաւ առ հայրն իւր Ադամ, և ասէ. Հայր, այս ի բնակութենէն քումմէ (է)։

Եւ առեալ Ադամ զճիւղն զայն՝ եդ ի վերայ աչաց և բացան աչք նորա, և հայեցեալ տեսանէ զճիւղն, զի

* Զայս եւս մեզէն յարմարեցաք, զի գտաք զայս պատուական է թիւ 57 դրչագրի վանացս (Ոսկիփ. Ա) առանց ամենեւին խորագրի։ Զհետ սորա զան նոյնչափ ինչ բանք խրատականք, զոր ի բաց յապաւեցաք։

(յ)այն ծառոյն էր՝ յորմէ զմահ ճաշակեաց։ Եւ ասէ ցորդին իւր. Որդեակ իմ Սէթ. այս ի այն ծառոյն է՝ յորմէ հրամայեաց մեզ Տէրն չուտել մեզ։

Եւ ասէ Սէթ ցհայրն. Հայր, գիտեա՞ զի որպէս մահարար է, նոյնպէս կենդանատու և լուսաւորիչ եղեւ։

Եւ օրհնեաց Ադամ զԱստուած և զՍէթ զորդին իւր, և փոխեցաւ ըստ հրամանի Տեառն ի հող՝ յորմէ ստեղծաւ։

Եւ յետ ժամանակաց անցելոց, Սէթ զբանն ընդ Ենովս խօսեցաւ և ասէ. Այսպէս ասէր հայրն իմ Ադամ, թէ ոչ էր այս բնակութիւնս մեր, այլ այս բնակութիւնս գաղանաց էր և այլ ստեղծուածոցն, և մեր բնակութիւնն յԵդեմ ընդ արեւելս էր։ Եւ յորժամ ստեղծ Աստուած զհայրն մեր և եդ զնա ի դրախտին, և պատուէր ետ նմա. յորոյ ուտել ի պտղոյն և յորոյ չուտել. իսկ նորա [illegible]սհեալ զպատուիրանն, մերկացեալ յ[illegible]ստուածայի[illegible]ոյն և արտաքս անկեալ ի դրախտէ[illegible] հաւասար եղեալ անասնոց անբանից։

Եւ Ենովքբանս զայս ի միտ էառ, և զքառասուն տիւ և զքառասուն գիշեր ամենեւին ոչ ճաշակեաց։ Եւ յետ այնորիկ տնկեաց դրախտ վայելուչ, և զամենայն պտղաբեր տնկեաց ի նմա։ Եւ կացեալ ի դրախտին այնմիկ հինգհարիւր և քառասուներեւերկու ամ, և (յ)ետ այնորիկ մարմնով յերկինս համբարձաւ, և աստուածային փառացն և լուսոյն արժանաւորեցաւ։

ԺԳ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌՕՏ

ԵՂԻԱՑԻ ՄԱՐԳԱՐԷԻՆ

Եղիայ Թեսպացի էր ազգէ քահանայիցն, քան-զի Թեսբի տուրք էր քահանայիցն։ Անունն հօր նորա Ասոն, և մօրն նորա Սուբաքա։ Եւ յորժամ ծնաւ, տեսին հայր և մայր նորա՝ զի արք հրեղէնք ողջագուրէին զնա, և ի հրեղէն խանձարուրս պա-տէին զնա, և կերակուր հրոյ տային ուտել նմա։ Եւ եկեալ հայրն նորա Ասոն՝ պատմեաց յԵրուսաղէմ քա-հանայիցն. և նոքա ասեն ցնա. Մի երկնչիր, զի եղիցի բնակութիւն նորա լոյս, և նախանձ նորա ընդունելի առաջի տեառն, և հրաման նորա վճիռ հաստատուն։

Եւ յորժամ զարգացաւ Եղիա՝ հեռացաւ ի սիրոյ աշխարհիս, և զգեցաւ մաշկեղէն, և գնացեալ բնա-կեցաւ յանապատի՝ կուսութեամբ և ճգնութեամբ, սրբութեամբ, անհանգիստ աշխատութեամբ՝ պաշտէր զԱստուած կենդանի։ Եւ եղեւ ի ժամանակին այն-միկ թագաւորեաց ի վերայ տան ազգին Իսրայելի Ագայաբ որդի Զամբրեայ, ազգէն Եփրեմի. և էառ իւր կին զԵզաբէլ, դուստր Յուբաղա Սիդոնացոց թա-գաւորին, անօրէն և անհաւատ և կռապաշտ։ Եւ զի յա-ռաջն աստուածապաշտ էր Աքայաբ, և զի կինն յաղ-թող էր կախարդութեամբ, խաբեաց զնա և դարձոյց ի կռապաշտութիւն։ Եւ փոքր համարեցաւ յաչս նորա երկու ոսկի երինջքն՝ որ կային ի Դան և ի Բեթէլ, զոր արար արքայ Յրոբովամ որդին Նաբատայ. այլ յաւել մեղս ի վերայ մեղաց, և չինեաց զբագինն Բա-

հաղու ի Սամարիա. ինքն մոլորեցաւ, և տասն ապ
մոլորեցոյց ի կռապաշտութիւն։ Եւ արար մարգարէ
Բահաղու՝ ութ հարիւր յիսուն. չորս հարիւր ուտէին
ի սեղանոյ Թագաւորին, և չորս հարիւրն ուտէին
սեղանոյ Եզաբելայ։

Եւ իբրեւ լուաւ զայս Եղիայ, էջ յանապատէն
Կարմեղոս լեռնէն, և եկն պատերազմել ընդ Աքա-
յաբու։ Եւ կոչեաց Աքայաբ զԱզան բեթելացին, և
հրամայեաց չինել զԵրիքովի քաղաք, զոր քակեաց Յեհ-
սու և անէծ զչինողս նորա, զի օրինակ էր զժոխոց։

Եւ ասէ Եղիա. Ընդէր տաս չինել զանիծեալ քաղաքն
Ասէ Աքայաբ. Շատ մի խօսիլ. ձեր մեծն և առաջնորդն
Մովսէս, նորա անէծքն ինչ զօրութիւն ունի, որ աշա-
կերտին՝ ինչ զօրութիւն ունենայ։ Մովսէս ասաց, թէ
յերբ կուռք պաշտէք՝ զերկինքն քանց զերկաթ, զգե-
տինն քանց պղինձ կապեմ, ոչ թողում երկինքն ցող
տայ, և ոչ երկիր պտուղ։ Ասաց Աքայաբ, թէ ես լու
կուռք պաշտեմ. թէ ձեր հաւատդ զօրութիւն ունի՝
թող այլ չիգայ անձրեւ։—Իբրեւ զայս լուաւ Եղիայ
դառնացաւ հոգով. Կենդանի է Տէր, եթէ եղիցի յայսմ
ամի անձրեւ կամ ցող, թէ ոչ բան ի բերանոյ իմոյ

Եւ անկաւ ի վերայ ծնկացն, երաց զգլուխն՝ և ասաց
առ Աստուած. Տէր Աստուած, քո հրամանաւ կապեմ
զերկինքն, այլ մի տալ անձրեւ մինչեւ խնդրեցիր ի քէն

Զի գարնանային էր ժամանակն, և կապեցաւ եր-
կինքն երեք տարի և կէս, ամպ կամ անձրեւ կամ
ցող այլ ոչ երեւաց, և աւերեցաւ ամենայն երկիր
և անցան ի սովոյ մարդ և անասուն։ Եւ ասէ Տէր
ցԵղիա. Արի և գնա՝ ի հեղեղատն Յորդանանու ա-
նապատն, և ես կերակրեցից զքեզ անդ, զի կամի Ե-
զաբէլ սպանանել զքեզ։ Եւ գնացեալ եմուտ փոքրիկ
այր մի, և կաթէր նուազ ջուր ի յայրին, և նստաւ
ի վերայ անձաւին. և երկու ագռաւք բերէին Եղիայի
հաց և միս, օրն երկու անգամ, ի ժամ ճաշուն և ընթ-
րեացն, և ինքն ուտէր, և ի փշրանացն տայր ագռաւ-
ցըն. և թէ ուստից բերէին, ի դրախտէն՝ ի ձեռն ագռա-
ւուցն կերակրեցից. (յ)այտ է՝ ի տեղ ուրեք պատրաստել

ստուած, և ագռաւքն բերէին հրամանաւն Աստուծոյ, և
կերակրէին զԵղիայ։ Եւ այնպէս եկաց անդ երեք տարի։
Եւ Եղիա՝ որ նախանձախնդիր էր օրինացն, ինքն
անց զօրէնքն, զի անսուրբ ագռաւքն կերակրէր.
այլ օրէնադիրն ընդ օրինաք ոչ մտանէ. երբ հրամա-
նաւն Աստուծոյ էր՝ սուրբ և հալալ էր, և մեղք ոչ
համարեցաւ նմա. այլ պեղծ ագռաւ՝ ի խորհուրդ հե-
թանոսաց (էր). որք անցեալ ընդ Յորդանան՝ սրբեցան
մկրտութեամբ, յաւազանին խորհրդով, և մաքրեցան
և կերակրեցին զԱստուած բարի գործովք, և ուրա-
խացուցին զԱստուած աղօթիւք։ Եւ իբրեւ ետես Աս-
տուած՝ թէ ինքն Եղիա կերակրի, և այլոց քաղցե-
լոց ոչ ողորմի, կտրեաց զհացն և ցամաքեցոյց զՅուրն,
և այնպէս եկաց երեք օր անսուաղ. և սաղաղակեաց
առ Աստուած։ Եւ ասէ Տէր. Սովեցուցից զքեզ՝ որ զսո-
վելոց և զքաղցելոց զխիղճն իմանաս. արի՛ գնա առ
Աքայաբ, և զքո դուիտ խառակէ[1]. զի տաց անձրեւ ի վե-
րայ երկրի. դու ոչ ողորմիս, ասէ, այլ ես ողորմիմ
ստեղծուածոց իմոց։

Եւ ասէ Եղիայ. Տէր, սոված ոչ կարեմ գնալ, տուր
ինձ հաց, զի կերայց և գնացից։

Եւ ասէ Տէր. Ոչ տաց քեզ հաց. այլ գնա ի Սարեբ-
թայ գիւղն՝ որ է ի Սիդոն երկիրն, և անդ այրի
կնոջ հրամայել եմ կերակրել զքեզ։ Եւ տարակուսեաց
Եղիայ. Թէ զգիւղն գտից, ասէ, զտուն այրոյն որպէս
գտից։ Եւ խնդրեաց Աստուծոյ՝ զի ի մուտ գեղջն ա-
ռաջ այրի կինն հանդիպեսցի նմա։ — Եւ գնացեալ հան-
դիպեցաւ այրոյն, և ետես զի ի սովոյն մաշեալ էր և
եղեալ դարուիի[2]. զգեցեալ թամբատակ մի որ էր[3] և
քաղէր կրկուտ։ Եւ ասէ Եղիայ ընդ միտս իւր. Սայ
թէ հաց ունէր՝ ինքն ուտէր. և դարձեալ տարակու-
սեցաւ. Հրաման Տեառն է, ասէ, զիարդ լինի սուտ։
Վասն որոյ ամաչեաց խնդրել ի նմանէ ջուր և հաց,

1. Դուիտ (տաւի՛դ, տաւա՛դ), կարծեմ թրքերէն իմանայցէ զՎՃ.
խակ խառակէ — յառակէ. որպէս թէ ասիցէ. Ա զՎՃդ յոգա-
կիս՝ առարտեա։ — 2. Գուցէ թուրք զաղոռ՝ վոխտ։ — 3. Թե-
բուս կամ փորէր կամ որ(ն)էր լեալ իցէ ի բուն օրին.։

այլ խնդրեցից (ասէ) ջուր. և յորժամ երեր զջուրն՝ ապա-
խնդրեաց հաց. և նա երդուաւ և ասէ. Կենդանի էր
Տէր, եթէ գոյ հաց ի տան աղախնոյ քո. այլ կայ ար-
մի ալիւր ի սափորի, և սակաւ մի իւղ ի սրուակի,
և քաղեմ կրկուտ՝ զի արասցուք հաց և ուտեսք, և
մեռանիմք ես և որդի իմ։ Եւ ասաց. Եղիայի հօր-
տունն աւերի. յորմէ հետէ կապեաց զերկինքն, ան-
ցաք ի սովոյ մարդ և անասուն։ Եւ Եղիայ ընդ միտս
իւր ասէ. Վա՜յ քեզ Եղիա, թէ որչափ անարգեն զքեզ՝
և զտուն հօր քո, վասն զի կապելոյն յերկնից։ Եւ ա-
սէ. Ես եմ Եղիա, գնա՛ արա զալիւրն հաց, և նախ
ինձ բեր՝ իբրեւ քահանայի։ Այսպէս ասէ Տէրն. Ա-
լիւրն ի սափորէ մի պակասեսցի, և իւղն ի սրուակէն։

Եւ հաւատաց կինն և գնացեալ արար բլիթ հաց,
և երեր կերակրեաց զԵղիա. և դարձաւ ի տուն իւր,
և ետես՝ զի լցեալ էր ամանն ալիւրոյն և եղոյն, և
եկն մեծարեաց զԵղիայ, և տարաւ ի վերնատունն իւր.
և վեց ամիս անդ եկաց Եղիայ։

Եւ որչափ ուտէին՝ ալիւրն և իւղն ոչ պակասէր.
այլ դարձեալ տեսանէր զի (՞ւր) ամանն ալիւրոյն և իւ-
ղոյն իբրեւ զաղբիւր յորդախաղաց, և իբրեւ զծառ
պտղաբեր՝ որ ուտեն զպտուղն (և) ոչ պակասի. այլ որ-
պէս անապատին զկերակրիչս իւր զադուսան կերա-
կրէր, նոյնպէս և աստ զկերակրիչս իւր կերակրէր։ Եւ
զի այրի կինն (ունէր) ընտանիք, և վասն սովոյն առաքեալ
էր այլ գաւառ ի Ջրարբի տեղիս. իբրեւ բազմացաւ
հացն՝ առաքեաց և կոչեաց զնոսա, և զամենեսեան կե-
րակրէր Աստուած ի ձեռն Եղիայի։

Եւ եղեւ զի հիւանդացաւ որդի այրոյն և մեռաւ։
Արդ որպէս տրամեցոյց զնա Աստուած ի ձոր անդր
վասն ցամաքելոյ աղբիւրն. այլ տրամութիւն նորա
ուրախութիւն փոխեցաւ, նոյնպէս և աստ ուրախու-
թիւն փոխելոց է տրամութիւն նորա, վասն ուրախու-
թեան և յարութեան մանկանն։ — Եւ ասէ կինն մե-
ղադրելով. Մտեր ի տուն իմ յիշել զանօրէնութիւնս
իմ. իբր թէ՝ դուն եղար պատճառ մահուան մանկանն
իմոյ։ Եւ ասէ Եղիայ. Տէր, դու չարչարեցեր և սպա-

ներ զորդի նորա, և սա ինձ մեղադիր լինի։ Եւ ասէ կինն. Տուր ցիս զորդին քո, և առեալ զմեռեալ մանուկն՝ տարաւ ի վերնատուն, և կողմնեցոյց ի մահճակս իւր, և երեք անգամ կշռեցոյց և խնդրեաց Աստուծոյ դարձուցանել զհոգի մանկանն ի մարմինն իւր, և յարոյց զնա խորհրդով սուրբ Երրորդութեանն, օրինակ Քրիստոսի՝ որ ի ձայն փողոյ դարձուցանելոց է զամենայն հոգի առ մարմինն իւր։ Եւ կոչեաց զկինն այրի, և ետ ի նա կենդանի զորդին իւր։ Եւ ասէ կինն, այժմ գիտացի ճշմարիտ՝ զի այր Աստուծոյ ես դու։ Այս է. զամենայն զոր ինչ և կամիս՝ կարող ես առնել դու, իբրեւ իշխեցող մահու և կենաց, կապող և արձակող երկնից։

Ասեն՝ թէ Ունան մարգարէն էր մանուկն այն զոր յարոյց Եղիա. և այնպէս ի մէջ այլազգեաց փառաւորեցաւ. Ցունայնն[1] Աստուծոյ ի ձեռն Եղիայի, և ճշմարիտ զօրութիւն աստուածութեան նորա յայտնի եղեւ ամենեցուն։ Բայց տունն Աքայաբու այսմ չէին գիտակ, թէ անդ է Եղիայ. վասն որոյ ասաց նմա Տէր. Երթ և երեւեաց Աքայաբու, և տաց անձրեւ ի վերայ երկրի։ Եւ նա ոչ երկեաւ յԵզաբելայ. այլ գնաց և երեւեցաւ նախ Աբդիու (յ)իսնապետին Աքայաբու, զի ելեալն էին ի քաղաքէն (յ)եզր գետոց և առուաց չբրէին գտանել խոտ անասնոց՝ ձիոց և ջորոց։

Եւ ասէ Եղիա ցԱբդիու. Գնա՛յ պատմեա զգալուստ իմ թագաւորին։

Եւ ասէ Աբդիու. Ընդէ՞ր առնես զիս գլխապարտ թագաւորին. զի ծառայ քո երկիւղած ի Տեառնէ է։ Եւ պատմեաց Աբդիու վասն հարիւր մարգարէիցն՝ զոր կերակրեաց Աբդիու, և պահեաց ծածուկ յայրի մի՝ մի ի սովի անդ. (և զի) իբրեւ իմացաւ Յեզաբէլ և կամէր կոտորել զնոսա, փոխեաց զնոսա Աբդիու այլ խորագոյն այր. այլ և պատմեաց վասն հարիւր մարգարէիցն՝ զոր եպան Եզաբէլ։

Իբրեւ լուաւ Եղիայ, ասէ. Մի՛ հոգար, ես առնում զվրէժ արեան մարգարէիցն՝ կոտորելով զմարգա-

1. Այսպէս յօրին. ամ գուցէ ուղիղ էր՝ անունն։

բէան Բահաղու. բայց դու երթ պատմեա Թագաւորին։

Եւ ասէ Աբդիու. Տէր, որ ոչ մնաց երկիր՝ գիւղ և քաղաք և անապատ, որ ոչ խնդրեաց զքեզ Թագաւորն։ Եւ ասաց. Թէ ես երթամ պատմեմ՝ ահա Եղիայ. դու ցէ առնու զքեզ հոգին՝ և տարցէ ցայլ անապատ տեղիս, որպէս ի հեղեղատն. և ես սուտ լինիմ և մահապարտ։

Եւ ասէ Եղիայ. Կենդանի է Տէր, որ ոչ փախչիմ կամ Թագչիմ ես, այլ դու երթ պատմեա։

Յայնժամ գնաց Աբդիու առ Թագաւորն, և ասաց. Ահա Եղիա։ Իբրեւ լուաւ՝ բեկաւ ողն նորա, և եկն ընդառաջ Եղիայի։ Աբդ թէպէտ ընդ առաջն գնալովն պատուէր մարգարէն, այլ բանիւ բերանոյ իւրոյ անարգեաց զնա։

Իբրեւ ետես զԵղիայ, ասէ. Ուստի՞ դաս խանգարիչ տանն Իսրայելի։

Եւ ասէ Եղիայ. Խանգարիչ դու և տուն հօր քո, զի անունդ ինձ կու տաս։

Եւ ապա սկսաւ Թագաւորն աղաչել զնա, զի տացէ անձրեւ ի վերայ երկրի, և նա ասէ. Ո՛չ այդպէս. այլ առաքեա ժողովեա զամենայն Իսրայէլ ի Կարմեղոս։

Եւ իբրեւ ժողովեցան (, ասէ). Ընդէ՞ր կաղայք երկու կողմն. եթէ Տէր (է) Աստուած՝ գնացէք զհետ նորա, եթէ Բահաղ է Աստուած՝ գնացէք զհետ նորա։ Եւ ասէ. Ով ոք Տեառն իցէ՝ առ իս դարձցի։

Եւ եօթն հազար երիտասարդ դարձին առ Եղիա, եկին և ասեն, թէ մեք աստուածապաշտ ենք, և ոչ ենք պաշտել զԲահաղ, պաքել կամ համբուրել զնա։ Եւ ասեն եօթն հազարքն. Ընդ քեզ ի մահ ենք և ի կեանք. զմեր կեանքս եղեալ ենք ի ճանապարհս քո։

Եւ ասէ Եղիա առ Թագաւորն և առ ժողովուրդն. Աբասցուք պատարագս զուարակ մի. Թէ ի վերայ ձեր պատարագին՝ յերկնից հուր իջնու, իմ գլուխս եօթն հազարովս գնայ. և Թէ (յ)իմ պատարագն իջնու հուր, տուք ի ձերս իմ զմարգարէքն Բահաղու, զի կոտո-

բեցից զնոսա. և ապա արձակեմ զերկինքն և տաց ձեզ անձրեւ ի վերայ երկրի։

Եւ նոքա ասեն. Այդպէս լիցի։ Ուխտ եդին, երդուան, և դաշինս կռեցին Թագաւորն և ժողովուրդն առ հասարակ։ Եւ ասէ Եղիայ ցմարգարէսն Բահաղու. Դուք բազում էք, նախ դուք արարէք զպատարագն։

Եւ նոքա սկսան կանգնել սեղան, և ի ժամ կանգնելոյ սեղանոյն՝ ոչ ետուն Թոյլ ումեք մերձենալ. այլ փորեցին լաղմ[1] ծածուկ և Թագուցին անդ այր մի կրակով, և եդին ծծումբ ի ներքոյ ողջակիզեաց փայտին և խուիւ ցողունին և ասեն ցայրն, Թէ յորժամ աղաղակեմք, Թէ լուր մեզ Բահաղ, դու գաղտաբար ի ներքուստ զխանձող հրոյդ ի ծծումբն հացու։ Եւ յորժամ պատրաստեցին զողջակէզն, ապա սկսան աղաղակել ուԹ հարիւր յիսուն մարգարէքն Բահաղու. Լուր Բահաղ, լուր մեզ Բահաղ ի ձեռն հրոյ։

Եւ Աստուած յայտնեաց Եղիայի զծածուկ հնարագիտութիւն նոցա։ Եւ զոր օրինակ յաղօթս եկաց ի վերնատունն և դարձոյց զհոգի մանկանն ի մարմինն իւր, նոյնպէս և աստ աղօթս եկաց ծածկաբար և մերկեաց զհոգին ի մարմնոյն և մեռաւ այրն ի գետնափորին, որ կամէր կորուսանել զհաւատացեալս ճշմարտին Աստուծոյ։

Իբրեւ այրն մեռաւ և էանց ժամ մի և նոքա սուտ մարգար(է)անային, սկսաւ ունչս ունել Եղիայ, այպանէր և կատակէր զնոսա ասելով. Բարձր աղաղակեցէք, խոր ի քուն է Բահաղ, լինի Թէ զարԹնու, և կամ խուլ է, այլ բարձր կանչեցէք, լինի Թէ լսէ և կամ Թէ զբօսանս սէյրանս[2] իցէ երԹեալ, համբերեցէք մինչեւ դարձցի ի զբօսանաց։ Եւ նոքա սկսան սրով խանչարով[3] կտրատել զինքեանք և հեղին բազում արիւն և ասեն. Ի զուր պաշտեցաք զքեզ Բա-

1. Թուրք բառ, փոխան հայոյն ալան։
2. Թրքածանց հոմանիշ մերոյս՝ զբօսանք։
3. Թուրք և այս, որ նշանակէ՝ երկաթոյրի։

հաղ. վասն քո զկեանս ատեցաք և զմահ սիրեցաք, ի տանց և ազգականաց հեռացաք. զի՞նչ օգուտ է մեզ երբ այժմն ոչ լսես մեզ։

Եւ որպէս սուտ էր աստուածպաշտութիւն նոցա, նոյնպէս սուտ էր մարգարէութիւն նոցա. և ոչ ունէին կանխագիտութիւն, զի թէ գիտացեալ էին թէ սուտ լինի բան նոցա և կոտորին սրով, ոչ գային նոքա անդ. և այնպէս աղաղակեցին ի վերերորդ ժամէ աւուրըն մինչեւ ցինն ժամն. և ոչ գոյր բարբառ և լսող աղօթից նոցա։

Եւ առեալ Եղիայ զՀեռանէ Թագաւորին՝ և տարեալ եցոյց զայրն մեռեալ ի գետնափորին։ Եւ ապա սաստեաց ի քուրմս, և ասէ. Այդ գործ առ իս հասեալ է. և ի բաց եղեն, և ապա ասէ ցժողովուրդն. Մատերուք առ իս, և մատեաւ առ նա Թագաւորն և ամենայն ժողովուրդն. Տեսէք, ասէ, զի ոչ գոյ խաբէութիւն առ իս, որպէս առ քուրմս Բահաղու։

Եւ ա՛ռ Եղիայ երկոտասան վէմ, և չինեաց սեղան Տեառն՝ յանուն երկոտասան ազգին, և առ զուարակ մի և յօշեաց երկոտասան մասունս, և եհան ողջակէզս և եդ զչերդս ի վերայ սեղանոյն և զմիս զուարակին ի վերայ չերտիցն, և փորեաց շուրջ ու բոլոր սեղանոյն գրկաչափ, և ասէ. Առէք ինձ չորս սափոր և բերէք ջուր. և նոքա բերին և էարկ զջուրն ի վերայ ողջակիզին և ասէ. Կրկնեցէք և նոքա կրկնեցին, և ասէ. Երեքնեցէք, և երեքնեցին. և լցաւ շուրջ ու բոլոր սեղանոյն իբրեւ զծով։ Եւ ասաց. Այժմ ի զատ կացէք։

Վասն այնորիկ առաջի ժողովրդեանն կանգնեաց զսեղանն, զի աչօք տեսցեն և գիտասցեն, թէ ոչ գոյ խաբէութիւն առ նա։ Եւ ջուրն զի հակառակ է հրոյ՝ եցոյց զառաւել զօրութիւն ճշմարտին Աստուծոյ, եցոյց թէ ոչ է թագուցեալ հուրն ի ներքոյ սեղանոյն, նման մարգարէիցն Բահաղու։

Եւ եղեւ ժամ մատուցանելոյ պատարագին, աղաղակեաց Եղիա յերկինս ի վեր առ Աստուած և ասէ. Տէր Աստուած, լուր ինձ ի ձեռն հրոյ, և արարի ես զգործս

զայս, լուր ինձ և այժմ ի ձեռն հրոյ, զի ծանիցէ ժողովուրդս՝ թէ դու միայն ես Աստուած ճշմարիտ, և ես ծառայ քո. և դարձուցես զսիրտ մոլորեալ ժողովրդեանս առ քեզ։ Եւ անկաւ հուր յերկնից սաստիկ որոտմամբ ի վերայ պատարագին, և զուարակն և զվէմն և զջուրն ի բաց լափեաց, և լցաւ երկիրն անուշահոտութեամբ։

Իբրեւ տեսին ժողովուրդն՝ անկան ի վերայ երեսաց իւրեանց և կանգնեցան աղաղակեցին և ասեն. Արդարեւ նայ միայն է ճշմարիտ Աստուած։

Եւ ասէ Եղիա. Կալարուք զմարգարէսն Բահաղու, զի մի ոք փախիցէ. և կալան զնոսա եօթն հազար հաւատացեալքն, և իջոյց զնոսա ի հեղեղատն Կիսոնի, և կոտորեաց առ հասարակ։ Հարիւրին գլուխն որ կտրեց՝ թուլացաւ ձեռքն, և ապա եկին հաւատացեալքն և ձեռամբն Եղիայի կտրէին զգլուխս նոցա, և այսպէս կոտորեաց ութ հարիւր մարգարէսն Բահաղու. և ոչ ետ այլոց սպանանել զի մի Եզաբէլ սպանցէ զնոսա. միայն ինքն ասէր. Ես միայն լինիմ (,ասէ,) յարեան տէր Եզաբելի։

Եւ նա յետ կոտորածին եւ ի լեառն Կարմեղոս արձակել զերկինքն, և աղօթս եկաց առ Աստուած, և ասաց աշակերտին. Նայեաց ընդ ճանապարհս ծովուն արեւմտից. նայեցաւ դարձաւ և ասէ. Ոչինչ է, և ասէ Եղիայ. Աղէ դարձիր դու եօթն անգամ։ Եդ ծունր յանդիման ժողովրդեանն և աղօթս եկաց առ Աստուած, զի գիտասցեն թէ աղօթից նորա արձակի երկինքն. զի յուսուցցէ ժողովրդեանն՝ թէ առ ո՞ պարտ է կալ աղօթս, և դարձեալ եօթն անգամ յաղօթս եկաց զի ուսուցցէ, թէ առաջին նուագին ոչ լինի լսելի՝ ոչ է պարտ յուսահատիլ կամ ձանձրանալ յաղօթից, այլ անչափ ժամել մինչեւ առնուցու զխնդրելին. և ապա եօթն նուագին՝ ասաց պատանին թէ տեսի ամպ որպէս զթաթ մարդոյ ձեռին՝ զի իջանէր ի ծովէ՞ և հանէր ջուր ի ծովէն։

Եւ ասաց Եղիայ պատանոյն. Ե՛րթ և ասա Աքայաբու, զի լծեսցէ զկառս և անկցին ի տուն իւր, զի մի հասցէ նմա անձրեւ։

Եւ ասէ Աքայաբ. Որդեակ, պարզ է երկինքն և ոչ գոյ նշան անձրեւի։ Եւ մինչ նոքա յայսր և անդր ընթանային ի լծել զկառան՝ յանկարծակի մթացան երկինք և գայր անձրեւ սաստիկ հողմով, և երթայր Աքայաբ լալով ի տուն իւր։

Որոյ սուրբ մարգարէին աղօթիւքն ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս Խոճայ Աւագին և եղբօրն Խոճայ Վասլին. և խնդրեմք ի յԱստուծոյ որ զիւր դեռաբոյս ծաղիկն՝ զորդին իւր զՄկրտիչն՝ անփորձ և անսասան պահէ Տէրն Քրիստոս. և զգիրքս ընդերկար ամաք վայելել ի խորին ծերութիւնն հասուցանէ. որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։ Հա(յր մեր։)

ՔԱՐՈԶ* ՅՈՒՆԱՆՈՒ ՄԱՐԳԱՐԷԻՆ

ՈՐ Ի ՆԻՆՈՒԷ ՔԱՂԱՔԻՆ

Ի Նինուէ էր քաղաք մեծ և Ասորեստան, զոր շինեաց Նինոս թագաւոր և կոչեցաւ ըստ անուան իւրոյ Նինուէ։ Եւ այս Նինոս թագաւորս ունէր կին անուն զՇամիրամ. և երկուցեալ Նինոս ի կնոջէն վասն ան(յ)ագ պոռընկութեան նորա, եթող զթագաւորութիւնն և փախեալ յԵլլադայ. և Շամիրամ թագաւորեաց ամս հնգետասան, և յետոյ սպանաւ յորդոց իւրոց։

Եւ եօթն օրն գնայ(ր) մարդ ի Բաբելոնէ ի Նինուէ՝ ի կողմն հարաւոյ յարեւելից. և էր տեղին պարարտ և բարեբի, նման երկրին Սոդոմայ. ուտէին և ըմպէին և բռէին զմարմինն՝ կերակուր անքուն որդանց. ի բաց թողին զսրբութիւնն, և զարդար ամուսնութիւնն, և հետեւեցան պոռընկութեանն. յԱստուծոյ աչացն ելան և բարկացուցին զԱստուած. (որ) և թէպէտ բարկանա(յ) մեղաւորին՝ խնայէ, և ոչ կամի պատուհասել, այլ մնայ դարձի և ապաշխարութեան, որպէս ասէ. Ոչ կամիմ զմահ մեղաւորին, այլ զդառնալն և զկեալն. վասն այն խնայեաց ի Նինուէ, և կամեցաւ նախ քարոզ առաքել, և թէ ոչ դառնան՝ ապա պատուհասել։

Եւ ասէ Տէր ցՈՒնան մարգարէ. Գնայ ի Նինուէ քաղաք մեծ, և քարոզեսջիր անդ ապաշխարութիւն, զի եկ աղաղակ նոցա առաջի իմ։

Եւ Յունան ոչ կամեցաւ գնալ վասն երկու պատճառի. առաջին, զի ոչ կամէր քարոզել այլ ազգաց և լինել ընդ անթլփատս, (զի ասէր). Քարոզեմ, զիմ ծառն ծարաւ թողում զայլոցն ջրեմ՝ զի՞նչ օգուտ է ինձ. և երկրորդ պատճառ. Գիտեմ, ասաց, որ դու ողորմած ես, երկայնամիտ և զղջանաս ի վերայ մարդկան. ես գնամ, ասաց, քարոզեմ՝ թէ քաղաքս կործանի. նոքա զղջան և ապաշխարեն, և դու ոչ կործանես. իմ մարգարէութիւնն անկատար մնայ, և իմ անունս սուտ մարգարէ լինի. մեռածջ լաւ եմ՝ քանց անունս սուտ մարգարէ լինի։

Վասն այդ երկու պատճառիդ ոչ կամեցաւ գնալ, այլ էջ ի Յոպպէ և եմուտ ի նաւ ընդ վաճառականացն և կամեցաւ փախչել ի Թարսիս։ Եւ իբրեւ եմուտ ի նաւ, էարկ Տէր Աստուած խռովութիւն և աղէկոծութիւն ի ծովն, և սկսան իւրաքանչիւր աղաղակել առ չաստուածս իւր և ոչ դադարէր ծովն, այլ եւս առաւել շարժէր ի խռովութիւն. և Յունան քնեալ ի խորշ մի նաւին ննջէր և խորդայր, և զարթուցին զնա և ասեն. Զի՞ ննջես, արի կարդայ ըզՏէր Աստուած քո, զի թերեւս ապրեցուցցէ զմեզ և մի կորիցուք։ Եւ ոչ դադարէր ծովն ի խռովելոյ, և արկին զկերակուրն ի ծովն և ապայ զբեռինս առ ի թեթեւացուցանել զնաւն, և ոչ լինէր խաղաղութիւն։

Եւ ասեն. Արկցուք վիճակս և տեսցուք վասն ո՞յր մեղայ է չարիքս այս ի վերայ մեր։ — Եւ արկին վիճակս, և ելվիճակն Յունանու։

Եւ ասեն ցնայ. Ի՞նչ մարդ ես, յորմէ՞ ազգէ կամ յորմէ՞ ժողովրդենէ։

Եւ ասէ Յունան. Ծառայ Աստուծոյ եմ ես և ըզՏէր յերկնից պաշտեմ, որ արար զերկիր։

Եւ նոքա երկեան երկիւղ մեծ, զի գիտացին թէ յերեսաց Աստուծոյ փախուցեալ է՝ քանզի պատմեաց նոցա, և ասեն ցնա. Ընդէ՞ր արարեր զայդ, և կա-

մեցան զնաւն յետ վարել և ի ցամաք հանել և ոչ կարացին, և ասեն. Քաւ լիցի, Տէր, մի՛ ածեր ի վերայ մեր արիւն անպարտ, զի դու որպէս կամեցար և արարեր։

Եւ ասէ Յունան. Արկէք զիս ի ծովդ և դադարի մրրիկդ ի ձէնջ։

Եւ առին զՅունան և արկին ի ծովն. և ապա խաղաղացաւ ծովն, և նոյնժամայն հրամայեաց Տէր կետին՝ մեծ վիշապ ձկանն, և եկուլ զՅունան։ Եւ արքն ելին ի ցամաք, զենին զոհս Տեառն և խընդրեցին զթողութիւնն յանցանաց։ Եւ առեալ վիշապըն զՅունան էջ ի խորս երկրի, և տարեալ ծովն պատեաց զաշխարհն խափշկաց, և հնդկաց գետովն՝ երեր ի Պարսից ծովն, և Պարսից ծովովն՝ եհան ի գետն Սարանկաս յական Թարթեղն, (որ) հնգետասան աւուր ճանապարհ էր հետեւակի։ Եւ էր Յունան ի փոր կետին զերիս տիւս և զերիս գիշերս, կանգնեալ բազկատարած կայր աղօթս կենդանի՝ զօրութեամբն Աստուծոյ։ Եւ յետ յերից աւուրց բերեալ վիշապն զՅունան ի դէմ Նինուէ քաղաքին, եթուք ի ցամաքն՝ երից աւուրց ճանապարհ հեռի ի քաղաքէն, և ինքն դարձաւ ի տեղի իւր։ Եւ Յունան զերկիրն ոչ ճանաչէր, զի գիտասցէ Յունան՝ թէ չկարէ մարդ փախչել ի յԱստուծոյ, զի (յ)ամենայն տեղիս հասանէ ամենայզօր ձեռն նորա։

Եւ եղեւ բան Տեառն կրկին անգամ առ Յունան և ասէ. Արի՛ գնայ ի Նինուէ քաղաք մեծ, և քարոզեսջիր անդ ապաշխարութիւն։ Իբրեւ գնաց Յունան երից աւուրց ճանապարհ, եհաս ի քաղաքն, սկըսաւ քարոզել և ասել. Ահա երեք աւուրք և Նինուէ կործանեսցի։ Եւ տեսին բնակիչք քաղաքին զերեսն Յունանու պայծառ քան զարեգակն, և հուր բոցածաւալ ելանէր ի բերանոյ նորա. և ընթացեալ պատմեցին թագաւորին և ասեն. Այր մի օտար և ահեղակերպ եկեալ է, և այսպէս քարոզէ։ Եւ ասէ թագաւորն. Ճըշմարիտ է բանք նորա։

Եւ իբրեւ նա զայս ասաց, սկսաւ քաղաքն երե-

բալ. և զառաջինն կամեցաւ փախչել, և իջեալ ամպ հրեղէն իբրև զպարիսպ շրջապատեաց զքաղաքն, և ոչ ոք կարաց փախչել։ Ասէ Թագաւորն. Մի երկնչիք. այն Աստուածն որ առաքեաց զմարգարէն, թէ կամէր զկորուստն մեր՝ իսկոյն կործանէր, և ոչ առաքէր մեզ քարոզ և մարգարէ. այլ վասն այնորիկ առաքեաց, զի քարոզութեամբ մարգարէին խրատեսցէ զմեզ, զի զղջասցուք ի մեղաց և ապաշխարեսցուք, մեք ի մեղաց դառնանք՝ Աստուած ի բարկութենէն։

Եւ քարոզեցաւ ի Նինուէ ի Թագաւոր(է)ն և ի մեծամեծաց իւրոց, թէ Ամենայն մարդ, այր և կին, ծեր և տղայ՝ զերիս աւուրս մի ճաշակեսցեն, և անասնոցն ճարակ մի տայցեն, և մայրքն տղայոցն ըստինք մի տայցեն։ Եւ ամենեքին քուրց զգեցան՝ Թագաւորն և իշխանքն, և բոլոր քաղաքն ամենայն։

Ամպն աղջամղջին՝ և որոտայր և կայծակունս տայր։ Եւ նոքա սկսան քաջալերել զմիմեանս և ասէին. Աստուած գթած է, մարդկային[1], անտես չառնէ ըզգործս ձեռին։ Տղայքն զմայրս հարցանէին՝ թէ երբ գայցէ օրն այն վերջին, որ մեր քաղաքս կործանի։ Պատասխանեալ մայրքն ասէին, տղայոցն զայս յոյս դնէին. Աստուած գթած է, ողորմած, անտես չառնէ իւր ծառային։ Ծնողքն զաւակացն ասէին. Դուք աղաչեցէք զԱստուած՝ լինի թէ ձեր ողորմութենէդ մեք այլ ազատիմք։ Եւ դարձան ամենեքին բոլոր սրտիւ առ Աստուած, և զղջացան ի չարեաց իւրեանց և ասէին. Ո՞ գիտէ ապաշաւեսցէ Աստուած և դարձցի ի բարկութենէ իւրմէ։ Եւ այնպէս զկուրծսն ծեծելով լային և ողբային ի մէջ խաւարին։

Եւ էլ Յունան ի քաղաքէն ի մէջ հրեղէն ամպոյն և ոչ վնասեցաւ. և նստաւ հանդէպ քաղաքին, տեսանել զկատարածն և կամէր զի կործանեսցի քաղաքն և կատարեսցի մարգարէութիւնն իւր։

Իսկ բնակիչք քաղաքին, երեք օր զտիւ և զգի-

1. Այսպէս է ի միակ մեր օրինակին, ուր թէ ոչ պակասէ ինչ, գուցէ նշանակիցէ մարդասէր։

չեր զմիմեանս ոչ ճանաչեցին. այլ անսուաղ՝ մարդ և անասուն, զղջմամբ և (յ)արտասուս ապաշխարութեամբ՝ զաստուածասաստ պատուհասն յետ դարձուցին։ Եւ յետ երից աւուրց վերացաւ ամպն և դադարեաց երերումն, և ծագեաց նոցա արեւ և փարատեցաւ մահուն երկիւղ և տրտմութիւն։ Եւ նոքա սկսան օրհնել զԱստուած և գոհանալ զնմանէ։

Եւ տրտմեցաւ Յունան և անկաւ տապ զգլխովն նորա և քաղէին հոգիք նորա։ Եւ ասէ Աստուած ցՅունան, թէ կարի՞ տրտմեալ ես։ Եւ ասէ Յունան. Ո՞չ այս այն բանք են մինչ ի յերկրին իմում ասէի ես. զի գիտէի ես, զի դու ողորմած ես և գթած ես և զղջանաս ի վերայ չարեաց մարդկան։

Տէրն կամեցաւ օրինակաւ յանդիմանել զանողորմ բարս նորա, և ի միւս առաւօտուն բուսաւ դդմենի մի, եւ և արար հովանի գլխոյն Յունանու. և նա նստաւ ընդ հովանեաւ նորա և մխիթարեցաւ փոքր մի, և իբրեւ անց այն օրն ի միւս այլ օրն հրամանաւն Աստուծոյ՝ որդն հողային եհար զդդմենին և չորացաւ և անկաւ տապ զգլխով նորա և քաղէին ոգիք նորա։

Եւ ասէր Յունան. Լաւ էր ինձ մեռանել քան զայսպիսի կեանքս։

Եւ ասէ Տէր ցՅունան, թէ կարի՞ տրտմեալ ես վասն դդմենոյն։

Եւ ասէ Յունան. Կարի տրտմեալ եմ, զի այն էր իմ մխիթարանքն։

Եւ ասէ Տէր. Դու խնայեցեր ի դդմենին որ չեղեր ժամ մի աշխատ ի նմին, այլ ի գիշերի եղ և ի միւս գիշերն կորեաւ. մի դդմենոյ կորուստն քեզ այնպէս դժարեցաւ և կսկիծ թվաց, ասաց բարերարն, ես ո՞նց չխնայեմ ի Նինուէ քաղաք մեծ, (յ)որ բնակեալ են աւելի քան երկոտասան բիւր մարդիկ, որ ոչ գիտեն զաջ կամ զահեակ, և անասուն բազում յոյժ։ Թէ զմեղաւորքն պատուհասեմ, ասաց, (յ)անմեղ մանկտին ո՞նց չխնայեմ։ Դու մի դդմենոյ կորստեանն համար

դառնացար, ասաց, քան զի՞ առաւել ինձ ցաւ է կորուստ ստեղծուածոց իմոց։

Եւ ապա կակղացաւ Յունան։ Իսկ բնակիչքն Նինուէի, որ զպատուհասն անցուցին ապաշխարութեամբ, կային առաջի սուրբ մարգարէին և աստուածապէս պաշտէին և պատուէին զնայ։ Եւ եկաց մարգարէն վեց ամիս ի մէջ նոցա և կամէր գնալ, և ասէին բնակիչք քաղաքին. Դու ես մեր լուսաւորիչ վառ ճրագ և արեգակն, մի՛ երթալ և ի մեզանէ մի՛ հեռանար, զի մի՛ դարձեալ խաւար մեզաց և անհաւատութիւն պատեսցէ զմեզ. և թէ ոչ կամիս կեալ ընդ մեզ, տար զմեզ ընդ քեզ. և նայ ոչ կամեցաւ մնալ ընդ նոսա՝ և կամ տանիլ զնոսա պատճառելով զտարեկանս երկրին. Մեր երկրի հացն տարեկան է, ասէ, թէ ուտէ մարդ փորացաւ լինի և ոչ կարէ։ Եւ նոքա երթային լալով զհետ մարգարէին, և սիրով ճանապարհի եդին զնայ. երանի տային ազգին Իսրայելի և ժողովրդեան նորա։ Եւ ոչ կամեցաւ մարգարէն տանել զնոսա, զի մի ծանիցի խայտառակութիւն նոցա, անհաւատութիւն և հակառակութիւն իսրայելական ազգին (ընդ) Ասորոց. և ոչ գնաց յերկիրն իւր, այլ առեալ զմայր իւր մարգարէն և գնացեալ պանտխտեցաւ յերկիրն Իսմայելի, զի այսպէս բարձից, ասէ, զնախատինս իմ, զի ստեցի ի մարգարէանալն իմում վասն քաղաքին Նինուէի։ Եւ մեռաւ մայրն նորա ի ճանապարհին և թաղեաց զնա մերձ առ կաղնին Ռուքելայ[1]։

1. Ասա ի գրչագրին յարեալ կայ յերկար զուգակշռութիւն Քրիստոսի ընդ Յոնանու, իրատորէն բանիւք, զոր ի բաց յապաւեցաք։

ԺԵ

ՎԱՍՆ ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ

Ի ԳՐՈՑՆ ԲԱՐՈՒՔԱՑ [1]

ՈՐԺԱՄ հանդերձեալ էին քաղդէացիքն պաշարել զԵրուսաղէմ, խօսեցաւ Տէր ընդ Երեմիայ, և ասէ. Երեմիայ՝ ընտրեալդ իմ, ելէք ի քաղաքէս յայսմանէ՝ դու և Բարուք ընթերցողն. քանզի տալոց եմ ի գերութիւն զորդիսն Իսրայելի վասն բազում մեղաց իւրեանց. արդ փութացիք և ելէք նախ քան զգալ քաղդէացւոցն։

Ասէ Երեմիայ. Տէր, ընդէր մատնես զընտրեալ քաղաքս քո ի ձեռս քաղդէացւոց, և պարծի թագաւորն և զօրք իւր՝ եթէ յաղթեցաք սուրբ քաղաքին Աստուծոյ։ Տէր, մի՛ արասցես զայդ. այլ եթէ յոյժ բարկացար մեզ, ի ձեռաց քոց կործանեսցի։

Ասէ Տէր. Ոչ թագաւոր և ոչ զօրք իւր կարիցեն մտանել ի դա՝ մինչեւ ես բացից զդուռն դորա։ Երթիջիր և պատմեսջիր Բարուքայ. և ի հասարակ գիշերիս ի պարիսպն ել, և ես ցուցից քեզ՝ զի առանց իմ ոչ կարեն առնուլ զքաղաքս։

Եւ յարուցեալ Երեմիայ՝ գնաց վաղվաղակի առ Բարուք, և պատմեաց նմա զամենայն։ Եւ երթեալք ի միասին՝ մտին ի տաճարն Տեառն, հերձին զհանդերձս

1. Բ. ցիւ-տ-ն Երեմիայի մարգարէի ի գրոցն Բարուքայ։

իւրեանց[1], լցին զգլուխս իւրեանց հողով։ Եւ ի վեց ժամու գիշերոյն գնացին ի պարիսպն, և եղեւ յանկարծակի ձայն հնչման փողոց. և տեսեալ հրշտակս իջեալս յերկնից[2], վառեալ զամբարս ունելով, և պատեցան շուրջ զպարսպաւն։

Եւ ասեն Երեմիայ և Բարուք. Այժմ ծանեաք՝ եթէ ճշմարիտ է բան զոր ասացեր Տէր։ Եւ համբարձեալ զաչս իւրեանց յերկինս՝ ասեն. Այժմ ծանեաք՝ որ մատնեցեր զքաղաքս քո ի ձեռս թշնամեաց. զինչ հրամայես զի արասցուք զպատուական անօթս սպասու տաճարի քո։

Ասէ Տէր. Առէք ի ձեզ և տուք յերկիր և ասացէք. Լուր երկիր ձայնի ստեղծողի քո, և ա՛ռ պահեա զանօթս սրբութեան տաճարին Տեառն՝ մինչեւ ցգալուստն սիրելոյն ի նմա։

Ասէ Երեմիայ. Ասա ինձ[3] եթէ զինչ արարից զԱբիմեղէք եթէոպացին, զի յոյժ երախտաւոր է առ իս. զի նա եհան զիս ի գբոյ տղմոյն. և ոչ կամիմ զի տեսցէ զաւերումն սուրբ քաղաքիս քո և տրտմեսցի։

Ասէ Տէր. Առաքեա զնա յագարակն Ագրիպա, և ես ծածկեցից զնա՝ մինչեւ դարձուցից ի դերութենէ զժողովուրդն ի քաղաքս։ Եւ դու երթիջիր զհետ ժողովրդեանն ի Բաբելոն. իսկ զԲարուք թողցես ի քաղաքիս, և ես այց արարից նմայ։

Եւ զայս ասացեալ Տեառն վերացաւ յերկինս։ Եւ Երեմիայ և Բարուք մտին ի սրբութիւնն Աստուծոյ, և առին զանօթս սպասու տաճարին՝ ետուն յերկիր. և առժամայն եկուլ երկիր զանօթսն։ Եւ նստան երկոքեանն և ողբային[4] յոյժ։ Եւ ընդ առաւօտն ասէ Երեմի ցԱբիմեղէք. Ա՛ռ կթոց և երթիջիր յագարակն Ագրիպա ընդ ճանապարհ լերինն[5], և բեր դալար

1. Բ. իւրեանց և ինքեանս հարուալ մամբ ողբոյին։ Եւ է։
2. Բ. յերկնից, և վազվազէի գո�՝ և ահա զամբար վառեալ
սահեին է յերա իւրեանց։
3. Բ. յունի տա ինչ։
4. Բ. լոյին։
5. ԲՆ. մտին։

թուզ վասն հիւանդացեալ ժողովոյս[1]. և ամ Տեառն ծածկեսցէ զգլուխ քո։

Եւ գնաց Աբիմելէք կթոցովն՝ որպէս ասաց[2] նմա Երեմիայ։ Եւ ապա[3] հասին զօրք քաղդէացւոցն, և պատեցին շուրջ զքաղաքովն Երուսաղեմի։ Եւ հրաշատակն Տեառն հնչեաց[4] զփողն և ասէ. Մտէք ի քաղաքդ, ամենայն զօրք քաղդէացւոց. զի ահա բացան ձեզ ամենայն դրունքդ. և առէք գերութիւն զամենայն ժողովուրդդ Երուսաղեմի։

Եւ ընթացաւ Երեմիայ՝ փակեաց զտաճարն Տեառն և էառ զբանալիսն. և ելեալ ի քաղաքէն՝ ընկէց առաջի արեգականն, և ասէ ողբալով. Ո՞ պահեսառ քեզ զփականս տաճարին Տեառն, մինչեւ խընդրեսցէ զդոսա Աստուած. մեք ոչ եմք արժանի պահել զդոսա։

Իսկ քաղդէացիքն մտին ի քաղաքն Երուսաղէմ, աւար արարին[5] զամենայն ինչսն, և կալան ի գերութիւն զորդիսն Իսրայեղի և տարան ի Բաբելոն։ Եւ Երեմիայ գնաց[6] զկնի։ Եւ Բարուք ելեալ ի քաղաքէն մեծաւ ողբով, և հողով լցեալ զգլուխն, և երթեալ բնակեցաւ ի գերեզմանի[7] միայն. և հրշտակ Տեառն երեւէր նմա յամենայն օր և մխիթարէր զնա։

Իսկ Աբիմելէք[8] մինչդեռ տանէր զթուզն, ի ճանապարհին տօթացաւ ի խորշակէն. երթեալ առ ծառով մի նստաւ ընդ հովանեաւն և հանգեաւ, զի յոյժ աշխատեալ էր. խոնարհեցուցեալ զգլուխ իւր՝ եդ ի վերայ կթոցին, ննջեաց և եղեւ ի քուն զվաթսուն և վեց ամ. ոչ զարթեաւ ըստ հրամանի Տեառն[9] որչափ արարին ժամանակ որդիքն Իսրայեղի ի Բաբելոն։ Եւ յետ վաթսուն և վեց ամացն զարթեաւ և ասէ. Քաղցր և սակաւ քուն եղէ. և գլուխս ծան-

1. Բ. ժողովրդեանն։
2. Բ. հրամայեաց։
3. Բ. ահա։
4. Բ. հնչեցոյց։
5. Բ. առին։
6. Բ. գնաց զհետ նոցա։
7. Բ. գերեզմանս։
8. Բ. Աբիմելէք երթեալ տուաց թուզ ի գնալսն։
9. Բ. Տեառն Աստուծոյ։

բացեալ է, զի ոչ յագեցա(յ) քնով։ Եբաց զկթոցն և
եգիտ զթուզն դալար, զի դեռ եւս կաթէին զկաթն.
և ասէ. Եթէ դարձեալ ննջեցից, ՏԷրկնչիմ՝ մի դու-
ցէ յամիցեմ ի քունն, և դժուարանայ ինձ հայրն իմ
Երեմիայ. զի շտապով յղարկեաց զիս տանել զթուզս
վասն հիւանդացն։ Եւ յարուցեալ Եբարձ զկթոցն և
երթայր զճանապարհն իւր։

Եւ յորժամ եհաս յԵրուսաղէմ, ոչ ծանեաւ զքա-
ղաքն և ոչ եգիտ զտունն Երեմիայի և ոչ զոք ի ծա-
նօթից. և ասէ. Օրհնեալ է Աստուած՝ որ մեծ զար-
մացումն անկաւ ի վերայ իմ. ուրեմն մոլորեալ եմ, զի
ընդ ճանապարհ լերինն եկի՝ թմբեալ ի քնոյն. և զիարդ
իշխեմ ասել ցԵրեմիայ՝ եթէ ի քուն եղէ, և մոլորե-
ցայ ի ճանապարհէն։ Եւ դարձեալ ելեալ ի քաղա-
քէն, և նշմարեաց զնշան տեղեացն և ծանեաւ։ Դար-
ձաւ եմուտ ի քաղաքն և ոչ զոք եգիտ, և կայր պը-
շուցեալ. և դարձեալ[1] ի քաղաքէն և եդեալ զկթոցն՝
նստաւ. և[2] տեսեալ ալեւոր մի, եհարց[3] եթէ որ է քա-
ղաքս։ Եւ նա ասէ՝ Երուսաղէմ։ Ասէ Աբիմելէք. Եւ
ուր իցէ Երեմիայ քահանայ Աստուծոյ և Բարուք ընթ-
երցողն և ամենայն ժողովուրդ քաղաքիս[4] զի ոչ
գտի զոք։ Ասէ ալեւորն. Ոչ իցես դու յայսմ քաղա-
քէս՝ որ այսօր յեղեալ զԵրեմիայ յետ այսչափ ժամա-
նակի. քանզի Երեմիայ ընդ ժողովրդեանն գերեալ
գնաց[5] ի Բաբելոն, զոր տարաւ Նաբուգոդոնոսոր
արքայն բաբելացւոց։ Ասէ Աբիմելէք. Եթէ ոչ էիր
ալեւոր, որ չէ պարտ անարգել զքեզ. զի[6] ուրչափ ժա-
մանակք իցեն՝ որ առաքեաց զիս Երեմիայ յագարակն
Ազրիպա, զի քաղեցից սակաւ մի թուզ վասն հի-
ւանդացն։ Տես զթուզս որ դալար է և դեռ կաթեն ըզ-
կաթն։ Սակաւիկ մի ննջեցի ի ճանապարհին ընդ ծա-
ռով մի և քնով ոչ յագեցա(յ), այլ շտապով եկի։ Եւ

1. Բ. դարձեալ Եւ։
2. Բ. յաւելու ԵՒ ընդհուպ հոգեոյն Աստուծոյ։
3. Բ. Եհարց զնա և ասէ, ուր։
4. Բ. յաւելու սոր իցեն։
5. Բ. գերի գնաց։
6. Բ. զի սակաւ ժամանակ։

ու ասեա՝ եթէ գերեցան ժողովուրդն և Երեմիայ ի Բաբելոն։

Եւ հանեալ (զ)Թուզս՝ եցոյց նմա։ Եւ յորժամ եւ-ես ալեւորն, ասէ. Որդեակ, ուրեմն դու արդար ես. ոչ կամեցայ։ Աստուած ցուցանել քեզ զաւերումն աղաքիս. ընկէց ի վերայ քո Թմբրութիւն։ Գիտա-իր, որդեակ, զի վաթսուն և վեց ամք իցեն[1] յոր-է հետէ պաշարեցաւ քաղաքս, և տարան զԵրեմիայ զժողովուրդն ի Բաբելոն։ Տես, որդեակ, որ Թզոյ ուռուրք չեն, և դեռ ոչ ծառք տերեւս[2] իսկ ունին, զի իսան ամիս է։

Եւ համբարձեալ զձայն[3] իւր Աբիմեղէք՝ ասէ. Օրհ-եալ է Աստուած երկնի և երկրի, որ տայ հանգիստ արդարոց յամենայն տեղիս՝ յամենայն ժամ։ Եւ հա-եալ Թուզ՝ ետ ալեւորին։ Եւ աղօթեաց Աբիմեղէք առ Աստուած. և հրչտակ Տեառն կալաւ զաջոյ ձե-անէն, (և) կացոյց կԹոցովն առ գերեզմանն՝ յորում էր Բարուք։ Եւ տեսեալ զմիմեանս զահի հարան. և իրկս արկեալ միմեանց համբուրելով, լացին ուժգին։

Եւ տեսեալ Բարուքայ զԹուզն դալար, զի դեռ եւս աթէին զկաթնն, աղօթեաց ասելով[4] այսպէս. Օրհ-եալ է Տէր Աստուած, որ առնէ հատուցումն սիրե-ելոց իւրոց։ Զի[5] ինքնին պատրաստեսցէ քեզ, ով անձն իմ, և ցնծասցէ սիրտ քո. զի սուգն քո դարձաւ յուրախութիւն։ Այս վաթսուն և վեց ամք իցեն՝ ի[6] քաղեցաւ Թուզս, և ոչ Թարշամեցաւ[7]. այլ կա-ին զկաթնն՝ որպէս առօրեայ[8] հատեալ ի ծառէ։ Եւ զայս ասացեալ՝ ասէ Բարուք ցԱբիմեղէք. Աղա-ղեսցուք զԱստուած, զի ցուցանէ մեզ՝ եթէ որպէս զրաստցուք զայս աքանչելի գործս հասուցանել առ Ե-ղեմիայ և ժողովուրդն։

1. Բ. ԽԵ։
2. Բ. տերեւս ալ ԽՆ հանեալ ի մ-ասոյ ասելոյ, զի։
3. Բ. ՁՆԻ։
4. Բ. Ի ասէ։
5. ԲՆ. պատրաստեսցէ։ զի, ովանդն։
6. Բ. յորմէհետէ։
7. Բ. յաւելու Ի ալնիրեցաւ։
8. ԲՆ. առ օրէ։

Եւ յետ աղօթիցն երեւեցաւ նոցա արծուի մի՝ նստեալ
ի վերայ ծառոյ։ Ասէ արծուին մարդկեղէն բարբա-
ռով. Ողջոյն քեզ, Բարուք, ընտրեալդ Աստուծոյ։ Ասէ
Բարուք[1]. Պատմեա մեզ՝ վասն որոյ ես եկեալ։ Եւ
ասէ. Որ առաքեաս ինեւ զեղեալ զաքանչելիսն առ Ե-
րեմիայ։

Եւ դրեաց Բարուք ի քարդիսի, և կապեաց ի նա-
թուզս եւթնեւտասան, և կապեաց ի պարանոց արծ-
ւոյն, և ասէ. Երթիջիր և տարջիր զպատասխանիդ[2]
առ Երեմիայ և առ ժողովուրդն գերեալ՝ որդիսն Իս-
րայելի. և դարձեալ բերցես մեզ պատասխանի։

Եւ սլացեալ արծուոյն՝ գնաց[3] ի Բաբելոնն, և նըս-
տաւ ի վերայ ծառի միոյ՝ արտաքոյ քաղաքին։ Եւ
ելանէր Երեմիայ բազում ժողովրդով, արամբք[4] և
կանամբք, առ ի թաղել զմեռեալս իւրեանց. քանզի
խնդրեալ էր յարքայէն՝ արտաքոյ քաղաքին վասն ի-
րեանց ժողովրդեանն։ Եւ յորժամ մերձ եղեն ի
ծառն, աղաղակեաց արծիւն մարդկային բարբառով և
ասէ. Քեզ ասեմ, Երեմիայ՝ ծառայ Աստուծոյ բար-
ձրելոյ[5], լուր պատգամսցն Աստուծոյ՝ որ առաքեցի
առ քեզ Բարուք և Աբիմելեքէ։

Եւ յորժամ լուան զձայն արծուոյն, փառաւորեցի
զԱստուած։ Եւ իջեալ արծիւն ի վերայ մեռեալ ոչ
եհար թեւաքն զերեսս մեռելոյն, և առժամայն կանգ-
նեցաւ[6]։ Եւ յոյժ զարհուրեցան ամենայն ժողովուր-
դքն[7], և ասեն՝ եթէ որպէս ի ձեռն Մովսեսի, այն-
պէս երեւեցաւ մեզ Աստուած ի ձեռն արծուոյս այ-
սորիկ։

Եւ ասէ արծիւն ցԵրեմիայ. Լոյծ զքարդեզս ի պա-
բանոցէս, և ընթերցիր ժողովրդեանդ. տես և զգու-
շար թուզն։ Եւ յորժամ ընթերցաւ, ասեն ժողովուրդ
ցԵրեմիայ. Արդ հրամայեա մեզ՝ եթէ զինչ արասցուք

1. Բ. յաւելու. օրհնեալ տուտուս զքո։
2. Բ. ղոյդ։
3. Բ. յաւելու խաղաղութեամբ։
4. Բ. չունի արամբք և կանամբք։
5. Բ. չունի քաջընթերոյ։
6. Բ. յաւելու ոտիւքն։
7. Բ. ժողովուրդքն ասիկոյ։

Ասէ Երեմիայ. Կատարեցէք զհրամանս Տեառն Աստուծոյ. և տարցէ զմեզ վաղվաղակի ի քաղաքն մեր[1]: Եւ դարձեալ[2] դրեաց Երեմիայ հրովարտակ առ Բարուք և առ Աբիմեղէք առաջի ամենայն ժողովրդեանն՝ զամենայն նեղութիւնսն զոր արար նոցա արքայն Նաբուգոդոնոսոր. և կապեաց ի պարանոց արծուոյն:

Թռեաւ արծիւն՝ գնաց առ Բարուք և առ Աբիմեղէք: Եւ առեալ զհրովարտակն[3] ընթերցան, և լացին յոյժ՝ ի լսել զչարչարանս և զնեղութիւնս Երեմիայի և ժողովրդեանն: Իսկ Երեմիա առեալ զդալար թուզն՝ տայր հիւանդացն և բժշկէին: Եւ պատուէր տայր ժողովրդեանն՝ հրաժարել[4] ի գարշելի կերակրոցն հեթանոսաց: Եւ[5] հրամայեաց Աստուած ելանել ժողովրդեանն ի Բաբելոնէ, և ելին[6] խաղաղութեամբ: Եւ Երեմիայ անցոյց զժողովուրդն ընդ Յորդանան, և գնացին յԵրուսաղէմ:

Եւ տեսեալ զնոսա Բարուք և Աբիմեղէք, կալան[7] զոտից Երեմիայի և երկիր պագին նմա: Եւ համբուրեցին զմիմեանս, և փառս մատուցին Աստուծոյ մեծաւ գոհութեամբ. և մատուցին պատարագ Աստուծոյ զաւուրս ութ: Եւ յաւուրն տասներորդի միայն մատոյց Աստուծոյ զոհս, և աղօթեաց առ[8] Աստուած: Եւ վերացան միաք իւր, և ասէր. Սուրբ, սուրբ, սուրբ, լոյս ճշմարիտ՝ որ լուսաւորեաց զիս ի գալս իմում առ քեզ: Եւ զայս ասացեալ՝ անկաւ ի վերայ երեսաց իւրոց[9] որպէս մեռեալ: Եւ կարծեցին[10] բա-

1. Բ. յաւելու Երուսաղէմ:
2. Բ. չունի դարձեալ:
3. Բ. ինչն:
4. Բ. յաւելու ի պէղծ խառնակութիւնէ:
5. Բ. և ապա:
6. Բն. Եկին:
7. Բ. կալան զոտից սրբոյն Երեմիայի, և երկիր պագին նմա. և փառս մատուցին Աստուծոյ մեծաւ գոհութիւնամբ և մատուցին պատարագ:
8. Բ. առ Աստուած, գնալ վերացան միտք... սուրբ ծառ կնդրանէ, լոյս... որ լուսաւորիցեր:
9. Բ. յաւելու յերկիր:
10. Բ. կարծեին:

ռուք և Աբիմելէք՝ եթէ մեռաւ, և յոյժ լացին. և հողով լցին զգլուխս իւրեանց, և ժողովեցան առ ի Թաղել[1]: Եւ եղեւ ձայն առ նոսա և ասէ. Մի՛ Թաղէք զկենդանիդ: Եւ Թոյլ եառուն[2] զերիս աւուրս:

Եւ ապա եբաց Երեմիայ զաչս իւր և կանկնեցաւ. և բարձրաձայն ասէ. Փառս տուք Աստուծոյ, և որդւոյ իւրում օծելոյ՝ որ զարԹուցանէ զմեզ: Զի նա է անչէջ դամբար[3], որ զկնի այլ եւս աւուրց և ամաց երկերիւր եւԹանասունեւհնգից եկեսցէ յերկիր. ծառն կենդանի՝ որ տնգեցաւ ի մէջ դրախտին. և արասցէ զանպտուղ ծառս պտղաբերս. և զՑորդանան իբրեւ զասր սպիտակ[4] արասցէ, և իբրեւ զձիւն սպիտակացուսցէ. և օրհնեսցէ զկղզիս, և ապասցեն զպտուղս ի բանից բերանոյն Քրիստոսի: Եւ ինքնին մտցէ և ելցէ. և ընտրեսցէ երկոտասան առաքեալս, զի աւետարանիցեն ի հեԹանոսս, զոր ես տեսի զարդարեալ ի հօրէ իմմէ: Գալոց է յերկիր, և լցցէ զքաղցեալ անձինս:

Եւ յորժամ լուան ժողովուրդն զբանս զայս, բարկացեալ ասեն[5]. Այս բանքս են՝ զոր Եսայի որդի Ամովայ խօսեցաւ և ասէ. Տեսի զԱստուած և զորդին իւր: Արդ մի՛ սպանցուք զսա որպէս զԵսայի. այլ քարկոծ արասցուք[6] զսա:

Եւ յոյժ տրտմեցան Բարուք և Աբիմելէք. վասն զի դեռ եւս կամէին լսել[7] զոր ետես: Եւ ասէ ցնոսա Երեմիայ. Մի՛ լայք և մի՛ տրտմիք. զի ոչ սպանցեն զիս՝ մինչեւ պատմեմ ձեզ զամենայնն: Եւ ասէ. Բերէք վէմ մի մեծ. և նոքա բերին: Եւ ասէ Երեմիաս. Տէր Աստուած, լոյս ճշմարիտ գիտութեան, անստուեր ճառագայթ, լուր ինձ. և արա զվէմս զայս ի նմանութեան[8] իմոյ, մինչ-

1. Բ. յաւելու վնա:
2. Բ. յաւելու նմա:
3. Բ. վեռն հաստատոյ, որ յեր ոյլ եառ:
4. Բ. ասրմէր.
5. Բ. ասէին:
6. Բ. տարիոնեսցուք:
7. Բ. լսէր ասել զնոցանէ խորհուրդսն զոր ետես:
8. Բ. ի նմանութիւն իմ մարդ գնալ:

չեւ պատմեցից Բարուքայ և Աբիմեղեքայ զամենայն խորհուրդս՝ զոր ծանուցեր ինձ։

Յայնժամ հրամանաւ Աստուծոյ եղեւ վէմն[1] ի կերպըս Երեմիայի, և սկսան ժողովուրդն քարկոծել զվէմն, կարծել եթէ Երեմիայ իցէ։ Եւ Երեմիայ պատմեաց զամենայնն, և գրեաց Բարուք ի գիրս իւր։ Եւ ապա երթեալ Երեմիայ՝ եկաց ի մէջ ժողովրդեանն. և վէմն զաղաղակ բարձեալ ասէր. Ցիմարք և անմիտք՝ որդիք Իսրայելի, ընդէ՞ր քարկոծէք զիս զվէմս՝ կարծելով[2] եթէ ես իցեմ Երեմիայ. ահա[3] ի միջի ձեր ում կանգնեալ կայ։ Եւ դարձեալ եղեւ վէմն ապառաժ[4] քար։ Եւ յորժամ տեսին զԵրեմիայ, դիմեցին առ հասարակ ի վերայ նորա (և) քարկոծեցին զնա։ Եւ կատարեցաւ[5] ի նոցանէ, որ օր մի էր մայիս ամսոյ։ Եւ թաղեցին զնա Բարուք և Աբիմեղեք, և կանգնեցին[6] զվէմն՝ թէ Այս վէմս օգնական եղեւ Երեմիայի։

Եւ[7] Նեփթաղիմ թագաւորն աղեկսանդրացի տարաւ զոսկերսն Երեմիայի ի քաղաքն Աղեկսանդրիա պատուով[8], և թաղեաց մի մի ոսկր շուրջ զպարսպովն քաղաքին. և սատակեցան[9] վնաս արարողքն, և փառս մատուցին տեսողքն Աստուծոյ. ամէն։

1. Բ. վէմն մարդ ի կերպարանս։
2. Բ. կարծեմ։
3. Բ. յաւելու Երեփ։
4. Բ. չունի ապառաժ։
5. Բ. և կատարեցաւ Երեփ ի նոցանէ ի մայիս ամսոյ դէպն։
6. Բ. յաւելու ի վերայ գերեզմանի նորա զվէմն, և գրեցին ի վերայ նորա թէ այս։
7. Բ. յաւելու յետ ժամանակի։
8. Բ. և պատուով թաղեաց։
9. Բ. սատակեցան ամենայն խորհրդովք քոսոսիրք և փառս մատուցին Աստուծոյ տեսողք սատանայիցն։

ռուք և Աբիմելէք՝ եթէ մեռաւ, և յոյժ լացին. և հո-
ղով լցին զգլուխս իւրեանց, և ժողովեցան առ ի թա-
գել[1]: Եւ եղեւ ձայն առ նոսա և ասէ. Մի՛ թաղէք
զկենդանիդ: Եւ թոյլ եռուն[2] զերիս աւուրս:

Եւ ապա եբաց Երեմիայ զաչս իւր և կանկնեցաւ.
և բարձրաձայն ասէ. Փառս տուք Աստուծոյ, և որդ-
ւոյ իւրում օծելոյ՝ որ զարթուցանէ զմեզ: Զի նա
է անշէջ ղամբար[3], որ զկնի այլ եւս աւուրց և ա-
մաց երկերիւր եւթանասունեւհնգից եկեսցէ յեր-
կիր. ծառն կենդանի՝ որ տնգեցաւ ի մէջ դրախտին.
և արասցէ զանպտուղ ծառս պտղաբերս. և զՑոր-
դանան իբրեւ զասր սպիտակ[4] արասցէ, և իբրեւ
զձիւն սպիտակացուսցէ. և օրհնեսցէ զկղզիս, և ա-
րասցեն զպտուղս ի բանից բերանոյն Քրիստոսի: Եւ
ինքնին մտցէ և ելցէ. և ընտրեսցէ երկոտասան ա-
ռաքեալս, զի աւետարանիցեն ի հեթանոսս, զոր ես
տեսի զարդարեալ ի հօրէ իմմէ: Գալոց է յերկիր, և
լցցէ զքաղցեալ անձինս:

Եւ յորժամ լուան ժողովուրդն զբանս զայս, բար-
կացեալ ասեն[5]. Այս բանքս են՝ զոր Եսայի որդի Ա-
մովայ խօսեցաւ և ասէ. Տեսի զԱստուած և զորդին
իւր: Արդ մի՛ սպանցուք զսա որպէս զԵսայի. այլ
քարկոծ արասցուք[6] զսա:

Եւ յոյժ տրտմեցան Բարուք և Աբիմելէք. վասն զի
դեռ եւս կամէին լսել[7] զոր ետես: Եւ ասէ ցնոսա Երե-
միայ. Մի՛ լայք և մի՛ տրտմիք. զի ոչ սպանցեն զիս՝ մին-
չեւ պատմեմ ձեզ զամենայնն: Եւ ասէ. Բերէք վէմ մի
մեծ. և նոքա բերին: Եւ ասէ Երեմիաս. Տէր Աստուած,
լոյս ճշմարիտ գիտութեան, անստուեր ճառագայթ, լուր
ինձ. և արա զվէմս զայս ի նմանութեան[8] իմոյ, մին-

1. Բ. յաւելու ընդ:
2. Բ. յաւելու նմա:
3. Բ. ՅԵՆԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՅ, ՈՐ ՅԵՐ ՈՅԼ ԼԱ:
4. Բ. ԿՈՐՓԸ.
5. Բ. ասէին:
6. Բ. ՔԱՐԿՈԾԵՑՈՒՔ:
7. Բ. կամէր ասել զԱստուծոյ խորհուրդսն զոր էրեր:
8. Բ. Ի ՆՄԱՆՈՒԹԻՆ ԻՄ ՄԵՐԴ ԴՆԷ:

չեւ պատմեցից Բարուքայ և Աբիմեղեքայ զամենայն խորհուրդս՝ զոր ծանուցեր ինձ։

Յայնժամ հրամանաւ Աստուծոյ եղեւ վէմն[1] ի կերպըս Երեմիայի, և սկսան ժողովուրդն քարկոծել ըզվէմն, կարծել եթէ Երեմիայ իցէ։ Եւ Երեմիայ պատմեաց զամենայնն, և գրեաց Բարուք ի գիրս իւր։ Եւ ապա երթեալ Երեմիայ՝ եկաց ի մէջ ժողովրդեանն. և վէմն զաղաղակ բարձեալ ասէր. Յիմարք և անմիտք՝ որդիք Իսրայեղի, ընդէր քարկոծէք զիս զվէմս՝ կարծելով[2] եթէ ես իցեմ Երեմիայ. ահա[3] ի միջի ձեր ում կանգնեալ կայ։ Եւ դարձեալ եղեւ վէմն ապառաժ[4] քար։ Եւ յորժամ տեսին զԵրեմիայ, դիմեցին առ հասարակ ի վերայ նորա (և) քարկոծեցին զնա։ Եւ կատարեցաւ[5] ի նոցանէ, որ օր մի էր մայիս ամսոյ։ Եւ թաղեցին զնա Բարուք և Աբիմեղեք, և կանգնեցին[6] զվէմն՝ թէ Այս վէմս օգնական եղեւ Երեմիայի։

Եւ[7] Նեփթաղիմ թագաւորն աղեկսանդրացի տարաւ զոսկերսն Երեմիայի ի քաղաքն Աղեկսանդրիա պատուով[8], և թաղեաց մի մի ոսկր շուրջ զպարսպովն քաղաքին. և սատակեցան[9] վնաս արարողքն, և փառս մատուցին տեսողքն Աստուծոյ. ամէն։

1. Բ. վէմն մարդ է կերպարանս։
2. Բ. կարծեմ։
3. Բ. յաւելու Երեմիա։
4. Բ. չունի ապառաժ։
5. Բ. և կատարեցաւ Երեմիա է նոցանէ է մայիս ամսոյ մեռն։
6. Բ. յաւելու է վերայ գերեզմանի նորա վէմն, և գրեցին է վերայ նորա թէ այս։
7. Բ. յաւելու յետ ժամանակի։
8. Բ. և պատուով թաղեաց։
9. Բ. սատակեցան ամենայն կոչարդելոսք քանանոսք և փառս մատուցին Աստուծոյ գլուղ սանկիկոցն։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՅՆ ԵՐԵՄԻԱ ՄԱՐԳԱՐԷԻՆ ԵՒ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՆՈՐԱ ԲԱՐՈՒՔԱՑ ԵՒ ԱԲԻՄԵԼԵՔԱՑ

ՅՈՐԺԱՄ կամեցաւ Աստուած մատնել զԵրուսաղէմ ի գերութիւն, խօսեցաւ ընդ Երեմիայի և ասաց. Եկ ի քաղաքէս դու և Բարուք դպիրն քո. քանզի տալոց եմ ի գերութիւն զքաղաքդ Երուսաղէմ և զորդիսն Յուդայ։

Ասէ Երեմիայ. Քաւ լիցի քեզ Տէր իմ, մի՛ արասցես զայդ. այլ թէ յոյժ բարկացար մեզ Տէր, ի ձեռաց քոց կործանեսցի քաղաքս մեր. զի մի՛ պարծեսցին ատելիք քո և թշնամիք մեր։

Ասէ Տէր. Դու փութայ պատմել Բարուքայ, և ի մէջ գիշերին երթա(յ)ք ի պարիսպն, և ցուցից ձեզ զինչ լինելոց է. զի առանց իմ ոչ ինչ կարասցեն առնել։

Եւ վաղվաղակի յարուցեալ Երեմիայ գնաց առ Բարուք դպիրն՝ և պատմեաց զամենայն։ Եւ երթեալ ի միասին, մտին ի տաճարն Տեառն, և պատառեալ զհանդերձս իւրեանց՝ անկան առաջի Տեառն մեծաւ հառաչմամբ, և արկին հող զգլխովն իւրեանց. և ապա ելեալ գնացին ի պարիսպն։ Եւ եղեւ յանկարծակի ձայն հնչմամբ փողոյ, և տեսանէին զհրեշտակսն Աստուծոյ, որ իջանէին յերկնից վառեալ զամբարօք, և պատէին շուրջ զպարսպան։

Յայնժամ Երեմիայ և Բարուք համբարձին զաչս իւրեանց յերկինս, և ասեն. Ահա ծանեաք Տէր, որ մատնեցեր զքաղաքս մեր ի ձեռս թշնամեաց մերոց. զինչ արասցուք զանօթսն սպասուց սրբութեան քո։

Ասէ Տէր. Առ ի քեզ Երեմիայ և տուր յերկիր և ասայ. Լուր երկիր բանից ստեղծողին քո. և սո՛ պա-հեայ զանօթս տաճարին Տեառն քոյ՝ մինչեւ ցգալուստ նորա յերկնից։

Ասէ Երեմիայ. Աղաչեմ զքեզ, Տէր, ցոյց ինձ թէ զի՞նչ արարից զԱբիմելէք եթոպացին. քանզի յոյժ երախ-տաւոր է ինձ և նայ եհան ի գրոյ տղմոյն, և ոչ կա-միմ տեսանել նմայ զաւերումն սուրբ քաղաքի քո։

Ասէ Տէրն. Առաքեայ զնայ յագարակն Ագրիպեայ, և ես ծածկեցից զնայ անդ, մինչեւ դարձցի ժողո-վուրդն ի գերութենէ անտի ի քաղաքս։ Եւ դու երթ գնայ զհետ ժողովրդեան քո ի Բաբելոն, և զԲարուք թողցես ի քաղաքի աստ. և ես այց արարից նմայ։

Եւ զայս ասացեալ Տէր, վուքացոյց զԵրեմիայ առ-նել զամենայն՝ զոր հրամայեաց նմայ։ Եւ մտին Երե-միայ և Բարուք ի տաճարն և առին զանօթսն և ե-տուն յերկիր. և իսկոյն եկուլ երկիր զանօթս սրբ-բութեան, և նստեալ Երեմիայ և Բարուք լային և աղօթէին։

Եւ ի վաղիւն ասաց Երեմիայ Աբիմելէքայ. Որ-դեակ, սո՛ դու զկթոցն և երթ գնայ յագարակն Ագ-րիպայ. և բե՛ր դալար թուզ վասն հիւանդեացն որ են առ մեզ. և ա՛լ Տեառն պահեսցէ զքեզ։ Եւ գնաց Ա-բիմելիք։

Եւ ահայ հասին զօրքն քաղթէացւոյցն և պատեցին շուրջանակի զքաղաքն Երուսաղէմ։ Եւ քաղթէա-ցիքն յիւրաքանչիւր դիմաց մտին ի քաղաքն. և ա-ռին զամենայն առ և աւար, և հեղին բազում ա-րիւնս, և արկին զմարմինս սրբոց գէշ գազանաց և թռչնոց շուրջ զքաղաքաւն. և ոչ ոք էր որ թաղէր զնո-սա։ Եւ սո՛ ի գերութիւն զորդիսն Ցուդայ և զամե-նայն Իսրայեղի և տարան ի Բաբելոն։ Եւ Երե-միաս ընկէց զհուր տաճարին ի ջրհորն, և զբանալին յաբեգակն, և ասաց. Առէք պահեցէք դուք զայդ հրա-մանաւ արարչին ձերոյ. և ինքն Երեմիայ գնաց զհետ գերելոցն ի Բաբելոն։ Եւ Բարուք ելեալ ի քաղաքէն մեծակական ողբովք, և բնակէր միայն ի գերեզմանն.

և հրեշտակ Տեառն երեւէր նմայ օր քսան աւուրց, և մխիթարէր զնոսա հանապազ։

Եւ Աբիմելէք մինչդեռ բերէր զթուղն. ի ճանապարհին տօթացաւ ի խորշակէն, և նստաւ ընդ ծառով միւոյ և հանգեաւ, զի յոյժ աշխատեալ էր. և եդ զգլուխն ի վերայ կող(ո)վին, և ննջեաց ի քուն զամս վաթսուն և ութ. և ոչ զարթեաւ։ Եւ ապայ զարթուցեալ ասաց. Քաղցր և անուշ սակաւ ի քուն եղէ։ Եթաց զկողովն և ետես զթուղն դալար, զի դեռ ետս կաթէր զկաթն. և ասաց՝ թէ գլուխս ծանրացեալ է, զի ոչ յագեցայ քնով. և թէ այլ ննջեցից՝ վախեմ թէ յամեցից ի քունն և դժուարանայ ինձ մարգարէն Երեմիայ, զի յուշացայց, (զի) յուղարկեաց զիս այսօր ի Թղոյ վասն հիւանդեացն։

Եւ յարուցեալ առ զկողովն, և երթայր ի ճանապարհն և ոչ ճանաչէր զքաղաքն և ոչ զճանապարհն։ Եւ ոչ զոք տեսանէր ի ծանօթիցն, զոր յերէկն և յեռանդն տեսանէր, և ասէր. Փառք Աստուծոյ, ուրեմն մոլորեալ եմ։

Եւ տեսեալ ալեւոր մի, և ասէ ցնայ. Ո՞ր է քաղաքս այս։ Ասէ ալեւորն. Քաղաքս Երուսաղէմ է։ Ասէ Աբիմելէք. Ո՞ւր է մարգարէն և քահանայն Երեմիայ։ Ասէ ալեւորն. Մոլիս եղբայր և յիմար ես դու, և կամ զմեզ յիմար համարիս։ Ո՞ւր է Երեմիայ՝ որ արդ հարցանես. Նա գնաց ընդ գերեալ որդիս թագաւորին ի Բաբելոն։

Ասէ Աբիմելէք. Եթէ ոչ էիր ալեւոր՝ անարգէի զքեզ. զի այսօր առաքեաց ոմն Երեմիաս ի Թղոյ վասն հիւանդեաց. և արդ տես զոմն զոր դեռ դալար է և կաթէ զկաթն. և ես սակաւ մի ննջեցի ի ճանապարհս և քնով ոչ յագեցայ, այլ շտապով եկի. և հանեալ զթոյզն եցոյց նմայ։

Եւ ալեւորն տեսեալ զթուղն, ասաց. Որդեակ, դու այր արդար ես. վասն այսորիկ ոչ կամեցաւ Աստուած տեսանել զքեզ զաւերումն քաղաքիս. այլ ընկէց ի վերայ քո քուն, և ծածկեաց զքեզ ընդ հովանեաւ թեւոց իւրոց։ Գիտացիր, որդեակ, որ վաթսունեւութ

ամ է, որ գերեցաւ քաղաքս. և դու տես, որդեակ, զի ահայ ձմեռն է և չէ ժամանակ թզոյ։ Եւ ամբարձ Աբիմելէք զձայն իւր և ասաց. Օրհնեալ է Աստուած, որ տայ հանգիստ արդարոց յամենայն ժամ. և հանեալ զթուզն ետ ալեւորին։

Եւ ազդմամբ հրեշտակի Աստուծոյ գնաց առ Բարուք դպիրն, և գիրկս արկեալ միմեանց լացին. և ապայ նստեալ հարցանէին զիր(ե)արս։ Եւ տեսեալ զթուզն Բարուք և ասաց. Օրհնեալ է Աստուած, որ սիրէ զերկիւղածս իւր և պահէ զնոսա։ Եւ ասաց Բարուք. Ո՞րպէս կարասցուք հասուցանել զայս զքանչելիս առ Երեմիայ քահանայն։

Եւ մինչ նայ զայս ասէր, ահայ արծիւ մի եկն և նստաւ ի վերայ ծառոյն հանդէպ նոցա։ Ցայնժամ գրեաց Բարուք զքանչելիսն, և այն թղթովն պատեաց հնգետասան թուզ և կապեաց ի պարանոցն արծուին, և ասաց. Երթ և տար զայդ ի Բաբելոն առ Երեմիայ քահանայն Աստուծոյ, և դարձեալ եկ և բեր մեզ պատասխանի։ Եւ թռուցեալ արծիւն գնաց ի Բաբելոն և նստաւ ի վերայ ծառոյն՝ որ մերձ առ գերեզմանս էր։

Եւ ահայ Երեմիայ մարգարէն գայր բազում ժողովրդովք ի թաղել զմեռեալ մի յորդւոցն Իսրայելի։ Ցայնժամ էլ արծիւն ի վերայ մեռելին, և եհար թեւաքն զերեսս մեռելոյն և առժամայն կենդանացաւ մեռեալն։ Ընդ որ հիացեալ ժողովրդեանն ետուն փառս Աստուծոյ։ Եւ տեսեալ զթուզթն ի պարանոցն արծուոյն և առեալ ընթերցան և զարմացան։ Եւ գրեաց Երեմիայ պատասխանի առ Բարուքայ, և եցոյց զնեղութիւնս իւրեանց, զոր կրէին յանօրինացն ի Բաբելոն, և կապեաց ի պարանոց արծուոյն, որ թռուցեալ եհաս առ Բարուք։ Եւ առեալ ընթերցաւ Բարուք. և լացին յոյժ յորժամ լուան զնեղութիւնս ժողովրդեանն։

Եւ Երեմիաս առեալ զթուզն ետ հիւանդեաց, և առժամայն առողջացան։

Եւ ի նոյն աւուրսն եղեւ դարձ Երեմիայի և ժո-

ղովրդոցն գալ յԵրուսաղէմ։ Եւ եկեալ ուրախու-
թեամբ պատարագ մատուցանէին գոհութեամբ զա-
ւուրս տասն։ Եւ ի կատարումն պատարագացն՝ աղօ-
թեաց Երեմիայ առ Աստուած ա(յ)նքան՝ մինչ զի վե-
րացան միտք իւր յերկինս, և ասաց. Սուրբ, սուրբ,
սուրբ, Տէր զօրութեանց, ծառ կենդանի և լոյս ճշ-
մարիտ, որ լուսաւորես զիս՝ ի գալս իմում առ քեզ։
Եւ զայս ասացեալ անկաւ որպէս մեռեալ, և կարծե-
ցին Բարուք և Աբիմելէք եթէ մեռաւ։

Յայնժամ պատառեցին զհանդերձս իւրեանց և պա-
տրաստեցան ժողովուրդքն ի թաղել զԵրեմիայ։ Եւ
ձայն եղեալ առ նոսա և ասէ. Մի թաղէք զկենդա-
նիդ. և նոքա թոյլ ետուն զաւուրս երիս։

Եւ յետ երից աւուրց՝ երաց Երեմիայ զաչս իւր,
և յարուցեալ կանգնեցաւ և ասաց բարձ(ր)ա՛ձայն. Ա-
մենեքեան միաբան տուք փառս Աստուծոյ և որդւոյ
նորա օծելւոյն, որ զարթուցանէ զմեզ, զի նայ է կեանք
մեռելւոց։ Եւ արդ, այլ եւս երթք հարիւր և եօթա-
նասունեւչինգ ամ, և եկեսցէ ծառն կենաց յերկիր, և
արասցէ զանպտուղ ծառ(ս)ն պտղաբերս։

Եւ ընդ այն աւուրսն իկին շատք ի մնացորդացն
ժողովրդեանն յԵգիպտոս. էլ ընդ նոսին և Երեմիայ
մարգարէն, և բնակեցաւ ի Տափնաս։ Եւ անդ մարգա-
րէացաւ՝ եթէ եկեսցէ Տէր յերկնից յերկիր, և ընդրեա-
ցէ իւր ի մարդկանէ երկոտասան առաքեալս, որ աւե-
տարանեն զնայ ի հեթանոսս։ Իսկ յորժամ լուան
ժողովուրդքն զբանս զայս բարկացան և ասեն. Այդ
այն բանք են զոր ասաց Եսայի, թէ Տեսի զԱստուած
և զորդի նորա։ Եկայք սպանցուք զսայ, և ոչ որպէս
զնա, այլ քարեամբք քարկոծեսցուք զսայ։ Եւ տրտմե-
ցան Բարուք և Աբիմելէք, զի դեռ եւս կամէին լսել
ի նմանէ զծածկեալ խորհուրդն՝ զոր ետես. և լային
դառնապէս։

Եւ ասէ ցնոսա Երեմիայ. Մի լաք և մի տրտմիք,
զի ոչ կարեն սպանանել զիս՝ մինչեւ պատմեցից զա-
մենայն. բերէք ինձ վէմ մի մեծ. և բերին, և ասէ
Երեմիայ. Տէր Աստուած, նոր լոյս Իսրայելի. արայ

զվէմս զայս յիս նման, մինչեւ պատմեցից զամենայն Բարուքայ և Աբիմելեքայ, զխորհուրդս զոր ծանուցեր ինձ։

Եւ կամաւն Աստուծոյ եղեւ վէմն մարդ նմայ(ն) Երեմիայի, և սկսան ժողովուրդն քարկոծել զվէմն, կարծելով թէ Երեմիայ իցէ։ Եւ Երեմիաս պատմեաց նոցա զամենայն. և ապայ գնաց ի մէջ նոցա, և վէմն աղաղակեաց մարդկային բարբառովն և ասէ. Ո՞վ յիմարք, ահայ Երեմիայ կայ ի միջի ձերում, զիս ընդէ՞ր քարկոծէք. և դարձեալ եղեւ վէմն քար։ Եւ ամբոխն տեսեալ զԵրեմիայս, քարկոծեցին[1] զնա, և նայ ծունր եդեալ կայր յաղօթս, և հա(յ)ցէր զթողութիւն քարկոծողաց իւրոց։ Եւ այնու կատարեցաւ ի նոյն տեղւոջն և թաղեցաւ յաչակերտաց իւրոց՝ յԱբիմելեքայ և ի Բարուքայ։ Եւ կանգնեցին զվէմն զայն ի վերայ գերեզմանին, ի վկայութիւն նահատակութեան մարգարէին, և գրեցին ի նմայ, թէ Այս է վէմն որ օգնական եղեւ Երեմիայի և քարկոծեցաւ ընդ նմա։

Եւ յոյժ պատուեցին զնա և փառաւորեցին Եգիպտացիքն, բարիս գտեալ ի նմանէ, և յԱստուծոյ ողորմութիւն ի ձեռն նորա. վասն զի մինչ կենդանի էր սատակեաց զքարբն ոստին աղօթիւնքն, և զկոկորդիլոս գազանն ջրային, որ վնաս ինչ էին բնակչաց աշխարհին։

Իսկ Աղէքսանդր արքայ մակեդոնացին, գիտացեալ զաքսանչելիքն զայն, և տարեաւ զնչխարս մարգարէին ի քաղաքն իւր յԱղէքսանդրիայ, և անդ եդ փառօք և պատուով փառաւորապէս։ Եւ զմինն ի կողից սուրբ մարգարէին տնկեաց պատուով չուրջ զպարսպաւ քաղաքին, և անդ եւս սատակեցան քարբքն և կոկորդիլոսքն։

Այլ նշան ետ եգիպտացւոցն զչարժումն կռոց նոցա և զանկումն և զխորտակումն ի ձեռն մանկան միոյ ծնելւոյ ի կոյսէն, փրկչին Իսրայեղի։

1. Ի դրչագրին եղեալ էր ՝բրՀոծեցէ՝, ՝բրՀոծողաց, զորս ուղղեցաք։

Որոյ աղօթիւքն ողորմի Քրիստոս Աստուած, ըստացողի գրոցս, տէր Յակոբ եպիսկոպոսին, և ծնողաց նորին, հօրն Աւդուլին և մօրն Ուսլունին և եղբարցն և ամենայն ազգա(յ)նոց սոցին. ամէն։

Ի ՄՆԱՑՈՐԴԱՑ ԳՐՈՑ

ԶՈՐ ԳՏԻ Ի ԳԻՐՍ ՀՈՌՈՄՈՑ*

Եւ եղեւ յորժամ գերեցան որդիքն Իսրայէլի ի ձեռս Թագաւորին քաղդէացւոց, խօսեցաւ Աստուած ընդ Երեմիայ և ասէ. Երեմիա, ընտրեալդ իմ, արի՛ եկ ի քաղաքէս յայսմանէ դու և Բարուք, քանզի կորուսանեմ զքաղաքս վասն բազմութեան մեղաց բնակչաց դորա։ Քանզի աղօթքդ ձեր իբրեւ զսիւն հաստատեալ է ի մէջ դոցա, որպէս պարիսպ ամուր պատել զդոսա։ Այժմ արիք ելէք յառաջ, մինչչեւ զօրք քաղդէացւոց պատեալ է զդովա։

Եւ խօսեցաւ Երեմիա այսպէս. Աղաչեմ զքեզ, Տէր, հրամայեա՛ ծառայի քում խօսել առաջի քո։ Եւ ասէ Տէր. Խօսեաց, ընտրեալդ իմ Երեմիա։

Եւ խօսեցաւ Երեմիա և ասէ. Տէր ամենակալ, մատնե՞ս զքաղաքս ընտրեալ ի ձեռս քաղդէացոցն, որ պարծի Թագաւորն ի բազում զօրս իւր և ասացէ, եթէ յաղթեցի սուրբ քաղաքին Աստուծոյ։ Մի՛, Տէր. այլ եթէ կամ է քո՝ ձեռօք քովք ապականեա։

Եւ ասէ Տէր ցԵրեմիա. Որովհետեւ ընտրեալ իմ ես դու, արի՛ եկ ի քաղաքէս՝ դու և Բարուք, քանզի ապականեմ զդա վասն բազմութան (մեղաց) բնակչաց դո-

* Այս երրորդ օրինակ առաւ յԱրարատ ամսաթերթէ, 1895։ Մաբա։

բա. զի ոչ եթէ Թագաւորն և ոչ եթէ զօրք իւր կարող են մտանել ի դա, եթէ ոչ ես բանամ զդրունս դրա։ Արի՛ և գնա առ Բարուք և պատմեա զբանս զայս. և ի վեցերորդ պահու գիշերոյս՝ ելէք ի վերայ պարիսպի քաղաքիդ և ցուցանեմ ձեզ, եթէ ոչ ես յառաջ ապականեմ զքաղաքդ՝ ոչ ոք կարէ մտանել ի դա։ Եւ զայս ասաց Տէր, և գնաց յԵրեմիա(յ)է։

Եւ ընթացաւ Երեմիա և գնաց պատմեաց զայս Բարուքայ. և եկին ի տաճարն Աստուծոյ։ Եւ պատառեաց զհանդերձս իւր Երեմիա և արկ մոխիր զգլխով իւրով։

Եւ եղեալ զնա Բարուք զի արկեալ էր մոխիր զգլխով իւրով և զհանդերձս իւր պատառեալ, գոչեաց ի ձայն մեծ և ասէ. Հա՛յր Երեմիա, զի՞նչ լեալ է քո կամ զի՞նչ մեղս մեղուցեալ է ժողովուրդդ։ Վասն զի սովորութիւն էր նորա յորժամ մեղանչէր ժողովուրդն՝ արկանել մոխիր զգլխով իւրով և աղօթս մատուցանել վասն ժողովրդեան, մինչեւ թողեալ լինէին մեղք նոցա։ Ասէ ցնա. Պահեա՛ դու զհանդերձ քո և մի՛ պատառեր. այլ պատառեմք առաւել զսիրտս մեր, և փոխանակ ջրոյ՝ արտասուք մեր իջցեն ըմբել ի մեզ. ոչ ըմբեմք ջուր, այլ արտասուօք մերոք լնումք զծարաւ մեր. քանզի ոչ է յողորմիլ Աստուած ժողովրդեան իւրում։ Եւ ասէ Երեմիա. Աստուած մատնէ զքաղաքս ի ձեռս արքային բաբելացոց և գերէ զժողովուրդն ի Բաբելոն։

Եւ իբրեւ լուաւ զայս Բարուք, պատառեաց զհանդերձս իւր և ասէ. Հա՛յր Երեմիա, ո՞ պատմեաց քեզ զայդ։ Եւ ասէ Երեմիա. Մնա՛ սակաւ մի ընդ իս՝ մինչեւ ցվեց ժամ պահու գիշերոյս, և գիտասջիր՝ զի ստոյգ է բանս այս։

Եւ կային ի միասին ի խորանին և լային, և էր հանդերձն նոցա պատառեալ։ Եւ եղեւ ի պահու վեցերորդին, որպէս ասացեալ էր Տեառն Երեմիա(յ)ի, ելին ի միասին ի վերայ պարսպի քաղաքին՝ Երեմիա և Բարուք։ Եւ ահա եղեւ ձայն իբրեւ սրնգի և ելին հրեշտակք յերկնից և ունէին զամբարք ի ձեռին իւ-

բեանց և յանկուցին ի վերայ պարսպի քաղաքին։

Իբրեւ տեսին զնոսա Երեմիա և Բարուք, լային և ասէին. Այժմ ծանեաք զի ստոյգ է բանս։ Եւ աղաչեաց Երեմիա զՀրեշտակն և ասէ. Մի՛ ապականեր զքաղաքս մինչեւ հարցանեմ զՏէր բանս։ Եւ հրամայեաց Տէր Հրեշտակին և ասէ. Մի՛ ապականեր զքաղաքս զայս, մինչեւ խօսեցի ընտրեալդ իմ Երեմիա։ Յայնժամ խօսեցաւ Երեմիա և ասէ. Աղաչեմ զքեզ Տէր, հրամայեա ինձ խոսել առաջի քո։ Եւ ասէ. Խօսեաց ընտրեալդ իմ Երեմիա։

Եւ ասէ Երեմիա. Ա՛սասիկ, Տէր, ծանեայ որ մատնես զքաղաքս ի ձեռս Թշնամեաց իւրոց և տանին զժողովուրդ քո ի Բաբելոն, և զինչ կամիս առնել զսպաս սուրբ պատարագի քո։ Ասէ ցնա Տէր. Ա՛ռ զնա և տո՛ւր ցերկիր, և ասա ցնա. Լո՛ւր երկիր ձայնի արարչի քո վկայութեամբ ջրոյ, որ կնքեաց զեօթ դարն, և զկնի այնորիկ առնու զզարդ քո. պահեա՛ զսպաս պատարագի՝ մինչեւ ի գալուստ սիրելոյն։

Եւ խօսեցաւ Երեմիա և ասէ. Աղաչեմ զքեզ, Տէր, ծանո՛ զիս, եթէ զինչ առնեմ զԱրդամելեք եթեոպացի, զի բազում բարեգործութիւն արարեալ է ծառայի քո Երեմիա(յ)ի, և նա եհան զիս ի գրոյ տղմոյն, և ոչ կամիմ, եթէ տեսանիցէ նա զաւերումն քաղաքիս և զապականութիւն սորա. այլ ողորմեսցիս նմա, որ ոչ տրտմի։ Եւ ասէ ցնա Տէր. Առաքեա՛ զնա յագարակն Յապրիպա(յ)ի, և ի հովանի լերինն ես ծածկեմ զնա, մինչեւ դարձուցանեմ զժողովուրդն ի քաղաքս։ Եւ ասէ Տէր ցԵրեմիա. Գնա՛ դու զհետ ժողովրդեանն ի Բաբելոն. կա՛ց առ նոսա և աւետարանեա՛ նոցա, մինչեւ դարձուցանեմ զնոսա ի քաղաքս, և թո՛ղ զզբարուք աստ՝ մինչեւ խօսեցայց ընդ դմա։ Զայս ասաց Տէր և վերացաւ յԵրեմիա(յ)է յերկինս։

Եւ Երեմիա և Բարուք մտին ի սրբութիւնն և առին զսպաս սուրբ պատարագին և ետուն յերկիր, որպէս և խօսեցեալ էր ընդ նոսա Տէր։ Յայնժամ երկիր, եկուլ զսպասն. և նստեալ երկոքինն լային ի միասին։ Եւ յորժամ եղեւ վաղիւն, առաքեաց Երեմիա առ Ար-

դամելեք և ասէ. Առ զսակառին և գնա՛ ի գեղն Ցագ-
բիպա ընդ ճանապարհ լերինն և բեր սակաւ մի թուզ
հիւանդաց ժողովրդեանն, որք են ծաղկեալ, և ի վե-
բայ գլխոյ քո փառքն Տեառն։ Եւ զայս ասացեալ
առաքեաց զնա։

Եւ ի վաղիւն զօրքն քաղդէացոց պատեցին զքա-
ղաքն Երուսաղէմ, և փողեաց հրեշտակն և ասէ. Մը-
տէք ի քաղաքդ ամենայն զօրութեամբք քաղդէացոց,
աւասիկ բացեալ են ձեզ դրունք. մտէք ժողովուրդք
բազումք և դերեցէք զժողովուրդն։ Եւ Երեմիա առ
զբանալիսն տաճարին և ել արտաքոյ քաղաքին և ըն-
կէց առաջի արեգականն և ստորասուզեաց, և ասէ.
Քեզ ասեմ երկիր, ա՛ռ զբանալիս տաճարին Աստու-
ծոյ և պահեա՛ զդա մինչեւ յօրն, յորում քննէ զքեզ
Տէր վասն դորա։ Եւ երթայր Երեմիա և լայր զհետ
ժողովրդեանն, զոր տանէր ի Բաբելոն թագաւորն
բաբելացոց։

Եւ Բարուք արկ մոխիր զգլխով իւրով և լայր, և
հեծեծելով երթայր և ասէր. Վասն այսորիկ ապա-
կանեցաւ Եր.սաղէմ, վասն զմեղս սիրելոյ ժողովուրդ-
դեանն։ Բայց մի՛ պարծեսցին անօրէնքն և ասասցեն,
եթէ յաղթեցաք առնուլ զքաղաքն Աստուծոյ զօրք
մերոք, բայց վասն մեղաց մերոց մատնեաց Աստուած
ի ձեռս ձեր։ Այլ Աստուած մեր գթայ ի մեզ և դար-
ձուցանէ զմեզ ի քաղաքս մեր, և դուք կեանս ոչ կրէք։
Երանելի են հարքն մեր Աբրահամ և Սահակ և Յա-
կոբ, որ ելին յերկրէս յայսմանէ և ոչ տեսին զապա-
կանութիւն քաղաքիս։ Զայս ասաց Բարուք և ել ար-
տաքոյ քաղաքին լալով, և ասէ, եթէ վասն քո (Երու-
սաղէմ ելի?)[1] ի քէն։ Եւ եկաց նստելով ի վերայ
կերեզմանի, և հրեշտակք գային և պատմէին նմա
զամենայն՝ զոր ինչ Տէր հրամայէր նմա։

Եւ Աբդամելեք մինչդեռ գայր ունելով զթուզն,
տապ եղեւ ի վերա(յ) նորա. և գնաց առ ծառով միով,

1. Աստ ծանօթս տայ Արարատ, եթէ նեղեալ և զժուարընթեռնլի
են այս բառք ի դրչագրին իւրեանց։

զի ի հովանի նորա հանգիցէ սակաւ մի, և խոնարհեցուցեալ զգլուխն ընդ սակառաւն՝ յորում էր Թուն, և ննջեաց։ Եւ կաց անդ ի քուն ամս վաթսունեւվեց։ Եւ զկնի այսորիկ զարթեաւ ի քնոյ անտի, և ասէ. Քաղցր ի քուն եղէ սակաւ մի և ծանրացեալ է գլուխս իմ՝ զի ոչ յագեցայ քնով։ Եւ ետես զԹուն, զի կաթէր կաթն և ասէ. Կամիմ սակաւ մի ննջել, բայց երկնչիմ, եթէ ննջեմ՝ և յամեմ զգնալն, և աշխատի ինձ Երեմիա Հայրն իմ։ Եւ եթէ ոչ երկարեա[1] այսր իրացս, ոչ յուղարկէր զիս. բայց յառնեմ երթամ յայս խորշակէս, և ոչ արգելու զիս խորշակ աւուրս և ոչ դատումն։

Եւ յարուցեալ առ զսակառին Թղոմն և եդ յուսս իւր և եմուտ յԵրուսաղէմ. և ոչ ճանաչէր զնա և ոչ ըստուն իւր և ոչ զտեղի իւր. այլ և ի յազգէ իւրմէ ոչ զոք եգիտ։ Եւ ասէ. Օրհնեալ է Տէր, մեծ զարմանք գայ ինձ այսօր. չէ այս քաղաքն, մոլորեալ եմ, զլերինն ճանապարհաւն եկի և եթէ՝ էի դեռ եւս քնով և ծանր գլուխ իմ, և չէի յագեալ քնով, վասն այսորիկ մոլորեցայ ի ճանապարհէն և զիաՀդ իշխեցից ասել առաջի Երեմիա(յ)ի թէ մոլորեալ էի։ Եւ եկեալ ի քաղաքէն, և պշուցեալ հայէր ընդդէմ քաղաքին՝ զի տեսցէ նշան ինչ, և ասէ. Այս ոչ է քաղաքն և ես մոլորեալ եմ։ Եւ կրկնեալ անդրէն եմուտ ի քաղաքն, և յուզէր յազգականաց իւրոց և ոչ զոք գտանէր։ Եւ ասէ. Օրհնեալ է Աստուած, մեծ զարհուրումն գայ ինձ։ Եւ եկ արտաքոյ քաղաքին և ասէ. Նշանս քաղաքին է։ Եւ կայր տրտում և ոչ գիտէր եթէ ընդ որ երթիցէ։ Եւ եդ զսակառին ի վայր, և ասէ. Կացեմ աստ՝ մինչեւ վերանայ այս զարհուրումն յինէն։

Եւ մինչդեռ նստէր, ետես զոմն ծեր, զի գայր յագարակէ. և ասէ Աբդամելեք. Քեզ ասեմ ծեր, որ է քաղաքս այս։ Եւ ասէ ծերն. Երուսաղէմ։ Եւ ասէ

1. Գուցէ մարթ էր ընթեռնուլ՝ «զ էր յոր չէ», և կամ լաւ եւս՝ «զ էի յոր է»։

ցնա Աբդամելեք. Ո՞ր է Երեմիա քահանայ այն, և Բարուք ընթերցողն և ամենայն ժողովուրդ քաղաքիս այսորիկ, զի ոչ գտի զք ի նոցանէ։ Եւ ասէ ծերն ցԱբդամելեք. Զե՞ս դու ի քաղաքէս, որ այսօր յիշես զԵրեմիա և հարցանես վասն նորա զկնի այսչափ տա-րեաց։ Երեմիա է ի Բաբելոն զհետ ժողովրդեանն, զոր գերեաց Նաբուքոդոնոսոր թագաւորն. արդ առ նո-ցա է և աւետարանէ նոցա և ուսուցանէ նոցա զբանն Աստուծոյ։

Յորժամ լսեաց զայս Աբդամելեք ի ծերոյն, ասէ. Եթէ չէիր ծեր՝ և չէ պարտ անարգել զմարդ Աս-տուծոյ՝ մեծ ծաղր արարեալ էի զքեզ վասն այսր, զի ասացեր՝ եթէ Երեմիա զհետ ժողովրդեանն ի Բա-բելոն է. եթէ սահանք յերկնից անկանէր ի վերայ քաղաքիս, ոչ կարէր զնոսա ի գերութիւն տանել ի Բաբելոն, և զիա՞րդ ասես դու, եթէ գերեցաւ ժողո-վուրդն ի Բաբելոն։ Քանզի պահ մի է զի առաքեաց զիս հայրն Երեմիա յագարակն Ագրիպա վասն սա-կաւ մի թզոյ, զոր տանք հիւանդաց ժողովրդեանն. զոր գնացի, և ի բերելն՝ վասն խորշակին՝ նստայ առ ծառաշուքն, զի սակաւ մի հանգեայց, և խոնարհե-ցուցի զգլուխ իմ ի վերայ սակաւոյն, յոր թուն էր։ Եւ այսպէս կարծեմ, եթէ սակաւ մի եմ յամեալ, և դեռ եւս կաթն թզոյն իջանէր, զիարդ և որպէս ի քաղելն իմ։ Եւ դու զիա՞րդ ասես, եթէ ժողովուրդն ի Բաբելոն ի գերութեան է։ Ա՛ռ և տե՛ս զթուզդ, զի դեռ եւս կաթամ(ր)ն կաթնն իջանէ. և եցոյց զսա-կաւին թզոնն՝ ծերոյն։

Եւ ետես ծերն, որ դեռ եւս իջանէր կաթնն, և ա-սէ ծերն. Որդեակ, արդար մարդոց ուրեմն որդի ե-ղեալ ես, և չկամեցաւ Աստուած որ տեսանէիր զա-ւերումն այսորիկ, և վասն այսորիկ երեր զայդ զար-հուրումն ի վերայ քո։ Ահաւասիկ վախճանեալեց ամ է, մինչ է ժողովուրդն ի գերութեան ի Բաբելոն. և զիտա՛ որդեակ որ ստոյգ է այս՝ որ ասեմս քեզ։ Դար-ձի՛ր յագարակն և նայեա՛ և տե՛ս՝ զի ոչ իսկ է ժա-մանակ թզոյ, և տե՛ս զթզենին, որ չեն նոցա ժամա-

նակ պտղոյ և գիտասցես։ Յայնժամ գոչեաց Աբրամելեքն ձայնիւ մեծաւ և ասէ. Օրհնեմք զքեզ Աստուած երկնի և երկրի, որ հանգիստ ես որդոց արդարոց յամենայն տեղիս։ Յայնժամ ասէ ցծերն. Ո՞ր ամիս է այս։ Ասէ ծերն. Դիսան, որ է առաջին։ Եւ առ ի թզոյն և ետ ծերոյն, և ասէ ցնա. Աստուած լուսաւորեսցէ զքեզ ի վերինն Երուսաղէմ։

Եւ զկնի այսորիկ ել Աբրամելեքն յարտաքս քաղաքին և աղօթս մատուցանէր առ Տէր։ Եւ եկն հրեշտակ Տեառն և բուռն եհար զաջոյ ձեռանէ Նորա և եդ յայն տեղին՝ ուր Բարուք նստէր ի վերայ գերեզմանին։ Եւ յորժամ տեսին զմիմեանս, լացին ի միասին և համբուրեցին զմիմեանս։ Եւ նայեցեալ Բարուք աչօք իւրովք և տեսեալ զթուզն ծաղկեալ ի սակառին Աբիմելեքի, և համբարձեալ զաչս իւր յերկինս՝ ասէ. Դու ես Աստուած, որ չնորհես և հատուցանես վարձս սիրելեաց քոց. պատրաստ լեր սիրտ իմ և ցնծա և ուրախ լեր ի տեղւոջ քո և ասա մարմնական տան քո, եթէ դարձաւ տրտմութիւն քո յուրախութիւն ի գալ հղօրին և առնուլ ի բնակութենէ քումմէ. զի ոչ ելեալ[1] առ քեզ մեղք։ Ել ի բնակութենէ քումմէ և կուսական հաւատից քոց, և հաւատա՛ և կեցցես։ Եւ նայեա՛ ի սակառիս յայս թզոյ. ահա՛ ուադիկ վաթսունեւվեց ամ է կացեալ և ոչ թարշամեալ և ոչ նեխեալ, այլ կաթն իջանէ ի սմանէ. այսպէս լինի մարմին քո, եթէ առնես զհրամանս հրեշտակին արդարութեան, որ պահեաց զսակառի թզոյս և դարձեալ պահեաց զքեզ զօրութեամբ իւրով։

Եւ ասէ ցնա Աբրամելեքն. Արի՛ք կացցուք յաղօթս, որ ծանուցանէ մեզ Տէր, թէ որպէս առնեմք ազդ զաւետիս զայս ի Բաբելոն առ Երեմիա, թէ ո՛րպէս ծածկեաց զքեզ Տէր և զիս ի հանապարհին։ Եւ յաղօթս կացին Բարուք և Աբրամելեքն և ասեն. Զօրութիւն իմ, Տէր Աստուած, ընտրեալ լոյս որ ելանէ ի բերանոյ քումմէ. աղաչեմք և խնդրեմք ի բարերարու-

1. Գուցէ ուղիղ եւս իցէ ընթեռնուլ՝ ի վաղ։

թենէդ քուռմէ և ի մեծ անուանէ քումմէ, զոր ոչ ոք կարէ գիտել. լուր ձայնից մերոց և տուր խմաստութիւն սրտից մերոց, եթէ որպէս առնեմք և կամ որպէս առաքեմք ի Բաբելոն յԵրեմիա զաւետիս զայս։

Եւ մինչդեռ կայր Բարուք յաղօթս և ասէր զամենայն բանս զայս, խորհրդակիցն լուսոյ հոգաց՝ թէ որպէս կամ զիարդ առաքեն յԵրեմիա։ Եւ ասէ ցնոսա. Գայ առ ձեզ ի պահ լուանալոյն աթծուի մի. զնա գտանիջք և տանի զաւետիդ զայդ յԵրեմիա։ Եւ գրէ՛ թուղթ և ասացէ՛ք որդւոցն Իսրայելի, եթէ օտարք, որ ի ձեզ են, բաժանեցէք ի ձէնէ, զի զկնի յիսունեւհինգ աւուր արկանեմ զձեզ ի քաղաքս ձեր, ասէ Տէր, և որ ոչ բաժանին ի բաբելացոցն, ոչ մնանէ ի քաղաքս։ Եւ պատուիրէ՛ նոցա, որ ոչ խառնակիցին ընդ բաբելացիսն, ասէ Տէր։ Եւ զայս ասաց հրեշտակն ցԲարուք, և գնաց ի նմանէ։

Եւ առաքեաց ի սփիւռս հեթանոսաց և ետ բերել թուղթ և գրեաց զայս Բարուք ծառայն Աստուծոյ առ Երեմիա, որ ի գերութիւն գնաց ի Բաբելոն. Կամաք Տեառն ուրախ լեր և ցնծա, զի Աստուած ոչ բաժանեաց զմեզ ի յիմաստնոց մերոց. տրտմեալ էաք վասն քաղաքին, որ աւերեալ և անարգեալ էր, վասն այսորիկ գթացաւ Տէր ի մեզ և յարտասուս մեր, և յիշեաց զուխտ իւր՝ որ ընդ հարսն մեր եդեալ էր, ընդ Աբրահամու և Սահակայ և Յակովբայ։ Առաքեաց յիս զհրեշտակ իւր և պատմեաց ինձ զբանս զայս, զոր առաքեցի առ քեզ։ Նա է Տէր Աստուած Իսրայելի, այն որ եհան զմեզ յԵգիպտոսէ ի մեծ հրոյն, ասէ. Զի ոչ պահեցէք զարդարութիւնս իմ և բարձրացան սիրտք ձեր և խստերախ եղերուք առաջի իմ, և բարկութեամբ և սրտմտութեամբ մատնեցի զձեզ ի հուրն Բաբելոնի։ Եթէ լսիցէք ձայնի իմում, ասէ Տէր, զոր խօսի բերան Երեմիա ծառայի իմոյ. որ լսէ, հանեմ զնա ի Բաբելոնէ, և որ ոչն լսէ, օտարացուցանեմ զնա յԵրուսաղէմէ. և փորձեմ այս-

պէս ՀՐՄԼԼ Յորդանանու զայնոսիկ որ ոչ լսեն։ Յայտ առնէ այս նշան մեծ կնքոյ։

Եւ յարեաւ Բարուք ի գերեզմանէն և եդիս արծուի մի նստեալ արտաքոյ գերեզմանին։ Պատասխանի ետ նմա արծիւն մարդոյ ձայնիւ և ասէ. Ուրախ լեր, Բարուք, հաստատիչ հաւատոյ։ Ասէ ցնա Բարուք. Դու միայն ես խօսող յամենայն թռչունս երկնից՝ յաչացդ պայծառութենէն երեւիս. ուստ ինձ, եթէ զինչ առնէիր ասա։ Ասէ ցնա արծուին. Տէր առաքեաց զիս, զի զաւետիսդ տարայց ի Բաբելոն։ Ասէ ցնա Բարուք. Եւ կարեմ դու զաւետիս զայս տանել ի Բաբելոն առ Երեմիա։ Ասէ ցնա արծուին. Վասն այդորիկ առաքեցայ։

Եւ առ Բարուք զթուղթն և հնգետասան թուզ ի սակառոյն Աբդամելեքի և կապեաց ի պարանոց արծուին։ Եւ ասէ. Քեզ ասեմ, որ թագաւորդ ես թռչնոց, գնա՛ խաղաղութեամբ և ողջ, և տար զաւետիսդ և դարձիր առ իս. և մի՛ նմանիր ագռաւուն, որ առաքեցաւ ի Նոյէ և ոչ դարձաւ առ նա ի տապանն. այլ նմանեա աղաւնոյն, որ երիցս անգամ աւետիս եբեր արդարոյն. նոյնպէս և դու տա՛ր զբարի զաւետիսդ զայդ Երեմիայի և որ ի կապանս են ընդ նմա, և բարի լինիցի քեզ։ Եւ տա՛ր զուրախութիւնդ զայդ ժողովրդեանն և ընտրելոցն Աստուծոյ. և եթէ պատեսցեն զքեզ ամենայն ազգք թռչնոց երկնից և կամիցին մարտնչել ընդ քեզ, մարտիր ընդ նոսա, Տէր տայ քեզ զօրութիւն, և մի խոտորիցիս յաջ կամ յահեակ, այլ որպէս գնետ, զի գնայ ուղղորդ, այսպէս և դու գնա զօրութեամբն Աստուծոյ, և ընդ քեզ լինիցին փառքն Տեառն ի ճանապարհդ յոր գնաս։

Յայնժամ թռեաւ արծիւն, որ ունէր զթուղթն ի պարանոց իւր, և գնաց ի Բաբելոն։ Եւ գնաց և հանգեաւ ի վերայ սեան միոյ, որ կայր արտաքոյ քաղաքին յանապատն և լռեաց, մինչ գայր Երեմիա և անցանէր առ նա։ Քանզի ոմանք ի ժողովրդենէն եկեալ էին արտաքոյ թաղել զմեռեալս իւրեանց, զոր խընդրեալ էր Երեմիայ ի թագաւորէն Նաբուգոդոնոսոր

բայ՝ տեղի թագաւորայ զմեռեալս ժողովրդեան իւրոյ, և տուեալ էր թագաւորին։ Եւ մինչդեռ երթային և լային զկնի մեռելոյն, եկին ընդդէմ արծաթն։ Ա՛խ, ձայնիւ մեծաւ արծուին. Քեզ ասեմ Երեմիա՛, ընթերցարդ Աստուծոյ, գնա՛ և ժողովեա զժողովուրդդ քո և եկ սայսր և ընթերցիր զթուղթս, զոր բերի քեզ ի Բաբելոնայ և յԱրդամելեքայ։

Զայս իբրեւ լուաւ Երեմիա, փառս ետ Աստուծոյ գնաց ժողովեաց զժողովուրդն և զկանայսն և մանկունսն և եկն ուր էր արծուին։ Եւ նստաւ արծիւն ի վերայ մեռելոյն և կենդանացաւ մեռեալն։ Եւ այս եղեւ վասն այնր, զի հաւատասցեն։ Զարմացաւ ամենայն ժողովուրդն վասն նշանին որ եղեւ և ասեն. Դա՛ է Աստուած հարցն մերոց, որ յանապատի երեւեցաւ ի ձեռն Մովսէսի և արդ երեւացաւ մեզ։ Եւ ասէ արծուին. Քեզ ասեմ Երեմիա՛, եկ լոյծ զթուղթս զայս և ընթերցիր յականջս ժողովրդեանդ։ Եւ արձակեաց զթուղթն և ընթերցաւ ժողովրդեանն, և լըւաւ ամենայն ժողովուրդն և լացին։ Եւ առին մոխիր և արկին ի վերայ գլխոց իւրեանց, և ասեն ցԵրեմիա. Կեցո՛ զմեզ և պատմեա մեզ զիա՛րդ կարեմք առնել, կամ զիա՛րդ մտանել ի քաղաքն մեր։

Գրեաց Երեմիա ի Բաբուք և յԱրդամելեք առաջի ամենայն ժողովրդեանն զտրտմութիւնն, զոր լեալ էր նոցա, թէ որպէս առեալ էր զնոսա թագաւորին Բաբելացոց, կամ որպէս փեսանէր ամենայն ոք զհայր իւր ի տանջանսն, կամ որպէս տեսանէին զհարս իւրեանց և մխիթարէին. և հարքն տեսանէին զորդիս իւրեանց ի տանջանսն և ծածկէին զերեսս իւրեանց. և Աստուած ծածկեաց զձեզ և ոչ տեսէք զտանջանսն մեր։ Եւ յիշէի և հեծէի և դառնայի ի տուն իմ և երկնէր սիրտ իմ։ Եւ արդ աղաչեա ի տեղւոջդ յորում ես դու և Արդամելեք՝ վասն ժողովրդեանս, որ լսելի լինին աղաչանք մեր առաջի Տեառն և ելանեմք աստի։ Ասեմք ձեզ, և զայս ժամանակս՝ զոր առնեմք աստ՝ նեղեն զմեզ և ասեն, թէ օրհնեցէք զմեզ յօրհնութեանցն Սիոնի։ Ասեմք մեք ցնոսա. Զիա՛րդ դի-

տեմք օրհնել զօրհնութիւնս Տեառն յերկիր՝ օտար։

Եւ զկնի այսորիկ կապեաց զթուղթն ի պարանոց արծուոյն Երեմիա և ասէ. Երթ ի խաղաղութիւն, հագասցէ զմեզ և զձեզ Տէր։ Եւ թռաւ արծուին և եկն յԵրուսաղէմ և եհան զթուղթն ի Բարուք, և կարդաց և համբուրեաց զթուղթն, վասն որոյ լսեաց զտրտմութիւն ժողովրդեանն։ Եւ առ Երեմիա զթուղթն[1] և եհան հիւանդաց ժողովրդեանն. և ուսուցանէր զնոսա ի բաց կալ ի միաբանութենէ ազգին Բաբելացւոց։

Եւ եկն օր, յորում եհան Տէր զժողովուրդն ի Բաբելոնէ։ Խօսեցաւ Աստուած ընդ Երեմիայի և ասէ. Արի դու և ժողովուրդն, եկէք ի Ցորդանան և ասա զժողովուրդն, թէ ո՞ր կամի թողուլ զգործս Բաբելացոց. և արքն, որ առեալ էին ի նոցանէ կանայս, և կանայքն, որ առեալ էին ի նոցանէ արս, և լսեն քեզ և անցանեն ընդ Ցորդանան՝ տար զնոսա յԵրուսաղէմ. և որ ոչ լսեն քեզ և ոչ անցանեն ընդ Ցորդանան, մի՛ տանիր զնոսա։ Եւ Երեմիա խօսեցաւ զբանս ընդ ժողովրդեան. և յարեան եկին ի Ցորդանան անցանել։ Եւ ասէր Երեմիա զբանն Տեառն ընդ նոսա։ Եւ ոմանք ի նոցանէ, որ առեալ էին զկանայսն, ոչ կամեցան լսել Երեմիայի, այլ ասեն ցնա. Ոչ թողումք զկանայս մեր յաւիտեան, այլ դառնամք ընդ նոսա ի Բաբելոն։ Եւ անցին ընդ Ցորդանան և եկին յԵրուսաղէմ։

Եւ կաց Երեմիա և Բարուք և Աբդամելեք ի մէջ նոցա և ասէ, թէ՝ Ամենայն մարդ, որ հաղորդակից լեալ իցէ Բաբելացոցն, ոչ մտանէ ի քաղաքս։ Եւ ասեն ոմանք ի ժողովրդենէ անտի. Եկայք որ դառնամք ի տեղի մեր ի Բաբելոն, և գնացին։ Եւ ընդ դառնալն նոցա ի Բաբելոն, ելին Բաբելացիքն ընդդէմ նոցա և ասեն. Ո՛չ մտանէք ի Բաբելոն ի քաղաքս մեր. քանզի ատեցիք զմեզ և գաղտութեամբ ելիք ի մէնջ, վասն այդ ոչ բնակիք ընդ մեզ։ Երդումն երդուեալ է մեր իրերաց յանուն աստուածոց մերոց՝ ոչ

1. Անշուշտ վրիպակաւ եղեալ՝ փոխանակ զԹուղթն։

զձեզ և ոչ զզաւակ ձեր թողումք ի քաղաքս մեր, քան-
զի գաղտապէս ելիք ի մէնջ։ Յայնժամ դարձան և ե-
կին ի տեղի մի յանապատ, հեռի Յերուսաղէմէ, չի-
նեցին իւրեանց քաղաք և անուանեցին զանուն նորա
Սամարիա։ Եւ առաքեաց առ նոսա Երեմիա և ասէ.
Զղջացարուք, զի գալոց է հրեշտակն արդարութեան
և արկանէ զձեզ ի տեղին ձեր բարձր. և ոչ լսեցին
նմա։

Կայր Երեմիա և մատուցանէր զպատարագս ժո-
ղովրդեանն զինն օր. և եղեւ ի սահմանարդումն ա-
ւուրն և մատոյց Երեմիա միայն պատարագ և աղօթս։
Եւ մինչդեռ մատուցանէր՝ համբարձաւ ասելով. Սուրբ,
սուրբ, սուրբ, խունկս ի ծառոյ կենդանի, լոյս ճշմա-
րիտ, որ լուսաւորեցեր զիս, մինչեւ համբառնամ առ
քեզ. վասն ողորմութեան քո՝ աղաչեմ զքեզ, վասն
քաղցրաբարբառ սուրբ սրովբէիցն և կարդամ առ Մի-
քայէլ հրեշտակապետն արդարութեան, մինչեւ ար-
կանէ զիս ի տեղի արդարոցն։ Աղաչեմ զքեզ, Տէր
արդարութեան, ամենակալ ամենայն արարածոց, որ
անեղդ ես և անիմանալի, որ ամենայն զատաստան
առ քեզ ծածուկ է, և յառաջ քան զամենեսեան եղեալ
էիր։

Զայս ասաց Երեմիա մինչդեռ կանգնեալ էր ի խո-
րանին ընդ Բարուքայ և ընդ Աբիմելեքի։ Եւ նոքա
լային և զոչէին մեծաձայն և ասէին. Հայրն Երե-
միա, քահանայ, այրն Աստուծոյ, եթող զմեզ և գնաց։
Լսեցին ամենայն ժողովուրդքն զլայն նոցա և դի-
մեցին ի նոսա ամենեքեան, և տեսին զԵրեմիա՝ զի
անկեալ գնէր իբրեւ զմեռեալ։ Եւ պատառեցին զհան-
դերձն իւրեանց և արկին մոխիր զգլխով իւրեանց և
լացին լաց դառնապէս։ Եւ զկնի այսորիկ պատրաս-
տեցան առ ի թաղել զնա։ Եւ մինչդեռ անկեալ կայր
իբրեւ զմի ի մեռելոց, ի մօտ եկին Բարուք և Աբ-
դամելեք, և ահա եկն ձայն և ասէ. Մի թաղէք, զի
դեռ կենդանի է և հոգի ի մարմնոյ իւր դառնայ։
Եւ լսեցին և ոչ թաղեցին զնա, այլ կային շուրջ ըզ-

մարմնով նորա զերիս աւուրս և մնային թէ յորում աւուր յառնէ։

Եւ զկնի երեք աւուր դարձաւ ոգի նորա ի մարմին իւր, և արձակեաց ձայն մեծ ի մէջ ամենեցուն և ասէ. Փառս տուք Աստուծոյ և որդոյ նորա, որ յարոյց զիս Յիսուսի Քրիստոսի. որ է լոյս յաւիտենական, ամենեցուն անանց հրագն, կնիք հաւատոյ. և զկնի այսր ամաց, այլ եւս երեքհարիւր եօթանասուն և հինգ ամ և գայ երկիր՝ որ է ծառ կենաց բուսեալ ի մէջ դրախտին և առնէ զամենայն ծառ անպտուղ պտղաբեր, անմեղ և ծաղկին. և ծաղկեալքն՝ որ ամբարձեալ էին, ասեն՝ եթէ տուաք զծայրս մեր մինչեւ յամբս. չորացուցանէ զնոսա, իւրեանց բարձրացեալ ոստաքն՝ խոնարհեցուցանէ զոսսա, ծառն հաստատուն, և զորդանն՝ որպէս սար սպիտակացուցանէ, և զձիւնն թխացուցանէ, և զքաղցր ջուրսն՝ աղ խառնէ մեծ լուսաւորութեամբն Աստուծոյ։ Օրհնէ զկղզիս և առնէ զնոսա պտղաբերս բանիւ բերանոյ Աստուծոյ Օծելոյն, որ նա ինքն մտանէ և երանէ ընդ իւր երկոտասան առաքեալսն, որ աւետարանեն ընդ ամենայն հեթանոսս, զոր՝ տեսեալ և կազմեալ ի հօրէ իւրմէ՝ գայ ի լեառն ձիթենեաց և յայտեցուցանէ զքաղցեալ անձինս։

Զայս մինչդեռ ասէր Երեմիա վասն Քրիստոսի. թէ գայցէ յաշխարհս, բարկացան ամենայն ժողովուրդքն և ասեն. Այս այն բանք են, զոր ասաց Եսայի, որդի Ամովսայ, եթէ՝ Տեսի զԱստուած և զորդի նորա. եկայք ոչ ապանանեմք զսա մահուամբ նորա, (այլ) քարկոծ առնեմք զսա։ Եւ տրամեցան Բարուք և Աբդամելեք, զի կամէին լսել զխորհուրդս, զոր տեսեալ էր Երեմիա։

Յայնժամ ասէ Երեմիա ցԱբդամելեք և ցԲարուք. Լռեցէք, մի լայք, զի ոչ մեռանիմ, այլ զոր տեսանեմ՝ պատմեմ ձեզ. և ասէ. Բերէք այսր քար մի և կանգնեցէք։ Եւ ասէ. Լոյս յաւիտենական, հրամայեա քարիս այսմ լինել նման պատկերի իմում, մինչ զոր տե-

սեալ եմ զխորհուրդն պատմեմ Բարուքայ և Աբդամելեքայ։

Յայնժամ քարն հրամանաւն Աստուծոյ առ զկերպարանս Երեմիայի, և նոքա քարկոծ առնէին կարծելով Երեմիա է։ Եւ Երեմիա աւարտեաց զխորհուրդն, զոր տեսեալ էր, Բարուքայ և Աբդամելեքայ։ Եւ զկնիկ այսորիկ եկաց ի մէջ ժողովրդեանն՝ կամէր կատարել զկամն նոցա։ Յայնժամ գոչեաց քարն և ասէ. Ո՛վ մարդք, որդիք Իսրայելի, զիս քարկոծ առնէք և համարիք եթէ Երեմիա եմ. ահա Երեմիա կանգնեալ կայ ի միջի ձերում։ Եւ յորժամ տեսին զնա, ընթացան ի վերայ նորա բազում քարիւ, և կատարեցաւ կամքն նոցա։ Եւ եկին Բարուք և Աբդամելեք և թաղեցին զնա, և տային զքարն և եդին ի վերայ գերեզմանին և գրեցին ի վերայ. Սա է օրինակն Երեմիայի։

Եւ զայլ իսօքն Երեմիայի և զգօրութիւն մնացորդաց բանիւ՝ չէ գրեալ ի թղթի Բարուքայ։ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։

ԺԶ

ՏԵՍԻԼ ԵՆՈՎՔԱՑ ԱՐԴԱՐՈՅՆ[1]

ԵՐԵՒԵՑԱՒ ինձ այր մի յանդիման Լիբանան լերինն ի վեցերորդ ժամու աւուրն և տեսիլ նորա ի բոց հրոյ, և ասէ ցիս. Ի միտ առ, այր դու, զոր պատմեմ քեզ, զոր ինչ լուայ ի Տեառնէ զօրութեանց։ Եւ ես կացի զդիշերն ամենայն զէմ յանդիման լերինն յարեւելից կողմանէ և երեսք իմ ի ծովն արեւմտից յանդիման քրովբէին։

Եւ ահա ի վերայ ծովուն արծուի մի սօս և բարձրաթռիչ, ութ թեւք և երեք գլուխք ի վերայ նորա, և կայր ի վերայ ջուրց ծովուն և դիտէր ընդ հարաւ. և ծովն փրփրայր ի հողմոյն հարաւոյ և կուտակէր զալիսն ընկղմել զարծուին, և բախէին ալիքն զթեւս նորա և ձայն ալեացն իբրեւ զձայն երիվարաց՝ անցելոց ի կողմ ա-

1. Թէպէտ առ ի ընուլ զպակաս հատորայս հրատարակեցաւ Տէսիլս յէչմիածին (տես Արարատ, 1894, դեկտ.), բայց ի խնդրելս մերում զներդամտութիւն ընդ յանել ի տիպ հատորս՝ յղձակալթ բանասիրաց, բուսն է մեզ ծանօթս տալ միանգամայն, զի հապիւ ուրեմն յետ ամի մեզ (ի դեկտ. 1895) սատացաք զսա յաղնուամիտ Տեսչութենէ խմբագրատան Արարատի, բազում խնդրանաք և ընդ երկար մտալով. ընդ որ իսկ գուցէ արժան է զսոնալ։ — Որպէս տեսցի՝ ուրեք ուրեք հարկեցաք նչանակել փակագծիւ զերկբայական՝ մերթ և զյայտնի վրիպակ ընթերցուածս։

բեւեջից հիւսխոյ։ Եւ. ահա գլուխ վիշապի և աչք նորա ինն, ոտք նորա իբրեւ զմագիլս սաքիծու և վազք նորա իբրեւ ընձու։ Եւ հասանէր արծուոյն ի մէջ հողմոյն և ալեացն և ածէր զբերան իւր ի կլանել զնա. ճչէր արծուին առ բարձրեալն և ոչ լինէր լսելի աղաղակ նորա՝ վասն որոյ(այն) բռնութեան իւրոյ։ Դարձուցանէր արծուին զերեսս իւր ի փախուստ ի վերջին հիւսխոյ և ոչ լինէր նմա հանգիստ անդ։ Եւ վիշապն կլանէր զազգս ամենայն և կիզայր որպէս հրով և ոչ ինչ գտանէր յորովայնի նորա և տիրէր ի վերայ երկրի վեշտասանից և վեց, որ լինի ինանսուն և վեց՝ ամ. և ի կատարածի ժամանակի նորա՝ եղեւ դարձ արծուոյն ի նոյն տեղի սաստիկ զօրութեամբ ընդդէմ վիշապին ի հարաւային հողմոյն։ Եւ կայր գլուխ վիշապին ի վերայ մոխրակոյտ հողոյ, և կայր արծուին ի վերայ կառաց ճարմակ ձիոց, և հասանէր առ վիշապն ի վերայ լերին մոխրակուտին. և հարկանէր զվիշապն սաստկութեամբ, և ոչ գտանէր զօրութիւն վիշապին իբրեւ զառաջինն, և հոսէր զգլուխ վիշապին ընդ ազգս ամենայն. և իջանէին ճիքն ճարմակքն ի մոխրակոյտն և հոսէին զնա. և ելանէր փոշին և ցանէր ընդ երկինս և ոչ էր լուսաւորութիւն ի վերայ երկրի, այլ աղջամուղջ եւ մէգ անհնարին։ Եւ արք վեց նստէին յաթոռս իւրաքանչիւր, երեքն զաղրատեսիք և սուք և երկուքն սպիտակք և գեղեցիկք և վեցերորդն նեղեալ և սգաւեալ և պէ-(տխ)ռեալ ի վերայ կանանց և որդւոց իւրոց, և ամենեքին երկուացեալք ի վիշապէն՝ որ կայր ի մոխրակուտին, և ասէին. Հուր ելանէ ի վիշապէդ և այրէ զերկիր։

Եւ յետ այսորիկ աղաղակեաց քրովբէն և ասէ ցիս. Այր դու, առնր ի միտ զոտեսիլդ։ Եւ ասեմ, ոչ. և ասէ ցիս. Արի և լուր, և պատմեցից քեզ (զխորհուրդս) ամենայնի այդորիկ։

Արծուին տեսանէիր նորաթռիչ, որոյ էին թեւք ութ և գլուխք երեք. նա է թագաւորն Հոռոմոց և Յու-

նաց. և զի կայր ի վերայ ծովուն, կացցէ նա՝ թագաւոր սաստիկ իբրեւ զերկաթ. և որպէս վանէ արծաթի զամենայն. թռչունս և հարեալ ընկենու յերկիր. նոյնպէս թագաւորն Հռոմայեցւոց ապառնացէ զամենայն թագաւորութիւնս երկրի և որս(յ) վարմանք զօրութեամբ բարձրելոյն որպէս զթռչունս երկնից, և ոչ ոք իցէ որ կարիցէ ընդդէմ կալ նմա։ Եւ զի դիտէր ընդ հարաւ, առաւել զօրացի ի վերայ հարաւային ազգին. և զի ծփայր ծովն վասն սաստիկ զօրութեամբ հողմոյն, և զի բախէին ալիքն զթեւս արծաթոյն առ ի ընկղմել զնա. ի ժամանակս յետինս յաւուրս թագաւորացն այնոցիկ յետ հարիւր և ութ յոբելինին, յարիցէ ազգն յետին հարաւու՝ որդիքն Իսմայելի բնակեալքն ի ծովեզերին Արաբիա(յ). յարիցեն նոքա ի վերայ երկրի և կալցին զնա, և մարտիցեն առ սին ծովուն՝ լուծանել զիշխանութիւնն Հռոմայեցոց և ոչ կարիցեն՝ զի սեզապահ մեծի արքային է. զի թէպէտ և լինի ի վերայ նորա յարուցմունք պատերազմաց և ալէկոծութիւնք չարեաց՝ ընկղմել զնա ոչ կարեն, այլ խափանեալ փոխանորդէ զնա թագաւորութիւնք անմահ. բայց նուազեալ է վասն յանդիմանութեան մեղաց իւրոց և վասն ընդոյ մեղաց հարաւային ազգին։ Եւ ձայն ալեացն իբրեւ ըզձայն երիվարաց արշաւելոց ի կողմանս արեւելից հիւսիսոյ և արեւմտից. քանզի վանեսցեն զմեծութիւնս ազգաց և մաշեսցեն որպէս հող երկրի և ոչ գոյ ուրախութիւն ի վերայ երկրի, այլ ձայն լալոյ և աղաղակի և խռովութեան. և զի բախէին ալիքն զթեւս արծաթոյն, հարցեն և վանեսցեն ազգն Իսմայելի զզօրս Հռոմայեցոց և հիւսիսոյ, այլ ոչ կարիցեն բառնալ ի միջոյ։ Եւ գլուխ վիշապին զի կայր ի վերայ մոխրակուտին, ի մէջ ալեացն և հողմոյն, աչք նորա ինն, որ ոսք իւր իբրեւ զմագիլս սուիւծու և վաղ իւր իբրեւ զընձաւ. նա ինքն է առաջին իշխանն ի վերայ ազգին Իսմայելի և զօրութիւն նորա իբրեւ զալիս ծովու յարուցեալ ի վերայ երկրի։ Եւ ինն աչքն և ոսքն իբրեւ զաւիւծու. ինն թագաւորք յարիցեն յետ նո-

դա և կայլեն զերկիր և բեկցեն զնա որպէս զոր աւ-
ուիծուն։ Եւ զի հասանէր ի մեզ հողմոյն և ալեացն
արծուոյն և ածէր զբերան իւր առ ի կլանել զնա. յա-
բիցէ ի վերայ Թագաւորին Հռոմայեցւոց, նեղիցէ զնա
և առցէ զօրութիւն։ Եւ զի ճչէր արծուին մեծ բարձ-
բեալն և ոչ լինէր լսելի. զի դարձաւ Աստուած ի նոմա-
նէ վասն անօրէնութեան նորա, և ոչ կարասցէ կալ
ընդդէմ վիշապին. այլ եղիցի սիրտ նորա լքեալ և
խորտակեալ յահէ երկիւղի, և առցէ զիշխանութիւն
նորա ծառայ նորա, որ ուրեմն զանուն գազանի, և կոր-
ծանեսցէ զզօրութիւն նորա, և նա զերծեալ փախիցէ
ի վիրէին հիւսիսոյ . . . . և արասցէ անդ դաշն խնա-
մութեան ընդ իշխանին հիւսիսոյ և անուն(ն) Թագա-
ւորին Բերջեա։

Եւ զի կլանէր վիշապն զաղգս ամենայն և կիզոյր որ-
պէս հրով և ոչ զտանէր յորովայնի նորա. յայնմ ժա-
մանակի առաւել բորբոքեցի սրամտութիւն հարաւա-
յինն ազգին ի վերայ երկրի. որպէս ասէ(ուտէ՞) հուր
զամենայն նիւթ և մղեղեալ վանէ և ոչ գոյ յագումն ի
նա. նոյնպէս և նա նեղեալ ընչասիրութեամբ ոչ լցցի,
այլ ապականեսցէ զերկիր սրով և հրով և գերութեամբ.
մինչեւ ի կատարել մեղայ և ընուլ անօրէնութեան
իւրեանց՝ են ամք իննսուն և վեց։ Ապա եղեւ դարձ
արծուոյն ի հիւսիսոյ՝ գալ ունել զնոյն տեղի սաստիկ
զօրութեամբ ընդդէմ վիշապին, հրամանաւ բարձրե-
լոյն. որք և յարեան ի վերայ նորա՝ սատակեսցեն յե-
րեսաց նորա. և զի կայր գլուխ վիշապին ի վերայ
մոխրակոյտ հողոյն. քանզի մնասի է զօրութիւն նո-
րա և արհամարհեալ է իշխանութիւն նորա, զի յու-
սացաւ ի մեծութիւն դանձուց և ոչ Աստուած։ Եւ
արծուին կայր ի վերայ ճարմակ ձիոց և հասանէր առ
վիշապն. եկեսցէ նա ի վերայ իշխանին հարաւոյ սաս-
տիկ զօրութեամբ հիւսիսային աղգաւ և ամենայն ժո-
ղովրդովք մեսոպոտաց, և հարցէ զնա անհնարին հա-
ղուածովք, և ոչ գտցի զօրութիւն ի վիշապն իբրեւ
զառաջինն, այլ լքեալ պարտեսցի յերեսաց Թագա-
ւորին հիւսիսոյ, որպէս եղէգն առաջի հրոյ և որպէս

մեխիր հնոցի՝ առաջի հաղմոյն հիւսիսայ։ Եւ զի հուէր զգլուխ վիշապին ընդ ապտս ամենայն. որով և հրով և գերութեամբ վառեսցէ զնոսա, և ոչ ազատեսցի կանանց և մանկանց նոցա՝ մինչեւ առաստիկոյ ապառնոցին, և լցցի սրտմտութիւն Տեառն ի նոսա, զի յանխնայ կոտորեաց զժողովուրդն Աստուծոյ, վասն այնորիկ կրկին հասին նմա չարիք իւր. և նեղեսցի նա ի սով և ի ծարաւ և ի մերկութիւն և ի ոչ զոյգէ մխիթարութիւն, և այրեսցի մարմին նորա յարեգականէ և ոչ զոյգէ ծածկոյթ մերկութեան, ի բազում կարաստութեան իւրմէ, այլ մորթով խաչանց ծածկեսցէ զմերկութիւն իւր։ Եւ զի իմանէին ձիրն նորմանք ի մեխակոյսն և հասէին զնա և երանէր փոշին և յանէր ընդ երկինս. այլ այն) են զորքն Հռոմայոց, իբրեւ զձիս ի կապս զայրագնեալք. հանեսցին զմեծութիւն ազգին հարաւոյ ընդ ամենայն մեսոպոտամ ազգաց, իբրեւ զմեխիր հնոցն սխեսցին ընդ երկիր։ Եւ զի բարձրացեալ փոշին ցանէր ընդ երկինս- այն է ծաւխ անօրէն դառնութեամբ ազգին հարաւոյ. և՝ զի ի ձեռն վրէժխնդրութեան նորա լինելոց է կոտորած ամենայն աշխարհի։ Եւ զի ոչ գոյր լուսաւորութիւն ի վերայ երկրի, այլ աղջամուղջ. այն են գործք ամբարշտութեան նոցա, որ արգելուն զողորմութիւն Աստուծոյ յարարածոց, որ լուսաւորէ և մխիթարէ ըգհորտակեալս սրտիւք՝ իբրեւ զլոյս առաւօտոյ և զցօղ ի վերայ երկրի ի զուարճութիւն բուսոց։

Եւ զի նատէին արք վեց յաթոռ իւրաքանչիւր, երեքն զաղիրք և սեւք. նոյն ինքն է ժամանակ ազգին հարաւոյ. երեք տանուտեարք, երեք երեսուն՝ որ լինի ինն տասն ամ. և այլ եւս ամք վեց իշխանութեան նորա, որ լինի նեղութիւնք ի վերայ նեղութեանց. անբերութիւնք անգաստանաց, նուազութիւնք ազգերաց. երաշտութիւնք երկրի, անպտղաբերութիւն տնկոց, գոսաւոն անտառաց, անկաւոն մայրից, խամբաւոն ծաղկանց, բոբբոքաւոն և տաչաւոն հրոյ, ցնդեալն օդոց, մահ թռչնաց, պակասաւոն ձկանց, կործանեալն անասանց և երէց, անբերութիւնք անձրեւի և գնն ոչնչան (զեանք եղե-

մեան) և կարկամ. մարդկան անծնելութիւն և ամլութիւն և կարճակեցութիւն, և ամենայն իրաց պակասութիւն. քանզի ծերացաւ երկիր ի շարեաց մարդկան և եկաց ի ծննդոց իւրոց. վասն զի ոչ տարաբին բնակիչք նորա պատուղ կենաց, վասն այսորիկ ոչ յղաւ զի նա ի զարութիւն սերմանց իւրոց և ոչ բացցի արգանդ նորա ի բոյս պտղոց. այլ նեխութիւն և ապականութիւն դացի ի նմա, հրամանութիւնք երկնիք և ապականութիւնք ի ծովս և ի ցամաքի։

Իսկ յետ անցանելոյ իշխանութեանն հարաւոյ և լնուլ բարկութեան սրամութեան Ցեւան ի նոսա, յետ այնորիկ զի նոսաքին արք երկու ապիտակք և գեղեցիկք և կարմիրք և բարեսահիկք - այն են, զի յարժամ ապառնացին Հռոմայեցիք զազգն հարաւոյ, զառաջին պատերազմն հարցին ի ծովս, և հողմ ի Ցեւոնէ յարուցեալ՝ ընկղմեցին զնաւս. և թագաւորն զբռացի յԱստուած և նուիրեցին Աստուծոյ զյաղթութիւնն և զարձեալ հարցին զնաւս վեցիցս ի ցամաքի, զմեռցեալսն հալածեցին յայշխարհ բնակութեան իւրեանց, և զկանայս և զորդիս նոցա զերեսցին յԵլլադա և ի Սիկիլիա, և արասցէ խաղաղութիւն հրամանաւ բարձրելոյն - և կացցէ ինքն յետ այնորիկ ամս երկուասանն և փոխեցաւ զկեանս իւր խաղաղութեամբ։

Եւ ապա յետ նորա յարիցէ մեկ ուրեւ թագաւոր խաղաղական, և անուն նորա Փոսվիվ, որ թարգմանի Ցիրէր, և արիեցէ նա ամս երեսուն և երեք։ Այս են երկու տասնուտեսարքն ապիտակք և գեղեցիկք. զի յաւուրս սոցա եղիցի խաղաղութիւն և լիութիւն, մուտացուն ամենայն շարեաց և նեղութեանց առաջնոց. քաջալերութիւնք անդաստանաց, լիութիւն պտղոց, կայ(ս) և Հնձանի. յայնժամ տացէ երկիր զզօրութիւն իւր յուրախութիւն մարդկան իրրեւ զառաջինն, անդաստանք յուրեցին ցորենով և գինով. և տացեն երկինք անձրեւս չա(հ)եկանս, և ոչ եղիցի կարկուտ և հրամանութիւն և ցնդմունք օդոց. այլ արասցէ հատ մի ցորենո(յ)՝ հարիւր հատ, և տաչտ մի այգոյ՝ հազար ողկոյզ. և եղիցին ի լերինս տունկք ոչխոց(որ-

Թագ։ ասէր։ Էջ։ և պատասէաք։ և պատասխան
Հիթենից հեթանոսիկ յուրախութիւն մարդկան
հանդիպեն մարդիկ և մատաղին գնեցուցիցեն զա
ցինս։ Բայեցեալ երեւեցաւ նշանաւոր ասաղ։ զոր
մարդ կազմեալքն անելով էջս։ որ նշանակէ ասա
խոտաղատութիւն գիպմանքն զայնպարք բնեալ։ և
զի հաստատեցի Հրէից ազգին գՄիջագետաք և զ
մարքն Պոպեստինա(յ) և քաղաքն Դամասկեա
քեալ եղիցի ի բնակչաց և հանգրուանք երեսաց
գանաղ կացցեն։

Եր։ ապրն վերդերդ ազգեցեալ ի վերայ գան
և արդարդ։ նա է կատարեալ ժամանակի կենաց յոյ
հի։ Գանեցի յեռ մանչան խոտաղատան բնաւոր
ապա(յ) անուանն Ջիլեր է։ յորիցեն Թագաւոր ի նա
ապրեն։ և անուն նորա Հրէիք և ի բնանութիւն նորա
հանարշեալ։ և կալցեն ամն երբեր։ յայնմ ամի խ
նամեցցի թագաւորքն(ութիւնն)։ ի սասն Թագաւոր
(ութիւն) յամանանեցի Դանդի յորժամ հարցեն
հեսարան(յ) զայդն հարաւորին և գերեցեալ զնոսա
նոսա տարցեն և գանարին ի բնանան գերի հան
մարքն իւրով։ մանուկ անայ մնեալ ի քաղաքին
չանա։ և անուն նորա Ամէ։ Երթիցեն ի Ինչանդ
և կացցեն անդ ամս երեսուն և ապրեն անդ փիրաս
յական արշեան ի Հելլենս։ և ի նոյն ժամանակս
զամենեսին։ ընկալցի պատմ ի Թագաւորացն գ
զի զօրավար եղեալ Կատարեալ ասորեաց(ութիւն) ի պատերազմի և ասցէ պատմ ի Թագաւ
ութիւն։ Զեռ այսորիկ ի սասն յամանանեցի Թագաւոր
թիւնն։ և յայնմ հետէ ոչ կարարեսցին արեգիպտ
լեկոժութիւնէ պատերազմանց։ և եղիցի ամ յեր
գհինգ (գԷ) ամ և արգելցեն երկինք զանձրեւ և
ասցէ երկիր զպտուղ իւր։ մեռանցին գնոսա և
սեռցի ծով, և ասասակեսցին գազանք և անասուն
և անկցին մարդիկ և մեռցին ի մէջ քաղաքաց։ և
զի իցէ որ թաղիցէ։ արշամարհեսցի ոսկի և արծա
և ոչ զի իցէ որ ժողովիցէ զնոսա։ արշամարհեսցի
ղեցկութիւն կանանց։ Այս է ժամանակ ասանուանա

եցերորդի, որ սգայեալ էր ի վերայ կանանց և որ-
ոց, և որ երկուցեալք ասէին. Հուր ելանէ ի վիշա-
պէդ և այրէ զամենայն երկիր. զի յետ մահուան թա-
գաւորին, որո(յ) անուն Հրձիք է, խաւնակեսցի թա-
գաւորին(ութիւնն) և բաժանեսցի ի տասն ի միում ամ-
ճան. և զկնի Ա՛Ծ.երորդ(?) թագաւորեսցէ ապստամբն
Զաւրասցի ի վերայ տասն թագաւորացն. և հար-
էջ զկրկին ի նոցանէ և քակեալ կործանեսցէ զիշխա-
ութիւն տասանցն, և առեալ յինքն զթագաւորու-
թիւնն խաղաղասցէ ի վերայ Պաղեստինի և ի վերա(յ)
հիշխանութեան որդոցն Իսմայելի. և դարձեալ յետ
թուեցեամբ և բազում աւգնականեանք հարաւային աղ-
գին ի վերա Պաղեստինա եկեսցէ և հարցէ զնա.
և բորբոքեսցի սրտմտութիւն նորա որպէս աւձի ընդ
ամենայն երկիր, ապա անուանեսցէ զանձն իւր Ա-
տուած, և խաւսեսցի ամբարշաւաճութիւն առաջի
բարձրելոյն, և երկիր պագցեն նմա ամենայն անաւ-
դէնք։

Այն է հուրն՝ որ ելանէր ի վիշապէն և այրէր զեր-
կիր. զի ոչ գտանի յայնժամ արդարութիւն ի մարդիկ, այլ լիցին ամենեքին որպէս փուչք ի կիզնուլ
յանաւրէնութիւն-ն(թեանց) իւրաքանչիւր. ընդ նմին
վառեալ բորբոքեսցի վրէժխնդրութիւնք ի մարդիկ,
սուք և սուրք և հրկիզութիւնք, սուտ նշանք և արա-
հեստք. որովք զարհուրեցուցանէ զերկրպագուսն ՈՐ
(իւր) և չարչարանաւք կատարեսցէ զսուրբս բարձրե-
լոյն, որք ոչ համարեցան նմա պաշտաւն տալ իբրեւ
Աստուծոյ, և լինի ողորմութիւն բարձրելոյն ի վերա
երկիրս ածեալ իւրոց. և որչափ առաւելեալ չարչարես-
ցին՝ եւս առաւել պայծառասցին, իբրեւ զդրախտք պայ-
ծառացեալք կենդանի ջրովք և ծաղկեալք՝ ոմանք սպի-
տակք, ոմանք կարմիրք, ոմանք ծիրանիք, կատա-
րեալք պէս(պէս) տանջանաւք և չարչարանաւք. և են
աւուրք իշխանութեան ապստամբին (ՈՄԿԵ) հազար
երկերիւր վաթսուն և հինգ։

Յետ այնորիկ ապա յարիցէ թագաւոր բարեպաշտ
ի Հռոմ, և ժողովեսցին առ նա ամենայն ծնացորդք

յուխտէն Աստուծոյ. և յարուցեալ խաղասցէ
կեսցէ ի վերայ ապստամբին և զաւրաց նորա, և ի
րիցէ Տէր ինքնին վրէժ ի նմանէ։ Քանզի հուր ի Տ
նէ իջեալ՝ սատակեսցէ զնա և զզաւրս նորա, և
մենայն մեղաւորս կերիցէ. և ոչ մերձեսցի հուլ
պականել զծառայս բարձրելոյն, և շրջիցին ի հուր
ռեւ ի մէջ սաստիկ անձրեւաց. և կերիցէ Զէ(զ
զեաւթն) աւր զամենայն երկիր՝ ապականեալ ի չա
մարդկան, կիզցէ զլերինս և զբլուրս, և հալեսցէ
քարինս, և ցամաքեցուսցէ զաղբիւրս և զգետ
ծախեսցէ զամենայն ինչ մինչեւ ի սպառ։ Եւ
եաւթն աւուրն՝ երեւեսցի նշան փայտին՝ իբրեւ
թափանցիկ յարեւելից կողմանէ, յաւուր ուրբ
յերորդ ժամու, և կացցէ աւուրս երկու։ Եւ յա
երորդի ընդ այգն ընդ առաւաւտն, եկեսցէ Տէր
բովք հրեշտակաւք իւրովք՝ հատուցանել սրբոց
և յանդիմանել զամբարիշտս երկրի. հարցեն
հրեշտակապետքն երիցս անգամ, և յարիցեն ամե
աղգք մարդկան՝ յանդիմանն լինել առաջի Տեառն
ժամ զապստամբն կապեալ և զզաւրս նորա և
երկիր պագանէին նմա և կռոց պատկերաց, և
ցին նիւթ անշէջ հրոյն և անքուն որդանն, ի
տարոսն Եփեստոսի ի կողմանս արեւմտից հա
յովկեանոս ծովուն. և վարեալ ծծըմբով և ձի
այրեսցեն զամենայն մեղաւորս և ոչ չիջանիցեն։
ժամ ամենայն սուրբք՝ ընդ հրեշտակս՝ կացցեն հ
պազ առաջի բարձրելոյն Աստուծոյ, թագաւորեւ
ուրախացեալք, փառաւորելով զԱստուած յաւիտ
յաւիտենից։

ԺԷ

ՏԵՍԻԼ ԴԱՆԻԷԼԻ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ԵՏ երրորդ ամի, զկնի ամենայն յայտնութեանն՝ որ տուաւ Դանիէլի մարգարէի, առաքեցաւ Գաբրիէղ հրեշտակ՝ առաքեալ առ նա յարաշագոյն, և ասէ ցնա. Դանիէղ, այր ցանկալի. առաքեցայ ի Տեառնէ ասել քեզ բանս, և ցուցանել քեզ զկատարումն աւուրց՝ որ լինելոց են զկնի գալստեան բանին, որ ի ձեռն իմ աւետարանի։ Եղիցի կոյս յԻսրայելէ, և ընկալցի բան ի բանէ. և նա մարգասցի վասն աշխարհի, և կեցուսցէ զբազումս ի մէջ Իսրայելի։ Եւ դիր զսիրտ քո՝ և լուր զառաջիկա պատահումն ի կատարումն աւուրցն՝ յամենայն քաղաքս և ի գաւառս՝ վասն անօրէնութեան մարդկան։ Եւ ասասցէ՝ Դանիէղ. Տէր ատաց ցիս։ Եւ կատարելոյ զամենայն զբանս իմ զմարգարէականս վասն ամենայն քաղաքաց և գաւառաց, Ասիա, Պունիու, Փռիգիա, Գաղատիաս, Կապուդիկիս, Կարպաթաս, Միւռնիս, Անդրքիա, Աղէքսանդրիա, Եգիպտոս, Նիկիա, Նիկոմիդի, Քաղկեդոնիա, Բիւզէս, Բաբիլոնիանոս, Հռոմա. սուգ որդւոցն և աճումն սովով ապականէ զերկիր պտղաբեր. իշխանք քո որդիք հեծմանց. որ չուրջ զքեւ լի ստացուածք՝ յապականութիւն եղիցին, և փոխեսցին ի քէն ի Բաբեղոն յԵօթնաբլուրն. և ի Պունտոս իշխանն անկցի, և սուր ծախեսցէ զորդիս նորա, զորք նորա անկցին ի բերան սրոյ, և զբազումս տար-

ցեն ի Բիւզէս՝ և անդ թաղեսցեն զնոսա։ Եւ Փռիւ-
գեցւոց մանկունքն ծախեսցին ի սովոյ հացի և ի ջրոյ,
և երկիր նորա պատառեսցի, և ի կերակուր թռչնոց ե-
ղեցին. և բազումք ի նոցանէ փախիցեն ի Քաղկեդոն
և ի Գաղատեայ. և յերկնից հուր երեւեսցի, և ո-
րոտմունք և փայլատակունք ծախեսցեն զնա. և ա-
թոռք իշխանաց նորա յերկիր կործանեսցին, և հա-
բաւային կողմն նորա յարիւն և ի հուր այրեսցի. և
բազումք փախիցեն յայնժամ ի Հռոմ, ի փոքր Կա-
պադովկիա. և որդիք նոցա զմիմեանս կոտորեսցեն և
ի պարտութիւն մատնեսցին. և որ շուրջ զնովաւ ի-
ցեն՝ ի նեղութեան եղիցին և ի հառաչման։

Ի Փոքր Բաբեղոն և ի Կարպադիաս՝ որդիք նոցա
ի նեղութեան եղիցին, հրկիզութիւնս տեսցեն՝ և մի
հաւատասցեն. պատառումն եղիցի, և ամենեքեան ի
դժոխս իջցեն, և բազումք փախիցեն յԵօթնաբլուրն։

Զմիոնէ բարկութիւն յանախեսցէ, լցցի որդէս բա-
ժակ արեամբ, և անկումն ի բարձանց եղիցի. իշխանք
քո բարձցին և մեծամեծք քո անկցին, վասն զի օր
բարկութիւն Տեառն եղիցի քեզ։

Եւ Անտիոյ մանկունք ապականեսցին, և յօրինեալ
շինուածն՝ ի կործանումն եղիցի և իշխանք նորա մի վա-
յելեսցեն. անկումն շարժման եղիցի քեզ, և բազմու-
թիւն մեծութեան քո՝ կորուսցէ զքեզ։

ԶԱղէքսանդրիա յուզմունք պատերազմաց եղիցին
բազումք, և պարանոց ստահակութեան նորա՝ մինչեւ
ի նեռակալս նորա պարսպացն, իշխանք նորա հալա-
ծեսցին։

Եգիպտացւոց մանկունքն փախիցեն ի սովոյ հա-
բեալք, ստացուած քո եղիցին յոչինչ, և Նեղոս ցա-
մաքեսցի, և իշխանք քո կորիցեն։

Նիկիացւոց դստերք ի սուգ և ի տրտմութիւն ե-
ղիցին՝ վասն ազգականաց և արանց գերութեան՝ ի
զօրաւոր մարդկանէ, և իշխանք քո ծառա այնմ՝ ո-
րում ոչն գիտիցեն։

Վա՛յ քեզ Նիկոմիդա, որ բարձրացեալ ունիս զեղ-
ջիւր քո և կերար զմարմինս սրբոց՝ որ են ի քեզ.

ապականեսջիր արեամբ արդարոցն, որք հատուցանեն զփոխարէնս քո, և ի դժոխս յատակեսջիր. լայ ողբա, թշուառացեալ, զի ընկեսցին հանդերձ որդովք։ Քան՝ զի իշխանք քո՝ իշխանք հեծութեանց, և քահանայք քո՝ ոսկեսէրք և արծաթասէրք, և գեղեցկութիւն պայծառութեան քո ընկղմեսցի։

Կարգեցուք, ազգ Պարսից, զինչ հասանէ քեզ ի վախճանի աւուրցս՝ դու ոչ գիտես, և ի կատարածին յաւիտենից՝ քանի՞ ինչ եղիցին ժամանակք քո զկնի ամենայն քաղաքաց և գաւառաց։ Ի սովոյ ապականեսջիր, քաղաքդ պաճուճեալ յոսկւոյ և յարծաթոյ, ազգ պճնեալ և զարդարեալ. անառակութիւնք բազումք եղիցին ի քեզ, և ողայք քո զբօսեսցին ոսկւով, և ապա ի սովոյ ապականեսցին։

Բուզէս և Բաբեղոնի երկիր ընկղմեսցի, ի զօրաւորացն ըմբռնեսցի, և հիմունք նորա ապականեսցին և զօրութիւն նորա անկցի։

Հռոմս իշխան մի եղիցի ի ժամանակին յայնմիկ. բայց սուրն նորա սրեալ է, և նետն նորա ախտացեալ, նենգութիւն նորա բարձրացեալ. բազում անգամ իշխան յարիցէ՝ և դարձեալ անկցի. բազումք երկիցեն ի քէն՝ վասն բազմանիստ իշխանացդ պայծառութեան և վասն հպարտացեալ պարանոցի քո և առաւել հպարտութեան քո։

Բիւզա որդիք ի աքանչելագործութեան երեւեսցին. վասն զի երթիցեն ի նմանէ յԵօթնաբլուրն։ Այր Բուզացի, և հաստատեսցէ զհիմունս նորա, եղիցի անուն նորա ընդ ամենայն բնակիչս աշխարհի, մինչեւ ցորոշումն լեզուաց. և դարձեալ զնա այր նշանագործ ծնեալ՝ և ի ժամանակի իւրում ցանկութիւն նորա կատարեսցի, և գտցէ փայտ կենաց. և եղիցի գաւազան մեծ, և գտցէ բեւեռս՝ որ ի նորին նշանին էին, և դիցէ զնա ի սանձս իւր՝ վասն փրկութեան պատերազմաց յաղթութեան։ Եւ եղիւր նորա բարձր և հզօր, և անուն նորա ընդ ամենայն լեզուս. և պարգեւեսցի քաղաքիդ յիշատակ յաւիտենական։

Եւ զկնի նորա յարիցէ երկրորդ գաւազանն՝ որ

զարիւն արանց արդարոց հեղցէ, կարդասցէ զպատուիրանս՝ և ոչ գիտասցէ զԱստուած, և չօշափեսցէ զգիրս սուրբս կուրացեալ սրտիւ։ Եւ զկնի նորա եկեսցէ այր իմաստասէր ի քեզ, Եօթնաբլուրդ Բաբեղոնի, և պատկեր կանգնեսցէ ի քեզ, վասն որոյ մի բռնադատեսցիս դու։

Եւ զկնի այսր ամենայնի՝ յարիցեն եղջիւրք բարձունք և գաւազանք մեծամեծք, և զօրասցին ի վերայ քո. և յիշատակ սոցա եղիցի մեծ յոյժ։ Եւ միւս եւս գաւազան զօրասցի աքանչելապէս, և բարձրացեալ վասն անուանն Տեառն. վասն զի Աստուծոյ տուր[1] է ի նմա։ Ի ձեռն նորա կեանք եղիցին մեծ, և ի խնդութենէ նորա ուրախասցին ամենայն մարդիկ. և ի քաղաքաց և ի գաւառաց ի քեզ ժողովեսցին, և հանցեն ի քեզ Յեօթնաբլուրդ, և իւրաքանչիւր ոք զիւր գործ գործեսցեն։ Եւ զօրասցի գաւազան թագաւորութեան՝ մինչեւ վախճանեսցի։ Եւ ելցեն երկու գաւազանք ի միոյ գաւազանէ, և եղիցի մի գաւազան ծեր, գաւազան երրորդ՝ գաւազան անասուն, երկոսեանն ի փողոցս. Յեօթնաբլուրն Հռոմէ ի քեզ հասցէ ընդարձակութիւն բարձրութեան, գոգ ունելով և բաժակ լիութեամբ, մինչեւ հասցէ ժամանակք քո. առաջի նուագ քաղաքին՝ իմաստութիւն երգոց, և երկրորդն՝ հարստութիւն քո, աղբիւր բղխման ամենեցուն եղիցի. որպէս զարդարեալ և որպէս զարի[2] երեւեսցի։ Ողկոյզք քաղցրաբերքք՝ որ էին երբեմն նուազեսցին, և փառք քո մեծ՝ բաժանեսցին, և անկցի թագաւորութիւն նորա ի քեզ։

Եւ այլ գաւազան յարիցէ որ անուանեալ կոչի Թէոդոսիոս՝ եղեալ ի սրբութեան, և անուն նորա ուխտաւորեալ ի քեզ, Եօթնաբլուրդ. և ի ծննդեան նորա՝ որդիք քո ուրախ եղիցին, և գործեսցին իւրաքանչիւր ոք զինչ և խորհեսցին։ Ծառայեսցէ քեզ ամենայն քաղաք և գաւառ, և լիութեան քում՝ վայելչութիւն երկրի՝ բազում եղիցի, և Նեղոս եգիպտացւոյ՝ արբուսցէ քեզ, և պարիսպ եկեղեցոյ՝ եղջիւր՝ դու,

1 և 2. Այսպէս էր ի դրչագրին.

և երկեղ և դողումն եղիցի ի գաւազանի քում մեծապէս. և այս է սկիզբն հեծմանց թագաւորութեան քում։

Եւ ժամանակ գաւազանի նորա՝ բազում և մեծ յոյժ, և կալցի գաւազան նորա մինչեւ ի ծագս երկրի, և յարեւելից և յարեւմտից և ի հիւսւսոյ և ի հարաւու. և պարանոց նորա՝ հաստատուն, և սչ նորա՝ զօրաւոր, և ամք նորա՝ բազում, որպէս ոչ ուրուք եղեւ այլ թագաւորաց։ Եւ զկնի այսր ամենայնի՝ դարձուսցէ զերեսս իւր առ հայր իւր, և համար ամաց նորա՝ բազում, և անուն նորա ահեղ, և թագաւորութիւն նորա՝ պայծառացեալ յոյժ։

Եւ երրորդ այլ թագաւոր եղիցի ի Հռոմ, ով Եօթնաբլուրդ. և Եօթնաբլուրդ անուանեցար, վասն զի Պարսկաց ամենայն ազգ մոցեն առ քեզ. Հռոմէ մի թագաւորեսցէ մինչեւ ի կատարած յաւիտենից. և երկրորդ քո թագաւորեսցէ ծեր, և անուն նորա Մարկիանոս, և գաւազան նորա՝ սակաւ ժամանակեան. և եղիցի քան զառաջին գաւազանն ահեղութեամբ յոյժ, և եղիցի ժամանակն այն ոմանց ի բարի և ոմանց ի չար. և եղիցի թագաւորութիւն ի ժամանակս և ի կէս ժամանակի։ Եւ պարգեւեալ նմա ի չինողէն զքեզ Եօթնաբլուրդ, առ ինքն վերացուսցէ գրով հաւատոյն. և եղիցի հերձուած մեծ ի թագաւորութեան նորա, քահանայք յաթոռոց իւրեանց անկցին, և անկումն քաղաքաց բազմաց եղիցի, և փոփոխմունք մարդկան բազում եղիցին, և վայելչութեանդ քո, Եօթնաբլուրդ. և ընդարձակութիւն մի պակասեսցէ. և զկնի այսր ամենայնի և նա վախճանեսցի ընդ հարս իւր.

Եւ թագաւորեսցէ միւս գաւազան ի քեզ, և նա եղիցի գաղան, և ընկալցի զառաջին գաւազանն՝ որ երբեմն հարկանելոց է ի չանէն. և եղիցի այս գազան՝ որպէս զառաջին գաւազանն, և մեծ և զօրաւոր բանիւք և իմաստութեամբ, և մի արհամարհեսցի ի մեծամեծաց նորա. և պարանոց նորա՝ պարանոց զօրականի, և աչք նորա՝ որպէս աչք առիւծու. և ահեղութեամբ գոչեսցէ, և յեղջերաց նորա դողասցի ամենայն

քաղաքք և գաւառք։ Եւ ի ժամանակս նորա աղեղն երևեսցի յերկինս, և նշանք ազգի ազգի յերկինս և յերկիր, ձայն որոտման և անկումն քաղաքաց բազմաց լսիցեն. և երկիր պատառեսցի և շինուածք ի հիմանէ կործանեսցին, և ճանապարհք նորա հրեղէնք։ Պատերազմունք եղիցին ի նմա և ի քեզ Եօթնաբլուրդ. և յայնժամ հրով այրեսցին շինուածք վայելչութեան քո, և բարձրութիւն քո յերկիր յատակեսցի, և որդիք քո ողբասցեն ի քեզ, և բազմութիւն ուրախութեան քո՝ ի սուգ դարձցի։ Եւ որդիք քո քարշեսցեն զմարմին մեծամեծաց ի վերայ երկրի. և յանկարծակի փոթորիկ անկցի յերկնից և ծածկեսցէ զերկիր։ Եւ ազգ վիշապաձեւ յերկրի երևեսցին, և բազուկք աղքատասցին և բազում տնանկք մեծասցին, և ամբոխ մեծ եղիցի ի քեզ։ Աղաղակեցէք զորք զինուք և սուսերօք ի Թիրակա և ի Կիլիկիա։

Եւ ի ժամանակին յայնմիկ առաքեսցէ յարեւելս գազանն զսուր իւր, և ոչ կարասցէ յաղթահարել. և արհամարհեսցէ զնովաւ այր ոմն՝ վիշապաձեւ ի միջոյն և ի վեր։ Առաքեսցէ ի ձեռն նորա զերրորդ սուր իւր յարեւմուտս, և մի ժուժեսցէ յաղթահարել զնա. և արհամարհելով արհամարեսցի ի շանէն վիշապն. բազում ընծայիւք և ոսկւով նեղեսցի ի շանէն գազանն, և յարուսցէ զկորիւն իւր ի վերայ աթոռոյ գազանին և գաւազանացն՝ ի կորուսանելն զգազանն ի շանէն և առնուլ զդարանս նորա. և շունք կացուսցեն զգազանն արտաքոյ, և ծանիցեն մարդիկ՝ թէ շունն զառիւծն հալածէ, և դարձեալ անդրէն դարձուսցէ առիւծն՝ և սպանցէ զշունն և զկորիւնս նորա։ Եւ գոչեսցէ առիւծն գոչիւն մեծ յոյժ, և գոչիւն նորա լսեսցի յամենայն քաղաքս և ի գաւառս, և երկեղ նորա ի դալանս նորա։ Եւ եղիցին մարդիկ չփոթեալք ի միմեանց՝ վասն գոչման առիւծուն և վասն մահուան շանն. և հալածեսցէ երկրորդ շունն, շրջեսցէ զլեզուն իւր յայլաձեւութիւն մինչեւ ցդարան առիւծուն, և մեկնեսցին ի նմանէ՝ իբրեւ ոչ ժուժեսցեն նմա. և թաքիցէ կորիւն շանն ի ժամանակս և ի ժամանակս և ի ժամ մի.

և ի ժամանակի իւրում թագաւորեսցէ, և եղիցի անուն նորա կորիւն չան, որ թարգմանեալ կոչի՝ թագաւոր ազգաց։ Եւ գաւազանն ընկելով ընկեսցէ զյիշատակ չանն. յառաջ գիտացեալ՝ երգեսցեն զնմանէն չարաբասութիւն. ի քաղաքի նորա՝ զպատկեր նորա ընկեսցեն, և բազումք ի դարանս գազանին խորհեսցին՝ ապանանել զնա, և մի ժուժեսցեն նմա։ Եւ գաւազանակիցք ի միւս քաղաքի սրով մեռցին, և մեծապէս ծանիցեն զինդրուածս քահանային ի վերայ անծանօթիցն. և միումն ի մեծամեծաց երիտասարդի միոջ՝ որ ի զօրաց գազանին, զբազումս կապեալս ոտիւք և ձեռօք և առաքեալ առ գազանն, զբազումս յազգաց ազգաց ծառայս կոչելով առ ինքն՝ իբրեւ զտէր, և կացեալ այր յանդիման նորա, և ընկալցի ի գոգ իւր։ Եւ հալածեսցէ զարս պատերազմողս, և ինքն հալածեսցի ի նոցանէ. և փախիցեն ի նմանէ հետի և մի՛ ոք հասցէ նմա՝ զի արագ է ոտիւք։ Եւ փախիցէ առ գազանն և ի գոգ նորա, մտցէ առ նա և ելցէ՝ գազանն։ Փոքր էր գազանն և մեծ նստուսցէ զնա յաթոռ իւրում, և արասցէ գաւազանակից և աթոռակից փոխանակ ինքեան։ Եւ երկու գազանք ի միում այրի բնակեալք. կորիւն քաջալերեսցի ի գործ պատերազմի, և մեծ գազանն դարձցի յերկիր իւր՝ ուստի էր. և փոքր գազանն ընկալցի զտեղի նորա մինչեւ ի ժամանակ մի։ Ոչ ոմեքէ թագաւորեալ՝ այլ յանձին բռնութենէ. եկեսցէ ի դատաստան թագաւորութեան, և գազանն փոքր դարձցի առ գազանն մեծ։ Եւ թողեալ զդարանս իւրում արարողին՝ իշխանացի քեզ Եօթնաբլուրդ և կալցի ի նեղութեան. խնդութիւն նորա մեծապէս եղիցի, խաղալով խաղասցէ, և ի մեծամեծաց սիրեսցի և ատեսցի ի բազմաց, զկեանս և զլիութիւն տացի, և վիշապն խաղասցի նովաւ, և որսողական գաւազանաւ գազանին քարշեսցէ զնա։

Տայ[1] քեզ յայնմ ժամանակի, Եօթնաբլուրդ Բաբեղոն, յորժամ այրին թագաւորեսցէ և վիշապն հալա-

1. Այսպէս էր ի գրչագրին փոխանակ՝ Վայ։

ծեսցէ զայլազգին՝ որ անուանեալ կոչի Սաղամանդար, ի փախուստ դարձցի՝ դարձուցեալ զերեսս իւր հետեւեսցէ, և զտեղի սրբութեան հալածեսցէ և սատակեսցէ վիշապն լեզուաւ իւրով. ի վերայ արանց արդարոց և վերայ նշխարաց սրբոց. և զառաջնորդութիւն հազարապետացն խափանեսցէ և գերեսցէ զեկեղեցի սրբութեան։ Եւ որ ի ծերպս և յայրս և ի փապարս բնակեալ իցեն և յանապատի մոլորեալք՝ եկեսցին առ քեզ, Եսթնարլուրդ, բռնաւորեալք ի վիշապէն. և զկնի այսր ամենայնի զփոշի ոտից իւրեանց թօթափեսցեն ի քեզ՝ վկայեալ ի քեզ։ Յայնժամ հրով այրեսցեն գեղեցկութիւն վայելչութեան քո, և մի ոմն փախուցեալ յերիտասարդաց՝ պատճառանաք որսողական գաւազանաւն բերեալ զառաջին գաւազանն, որ անուանեալ կոչի Թէոդոսիոս։ Ապա յայնմ ժամանակի նեղեսցի վիշապն և յառաջնորդաց իւր ըմբռնեսցի, և յահկէորդացն՝ կապեսցի, և մի ոք ընկացի զնա զի եհեղ զարիւն սրբոցն ի քաղաքս և ի գաւառս. և փախիցէ ի տաճարն սուրբ՝ զոր գերէր յառաջագոյն և մի ոք ընկալցի զնա. զի երկնաւոր հարուածք եղիցին ի նմա։ Եւ երիտասարդն հասցէ առ Սաղամանդար, և յառաջ ուսուսցէ զայլազգին յանդիման վիշապին. փախիցէ և ի նմանէ, այլազգին մի ապանցէ զվիշապն. որոշեսցէ զնա յերեսաց իւրոց. և երիտասարդն անկցի անկմամբ, և այրին մի ապրեսցի. և ցուցանէ նմա զայլազգին և զաթոռակից նորա, և եղիցի հարկատու ի տաղաւար նորա՝ ուր ստեղծ զնա. և յաթոռ նորա խնդրեսցի արիւն հօր նորա։ Եւ այլազգին եղիցի մեծ, ի ժամանակս նորա եղիցի լիութիւն ի քեզ, Եսթնարլուրդ. և մեհ բազում մարդկան որ ժողովեալ են առ քեզ ի քաղաքաց և ի գաւառաց։

Յայնժամ ի տեղիս տեղիս շարժմունք եղիցին, և հարստութիւն քո և փառք քո տխեցուցին[2] զքեզ՝ ի

1. Այսպէս էր ի գրչագրին։
2. Անշուշտ՝ դիրեցուցին։

լինել քեզ հպարտ և ամբարտաւան, և փառասիրութեան քո խոնարհեցոյց զքեզ. բայց լիութիւն և վայելչութիւն բազում եղիցի քեզ։ Կատարած ժամանակի հասցէ քեզ, և ելցէ ի քէն որսողական գաւազանն՝ որ է ի գազանէն, և երթիցէ յայլազգեացն տեղիսն. և դստերք քո զարդարեսցեն զինքեանս ի գայթագղութիւն երիտասարդաց՝ ապականել զբազումս, և մեծամեծք քո անկցին, նեղութիւն և յուզմունք բազումք եղիցին։ Յայնժամ մահաբեր հրեշտակն հարցէ զքեզ ամենայն քաղաքաւք և գաւառաւք, և մահք բռնաւորք առաքեսցէ յերկնից, յանկարծակի բարկասցի ի վերայ երկրի. և երկիր շարժեսցի և անկցին մեհեանք, և տունք նոցա եղիցին գերեզմանք, և ծով եռացուսցէ զալիս իւր ի վեր և ծածկեսցէ զմարդիկ, և ի ձորս փախիցեն։ Յայնժամ հրեշտակաց ամբոխ եղիցի, և յանդիման կացցեն և աղաչեսցեն առաջի աթոռոյն։

Յայնժամ, Եօթնաբլուրդ Բաբեղոնի, զորդիս քո լացցեն՝ քուրձ զգենլով և մոխիր ի վերայ գլխոյ ցանելով, տեսանելով զմարդիկ՝ զի վասն մեղաց և յանցուածոց անկանին. արք տղայովք և կանայք ստնդիեցովք հանդերձ կորիցեն, զի բարկութիւն Տեառն (է) ի վերայ։ Պարիսպք քո պատառեսցին և յատակեսցին տաղաւարք քո. մանկունք ստնդիայք խարշեալք՝ բերանովք իւրեանց աղաղակեն առ Տէր, և քահանայք քո ցտելով կոծեսցին։ Զգաւազանս քո՝ մեծամեծք քո լացցեն և քաղաքիցք[1] քո՝ յոյժ տրտմեսցին, և հանապարհորդք քո՝ ի նեղութեան եղիցին. և ողկոյզք քո անկցին, այգիք քո պակասեսցին։ Դղորդմամբ պատառեսցի երկիր և կորուսցէ զմարդիկ՝ մինչեւ ստնդիայս և ի ծերս. բայց մինչեւ իսպառ մի կորուսցէ զքեզ Աստուած, վասն զի չեւ հասեալ է ժամանակ կորստեան քո. բայց ի խորխորատի ծածկեալ զմարդիկ՝ և ոչ ծածկեսցէ, զի չեւ է հասեալ ժամանակ քո։ Պատրաստեալ են քեզ տանջանք, զի զամենայն անօրէնութիւն գործեցեր ի քեզ՝ ընդունելով զերկիր ի գոգ քո։ Յուզմունք խորհրդոց

1. Անշուշտ՝ քաղաքացիք։

մարդկան բազում եղիցին, մինչեւ Տէր ի վերուստ հրամայեսցէ կորուսանել զմարդիկ։ Բայց խորհուրդ Տեառն երեւեսցի, ուստի պատահումն լինելոց է. ապաւինեալք ի քեզ՝ ընկալցին զտանջանս, ազգն այն՝ որ յուսացուն ի քեզ։ Եւ կորիւն զկորիւնն փախուսցէ՝ խնդրելով զարիւն հարց նորա, և ինքնակամ կամաք մատնեսցի այլազգեացն, չանն և ընկերաց նորա. և յարուսցէ լեզուս և ազգս, և տիրեսցէ ի վերայ ազգաց բազմաց. և երկու չունչքն մարտիցեն ընդ միմիանս և զմիմեանս կորուսցեն։ Վայ՝ յորժամ այրին Թագաւորեսցէ և նեղութեամբ խաղասցէ ի վերայ այլազգեացն, և միւս այլազգին խնդրեսցէ զկորուստ նորա՝ և ջնջեսցէ զնա. և եղիցին դժնդակ և չար՝ աւուրքն այնոքիկ։ Որդիք գաւազանացն ի խռովութեան եղիցին՝ ընդ միմեանս պատերազմելով. յայնժամ բազում նեղութիւն և չար եղիցի մարդկան, որպէս զի չէ եղեալ երբեք. և մի վստահասցի իշխան հաւատացեալ ի Սաղամանդար՝ զի այլազգի է, և յապգէ նորա ընկալցի նա՝ զոր ոչ խնդրեսցեն. և կամիցի փախչել ի Սաղամանդար՝ և մի կարասցէ, և հասցէ և սպանցէ զնա Ղակիտաս, և տիրեսցէ միագաւազան ի քեզ, Եօթնաբլուրդ, և եղիցին երկունք բազում։

Յարիցէ այր աղքատ՝ որ ոչ ճանաչիցէ զչնորհս իւր, ամբարտաւան, հպարտ, ոսկեսէր, պատերազմասէր, և անուն նորա Ղուկիոս. և աթոռ նորա սակաւաւուրց և բարկացող, և մեծամեծք նորա ատեսցեն զնա, և քաղաքակիցք նորա նեղեալք ի նմանէ։ Երկնային բարկութիւն եղիցի յաւուրսն յայնոսիկ, և բազում անգամ նեղեսցէ զԲաբեղոն։ Ի ժամանակս Թագաւորութեան նորա՝ ձայն գուժոյ հասցէ առ քեզ, զոր բարբարոսաց խռովեցուսցեն զքեզ և մի պատերազմեսցին։ Եւ յարիցէ այլ Թագաւոր ընդդէմ նորա՝ պատերազմել և հալածեսցէ, և բազում տրտմութեամբ և հեծութեամբ հանցէ զոգի նորա և որ ի քեզ, Եօթնաբլուրդ. և եղիցի յաթոռս մեծամեծս և պայծառս, և այրն կորովի յայմէ և յահեկէ։ Եւ ի ժամանակս նորա սով մեծ եղիցի և ոչ փոքր. և ապականեսցի երկիր ի մարդ-

կանէ, և յորձանք ջրոց հասցեն, և օթք սեւաթիւրք խառնեսցին, և այդիք քո սակաւասցին, և վայելչութիւնք քո նեղեսցին։ Եւ պակասեսցին աւուրք, և եղիցի օրն՝ վեց ժամեան, վասն մարդկան որ եղիցին ի ժամանակին յայնմիկ. և դարձուսցէ զերեսս իւր ի Թագաւորն յարեւմուտս։ Յայնժան վայ քեզ, Եօթնաբլուրդ, յայնժամ Թագաւորն երիտասարդ. ի ժամանակին յայնմիկ եղիցի քեզ նեղութիւն մեծ. այր՝ յորժամ ունիցի զկին եղբօր իւրոյ, որդի՝ զմայր իւր, դուստր՝ ելցէ յանկողին հօր իւրոյ, եղբայր՝ զքոյր իւր, և յոլով ելցեն հայհոյութիւնք, երդմունք, չարախօսութիւնք, ստութիւնք, մարդասպանութիւնք, պղծութիւնք, յափշտակութիւնք, եղբայրատեցութիւնք, խռովութիւնք, հեղումն արեան ի տանէար սրբոց սպասաւորաց. և Թագաւորք ընդ Թագաւորս, իշխանք ընդ իշխանս, հզօրն յաղքատին վերայ յարիցէ, և անկումն եղիցի հարստին և աղքատին։ Եւ Բիւթինեայ՝ որ ի ծովեզր՝ շարժմամբ յատակեսցի, և քարձրացեալ կուտակեսցին ալիք ծովու և ծածկեսցէ զհիմունս Բիւթինիա՝ մինչեւ ցկրտսեր քաղաքն Նիկոմիդա։ Եւ ապա դարձեալ յարիցէ այլ Թագաւոր և ժամանակ նորա սակաւ աւուրս, չար և ամենեւին ահեղ. և ապա յայնմ հետէ ոչ եղիցին ժամանակք բարիք՝ այլ չարք, ընդ որում պատերազմեսցի իւր որդին և ծախեսցէ զնա սրով։

Եւ միւս Թագաւոր յարիցէ յայլմէ պաշտմանէ՝ որ է Արիանոս՝ ձգել առ ինքն զամենեսեան. յայնմ ժամանակի վայ քեզ, Եօթնաբլուրդ, զի քան զամենեսեան առաւել սգաս զքեզ և զսահմանս քո։ Ապա յարիցեն՝ Թագաւորք և իշխանք և առաջնորդք և նահատակք՝ ի վերայ քաղաքաց և գաւառաց, և խոնարհեսցի երկիր՝ ի բազմութենէ աղգաց՝ ի կանգնումն եօթանասուն և երիս, և մի նեղեսցիս յայնժամ Եօթնաբլուրդ ի նոցանէ. բայց առանձին պատերազմ եղիցի ի քեզ և վայելչութիւն երկրի սակաւասցի ի քեզ, բայց բարկութիւն յերկնից եղիցի ի քեզ և հարուածն յոյժ, և երեւեսցի սիւն հրեղէն յերկնից յերկիր. յայնժամ փոխեսցի Թագաւորութիւն քո և եղիջիր ծնա-

ցեալ յապականութիւն յաւիտենից. և ի սովոյ յայնժամ այսպէս սպառեսցի։ Եւ բերցէ զերկրորդ գաւազանն ի միւս քաղաքն՝ յոչինչ իշխանէն, և նեաս հրեղէնս տեղասցի յերկնից, նշանք և արուեստք բազումք եղիցին։ Յայնժամ տիրեսցէ նեռնն և մարդիկ յաստուածպաշտութենէ խոտորեսցին յանհաւատ գալըստեան, զորս ոչ խնդրէին և ոչ ակն ունէին, այնք որ ոչ հաւատային ի նա՝ որ ամենայնի ընդիմակացն էր։ Սա յղասցի և ծնցի ի կուսէն պղծոյ, և կալցի գաւազան խարէութեան զազգս մարդկան՝ ժառանգակից լինել զեհենին յաւիտենից։ Յայնժամ յուզմունք եղիցին հրեշտակաց, տեսանելով զնշանսն՝ զոր յաւաղգոյն գնացուցանէր։ Եւ զայս խմացեալ աստուածասէր մարդկան, ծանուցեալ և տեսեալ ամենայնի զընդիմակացն, որ է ազգի մարդկան՝ որոյ է նշանս այս. զոգք անկրկնելի՝ ծնկացն, հաշմ անձամբ՝ որ ոչ կայսն, մանգաղամատն, սրագլուխ, շնորհաւոր, մեծաբան, ի մաստուն, քաղցրածաղր, տեսանող, խորհրդական, սափ, հեզ, հանդարտ, նշանագործ, մուտ ունելով զոգիս կոբուսելոցն, ի քարանց հաց հանելով, կուրաց տեսանել, կաղաց գնալ, և զլերինս տեղւոջէ ի տեղիս փոփոխել, առ աչօք արասցէ զայս ամենայն, և որ առնուցուն զնշան նորա՝ զաչս նոցա կապեալ, որ ոչ դառնա անդրէն՝ յոր յուսացանն յառաջագոյն։

Յայնժամ եղիցի սով մեծ, և մի տեղասցին երկինք զանձրեւ և երկիր մի բուսուսցէ զդալարի, և եղիցի չորացեալ ամենայն պտուղք, և վասն այնորիկ քաղաքք և գաւառք ողբասցեն զնիքեանս, փախչելով փախչիցեն յարեւելից յարեւմուտս և յարեւմտից յարեւելս։ Իսկ որ բնակեալ են ի լերինս և յայրս և ի ծերպս և ի փապարս երկրի, նոքա միայն կարեն փախչել մինչեւ յերկրորդ գալուստն՝ որ ծնաւ ի սուրբ կուսէն։ Յայնժամ ընտրեալքն նորա յայտնի եղիցին, տեսանելով զյաւիտեան Տեառն զգալուստն, կացցեն յառաջ և բազումք դատեսցին. յերկնից յուզմունք եղիցին, յայնժամ նեղութիւն ահագին եղիցի ի վերայ տիեզերաց։ Վայ յղեաց և ստնդուաց յաւուրսն յայնոսիկ. վայ

անժուժացն և որ հաւատայցեն ի հակառակորդն. վայ այնոցիկ՝ որ երկիր պագանեն նմա, և վասն գալստեան նորա յայտնեցան։ Եւ յետ լինելոյ այսր ամենայնի և կրելոյ զչարչարանս. Աստուած՝ արդար մարդկանն՝ որ ի հարկատրութենէ նեղեալ իցէ՝ հացէ, և ապա կատարած։ Եւ ոմանց ի մարդկանէ նշանս ցուցցեն՝ ծանուցեալ զԵօթնաբլուրն, և ասիցեն՝ Արդեւք բաղաք լեալ իցէ՞ սա։ Եւ կին մի երկրակոխեալ յարեւելս և յարեւմուտս, ի հիւսիսի և ի հարաւ՝ և մի գոցէ պտուղ, բայց միայն գոցէ ձիթենի մի, և գիրկս արկցէ ձիթենւոյն, յոգւոց հանիցէ և ասիցէ. Երանի այնմ՝ որ տնկեալ իցէ զծառս զայս. և ոգի նորա վերասցի ի նմանէ անդ ի տեղւոջն։ Յայնժամ արեգակն դարձցի ի խաւար և լուսինն՝ յարիւն և աստեղք՝ որպէս տերեւ անկցին և երկինք՝ որպէս մագաղաթ գալարեսցին, և ծով յանդընդոց յեռասցի և ելեալ և ծածկեալ զերկիր, և ամենայն ինչ՝ յոգոյ այրեցեալ չորասցի։ Եւ հրեշտակք հրեղէնք յերկնից իջցեն և հուր բորբոքեալ ընդ տիեզերս. մանկունք հրաձեւ եղիցին. որ նման նոցա գազանք գիշակերք ի լերանց ելցեն և մի երկիցեն. զոր խնդրէին՝ երկիրն ամպարշտաց՝ սատակեսցի, արդարքն յափշտակեսցին առ հայր՝ զի հրաման ել ի Տեառնէ։ Աթոռք դնին և գիրք բացցին, դատաստանք յօրինեսցին, հրեշտակք փող հարցեն, արդարք պարեսցեն, հօր օրհնութիւն հանցեն, և ըստ իւրանաքանչիւր գործոց դատեսցին։

ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ

Ա. Գիրք Ադամայ 1
Բ. Մահ Ադամայ 24
Գ. Կտակ Նահապետաց 27
» Ռուբենի 27
» Շմաւոնի 36
» Ղեւիայ 48
» Յուդայի 76
» Իսաքարայ 94
» Զաբուղոնի 99
» Դանայ 105
» Նեփթաղիմայ 113
» Գադայ 120
» Յովսեփայ 132
» Բենիամինի 143
Դ. Պատմութիւն Ասանեթայ 152
Օրհնութիւն խոստովանութեան Ասանեթայ . . 187
Ե. Պատմութիւն Մովսէսի 199
Զ. Մահ Մարգարէից 207
» Եսայայ մարգարէի 207
» Ովսէի » 208
» Ամոսայ » 209
» Միքեայ » . . . . . »
» Յովելայ » 210
» Աբդիու » . . . . . »
» Յունանու » 211
» Նաւումայ » 212

Զ. Մահ Ամբակումայ մարգարէի 215
» Սոփոնիա » 215
» Անդէի » . . . . . »
» Զաքարիա » 216
» Մաղաքիա » 217
» Դանիէլի » 218
» Երեմիա » 222
» Եզեկիէլի » 224
Է. Վասն Սողոմոնի արքայի 228
Հարցմունք դէխոյին և պատասխանիք Սողոմոնի որդւոյ Դաւթի 229
Վասն գրեանցն Սողոմոնի 232
Յաղագս գրեանցն Սողոմոնի 233
Ը. Աղօթք Մանասէի թագաւորի 235
Թ. Տեսիլ Դանիէլի եօթներորդ 237
Ժ. Գիրք Եզրի երրորդ 251
Հարցաքննութիւն Եզրի մարգարէին ընդ հրեշտակն Տեառն վասն հոգւոց մարդկան 300
ՑԱՒԵ ՈՒԱՒ . . . . . .
ԺԱ. Պատմութիւն ստեղծման և յանցմանն Ադամայ . 307
Պատմութիւն ելանելոյն Ադամայ ի դրախտէն . . 312
Այս է պատմութիւն որդւոյն Ադամայ Աբելի և Կայենի 314
Վասն աւետեացն Սեթայ զոր պարտ մեզ ունկնդնել . 319
ԺԲ. Պատմութիւն ապաշխարութեան Ադամայ և Եւայի նախաստեղծեց թէ որպէս արարին . . . 323
Բանք Ադամայ առ Սէթ 331
ԺԳ. Պատմութիւն համառօտ Եղիայի մարգարէին . . 333
ԺԴ. Քարոզ Յունանու Մարգարէին որ ի Նինուէ քաղաքին 343
ԺԵ. Վասն Երեմիայի մարգարէի ի դրոցն Բարուքայ . 348
Պատմութիւն սրբոյն Երեմիա մարգարէին և աշակերտաց նորա՝ Բարուքայ և Աբիմելէքայ . . . 358
Ի Ճացորդաց գրոց զոր գտի ի գիրս Հռոմոց . . 364
ԺԶ. Տեսիլ Ենովքայ արդարոյն: 378

ՑԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ

Աբելիս 210, 337.
Աբել տես Հաբել.
Աբելմայում 31.
Աբիմելէք կամ Աբդամելէք 330–386.
Աբրահամ նահապետ 38, 68, 74, 224, 307–322, 326–332.
Աբրիպաս կամ Յաբրիպա 330–386.
Ադամ 1–26. 307–332.
Ահարոն 199, 204, 223.
Ադան 334.
Ալեքսանդր մակեդոնացի 223, 363.
Ալեքսանդրիա 223, 257.
Ամալեկ 44.
Ամասիա 209.
Ամաքում 213.
Ամբրոյէմ 37.
Ամոս 209.
Ամրամ 199, 200.
Անանիրամ 82.
Անդէ 213,
Անդուն 323.
Անտիոքաս 257.
Ասանէթ 132 — 198.
Ասեր 27 — 130.
Ասիա 237.
Ասիթ 137.
Ասն 332.

Արամ 83, 94.
Արիանոս 248.
Աւնան 82.
Աքայաք 209, 211, 333 — 342.
Բաբելոն 235 — 257. 350 — 374. 387 — 396.
Բաբելոնոս Բաբիլոնոնոս 237. 387.
Բալլա 31, 85, 113, 145.
Բաղտասար 218.
Բարուք 349 — 377.
Բաբա 82.
Բեէմուէթ 220.
Բեթել 56, 61.
Բեթովր, Բեթորով, Բերթորոն 218.
Բելիասասա 78.
Բեհեմովթ 329.
Բենիամին 92 — 151.
Բերջեա 381.
Բէլ 219.
Բիչանա 384.
Բերսուէ 82, 83, 85, 88.
Բիւղէս, Բուղէս 237 — 239. 387 — 389.
Գաբրիէլ 307, 336.
Գադ 27 — 126, 193 — 198.
Գաղեր 81.
Գաղա 77.
Գաղատիա 237.
Գաս 81.
Գեբաղ 36.
Գեսեմ 62, 189.
Գերասամ 62,
Գերասամ որդ. Մովսիսի 201.
Գնասպատ 62.
Գոբենիդոթա 38.
Դան 34 — 150, 173 — 198.
Դանիէլ 213, 218 — 222, 237, 387.
Դեբովրա 113.
Դինա 48, 53, 192.
Եգիպտու 237.

Եզեքել 333·
Եզեկիա 207·
Եզեկիել 224 — 227·
Եղբ Սաղաթիել 251·
Ելիա, տես Զելիա·
Եղիա 210, 211· 333 — 342,
Եղիազար 201·
Եմա դատ. Ադամայ 24·
Ենակիմ 202·
Ենովք 43, 62, 66, 115, 150, 321, 332, 378·
Եսայի 207·
Եսու 82, 150·
Եսթերա դատ. Ադամայ 24·
Եսու որդի Նաւեայ 204·
Երեմիա 222, 223, 349 — 377,
Եւա 1 — 26, 308 — 319, 326 — 332·
Եփրաթա, Ափրադա 31·
Զաքուզոն 92, 99 — 150·
Զաքարիա 216·
Զելիա 113, 144, 190, 193·
Զեննա 113·
Զմիւռնէս 237·
Զոլք թագ· 203·
Զորաբաբել 216·
Էր 82·
Թամար 83, 84, 85, 87·
Թամիա 81·
Թեսբի թագուհի 201·
Թէոդոսիոս 240·
Թոբիել 24·
Իսահակ 31, 61, 68· 74, 89·
Իսահան Իսահանա 62, 63·
Իսաքար 94 — 98·
Լաբան 82, 113·
Լիա 56, 94, 95, 96, 190·
Խառան 48·
Կահաթ 62·
Կաղքէդոնիոս 237·

Կայէն 1 – 24, 148, 315 — 321, 326, 327.
Կայնան 24.
Կարպաթիաս 237.
Կիւրոս 216.
Հաբէլ 1 — 24, 315 — 320, 326, 327.
Հնդիկոսպոսի 138.
Հռակղմա 98.
Հռաքէլ, Ռաքէլ 94, 112, 113, 144, 153, 190.
Հռաքուէլ 201.
Հռեբեկա 113.
Հռեբեկա 153.
Հռովմ 237.
Հռուֆէոս 113.
Հրաֆիք 384.
Ղամէք 318.
Ղէի 34 — 150, 190 — 198.
Ղումի 62.
Մաղաքիա 217.
Մաշիրացիք 80.
Մանասէ թագաւոր, 207. 235.
Մանեասուն 323.
Մառի 201.
Մարիամ 200, 204.
Մարկիանոս 241.
Մաքփելա 98.
Մեղքա 62.
Մեմֆիս, Մեմֆա 134 140, 141.
Մեսարիմ 62.
Մերարի 62.
Մեփայի, տես Մեմֆիս.
Միքայէլ 2 — 22, 203.
Մովսէս 46, 199 — 206, 223.
Յակոբ 28 — 150, 188, 189, 196.
Յամրէս 202.
Յանէս 202.
Յեզաբէլ տես Եզաբէլ
Յեսու տես Եսու
Յիրամ 81.

Յովել 210·
Յովսեդեկիա 216·
Յովնան 211·
Յովսէփ 27 — 206·
Յուքարդ 57·
Յուդա 27 — 150·
Յունան կամ Ունան 343 — 348·
Յոսբովամ 333·
Յոքաբեթ 62·
Նաբուզոդոնոսոր 213, 218, 333·
Նաւում 212·
Նաքաբեթ 65·
Նեփթալիմ թգր· 337·
Նեփթալիմ 36 — 150·
Նիկէաս 237·
Նիկոդեմիաս 237·
Նոյ 26, 150, 230, 321 — 324·
Նոյեմզառա 322·
Շմաւոն 36 — 150, 190 — 198·
Ովսէ 208·
Ուլոդիոս 247·
Ուսմէ 384·
Ուզեղ 62·
Ուրիէլ 20, 253, 258·
Ռաքաբեթ 199·
Ռոսսար 78·
Պետափրէս 133 — 188·
Պոնդոս 237·
Ռուբէն 27 — 150·
Սադա 142·
Սադաէլ 307·
Սաղաթիէլ 216·
Սամարիա 373·
Սառա 36· 153, 224·
Սարանկաս դեռ 343·
Սելոմամ 207·
Սելում կամ Սելոմ 82, 83·
Սեհոն 203·

Սամի 62·
Սամէի 63·
Սէթ 2 — 26, 44, 319 — 321, 326 — 332·
Սէիր 82·
Սէմ 43·
Սիկիմ 38·
Սիւքէմ որդի Եմմորայ 192·
Սողոմոն ալքայ 228 — 233·
Սուբաքա 333·
Սոփոնիա 213·
Վէմքաղա 56·
Տիքեր 383, 284·
Փանուէլ 238·
Փարաւոն 140, 152 — 198, 199 — 206·
Փոտիփար տես Պետափրէս
Փովիվ 383·
Փուխգիաս 237·
Քանան 44, 64·
Քեբրոն 46, 60, 77, 130·